ԳՐԻԳՈՐ ՎԱՐԴԱՆՅԱՆ

# ԱԼԱՎԻԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԸ ՍԻՐԻԱՅՈՒՄ

## ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆԻՑ ՄԻՆՉԵՎ ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԷԼԻՏԱ

ԵՐԵՎԱՆ – 2017

1186205
323(569.1)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԳՐԻԳՈՐ ՎԱՐԴԱՆՅԱՆ

# ԱԼԱՎԻԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԸ ՍԻՐԻԱՅՈՒՄ

## ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆԻՑ ՄԻՆՉԵՎ ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԷԼԻՏԱ

ԵՐԵՎԱՆ
ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2017

NATIONAL ACADEMY OF SCIENCES OF THE
REPUBLIC OF ARMENIA
INSTITUTE OF ORIENAL STUDIES

GRIGOR VARDANYAN

# THE ALAWI COMMUNITY OF SYRIA

## FROM MINORITY TO POLITICAL-MILITARY ELITE

YEREVAN
"GITUTYUN" PUBLISHING HOUSE OF THE NAS RA
2017

ՀՏԴ 323
ԳՄԴ 66.3
Վ 301

Հրատարակվում է ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝ պատմական գիտությունների
թեկնածու, դոցենտ Արաքս Փաշայան

Գրիգոր Վարդանյան
Վ 301 Ալավիական համայնքը Սիրիայում. Փոքրամասնությունից մինչև ռազմաքաղաքական էլիտա – Եր.: «Գիտություն» հրատ., 2017, 172 էջ:

Մենագրության մեջ քննարկվում են ալավիական համայնքի դավանական առանձնահատկությունները, Հաֆեզ Ալ-Ասադի իշխանության տարիներին՝ 1970-2000 թթ. Սիրիայում ալավիների ռազմաքաղաքական իշխանության հաստատման խնդիրները, ներքաղաքական զարգացումներում ալավիների ունեցած դերակատարությունն ու առանձնահատկությունները: Առանձնակի կարևորություն է տրվում հատկապես Սիրիայի ռազմական և անվտանգային ոլորտում ալավիական համայնքի գործունեության ուսումնասիրությանն ու լուսաբանմանը:

ՀՏԴ 323
ԳՄԴ 66.3

ISBN 978-5-8080-1285-1
© Գ. Վարդանյան, 2017

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԲԱՆ ........................................................................ 5

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ
ԱԼԱՎԻՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ՍԻՐԻԱՅՈՒՄ (1969-1982 ԹԹ.) ........................................ 14
Ալավիներ և նրանց կրոնահամայնքային առանձնահատկությունները ........................................................................ 14
Ալավիների ռազմաքաղաքական իշխանության հաստատումը Սիրիայում (1969-1976 թթ.) ........................................ 26
«Մուսուլման եղբայրների» պայքարն ընդդեմ ալավիական վարչակարգի (1976-1982 թթ.) ........................................ 44

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ
ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՍԻՐԻԱՅՈՒՄ (1982-1992 ԹԹ.) ........................................................................ 64
1982-1986 թթ. ներքաղաքական ճգնաժամը Սիրիայում և ուժերի հավասարակշռությունն ալավիական վերնախավում ........................ 64
Հետճգնաժամային ժամանակաշրջանը Սիրիայում 1987-1992 թթ. .... 79

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ
ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՍԻՐԻԱՅՈՒՄ ԵՎ ԱԼԱՎԻ ՎԵՐՆԱԽԱՎԻ ՎԵՐԱՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ (1992-2000ԹԹ.) 103
Սիրիայում իշխանության հաջորդականության խնդիրը (1992-1996 թթ.) ........................................................................ 103
Ներքաղաքական իրավիճակը Սիրիայում և իշխանության փոխանցումը Բաշար Ալ-Ասադին (1997-2000 թթ.) ........................ 119

ՎԵՐՋԱԲԱՆ ........................................................................ 148

SUMMARY........................................................................ 156

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 164

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հաֆեզ Ալ-Ասադի իշխանության տարիներին՝ 1970-2000 թթ., Սիրիայում ալավիների ռազմաքաղաքական իշխանության հաստատման, նրանց ունեցած դերի և նշանակության համակողմանի ուսումնասիրությունն ունի թե՛ գիտական և թե՛ քաղաքական կարևոր նշանակություն և արդիականություն: Նշված ժամանակահատվածում Սիրիայի Արաբական Հանրապետությունը մերձավորարևելյան տարածաշրջանում կարևոր տեղ է զբաղեցրել և մեծապես ազդել տեղի ունեցող ռազմական և քաղաքական իրադարձությունների վրա: Թեման կարևոր է Սիրիայում 1970-2000 թթ. ներքաղաքական զարգացումների և դրանցում ալավիների վճռորոշ դերակատարության նպատակներն ու առանձնահատկությունները բացահայտելու տեսանկյունից: Բացի այդ, Սիրիայի իշխանական համակարգում ալավիական գործոնի ուսումնասիրությունը կարևոր է նաև 2011 թ. մարտին արաբական գարնան շրջանակներում Սիրիայում սկսված ներքաղաքական հուզումների, դրան հաջորդած քաղաքական ճգնաժամի ու դրա միջազգայնացման գործընթացները հետազոտելու տեսանկյունից:

Սիրիայով զբաղվող մի շարք հետազոտողներ գտնում են, որ Բաաս կուսակցության[1] և հատկապես Հաֆեզ Ալ-Ասադի իշխանության գալուց հետո Սիրիայում հաստատվեց ալավիական փոքրամասնության ռազմաքաղաքական ավտորիտար իշխանություն, որը

---

[1]1947 թ. ապրիլի 7-ին Միշել Աֆլյակը և Սալահ Ադ-Դին Բիթարը Սիրիայում հիմնադրում են Արաբական վերածննդի կուսակցությունը: Կուսակցության կարգախոսն էր՝ «միասնություն, ազատություն, սոցիալիզմ»: 1952 թ. նոյեմբերին Արաբական վերածննդի կուսակցությունը միավորվեց Աքրամ Հաուրանիի Արաբական սոցիալիստական կուսակցության հետ և միայն 1954 թ. վերանվանվեց Արաբական վերածնունդ սոցիալիստական կուսակցություն (Բաաս, որը արաբերենից թարգմանաբար նշանակում է ,վերածնունդ): 1963 թ. մարտի 8-ի հեղափոխությունից հետո Սիրիայում իշխանությունը ներկայացնում է Բաաս կուսակցությունը: Տես՝ Բաաս կուսակցության պաշտոնական կայքէջը՝ http://www.baath-party.org., Ղարիբջանյան Գ., Հաֆեզ Ալ-Ասադը և Ուղղիչ Շարժումը Սիրիայում, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ, Երևան, 2012, էջ 15:

սուննիական մեծամասնությամբ երկրում առաջ բերեց ներհամայնքային լարվածություն և խոչընդոտեց երկրի բնականոն զարգացմանը: Ալավիների իշխանությունը խթանեց նաև «Մուսուլման եղբայրներ» կրոնաքաղաքական կազմակերպության պայքարն ընդդեմ ալավի-բաասական վարչակարգի: Մենագրության էջերում փորձ է արվել հերքել այս տեսաղրույթը և ցույց տալ, որ չնայած կառավարման համակարգում տեղ գտած որոշակի թերացումներին ու բացթողումներին, իրականում Սիրիայում ալավիական վարչակարգի հաստատմամբ նպաստավոր իրավիճակ ստեղծվեց երկիրը զարգացման նոր ուղու վրա դնելու համար: Մյուս կողմից, ստեղծվեց հանդուրժողական մթնոլորտ Սիրիայի էթնիկ և կրոնադավանական բոլոր համայնքների զարգացման համար:

Սիրիայում մինչհաֆեզյան անդադար հեղաշրջումներով բնորոշվող ժամանակաշրջանին եկավ փոխարինելու հարաբերական կայունության ժամանակաշրջանը: Հաֆեզ Ալ-Ասադի իշխանության գալուց հետո Սիրիան պետական կառավարման համակարգերի ձևավորման ու ամրապնդման առումով թևակոխեց զարգացման որակապես նոր փուլ: Երկրում ձևավորվեց քաղաքական ու տնտեսական զարգացման նոր մշակույթ, որի շնորհիվ ալավիական վարչակարգը կարողանում էր արդյունավետ կերպով դիմագրավել ներքին և արտաքին մարտահրավերները և հաջողություններ արձանագրել երկրի առջև դրված նպատակներն իրականացնելու հարցում:

Սիրիայում ալավիների ռազմաքաղաքական դերի բարձրացման կարևորագույն բաղադրիչներից է ալավիների ներգրավումը երկրի ռազմական բնագավառում: 1946 թ. անկախության ձեռքբերումից հետո ազգային բանակի ձևավորման գործընթացում աստիճանաբար բարձրանում էր Սիրիայի զինված ուժերում (այսուհետ՝ ԶՈւ) ազգային փոքրամասնությունների ներգրավման ցուցիչը: Ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների համար ռազմական գործը համարվում էր ինքնահաստատման և սոցիալական խնդիրների լուծման բանական ճանապարհ, որը չենք կարող պնդել սուննի մեծամասնության ներկայացուցիչների պարագայում: Ալավիները հիանալի հնարավորություն ստացան ամրապնդել իրենց դիրքերը Սիրիայի ռազմական համակարգերում 1963 թ. Բաաս

կուսակցության իշխանության գալուց և հատկապես 1970 թ. Հաֆեզ Ալ-Ասադի իշխանության անցնելուց հետո, քանի որ վերջինս ալավիական համայնքի ներկայացուցիչ էր:

1970 թ. Հաֆեզի կողմից պետական համակարգի և ալավիական համայնքի շահերի նույնացումը դիտվում է Սիրիայում ալավիների ռազմաքաղաքական դերի բարձրացման կարևոր բաղադրիչներից մեկը: Հատկանշական է, որ Հաֆեզ Ալ-Ասադը պետական կառավարման համակարգում իր դիրքերն ամրապնդելու համար առաջին հերթին օգտագործեց ալավիական համայնքի ներուժը: Ալավի ռազմական գործիչներին զինվորական և քաղաքական բարձր պաշտոններում նշանակելով՝ նա լուրջ նախադրյալներ ստեղծեց երկրի ներսում ռազմաքաղաքական ամուր համակարգի ձևավորման համար:

Մենագրության հիմնական հիմնախնդիրներն ուսումնասիրելիս՝ օգտագործվել են գիտական հրապարակի վրա եղած հայերեն, ռուսերեն, անգլերեն և արաբերեն լեզուներով տարաբնույթ աղբյուրներ ու ուսումնասիրություններ: Հետազոտությանը մեծապես նպաստել են պաշտոնական հրատարակումները, քաղաքական գործիչների հայտարարություններն ու ելույթները, պարբերականները, հայ և օտարազգի հետազոտողների՝ վերոհիշյալ թեմային նվիրված արժեքավոր աշխատություններն ու հոդվածները: Մենագրության մեջ քննարկվող խնդիրների ուսումնասիրության հիմնական սկզբնաղբյուրներ են Բաաս կուսակցության համաժողովների նյութերի ժողովածուները[2], ուղղիչ շարժման քաղաքականությանը նվիրված պաշտոնական նյութերն ու փաստաթղթերը[3], Հաֆեզ Ալ-Ասադի ու սիրիացի քաղաքական, պետական մի շարք գործիչների՝ տարբեր առիթներով ունեցած ելույթների ու հարցազրույցների հրապարակումները[4], օտարազգի հետազոտողների աշխատու-

---

[2] المؤتمرات القطرية لحزب البعث العر بي الاشتراكي في القطر العربي السوري ,حزب البعث العر بي الاشتراكي القيادة القو مية, مكتب الثقافة و الاعداد الحزبي., المؤتمرات القطرية لحزب البعث العر بي الاشتراكي في القطر العربي السوري.

[3] الحركة التصحيحية المجيدة في الذكرة الخامسة و العشرين, دمشق,1995,ص. 161

[4] مجموعة خطب الفريق القائد حافظ الاسد, الكتاب الاول. 1980.24.02-1981.30.08, مجموعة خطب الفريق القائد حافظ الاسد, القيادة العامة للجيش و القوات المسلحة, الادارة السياسية, الكتاب الرابع, 14.02.1974- رسالة الرئس القائد حافظ الاسد الى القوات المسلحة العربية السورية بمناسبة تحرير مدينة القنيطرة و 14.12.1974, أخرى من الاراض العربية السورية, , بتاريخ 26.06.1974 , كلمة السيد الرئيس القائد حافظ الاسد في مادبة الغداء

թյունները ու հոդվածները, արաբական, բրիտանական, իսրայելական մամուլի հրապարակումները, որոնք հնարավորություն են ընձեռել իրական պատկերացում կազմել ոչ միայն 1970-2000 թթ. ընթացքում Սիրիայում տիրող ներքաղաքական իրադրության, այլև՝ ալավիների ռազմաքաղաքական իշխանության հաստատման հիմնական պատճառների ու դրա արդյունքում երկրում պետական ուժեղ համակարգի կազմավորման առանձնահատկությունների մասին:

Թեմայի ուսումնասիրության համար կարևոր նշանակություն են ունեցել արաբ հեղինակներ Հաշիմ Օսմանի[5], Մուհամմադ Ամին Ղալիբ Ալ-Տաուիլի[6], Մունզիր Ալ-Մուասալի[7], Մուստաֆա Տլասի[8] աշխատությունները: Դրանցում առկա են մի շարք կարևոր փաստեր ինչպես ալավիների կրոնահամայնքային առանձնահատկութունների, այնպես էլ նշված ժամանակահատվածում ալավիների ռազմաքաղաքական իշխանության հաստատման համար Սիրիայում ստեղծված ներքին և արտաքին նախադրյալների մասին:

Մասնավորապես Մուստաֆա Տլասի[9] և Մունզիր Ալ-Մուասալի աշխատություններում, թեև առկա են որոշ կանխակալ մոտեցումներ Սիրիայում ալավիական վարչակարգի իշխանության ձևավորման և Սիրիայի ռազմաքաղաքական օրակարգում ալավիների ունեցած ազդեցության վերաբերյալ, այնուամենայնիվ, նրանց աշխատությունները համեմատաբար անաչառ տեսակետ ունեն տվյալ ժա-

---

التي اقامها على شرف القادة السوفييت في موسكو, الجمعة 12.04.1974 , كلمة السيد الرئيس القائد حافظ الاسد الامين العام لحزب البعث العربي الاشتراكي, رئيس الجمهورية , 08.03.1992, كلمة السيد الرئيس القائد حافظ الاسد في مؤتمر القمة الاسلامي في لاهور, بتاريخ 22.02.1974, كلمة السيد الرئيس القائد حافظ الاسد في الجلسة الختامية لمؤتمر القمة العربي بالرباط, تاريخ 29.10.1974, كلمة السيد الرئيس القائد حافظ الاسد الامين العام لحزب البعث العربي الاشتراكي, رئيس الجمهورية في الذكرى الحادية عشرة لثورة آذار, دمشق, 08.03.1988

[5] هاشم عثمان ,حل العلويون شيعا, بيروت , لبنان ,1980 .

[6] محمد امين غالب الطويل, تاريخ العلويين, دار الاندلس, بيروت, 1966.

[7] منذر الموصلي, البحث عن الذات الجذور, العلويون العرب السوريون, دمشق, 2007

[8] صطفي طلاس, مرآة حياتي, العقد الرابع, الطبعة الثانية, دمشق, 2007, مصطفي طلاس, مرآة حياتي, العقد الاحد, الطبعة الثانية, دمشق, 2007.

[9] Մուստաֆա Տլասը սիրիացի բարձրաստիճան զինվորական և քաղաքական գործիչ էր: 1972-2004 թթ. զբաղեցրել է Սիրիայի պաշտպանության նախարարի պաշտոնը: Տես՝ Lt. Gen. Mustafa Tlass, Syrian Minister of Defense, Deputy Prime Minister, Middle East Intelligence Bulletin, Vol. 2, No. 6, 2000:

մանակաշրջանի Սիրիայի ներքաղաքական և ռազմական կյանքի հիմնական իրողությունների մասին: Մասնավորապես Մուստաֆա Տլասի «Իմ կյանքի պատմությունը» քառահատոր աշխատության առաջին և չորրորդ հատորներում համակողմանի անդրադարձ է կատարվում Բաաս կուսակցության՝ իշխանության անցնելու գործընթացի մանրամասներին և Հաֆեզ Ալ-Ասադի իշխանության տարիներին Սիրիայում տեղի ունեցած ներքաղաքական կարևոր իրադարձություններին:

Աշխատանքում քննարկվող մի շարք հարցերի լուսաբանմանը մեծապես նպաստել են նաև Ն. Հովհաննիսյանի[10] և Ե. Պրիմակովի[11] արժեքավոր աշխատությունները, որոնք օգտակար են եղել հատկապես 1970-2000 թթ. ընթացքում Սիրիայի մերձավորարևելյան քաղաքականության հիմնական ուղղությունները ճիշտ պատկերացնելու և Սիրիայում տիրող ներքաղաքական իրավիճակի վրա արտաքին ազդեցության ընկալման տեսանկյունից: Հիշյալ աշխատությունները պարունակում են նաև կարևոր փաստագրական և վերլուծական նյութ տարածաշրջանում ծավալված գործընթացներում Սիրիայի ունեցած դերի և նշանակության մասին: Օրինակ, Նիկոլայ Հովհաննիսյանն իր «Արաբական երկրների պատմություն» աշխատության չորրորդ հատորի «Սիրիայի Արաբական Հանրապետություն» գլխում անդրադառնում է հատկապես Սիրիայի 20-րդ դարի պատմությանը՝ հանգամանորեն ներկայացնելով Բաաս կուսակցության իշխանության հաստատումը Սիրիայում և Հաֆեզ Ալ-Ասադի նախագահության տարիները: Հեղինակը վերլուծում է 1970-2000 թթ. Սիրիայի ներքաղաքական գործընթացները: Չորրորդ հատորում համգամանալից վերլուծության են ենթարկված Սիրիայի նորագույն պատմության, ներառյալ 1970-2000 թթ., կարևորագույն իրադարձությունները: Հեղինակը մանրամասն լուսաբանում է միջազգային և տա-

---

[10]Հովհաննիսյան Ն., Արաբական երկրների պատմություն, հ. III, Երևան, 2006, Հովհաննիսյան Ն., Արաբական երկրների պատմություն, հ IV, Անկախության և ինքնիշխանության դարաշրջան, 1918-2005թթ., Երևան, 2007, Հովհաննիսյան Ն., Իրան. այաթոլլահ Խոմեյնիի դարաշրջանը, Երևան, 2004:

[11]Պրիմակով Ե., Մի Դավադրության պատմություն, ԱՄՆ-ի մերձավորարևելյան քաղաքականությունը 70-ական թթ. և 80-ական թթ. սկզբներին, Երևան, 1987:

բածաշրջանային իրավիճակը, մասնավորապես Սիրիայի դերն արաբաիսրայելական հակամարտության լուծման գործում: Աշխատությունում հավուր պատշաճի ներկայացվում են 1983-1984 թթ. Սիրիայում բռնկված ներքաղաքական ճգնաժամի պատճառներն ու ընթացքը[12]:

Աշխատանքում օգտագործվել են խորհրդային և արդի շրջանի ռուսաստանցի մի շարք հետազոտողների արժեքավոր աշխատությունները Սիրիայում ալավիների ռազմաքաղաքական իշխանության հաստատման մանրամասների ուսումնասիրման և ալավիական վարչակարգի ռազմաքաղաքական կառուցվածքի, Սիրիայի ներքին և արտաքին քաղաքականության առանձնահատկություններին նվիրված մենագրություններն ու հոդվածները, որոնցից հիշատակման արժանի է Է. Փիր-Բուդաղովայի[13], Վ. Ահմեդովի[14], Վ. Սաուտովի[15], Կ. Պոլյակովի և Ա. Խասյանովի[16], Ա. Ֆիլոնիկի[17], Վ. Յուրչենկոյի[18] ուսումնասիրությունները: Սիրիական բանակի ձևավորման, ինչպես նաև բանակում ու հատուկ ծառայություններում ալավիների ներկայացվածության մասին արժեքավոր տեղեկություններ է տրամադրում Վ. Ահմեդովն իր «Բանակն ու քաղաքականությունը ժամանակակից Սիրիայում, բանակն ու իշխանությունը Մերձավոր Արևելքում, բռնատիրությունից ժողովրդավարություն» մեծա-

---

[12]Հովհաննիսյան Ն., Արաբական երկրների պատմություն, հ IV, Անկախության և ինքնիշխանության դարաշրջան, 1918-2005թթ., Երևան, 2007:

[13]Пир-Будагова Э., Сирия в Борьбе за Упрочение Национальной Независимости (1945-1966), Москва, 1978.

[14] Ахмедов В. М., Армия и Политика в Современной Сирии, Армия и Власть на Ближнем Востоке: от Авторитаризма к Демократии (сборник статей), М., 2002.

[15] Саутов В. Н., Сирийские Алавиты в Новейшее Время, Материалы I-ой конференции арабистов Институт востоковедения РАН, Институт изучения Израиля и Ближнего Востока, Москва, 1996.

[16] Поляков К., Хасянов А., Проблема Стабильности Сирии в XXI Веке, Ближний Восток и Современность, Сборник статей (выпуск десятый), Москва, 2000.

[17] Филоник А., Хафез Асад: призвание-гражданин, Арабские Страны Западной Азии и Северной Африки (Новейщая История, Экономика и Политика), Москва, 1997.

[18]Юрченко В. П., Сирия: Проблемы Национальной Безопасности (Военная Политика и Военная Строительство в Период Правления ПАСВ (1963-2004 гг.), М., 2004.

ծավալ հողվածում: Հեղինակը հանգամանորեն վերլուծում է ալավիական համայնքի ներկայացուցիչների ներգրավվածության փաստը Սիրիայի ԶՈՒ համակարգում և անդրադառնում երկրի քաղաքական անցուդարձի վրա զինվորականների ունեցած ազդեցությանը: Սիրիայի ԶՈՒ-ի կառուցվածքի և դրանց զարգացմանը միտված ալավի բարձրաստիճան զինվորականների գործունեությանը և երկրի ռազմական քաղաքականության ձևավորման մանրամասներին հանգամանորեն անդրադառնում է նաև Վ. Յուրչենկոն իր «Ազգային անվտանգության հիմնախնդիրները. ռազմական քաղաքականությունը և բանակաշինությունը Բաաս կուսակցության իշխանության տարիներին (1963-2004թթ.)» աշխատության մեջ:

Ալավիական համայնքի կրոնահամայնքային առանձնահատկությունների, Սիրիայում նրանց դերի բարձրացման, բարձրաստիճան ալավի զինվորականների ծագման, Հաֆեզ Ալ-Ասադի հիմնած ալավի-բաասական նոր վարչակարգի, «Մուսուլման եղբայրների» և վարչակարգի միջև ծավալված պայքարի ու իշխանության հաջորդականության նախապատրաստման խնդիրներն ավելի ճիշտ ընկալելու համար մեծապես օգտակար են եղել արևմտյան հեղինակներ Մ. Մուսայի[19], Մ. Քրամերի[20], Հ. Բատատուի[21], Ս. Աբու Ջաբեր Քամալի[22], Հ. Դեքմեջյանի[23], Ա. Դրիսդեյլի[24], Մ. Ֆակշի[25], Ռ. Հիննեբուշի[26], Ֆ. Լեվերեթի[27], Թ. Մայերի[28], Մ. Մաոզի[29], Դ. Փայփսի[30], Ի.

---

[19]Moosa M., Extremist Shiites, The Ghulat Sects, Syracuse University Press, New York, 1987.

[20]Kramer M., Syria's Alawis and Shi'ism in Shiism, Resistance, and Revolution, ed. Martin Kramer, Boulder, Colorado: Westview Press, 1987.

[21]Batatu H., Some Observations on the Social Roots of Syria's Ruling, Military Group and the Causes for Its Dominance, Middle East Journal, Vol. 35, No 3, 1981.

[22]Abu Jaber Kamal S., The Arab Ba'th Socialist Party, History, Ideology and Organisation, Syracuse University Press, New York, 1966.

[23]Dekmejian H., Islam in Revolution, Fundamentalism in the Arab World, Second Edition, Syracuse University Press, 1995.

[24]Drysdale A., Syrian Political Elite, 1966-1976, A Spatial and Social Analysis, Middle Eastern Studies, Vol. 17, N 1, 1987.

[25]Faksh M. A., The Alawi Community of Syria: A New Dominant Political Force, Middle Eastern Studies, Vol. 20, N 2, 1984.

[26]Hinnebusch R., Authoritarian Power and State Formation in Baathist Syria: Army,

Ռաբինովիչի[31], Ու. Ֆ. Աբդալլահի[32], Է. Զիսերի[33] արժեքավոր աշխատությունները: Այսպես, Մատի Մուսան, հիմնվելով ալավի հեղինակների աշխատությունների վրա, իր «Ծայրահեղական շիաներ, Ղուլաթ ուղղություններ» աշխատության մեջ մանրամասնորեն ներկայացնում է ալավիների կրոնահամայնքային առանձնահատկությունները՝ ալավիներին ներկայացնելով որպես ոչ բարեպաշտ մուսուլմանների:

Ալավիների կրոնական առանձնահատկություններին և համայնքի տոհմացեղային կառուցվածքին են անդրադառնում նաև Դանիել Փայփսն իր «Մեծ Սիրիա. փառասիրության պատմություն» աշխատության մեջ, Մարտին Քրամերն իր «Սիրիայի ալավիներն ու շիայականությունը շիայականության, դիմադրության և հեղափոխության լույսի ներքո» և Մահմուդ Ֆակշն իր «Սիրիայի ալավիական համայնքը. նոր գերիշխող քաղաքական ուժ» հոդվածներում:

Բաաս կուսակցության և ալավիական վարչակարգի ներսում իշխանության համար ծավալված պայքարը, ինչպես նաև Սիրիայի ներքաղաքական իրադարձությունները համգամանորեն քննության են առնված Նիկոլաոս Վան Դամի[34], Վոլկեր Փերթեսի[35] և Մոշե

---

Party and Peasant, Oxford, Westview Press, 1990, Hinnebusch R., Syria, Revolution from Above, Routledge, London and New York, 2001.

27 Leverett F., Inheriting Syria, Bashar's Trial by Fire, Brookings Institution Press, Wasington, 2005.

28Mayer T., The Islamic Opposition in Syria, 1961-1982, Orient, December, 1983.

29Maoz M., Syria Under Hafiz al-Asad: New Domestic and Foreign Policies, The Hebrew University of Jerusalem, 1975, Maoz M., The Sphinx of Damascus, A Political Biography, Weidenfeld and Nicolson, London, 1988.

30Pipes D., Greater Syria, The History of an Ambition, New York, 1990, Pipes D., The Alawi Capture of Power in Syria, Middle Eastern Studies, V. 25, N 4, London, 1989.

31Rabinovich I., Syria Under the Ba'th 1963-1966, The Army Party Symbiosis, Israel Universities Press, Jerusalem, 1972.

32Umar F. Abd-Allah, The Islamic Struggle in Syria, Berkeley, California, Mizan Press, 1983.

33Zisser E., The Syrian Army: Between the Domestic and the External Fronts, MERIA, Volume 5, No. 1 – March, 2001.

34 Van Dam Nikolaos, The Struggle for Power in Syria, Politics and society under Asad and Ba'th Party, I. B. Tauris Publishers, London-New York, 1996.

Մաոզի վերոնշյալ աշխատություններում: Նիկոլաս Վան Դամն իր «Սիրիայում իշխանության համար պայքար, քաղաքականությունը և հասարակությունը Ասադի և Բաաս կուսակցության իշխանության տարիներին» աշխատությունում օբյեկտիվորեն ներկայացնում է իշխանության համար մղված պայքարի ընթացքը Բաաս կուսակցության ներսում, ալավիների հաղթանակը և «Մուսուլման եղբայրների» պայքարն ընդդեմ ալավիական վարչակարգի: Մոշե Մաոզի «Դամասկոսի սֆինքսը. քաղաքական կենսագրություն» և «Սիրիան Հաֆեզ Ալ-Ասադի իշխանության օրոք. ներքին և արտաքին նոր քաղաքականություն» աշխատություններում հանգամանորեն ներկայացվում է Հաֆեզ Ալ-Ասադի վարչակարգի էությունը՝ վերջինիս ներկայացնելով նոր առաջնորդի կերպարով: Հաֆեզ Ալ-Ասադի իշխանության տարիներին Սիրիայի տնտեսության զարգացման ընթացքին, երկրի տնտեսական և ռազմաքաղաքական վերնախավերի սերտ հարաբերությունների խնդիրը մանրամասն քննարկվում է Վոլկեր Փերթեսի «Սիրիայի քաղաքական տնտեսությունն Ասադի իշխանության տարիներին» աշխատության մեջ: Սիրիայի բաասական վարչակարգի դեմ մղած «Մուսուլման եղբայրների» պայքարի պատճառները, ընթացքն ու հետևանքները խորը քննության են առնվել Հ. Դեքմեջյանի, Թ. Մայերի և Ս. Մանուկյանի աշխատություններում[36]:

Մենագրության մեջ լայնորեն օգտագործվել են սիրիական, իրաքյան, հորդանանյան, եգիպտական, լիբանանյան, բրիտանական, ամերիկյան և իսրայելական մամուլի նյութերը:

[35]Volker P., The Political Economy of Syria under Asad, London, 1995.

[36] Dekmejian H., Islam in Revolution, Fundamentalism in the Arab World, Second Edition, Syracuse University Press, 1995, Mayer T., The Islamic Opposition in Syria, 1961-1982, Orient, December, 1983, Манукян С., Исламский Фундаментализм в Сирии в 1960-80-х годах, Диссертаяция на соискание ученой степени кандидата исторических наук, Ереван, 2002.

# ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

# ԱԼԱՎԻՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ՍԻՐԻԱՅՈՒՄ (1969-1982 ԹԹ.)

## 1.1 Ալավիներ և նրանց կրոնահամայնքային առանձնահատկությունները

Մինչև 1920-ական թթ. ալավիները հայտնի էին նուսայրիներ[37] անվամբ: Ալավիական ուսմունքը հիմնադրել է 9-րդ դարի աստվածաբան Աբու Շուաիբ Մուհամմադ իբն Նուսայրը[38]: Հետագայում Իբն Նուսայրի ուսմունքի հետևորդներին անվանել են նուսայրիներ, իսկ ուսմունքը՝ նուսայրիականություն: Նրանց կոչում են նաև անսարիներ, որը կապվում է Սիրիայի հյուսիս-արևմուտքում ձգվող Անսարի լեռնաշղթայի հետ, որը նրանց ավանդական բնակեցման շրջանն է: Սիրիայում ֆրանսիական մանդատային իշխանության հաստատումից հետո ֆրանսիացիները նրանց սկսեցին անվանել ալավիներ[39]:

Ուսումնասիրվող ժամանակահատվածում Սիրիայում ալավիների թիվը շուրջ երկու միլիոն էր, որը կազմում էր երկրի ընդհանուր բնակչության 11 %-ը: Ալավիները Սիրիայի ամենամեծ կրոնական փոքրամասնությունն են: Հիմնականում բնակվում են Սիրիայի հյուսիսարևմտյան լեռնային շրջաններում՝ Լաթաքիա և Տարտուս քա-

---

37Ալավիներին նուսայրիներ էին անվանում մինչև Սիրիայում ֆրանսիական մանդատի հաստատումը՝ 1922 թ.: Տես՝ Alawite, Shi'ite Sect, Encyclopadia Britannica, https://www.britannica.com/topic/Alawite.

38Массэ А., Ислам, Очерк Истории, Перевод с французского, Издание 2-е, Издательство Восточной Литературы, Москва, 1963, с. 200.

39Ազգերի լիգան Ֆրանսիայի կողմից Սիրիայի մանդատային կառավարման իրավունքը հաստատեց 1922 թ. հուլիսի 22-ին: Տես՝ Հովհաննիսյան Ն., Արաբական երկրների պատմություն, h. III, Երևան, 2006, էջ 12-13: Pipes D., The Alawi Capture of Power in Syria, Middle Eastern Studies, V. 25, N 4, London, 1989, p. 433.

դաքների շրջակայքում, ինչպես նաև հարավ-արևմուտքում՝ Գոլանի բարձունքներում[40], որտեղ Ղաջար գյուղում կենտրոնացած է երեք հազար ալավի բնակչություն[41]: Տեղաբաշխված լինելով Միջերկրական ծովի ափամերձ շրջաններում՝ նրանք կազմում են այդ շրջանների գյուղական բնակչության շուրջ 60%-ը, մինչդեռ Լաթաքիա քաղաքում մեծամասնություն են կազմում սուննիները[42]: Ալավիները բնակվում են Ջաբալ Անսարիյա կոչվող լեռնային շրջանի[43] շուրջ ութսուն գյուղական համայնքներում: Նրանք զբաղվում էին գյուղատնտեսությամբ՝ ծխախոտի, բամբակի, խաղողի, ցորենի և այլ մշակաբույսերի աճեցմամբ[44]: 20-րդ դարի երկրորդ կեսից սկսած հետզհետե ալավիները բացի հյուսիս-արևմտյան գյուղական շրջաններից բնակություն հաստատեցին նաև Դամասկոսում, Հոմսում, Համայում, Հալեպում և այլուր[45]: Ալավի բնակչության տեղաշարժը պայմանավորված էր սոցիալ-տնտեսական գործոններով: Հիմնականում շատ ծանր սոցիալ-տնտեսական պայմաններում էր գտնվում գյուղաբնակ ալավի բնակչությունը, ինչը ստիպում էր նրանց լքել իրենց բնակավայրերն ու հաստատվել Սիրիայի այն բնակավայրերում, որտեղ ձեռք էին բերում աշխատանք և կարողանում էին լուծել ապրուստի միջոցները:

Ալավիական համայնքն ունի տոհմացեղային կառուցվածք: Ի տարբերություն այլ համայնքների, ավելի շատ է պահպանել իր ցեղային (աշիրեթային) կառուցվածքը: Համայնքը կազմված է

---

[40]The World Factbook, Middle East: Syria. https://www.cia.gov/library/publications/the-world-factbook/geos/sy.html

[41]Eiland G., Defensible Borders on the Golan Heights, Jerusalem Center for Public Affairs, Jerusalem, 2009, p. 8.

[42]Minahan J., Encyclopedia of the Stateles Nations: ethnic and national groups around the world, S-Z, Vol. 4. Greenwood Press, USA, 2002, p. 79.

[43]Ջաբալ Անսարիյան ձգվում է արևմուտքից Միջերկրական ծովի, իսկ արևելքից Ղաբի հարթավայրի միջև և պատմականորեն նուսայրիների ավանդական բնակեցման տարածքն է:

[44]Nisan M., Minorities in the Middle East: A History of Struggle and Self-Expression, Second edition, Jefferson, N.C. and London: McFarland & Company, 2002, pp 116-117.

[45]Khoury Ph., and Kostiner J., Tribes and State Formation in the Middle East, University of California Press,Berkeley and Los Angeles, p. 139.

բազմաթիվ ցեղերից, որոնցից արժանահիշատակ են՝ Խայատիյան, Հադդադինը, Կալբիյան, Մատավիրան, Բանի Ալին, Մահալիբան, Ամմամիրան, Դարավիսան և Մահարիզան: Հադդադին ցեղը ծագում է Մուհամմադ Ալ-Հադդադից, որը Մահմուդ Սինջարի որդին էր, իսկ վերջինս ալավիների կրոնական հայտնի դեմքերից մեկի՝ Հասան Ալ-Մակզումի թոռորդին էր[46]: Ալավիական համայնքը բացի ցեղային պատկանելությամբ շերտավորումներից, բաժանված է նաև չորս՝ Կամարիյա, Շամսիյա, Ղայբիյա և Մուրշիդիյա ենթախմբերի[47], ինչպես նաև երկու ոչ հավասարազոր սոցիալական խմբերի՝ արտոնյալների՝ խասսա, և ոչ արտոնյալների՝ ամմա: Խասսայի անդամները տիրապետում են նուսայրիական կրոնական գաղտնիքներին, իսկ ամմայի անդամներին այդ գիտելիքը հասու չէ[48]: Դրանով էլ որոշվում է խասսայի հասարակական և սոցիալական գերակա կարգավիճակն ալավիական համայնքում, որն ունի եռաստիճան՝ ցեղային, կրոնական և սոցիալական բաժանում, ինչը ձևավորում է ալավիական համայնքի էթնոկրոնական համակարգի առանձնահատկությունները ու յուրահատկությունները:

Չնայած ալավիներն իրենց համարում են շիա տասներկուերորդ իմամի հետևորդներ[49], սակայն շատ հաճախ շրջանցում են իսլամական օրենքները՝ Շարիաթը[50]: Ալավիական ուսմունքն իր մեջ ներառում է տարբեր կրոնների՝ իսլամի, քրիստոնեության և հեթանոսության տարրեր: Այսպիսի բազմազանությունը նուսայրիականության մեջ թույլ է տվել մի շարք գիտնականների կրոնական այս ուղղության վերաբերյալ տարբեր վարկածներ առաջ քաշել:

Նուսայրիականության ուսումնասիրությունը սկսվել է 19-րդ դարի կեսերից, երբ եվրոպացի ճանապարհորդները, դիվանագետները ու այլ բնագավառների ներկայացուցիչները սկսեցին շփվել

---

[46] محمد امين غالب الطويل, تاريخ العلويين, دار الاندلس, بيروت, 1966, ص. 312-429

[47] Bengio O., Gabriel Ben-Dor G., Minorities and the State in the Arab world, Colorado, 1999, p. 130.

[48] Поляков К., Хасянов А., Проблема Стабильности Сирии в XXI Веке, Ближний Восток и Современность, Сборник статей (выпуск десятый), Москва, 2000, с. 208.

[49] Kramer M., Syria's Alawis and Shi'ism in Shiism, Resistance, and Revolution, ed. Martin Kramer, Boulder, Colorado: Westview Press, 1987, p. 237.

[50] Pipes D., նշվ. աշխ., 430:

ալավիների հետ և հետզհետե կարողացան ծանոթանալ նրանց կրոնական գաղտնիքներին, ինչպես նաև ձեռք բերել նրանց որոշ ձեռագրեր: Առաջիններից էր Ժոզեֆ Կատաֆագոն, որը 1840-ական թթ. ծառայում էր Սիրիայում որպես պրուսական հյուպատոսարանի դրագոմանՙ թարգմանիչ-խորհրդական: Մի քանի տարի անց բրիտանացի Սեմյուել Լիդը, որը որոշ ժամանակ ապրել և աշխատել էր ալավիների շրջանում, հրատարակեց ալավիականության մասին առաջին մենագրությունըՙ «Ասիական առեղծված. անսարիները կամ նուսայրիները Սիրիայում» խորագրով[51]: Նուսայրիականության վերաբերյալ հաջորդ մենագրությունը 20-րդ դարի սկզբին հրատարակեց Ռենե Դյուսոն, որը շրջանառության մեջ դրեց Փարիզի ազգային գրադարանում եղած ձեռագրերի նյութերը[52]: Մեկ տարի անց լույս ընծայվեց մեկ այլ հետազոտողիՙ Հենրի Լամմենսի աշխատությունը[53]: 1987 թ. նուսայրիների վերաբերյալ լույս տեսավ Մատտի Մուսայի մենագրությունը[54], որը գլխավորապես նկարագրական բնույթ ունի և հիմնված է ինչպես հիմնական, այնպես էլ երկրորդական նշանակություն ունեցող աղբյուրների վրա: Այսպես, Ռենե Դյուսոնՙ ալավիականության առաջատար հետազոտողներից մեկը, կարծում էր, որ դրա արմատները գալիս են անտիկ ժամանակների հեթանոսական սովորույթներից, իսկ Հենրի Լամմենսի համոզմամբՙ դա վաղ սիրիական քրիստոնեության յուրահատուկ մի ճյուղ է: Այնպիսի ուսումնասիրողներ, ինչպիսիք ենՙ Սեմյուել Լիդն ու ավելի ուշ շրջանի հետազոտող Մատտի Մուսան, նուսայրիականությունը համարում են շիայական իսլամի ծայրահեղական ճյուղ:

Ալավիների ուսմունքի համաձայնՙ Ալին Հիսուս Քրիստոսի նման համարվում է Աստծո մարմնավորումը: Իսկ շահադան (վկայությունը) ունի հետևյալ բովանդակությունըՙ «Չկա աստվածություն բացի Ալիից, չկա քող բացի Մուհամմադից և չկա բաբ (դաչպաս)

---

51Lyde S., The Asian Mystery: the Ansaireeh or Nusairis of Syria, London, 1860.

52Dussuad R, Histoire et religion des Nosairis, Paris, 1900.

53Lammens H., "Les Nosairis furent-ils chretiens? A propos d'un livre recent," Revue de l'Orient Chretien, 1901.

54Moosa M., Extremist Shiites, The Ghulat Sects, Syracuse University Press, New York, 1987.

բացի Սալման Ալ-Ֆարիսիից»[55]: Նուսայրիական երրորդությունն ընդգրկում է Ալիին՝ մանա (միտք), Մուհամմադին՝ իսմ (անուն) և Սալման Ալ-Ֆարիսիին՝ բաբ: Երրորդության մեջ առաջին տեղում մանան է, որին տրվում է աստվածային բնություն, այսինքն՝ Ալին համարվում է Աստված: Երկրորդ տեղում իսմն է՝ Մուհամմադը, որին Ալին ստեղծել է իր էության լույսից ու սովորեցրել նրան սուրբ Ղուրանը: Աստված, այսինքն Ալին, Մուհամմադի միջոցով ստեղծել է աշխարհը ու նրան հանձնարարել տիեզերքի կառավարումը: Իսմը՝ Մուհամմադը, նաև հիջաբ է՝ քող կամ միջնորդ, որի միջոցով Ալին երևացել է մարդկությանը, իսկ Մուհամմադը, որպես քող, չի թույլատրել, որ Աստծո լույսը երևա մարդկանց: Ըստ այդմ, Մուհամմադն այն ճանապարհն է, որը տանում է դեպի Ալին, իսկ վերջինս Մուհամմադի միջոցով է կառավարել մարդկանց[56], այսինքն՝ Մուհամմադը Աստծո և մարդու միջև միջնորդ կապն է:

Ալավիների կրոնական համակարգում կարևոր նշանակություն ունի իմամների ինստիտուտը: Տասներկու իմամները նուսայրիականության համակարգի հիմնական ներկայացուցիչներն են, քանի որ նրանք Ալիի աստվածային էության կրողներն են: Նուսայրիներն աղոթքի ժամանակ դիմում են Աստծուն՝ ասելով, որ հավատարիմ են նրան, նրա առաքյալ Մուհամմադին, նրա ծառա Սալման Ալ-Ֆարիսիին և իմամներին: Վերջիններս նաև Աստծո առաջին պատվիրակներն են երկրի վրա, նրա աստվածային էության ու գաղտնիքների շտեմարանները և նրա ծառաները: Նրանք Աստծո ձեռքն են, աչքերը

[55]Pipes D., նշվ. աշխ., էջ 431: Նուսայրիական երրորդության մեջ երրորդ կերպարը բաբն է: Ադամի ժամանակ բաբ է համարվել Գաբրիել հրեշտակը, իսկ Ալիի ժամանակ՝ Սալման Ալ-Ֆարիսին, որը պարսիկ էր և Մուհամմադ մարգարեի առաջին, ոչ արաբ հետևորդն էր: Նուսայրիական պատարագում՝ կուդդաս ալ-ազան, ասվում է, որ Սալմանն Աստծո ազնիվ բաբն է: Ենթադրվում է, որ Սալմանն Աստծո և Մուհամմադի միջև գոյություն ունեցած, բայց կորված շղթան է (սիլսիլա): Սալմանը համարվում է նաև Մուհամմադի ընտանիքի (ահլ ալ-բեյթ) անդամ: Սակայն միայն այդ հանգամանքը չէ, որ շիաները նրա կերպարին մեծ կարևորություն են տալիս, այլ նաև այն, որ հենց Սալմանն է առաջինը պաշտպանել Մուհամմադին փոխարինելու Ալիի իրավունքն ու դրանով հիմք դրել իմամության տեսությանը: Ալավիական այս երրորդությունը չափազանց նման է քրիստոնեական Հայր Աստված, Որդի Աստված և Սուրբ հոգի Աստված սուրբ երրորդությանը:

[56]هاشم عثمان, حل العلويون شيعا, بيروت, لبنان, 1980, ص. 39.

և դեմքը: Վեցերորդ իմամ Ջաֆար Ալ-Սադիկը նշել է, որ երբ շիա հավատացյալը մահանում է, նա առաջին հերթին քննության է անցնում իմամ Ալիի մոտ, որը պետք է որոշի՝ հավատացյալին ուղարկել դրախտ, թե՞ դժոխք: Նուսայրիականության մեջ իմամների համակարգին կարևորություն է տրվում, քանի որ նրանք աստվածընտրյալներ են և իրենց բաբերի՝ դարպասների միջոցով առաջնորդում են հավատացյալին դեպի տերը՝ Ալին: Հարկ է նշել նաև, որ ալավիական ուսմունքի համաձայն՝ յուրաքանչյուր իմամ անպայման պետք է ունենա իր բաբը (դարպասը):

Ալավիականության կրոնական համակարգում չափազանց կարևոր ծիսակատարություն է կրոնի խորհրդավոր գաղտնիքներին հաղորդակից դառնալը: Սակայն կրոնական գաղտնիքներին կարող են հաղորդակից լինել միայն ալավի ծնողներ ունեցող տղամարդիկ: Նուսայրիների հաղորդակցման արարողությունը բաղկացած է երկու մասից: Առաջին մասը կոչվում է ալ-տալիք կամ ալ-դուխուլ, որը հաղորդակցվողին մտցնում է ընտրյալ նուսայրիների հասարակություն, իսկ երկրորդը՝ ռուքբաթ ալ-սամա՝ ականջրում, որի միջոցով հաղորդակցվողին փոխանցվում են հավատքի առեղծվածները: Հաղորդակցվող անձը պետք է լինի առնվազն 18 տարեկան կամ՝ 16, եթե որևէ շեյխի որդի է: Հաղորդակցման օրը հաղորդակիցն իր հետ վերցնում է մի կենդանի՝ զոհաբերման համար: Զոհաբերությունը կատարում է շեյխը, որը պահանջում է երիտասարդ հավատացյալից, որպես հնազանդության նշան, իմամի հողաթափերը դնել գլխին: Այնուհետև, շեյխը դիմում է համայնքին, որպեսզի երիտասարդին ընդունեն որպես զավակ, քանի որ նա դուրս եկավ «խավարից»: Հավաքվածների համաձայնությունը ստանալուց հետո շեյխը երիտասարդի գլխից վերցնում է հողաթափերն ու խնդրում նրան նստել իմամի կողքին: Իմամը նրան վերստին զգուշացնում է, որ ուսմունքը պետք է գաղտնի պահի, այլապես կպատժվի[57]: Հաղորդակցման արարողությանը մասնակցում են բարձրաստիճան կրոնավորներ, որոնք ներկայացնում են նուսայրիական երրորդությունը: Առաջին բարձրաստիճան կրոնավորն իմամն է, որը ներկայացնում է Ալիին, երկրորդը նաքիբն է, որը ներկայացնում է Մուհամմադին, իսկ երրոր-

---

[57]Moosa M., նշվ. աշխ., էջ 373:

ըը՝ նաջիբը, ով ներկայացնում է Սալման Ալ-Ֆարիսիին[58]: Հաղորդակցվողն արարողության ժամանակ երդվում է գաղտնի պահել ալավիականության դավանաբանական գաղտնիքները և երդման ժամանակ խմում է մեկ գավաթ գինի ու 500 անգամ արտասանում Ալի, Մուհամմադ և Սալման անունների առաջին տառերից կազմված «ԱՄՍ» սրբազան հապավումը[59]: Ալավիները սովորաբար իրենց կրոնական ծեսերը կատարում են գիշերը, հատուկ նախատեսված վայրերում՝ կուբբաներում[60]:

Ալավիներն ընդունում են թանասուխի՝ հոգիների վերաբնակեցման տեսությունը, որը նրանց կրոնական համակարգի անբաժանելի մասն է: Հոգիների վերաբնակեցման տեսությունն իսլամական ուսմունք չէ, այն փոխառվել է արևելյան հին կրոններից՝ մազդակիզմից, բրահմանիզմից և այլն: Ալավիական ուսմունքի համաձայն՝ մարդու հոգին մի մարմնից մյուսն է անցնում մի քանի անգամ: Բարեպաշտ մարդու հոգին անցնում է մեկ այլ՝ ավելի կատարյալ մարմնի մեջ, իսկ ոչ բարեպաշտ մարդու հոգին ներթափանցում է կեղտոտ գազանի մարմին: Գոյություն ունի թանասուխի յոթ ձև[61]: Ըստ ալավիական ուսմունքի՝ կանայք չեն կարող հաղորդակից լինել դավանաբանական գաղտնիքներին: Նրանք երկրպագում են հեթանոսական պաշտամունքներ՝ ծառեր, մարգագետիններ, բլուրներ և այլն[62]:

Ալավիներն իրենց դավանաբանական խորհրդավոր գաղտնիքները պահպանելու համար շատ դեպքերում գործառել են շիա իսլամում ընդունված թակիյայի (تقية) հայտնի սովորույթը, որը թույլ է տալիս առերես այլ կրոնի հետևորդ դառնալ՝ թաքցնելով իրական կրոնական զգացմունքները: Ալավիները նշում են, որ կրոնական ինքնաքողարկումը կամ թակիյան իրենց արդար պատերազմն է[63]: Չնայած ալավիական համայնքում գործող կրոնական ինքնաքո-

---

[58]Նույն տեղում:

[59]Lyde S., նշվ. աշխ., էջ 111:

[60]Петрушевский И. П., Ислам в Иране в VII-XII веках, Издательство Ленинградского Университета, 1966, с. 303.

[61]Moosa M., նշվ. աշխ., էջ 363:

[62]Pipes D., նշվ. աշխ., էջ 431:

[63]Pipes D., նշվ. աշխ., էջ 434:

դարկման և գաղտնապահության խիստ համակարգին, այնուամենայնիվ, եղել են մարդիկ, ովքեր, ուրանալով ալավիական երդումը, գաղտնազերծել են ուսմունքը կամ դրա առանձին դրույթները: Ասվածի ապացույցն ալավի Սուլեյման Էֆենդի Ալ-Ազիհանայի օրինակն է, որը 1863 թ. Բեյրութում հրատարակեց նուսայրիականության պատմության մասին իր գիրքը[64]: Հետագայում նա դավաճանության համար սպանվեց:

Ալավիական ուսմունքի խորհրդավորությունը, ինչպես նաև դրա փակ ու գաղտնի համակարգը, որպես կանոն, կասկածներ ու անվստահություն է առաջացրել սուննիների շրջանում, որոնք ալավիներին մուսուլման չէին համարում: Այսպես, 13-րդ դարի սուննի աստվածաբան Ահմադ իբն Թայմիյան (1263-1328 թթ.) իր ֆեթվայում նշում է, որ նուսայրիներն ավելի անհավատ են, քան՝ քրիստոնյաներն ու հրեաները, նույնիսկ ավելի անհավատ, քան բազմաստվածության հետևորդները: Ըստ այդմ՝ նրանք մուսուլմանական համայնքին ավելի շատ վնաս են հասցրել, քան ֆրանկները, թուրքերը և այլն: Նրանք իրենց համարում են շիա մուսուլմաններ, սակայն ո՛չ Աստծուն են հավատում, ո՛չ նրա մարգարե Մուհամմադին և ո՛չ էլ Սուրբ Ղուրանին: Նուսայրիները մուսուլմանների ամենավատ թշնամիներն են, հետևաբար նրանց դեմ յուրաքանչյուր մուսուլման պարտավոր է սրբազան պատերազմ վարել[65]:

Անդրադառնալով նուսայրիներին՝ 14-րդ դարի արաբ ճանապարհորդ Իբն Բատուտան իր «Ռիհլաթ իբն Բատուտա» աշխատության մեջ ցույց է տալիս նուսայրիների մերժողական վերաբերմունքն իսլամի շատուշատ իրողությունների նկատմամբ[66]: Ալավիների և սուննիների միջև անտագոնիզմը խորացել է հատկապես Օսմանյան կայսրության ժամանակաշրջանում:

20-րդ դարի սկզբներին տեղի ունեցած աշխարհաքաղաքական գործընթացները դրական ազդեցություն ունեցան ալավիական համայնքի իրավաքաղաքական կարգավիճակի վրա: Առաջին համաշ-

---

[64] Այս մասին մանրամասն տես՝ Seale P., Asad, The Struggle For The Middle East, Berkeley, London, 1989, p. 10:

[65] Pipes D., նշվ. աշխ., էջ 435-436:

[66] Ibn Battuta, The Travels of Ibn Battuta, Dar Sader, Beyrouth, 1960, p. 283.

խարհային պատերազմի ավարտից հետո Ֆրանսիան և Անգլիան սկսեցին ակտիվ մասնակցել պատերազմում պարտված Օսմանյան կայսրության երկրամասերի բաժանման գործընթացին: Բաժանումն իրականանում էր մանդատային համակարգի սկզբունքի հիման վրա, որը նախ առաջ քաշվեց 1919 թ. Փարիզի Խաղաղության կոնֆերանսում, իսկ հետո, որպես կառավարման ձև, հաստատվեց Ազգերի լիգայի կանոնադրությամբ[67]: Այսպես, արաբական երկրների կառավարումը հանձնվեց Անգլիային և Ֆրանսիային: 1920 թ. ապրիլի 19-ից 26-ը Սան Ռեմոյի կոնֆերանսում Իրաքի և Պաղեստինի մանդատը հանձնվեց Անգլիային, իսկ Սիրիայինը և Լիբանանինը՝ Ֆրանսիային, ինչն Ազգերի լիգան վերջնականապես հաստատեց 1922 թ. հուլիսի 24-ին[68]: Ֆրանսիան, ստանալով մանդատային կառավարման իրավունքը, ձեռնամուխ եղավ Սիրիայի տրոհմանը՝ նպատակ ունենալով թուլացնել երկիրը և այն ավելի հեշտ կառավարել: Մինչև 1922 թ. ապրիլը ֆրանսիական իշխանությունները Սիրիայի տարածքի վրա ստեղծեցին հինգ պետություն՝ Լիբանանի, Դամասկոսի, Հալեպի, Ջաբալ Դրուզի, ալավիների, ինչպես նաև Ալեքսանդրետի ինքնավար մարզը[69]: Սիրիայի տրոհումը, սակայն, չարդարացրեց ֆրանսիացիների հույսերը, և նրանք որոշեցին հետզհետե միավորել այդ մանր պետական կազմավորումները:

Դեռևս 1919 թ. ալավի շուրջ 73 ղեկավարներ խնդրագիր ուղարկեցին ֆրանսիացի գեներալ Գուրոյին՝ պահանջելով ձևավորել ազատ նուսայրիական մի միություն, սակայն ալավիաֆրանսիական շփումներն ընդհատվեցին լեռներում սկսված մարտերի պատճառով: 1918 թ. լեռներում ալավիների հակաֆրանսիական պայքարը ղեկավարում էր ալավի շեյխ Սալեհ Ալ-Ալին: Ալավի ապստամբներն այդ ընթացքում հարաբերություններ էին հաստատել Սիրիայի հյուսիսում հակաֆրանսիական պայքարի ղեկավար Իբրահիմ Հանանոյի և Դամասկոսում Ֆեյսալի վարչակարգի հետ[70]:

---

67 Հովհաննիսյան Ն., Արաբական երկրների պատմություն, հ. III, Երևան, 2006, էջ 12-13:

68 Նշվ. աշխ., էջ 136:

69 Նշվ. աշխ., էջ 443:

70 Bengio O., Ben-Dor G., նշվ. աշխ., էջ 131:

1920 թ. օգոստոսի 31-ին ստեղծվեց «ալավիների ինքնավար շրջանը», որը ղեկավարում էր ֆրանսիացի կառավարիչը: 1921 թ. կեսերին Սալեհ Ալ-Ալիի ապստամբությունն ի վերջո ճնշվեց: Ֆրանսիացի կառավարչին կից ստեղծվեց նաև 12 հոգանոց կառավարչական հանձնաժողով, որի անդամները տարբեր կրոնական համայնքների ներկայացուցիչներ էին: Հանձնաժողովի անդամներից յոթն ալավի էին, երկուսը՝ քրիստոնյա, երկուսը՝ սուննի մուսուլման և մեկը՝ իսմայիլական: Ալավիական շրջանն ուներ իր սահմանադրությունը և սեփական դրոշը: Գործադիր իշխանությունն իրականացնում էր կառավարությունը, որը կոչվում էր Խորհուրդ: Խորհրդի կազմի մեջ ընդգրկված էին հիմնականում ալավիներ, սակայն այն ղեկավարում էր ֆրանսիացի կառավարիչը[71]: 1922 թ. հունիսի 22-ին ինքնավար շրջանն ստացավ պետության կարգավիճակ և վերանվանվեց Ալավիների պետության (դաուլաթ ալ-ալավիյուն): Ֆրանսիացի կառավարիչն ստացավ նահանգապետի կոչում և ստեղծվեցին ֆինանսական, առողջապահական, աշխատանքային, արդարադատություն իրականացնող մարմիններ, որոնք ղեկավարում էին ֆրանսիացի խորհրդականները: Ալավիների պետությունն ընդգրկում էր Լաթաքիայի և Տարտուսի նահանգները: Պետության բնակչությունն այդ ժամանակ կազմում էր շուրջ 278 հազար մարդ, որից 176 հազարն ալավիներ էին, 52 հազարը՝ սուննի մուսուլմաններ, 44,5 հազարը՝ քրիստոնյաներ և 4,5 հազարը՝ իսմայիլականներ[72]: Չնայած ալավիները կարողացան ստեղծել քիչ թե շատ անկախ պետականություն, բայց նրանց կենսամակարդակը շարունակում էր մնալ ցածր: Ծանր էր շրջանի սոցիալ-տնտեսական իրավիճակը: Նշենք, որ մինչև 1946 թ. ալավիների թիվը Սիրիայում հասնում էր 325 հազարի: Նրանք կազմում էին երկրի բնակչության միայն տաս տոկոսը, իսկ բանակի ընդհանուր թվաքանակի՝ քսան տոկոսը: 1921-1945 թթ. ֆրանսիական մանդատային իշխանությունների ստեղծած «Լևանտի հատուկ զորքերի» կազմում ութ հետևակային գումարտակներից երեքը կազմված էին ալավիներից: Ընդհանուր առմամբ, ֆրանսիա-

---

[71]Саутов В. Н., Сирийские алавиты в новейшее время, Материалы I-ой конференции арабистов Институт востоковедения РАН, Институт изучения Израиля и Ближнего Востока, Москва, 1996, с. 61.

[72]منذر الموصلي, البحث عن الذات الجذور, العلويون العرب السوريون, دمشق, 2007, ص. 207

կան մանդատի տարիներին բանակում մեծամասնություն էին փոքրամասնությունները՝ ալավիները, դրուզները, չերքեզները, հայերը և այլք[73]:

Ալավիական համայնքում իրավական հարցերը լուծվում էին սուննիական օրենքներով, սակայն ֆրանսիական մանդատի հաստատումից հետո ալավիներն այլևս չէին ցանկանում իրենց իրավական խնդիրները քննարկել սուննիական դատարաններում: Այդ իսկ պատճառով ֆրանսիացիները 1922 թ. հիմնեցին ալավիական կրոնական դատարաններ, որոնք պետք է ղեկավարվեին շիայական տասներկուիմամական դպրոցի օրենքների համաձայն: Սակայն այդ օրենքները ոչ մի աղերս չունեին ալավիների սովորույթների հետ, այդ իսկ պատճառով հատուկ դատավորներ էին կանչվում Լիբանանից: Այնուամենայնիվ, նոր դատարանների հիմնումը նրանց ազատեց սուննիական դատարանների խտրություններից[74]: Արդեն 1930-ական թթ., երբ Սիրիան բռնել էր անկախության ճանապարհը, ալավիական համայնքի շեյխերը՝ ռիջալ ադ-դին, որոշեցին այնպիսի քայլեր անել, որպեսզի սուննիական իշխանությունների կողմից ճանաչվեն որպես բարեպաշտ մուսուլմաններ:

1936 թ. ֆրանսիացիները որոշեցին ալավիական պետությունը միավորել Սիրիային, ինչին դեմ էին ալավի շեյխերը: Ֆրանսիայի վարչապետ Լեոն Բլյումին հասցեագրված նամակում նրանք հիմնավորում էին իրենց խնդիրները՝ կտրականապես մերժելով սուննիների տիրապետության գաղափարը[75]: Ի վերջո, նույն թվականի դեկտեմբերի 5-ին ֆրանսիական իշխանությունների 274-րդ որոշման համաձայն՝ ալավիների պետությունը, ալավիների կամքին հակառակ, միացվեց Սիրիային[76], բայց 1939 թ. կրկին դարձավ ինքնավար և միայն 1942 թ. վերջնականորեն միավորվեց Սիրիային: Ստեղծված իրավիճակում 1936 թ. հուլիսին ալավի կրոնական շեյխերը հանդես եկան մի հայտարարությամբ, որում ալավիներին համարում էին մուսուլման: Ըստ այդմ՝ մուսուլման ալավիները հավատում են Ալլահին,

---

[73]Nisan M., նշվ. աշխ., էջ 120:
[74]Kramer M., նշվ. աշխ., էջ 240:
[75]Pipes D., նշվ. աշխ., էջ 441:
[76]Саутов В. Н., նշվ. աշխ., էջ 170:

Մուհամմադին և ընդունում են իսլամի հինգ սյուները (արքան ադդին): Իսլամը մերժելու պարագայում ալավիները կհեռացվեին նաև ալավիական համայնքից: Այս հայտարարությանը զուգահեռ ընդունվեցին մի շարք որոշումներ: Ֆրանսիայի արտգործնախարարին ուղղված խնդրագրում նշված էր. «Ինչպես կաթոլիկները, ուղղափառներն ու բողոքականներն են համարվում քրիստոնյա, այդպես էլ սուննիներն ու ալավիները՝ մուսուլման»[77]:

Իրավիճակի հանգամանքներով պայմանավորված նման գործողությունները դրական արձագանք գտան սուննիական համայնքում: Փաստորեն, ալավիական համայնքն ընդունեց շիա իմամական լինելու փաստը [78]: Կարելի է ենթադրել, որ ալավիա-ֆրանսիական հարաբերությունները, 17-ամյա քաղաքական անկախությունը, հետագայում արդեն անկախ Սիրիայի իշխանությունների կողմից ճանաչումը, որպես մուսուլմանական համայնք, նպաստեցին իրենց մեկուսացված շրջաններից ալավիների դուրս գալուն և ան-

---

[77]Խնդրագրի տեքստը տես՝ Munir al-Sharif, Al-Muslimun al-Alawiyyun, 2-nd ed. Dar al-Umumiyya, Damascus, 1960, 106-8.Kramer M., նշվ. աշխ., էջ 241:

[78]Նաջաֆի շիայական հեղինակություն այաթոլլա Մոհսին Ալ-Հաքիմին 1947 թ. առաջարկում էր Լիբանանի Բեքքա հովտի շեյխ Հաբիբ Ալ-Իբրահիմին այցելել ալավիական շրջաններ ու իրեն ներկայացնել նրանց հավատալիքների և նիստուկացի վերաբերյալ հաշվետվություն: Հաբիբ Ալ-Իբրահիմին ալավի կրոնական շեյխերի հետ որոշ հանդիպումներ ունենալուց հետո Մոհսին Ալ-Հաքիմին խորհուրդ տվեց շիայականության կենտրոնում՝ Նաջաֆում, ուսումնառության վերցնել ալավիների մի խմբի, որտեղ վերջիններս կկարողանան ստանալ համապատասխան աստվածաբանական կրթություն: Այաթոլլան համաձայնեց հոգալ այցելության ծախսերը: 1948 թ. տասներկու ալավի ուսանողներ մեկնեցին Նաջաֆ, սակայն նրանք այնտեղ շիա որոշ գործիչների կողմից ստոր բացուցիչ վերաբերմունքի արժանացան և արդյունքում ստիպված եղան վերադառնալ: Հետագայում շեյխ Հաբիբի առաջարկով ստեղծվեց Ջաֆարի անվամբ միությունը, որտեղ ուսուցանվում էին տարբեր առարկաներ, ինչպես նաև շիա տասներկուիմամական աստվածաբանությունն ու իրավունքը: Հաքիմի առաջարկով Ջաֆարի միության մասնաճյուղերը հիմնվեցին նաև Լաթաքիայում, Բանյասում, Ջաբլայում և Տարտուսում: Միությունը սիրիական իշխանությունների կողմից պաշտոնապես ճանաչվեց միայն 1952 թ.: Արդյունքում, շիայական տասներկուիմամական դպրոցը հավասարվեց մյուս ճանաչված իրավական դպրոցներին, իսկ նրա փորձը սկսեց օգտագործվել իսլամական դատարաններում: Տե՛ս Kramer M., նշվ. աշխ., էջ 243:

կախ Սիրիայի կայացման գործընթացին մասնակցություն ունենալուն: Փաստ է, որ ֆրանսիացիների հետ հարաբերություններն ալավիներին դարձրեց որոշակիորեն առաջադեմ, քաղաքական և ռազմական գործում՝ ավելի փորձառու: Բացի այդ, համայնքային կյանքի տարբեր բնագավառներում նկատելի առաջընթաց գրանցվեց[79]: Իր հերթին, սիրիական իշխանությունների կողմից ալավիներին մուսուլմանական համայնք ճանաչելը թույլ տվեց նրանց լիիրավ իրացնել ձեռք բերված հնարավորությունները:

## 1. 2. Ալավիների ռազմաքաղաքական իշխանության հաստատումը Սիրիայում (1969-1976 թթ.)

1963 թ. մարտի 8-ին գնդապետ Զիյադ Ալ-Հարիրիի հրամանատարության տակ գործող զորքերը, որոնք տեղակայված էին Իսրայելի սահմանին, շարժվեցին Դամասկոսի ուղղությամբ և շրջապատեցին այն: Արդյունքում, տեղի ունեցավ պետական հեղաշրջում, որի հետևում կանգնած էին բաասական սպաները բանակի գլխավոր շտաբի պետ գեներալ Ռաշիդ Քութեյնիի գլխավորությամբ: Հեղաշրջումն իրագործվեց Ռազմական կոմիտեի ղեկավարների կողմից[80]: Վարչապետ նշանակվեց Բաաս կուսակցության հիմնադիր անդամներից Սալահ Բիթարը, իսկ օրենսդիր և գործադիր իշխանությունը Սիրիայում ստանձնեց հեղաշրջումից հետո ստեղծված Հեղափոխական հրամանատարության ազգային խորհուրդը՝ ՀՀԱԽ-ն: Սիրիայում Բաաս կուսակցության իշխանության գալը նշանավորեց երկրի զարգացման բոլորովին նոր փուլի սկիզբը: Տեղի ունեցած զտումներից հետո 47 պաշտոնյա ու 800 զինվորական սպա թոշակի ուղարկվեց: Երկրի կառավարումն իրենց ձեռքը վերցրեցին հասարակական նոր շերտեր՝ քաղաքային միջին խավի և սուննիական գյուղերի ներկայացուցիչները[81]: Բացի այդ, պետք է նշել մեկ այլ կարևոր հանգամանք

[79] Pipes D., նշվ. աշխ., էջ 441:
[80] Мирский Г., Проблемы Социалистической Ориентации в Арабских Странах и Роль военных, Проблемы Современной Арабистики, Современные Политические и Социально-Экономические Проблемы Арабских Стран, Ереван, 1988, с. 47
[81] Пир-Будагова Э., Сирия в Борьбе за Упрочение Национальной Независимости (1945-1966), Москва, 1978, с. 178.

նս, այն է՝ Սիրիայում ամուր դիրքեր ունեցող սպայական անձնակազմի երկրորդ սերունդը զիջեց իր դիրքերը, իսկ ստեղծված բացը լրացրեց սպաների նոր սերունդը, որը խիստ տարբերվում էր իր նախորդից: Առաջ մղվեցին Հոմսի ռազմական ակադեմիայի շրջանավարտները, որոնք հիմնականում ալավիական համայնքի և կրոնական այլ փոքրամասնությունների ներկայացուցիչներ էին: Այսպես, ալավիները զբաղեցրին 700 ազատ սպաների հաստիքների կեսը[82]: Բացի այդ, կարևոր էր նաև, որ ալավի սպաները զինվորական պաշտոնների էին անցնում հիմնականում մայրաքաղաքում՝ հետզհետե սուննիներին հեռացնելով դեպի ծայրամասային նահանգներ:

Սիրիական զինված ուժերի ստեղծման օրվանից կրոնական և էթնիկ փոքրամասնությունների ներկայացուցիչները բանակում իրենց թվաքանակով միշտ գերակշռել են: Բանակում ծառայելը սուննի մուսուլմանների շրջանում հեղինակավոր չէր, այդ իսկ պատճառով այն համալրվում էր հիմնականում ոչ սուննի երիտասարդների միջոցով, որոնց համար դա աշխատանքային առաջընթաց գրանցելու միակ ձևն էր: Քանի որ վերջիններիս համար էլ Բաաս կուսակցությունը քաղաքական հենարան էր, փաստորեն ստացվում էր, որ Բաասն ազգային և կրոնական փոքրամասնություններին հնարավորություն էր տալիս մասնակցություն ունենալ Սիրիայի հասարակական-քաղաքական ոլորտի գործընթացներին: Մինչ այդ, քաղաքական կուսակցությունները համարվում էին սուննիական բնակչության մենաշնորհը, և ալավիների ու մյուս էթնոկրոնական փոքրամասնությունների ազդեցությունը Սիրիայի քաղաքական կյանքի վրա միջնորդավորված բնույթ էր կրում[83]:

1963 թ. մարտին Բաաս կուսակցության իշխանության գալուց հետո ներկուսակցական և ներիշխանական պայքարը շարունակվեց: Այն մարդիկ, ովքեր քիչ թե շատ բարձր պաշտոններ էին զբաղեցնում պետական համակարգում, փորձում էին համախմբել իրենց կողմնակիցներին՝ ելնելով ազգակցական, ցեղային կամ համայնքային շահերից: Ժամանակի ընթացքում ալավիների ներկայությունը պետական համակարգում գերիշխող դարձավ: Ինչպես արդեն նշեցինք,

---

[82] Мирский Г., նշվ. աշխ., էջ 46:
[83] Мирский Г., Армия и Политика в Странах Азии и Африки, Москва, 1970, с. 85.

ալավիները սուննի սպաներին Դամասկոսում հեռացնում էին զբաղեցրած պաշտոններից՝ այդպիսով նրանց զրկելով ազդեցությունից: Այդ գործընթացը կասեցնելու համար ՀՀԱԽ-ի նախագահ Ամին Հաֆեզը ցանկանում էր, որպեսզի ալավի հայտնի 30 սպաներ հեռանան պաշտոններից, ինչը նրան չհաջողվեց: 1966 թ. փետրվարի 23-ին Բաաս կուսակցության զինվորականները Սալիմ Հաթումի գլխավորությամբ իրականացրին պետական հեղաշրջում, որի արդյունքում Ամին Հաֆեզը ձերբակալվեց, իսկ համաարաբական ղեկավարության անդամներ Միշել Աֆլակը, Մունիֆ Ռազզազը և Սալահ Բիթարն արտաքսվեցին երկրից: Գեներալ-մայոր Հաֆեզ Ալ-Ասադը[84], որի խմբավորումը վճռական դեր էր խաղացել փետրվարի 23-ի հեղաշրջման գործում, գրավեց պաշտպանության նախարարի պաշտոնը[85]: Նույն թվականի սեպտեմբերին դրուզների և արդեն

---

[84]Հաֆեզ իբն Ալի իբն Սուլեյման Ալ-Ասադը ծնվել է՛ 1930թ. հոկտեմբերի 6-ին Լաթաքիայի շրջանի Կարդահա գյուղում՝ ալավիների ավանդական կենտրոններից մեկում: Նա Ասադների ընտանիքի միակ զավակն էր, ով կարողացավ միջնակարգ կրթություն ստանալ: Տասնվեց տարեկան հասակում դարձավ Բաաս կուսակցության անդամ: 1949թ. դարձավ կուսակցության ուսանողական խորհրդի նախագահ, իսկ 1951թ.՝ սիրիական ուսանողների համազգային միության նախագահ: 1952թ. ընդունվեց Հոմսի ռազմական ակադեմիան, այնուհետև 1955թ. ավարտելով Հալեպի ռազմաօդային ակադեմիան՝ դարձավ ռազմական օդաչու՝ ստանալով լեյտենանտի զինվորական կոչում: 1958թ. Հաֆեզ Ալ-Ասադն ամուսնացավ ալավիական Մախլուֆ հարուստ ընտանիքից սերած Անիսա Մախլուֆի հետ: Երկու տարի անց ծնվեց նրանց դուստրը՝ Բուշրան, հետո լույս աշխարհ եկան նաև որդիները՝ Բասիլը, Բաշարը, Մահիրը և Մաջիդը: 1958 թ. Հաֆեզը ուսման մեկնեց Խորհրդային Միություն: Արաբական Միացյալ Հանրապետության՝ ԱՄՀ, կազմավորումից հետո Ասադը դարձավ ՄԻԳ-19 կործանիչների եգիպտական մի ջոկատի հրամանատար, սակայն 1961թ. քաղաքական պատճառներով հեռացվեց բանակից: ԱՄՀ-ի կազմից Սիրիայի դուրս գալուց հետո վերադարձավ Դամասկոս, սկսեց աշխատել Սիրիայի տրանսպորտի նախարարությունում, շարունակելով սակայն ակտիվ մասնակցել Բաաս կուսակցության Ռազմական կոմիտեի աշխատանքներին: 1963թ. մարտի 8-ի հեղափոխությունից հետո Հաֆեզը կրկին վերականգնվեց զինվորական ծառայության և ստացավ մայորի կոչում, իսկ 1963թ. վերջին դարձավ Սիրիայի ռազմաօդային ուժերի հրամանատար: Հասկանալով, որ Սիրիայում իշխանության բանալին հենց բանակն է, նա իր հրամանատարության տակ գործող ջոկատներում համախոհների բանակ համախմբեց, իսկ արդեն 1966թ. հեղաշրջումից հետո նշանակվեց Սիրիայի պաշտպանության նախարար, Մուհամմադ Ումրանի և Սալահ Ջադիդի հետ միասին դառնալով երկիրը կառավարող եռյակի անդամ: Տե՛ս http://www.presidentassad.net/President_Hafez_Al_Assad_CV.htm):

[85]Հովհաննիսյան Ն., Արաբական երկրների պատմություն, հ. IV, Անկախության և

1968 թ. փետրվարին Ահմադ Սուվեյդանիի ղեկավարությամբ գործող հաուրանիականների խմբի կողմից հեղափոխությունների անհաջող փորձերից հետո Սիրիայում բարձրագույն զինվորական իշխանությունը վերջնականապես անցավ ալավիների ձեռքը[86]:

1966 թ. փետրվարի 23-ին Սալիմ Հաթումի գլխավորությամբ կատարված զինվորական հեղաշրջումից[87] հետո Բաաս կուսակցության սպա և քաղաքացիական անդամների մեծ մասը հավաքվեցին Հաֆեզ Ալ-Ասադի և Սալահ Ջադիդի շուրջ, ովքեր այդ ժամանակ Սիրիայի ամենաազդեցիկ քաղաքական գործիչներից էին: Ջադիդը զինված ուժերի մի մասը ղեկավարում էր մի շարք զինվորական սպաների հետ ունեցած անձնական կապերի շնորհիվ: Սակայն Հաֆեզ Ալ-Ասադը՝ որպես պաշտպանության նախարար, ավելի բարենպաստ դիրքում էր, քանի որ կարողանում էր արդյունավետ կերպով ազդել իրենից անմիջական կախվածության մեջ գտնվող սպայական կորպուսի վրա: Հաֆեզ Ալ-Ասադը 1964 թ.-ից Սիրիայի ռազմաօդային ուժերի հրամանատարն էր և մեծ դեր ուներ այդ կառույցի կայացման գործում: Հաֆեզը կարողանում էր իր կողմնակիցներին նշանակել կարևոր ռազմավարական պաշտոնների: Ավելին, նա նաև Բաաս կուսակցության ռազմական կոմիտեի[88] ղեկավարներից էր, իսկ ռազմական կոմիտեն պատասխանատու էր կուսակցության ռազմական գործունեության համար: 1966 թ. փետրվարի 23-ին տեղի ունեցած հեղաշրջումից հետո Հաֆեզ Ալ-Ասադի և Սալահ Ջադիդի միջև սկսում է լարվածություն առաջանալ, ինչը սակայն բացահայտ չէր դրսևորվում: Հակասություններն ավելի շոշափելի դրսևորվեցին

---

ինքնիշխանության դարաշրջան, 1918-2005թթ., Երևան, 2007, էջ 506:

86 Batatu H., Some Observations on the Social Roots of Syria's Ruling, Military Group and the Causes for Its Dominance, Middle East Journal, Vol. 35, No 3, 1981, p. 343:

87 Փիր-Բուդաղովա Է., Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. XI, Արաբական երկրներ, Երևան, 1978, էջ 72:

88 Ռազմական կոմիտեն ստեղծվել է 1960 թ. Կահիրեում սիրիացի բաասական սպաների կողմից: Կոմիտեի հիմնադիրներն էին Սալահ Ջադիդը, Հաֆեզ Ալ-Ասադը, Մուհամմադ Ումրանը, Աբդ Ալ-Քարիմ Ալ-Ջունդին և Ահմադ Ալ-Միրը: Առաջին երեքն ալավիական համայնքի ներկայացուցիչներ էին, իսկ վերջին երկուսը՝ իսմաիլական: Նրանք կոմիտեի ստեղծման ժամանակ երդվեցին գաղտնի պահել նրա գործունեությունը: 1963թ. մարտի 8-ին Ռազմական կոմիտեն Սիրիայում իրականացրեց զինվորական հեղաշրջում, որի արդյունքում Սիրիայում իշխանության եկավ Բաաս կուսակցությունը: Տես՝ Seale P., նշվ. աշխ., էջ 60-64:

1967 թ. արաբ-իսրայելական պատերազմից հետո: Դրանք ծավալվում էին հիմնականում ռազմական, արտաքին և սոցիալ-տնտեսական հարցերի շուրջ: Բացի այդ, կային նաև գաղափարական տարաձայնություններ: 1966 թ. խեպտեմբերին Դամասկոսում տեղի ունեցած Բաաս կուսակցության համաարաբական 9-րդ համագումարում սահմանվեցին Սիրիայի ձախբաասական ղեկավարության արտաքին քաղաքական գործունեության հիմնական սկզբունքներն ու ուղղությունները, որոնց հիմքում ընկած էին համագումարի ընթացքում մշակված ազատագրական պատերազմի դրույթները: Մասնավորապես, նշվում էր, որ Սիրիայում տեղի ունեցած ձախբաասականների հեղափոխությունն արաբական համազգային հեղափոխության բաղկացուցիչ մասն է կազմում: Պաղեստինի ազատագրումը ձախբաասականների արտաքին քաղաքականության առաջնահերթ խնդիրներից էր, որը պետք է լուծվեր համաարաբական ազգային ազատագրական պայքարի միջոցով և դառնար համաարաբական հեղափոխության հաղթանակի նախապայմանը[89]: Սալահ Ջադիդը և նրա կողմնակիցները համարում էին, որ նախապատվությունը պետք է տրվի սոցիալիստական հասարակության կառուցմանը և սոցիալիստական գաղափարների տարածմանը, իսկ Հաֆեզ Ալ-Ասադի գլխավորած թևը կարևոր նշանակություն էր տալիս արաբական ազգայնական գաղափարներին, միջարաբական համագործակցության ամրապնդմանն ու Իսրայելի դեմ պայքարին: Այս երկու ուղղությունների համադրումը, ըստ այդմ, համահունչ էր Բաաս կուսակցության գաղափարախոսությանը:

Այսպիսով, իշխանության համար պայքարը, որն սկսվել էր 1964թ. Բաաս կուսակցության ռազմական կոմիտեի հայտնի ալավի անդամների՝ Մուհամմադ Ումրանի, Սալահ Ջադիդի և Հաֆեզ Ալ-Ասադի միջև, ավելի հստակորեն արտահայտվեց Բաաս կուսակցության Լաթաքիայի շրջանային մասնաճյուղի օրակարգում առկա ներքին տարաձայնություններով: Իշխանության համար պայքարում տարակարծություններն իրենց գագաթնակետին հասան այն ժամանակ, երբ Հաֆեզ Ալ-Ասադն ու Սալահ Ջադիդը որոշեցին իրենց ազ-

[89]Григорян Г. М., Позиция Сирии в Ближневосточном конфликте, Ереван, 1989, с. 59-62.

ղեցությունը մեծացնել Լաթաքիայի շրջանում, որը նրանց ծննդավայրն էր: 1969 թ. փետրվարին Սալահ Ջադիդի կողմնակիցները, որոնց թիվը կուսակցության Լաթաքիայի շրջանային մասնաճյուղում գերազանցում էր Հաֆեզ Ալ-Ասադի աջակիցների թվին, փորձեցին կուսակցության շարքերից մաքրել Հաֆեզի հայտնի կողմնակցցներին՝ այդպիսով վերջ դնելով նաև Ասադի ունեցած ազդեցությանը մասնաճյուղի վրա, սակայն հանդիպեցին ուժեղ հակաքայլերի: Հաֆեզ Ալ-Ասադը հրամայեց ձերբակալել Լաթաքիայի շրջանային ղեկավարությանը և ձևավորեց նոր ղեկավարություն, որի կազմի մեջ մտան մինչ այդ կուսակցության մասնաճյուղից հեռացված իր կողմնակիցները: Փետրվարի 27-ին ձերբակալվեց նաև Լաթաքիայի նահանգապետը, որը կուսակցության շրջանային ղեկավարության անդամ էր: Նա ենթարկվեց տնային կալանքի, նրան նույնիսկ չէր թույլատրվում այցելել կուսակցության գրասենյակ: Բացի այդ, Տարտուսում ձերբակալվեց նաև Բաաս կուսակցության Լաթաքիայի շրջանի գլխավոր քարտուղար ալավի Ադիլ Նախսան, որը Սալահ Ջադիդի կողմնակիցներից էր: Ադիլ Նախսային ստիպեցին անմիջապես լքել Լաթաքիայի նահանգը: Հետագայում Նախսան ազատ արձակվեց, սակայն 1972 թ. կրկին ձերբակալվեց և միայն ազատ արձակվեց 22 տարի անց: Հաֆեզ Ալ-Ասադը հրահանգել էր տարբեր նահանգների ռազմական հետախուզական ծառայություններին արգելել կուսակցության ղեկավարության անդամների շփումները կուսակցության քաղաքացիական ապարատի հետ՝ զգուշացնելով նրանց, որ հակառակ դեպքում կձերբակալվեն: Չափազանց կտրուկ քայլեր ձեռնարկվեցին Լաթաքիայի և Տարտուսի նահանգներում: 1969 թ. փետրվարին Հաֆեզ Ալ-Ասադի ձեռնարկած քայլերը նմանվում էին ռազմական հեղաշրջման: Ասադի զորքերը գրավեցին Դամասկոսի և Հալեպի ռադիոյի շենքերը, ինչպես նաև Բաաս կուսակցության «Ալ-Բաաս» և «Ալ-Սաուրա» պարբերականների գրասենյակները: Որպես այլընտրանք վերոնշյալ երկու թերթերին՝ Սալահ Ջադիդին հարող Բաաս կուսակցության թևը 1969 թ. մարտի 20-ին Բեյրութում սկսեց հրատարակել « Ալ-Ռայա»պարբերականը[90]:

Բաաս կուսակցության տարածաշրջանային ղեկավարության

[90]Van Dam N., նշվ. աշխ., էջ 66:

խնդրանքով 1969թ. մարտին Դամասկոսում անցկացվեց կուսակցության մարզային արտակարգ համագումար, որի ժամանակ ջանքեր գործադրվեցին կուսակցության երկու թևերին փոխզիջման բերելու համար: Կուսակցության երկու հոսանքները հարում էին համապատասխանաբար Հաֆեզ Ալ-Ասադին և Սալահ Ջադիդին: Սակայն իրական հաշտության չկարողացան հասնել: Հաֆեզ Ալ-Ասադի դիրքերը համագումարի ընթացքում ուժեղացնելու համար՝ Ասադի զորքերը զավթել էին Դամասկոսի և նրա շրջակայքի ռազմավարական կարևոր կառույցները: Համագումարը չկարողացավ հաղթահարել փակուղին: Երկիշխանությունը շարունակվեց: Ասադը նախկինի պես պահպանում էր գերիշխանությունը Սիրիայի զինված ուժերի, իսկ Ջադիդը՝ Բաաս կուսակցության քաղաքացիական ապարատի վրա:

Նշենք նաև, որ նախքան արտակարգ համագումարի գումարումը, Ասադի զինվորական կողմնակիցները պաշարել էին խմայիլական գնդապետ Աբդ Ալ-Քարիմ Ալ-Ջունդիի շտաբ-կայանը: Գնդապետ Ջունդին Սալահ Ջադիդի հավատարիմ կողմնակիցներից էր և այդ ժամանակ ղեկավարում էր ազգային անվտանգության և ընդհանուր հետախուզական ծառայությունները: Զինվորականներն առևանգեցին գնդապետի օգնականներից մի քանիսին, բռնագրավեցին գրասենյակին պատկանող ավտոմեքենաները, որից հետո Աբդ Ալ-Քարիմ Ալ-Ջունդին ինքնասպան եղավ: Ջունդիի մահից հետո Սալահ Ջադիդի ոչ ալավի զինվորական կողմնակիցներ Ահմադ Ալ-Միրը[91] և Ահմադ Սուվեյդանին չեզոքացվեցին[92]:

1970 թ. հոկտեմբերի 30-ին Դամակոսում սկսվեց Բաաս կուսակցության 10-րդ արտակարգ համագումարը, որը նպատակ ուներ քաղաքական ճգնաժամից դուրս գալու ուղիներ մատնանշել: Համագումարի ժամանակ պարզվեց, որ Հաֆեզ Ալ-Ասադն ու նրա հավատարիմ զինվորական աջակից Մուստաֆա Տլասը մեկուսացված էին,

---

[91]Ահմադ Ալ-Միրը Բաաս կուսակցության ռազմական կոմիտեի հիմնադիր անդամներից էր, ինչպես նաև ղեկավարել էր մի շարք զորամիավորումներ 1967 թ. հունիսյան՝ վեցօրյա պատերազմի ժամանակ: Պատերազմից շատ չանցած Ահմադ Ալ-Միրն ընտրվեց Բաաս կուսակցության ազգային ղեկավարության անդամ: Իսկ արդեն 1968 թ. հոկտեմբերին նշանակվեց Մադրիդում Սիրիայի արտակարգ և լիազոր դեսպան: Տե՛ս Van Dam N., նշվ. աշխ., էջ 67:
[92]الحياة, «ալ-Հայաթ», Լոնդոն, 06.08.1969.

մինչդեռ Սալահ Ջադիդն իր հետևորդներով վայելում է համագումարի անդամների մեծամասնության աջակցությունը: Համագումարի ժամանակ տեղի ունեցած քննարկումներից և ընդունված որոշումներից երևում էր, որ Ջադիդն ու Նուր Ադ-Դին Ալ-Աթասին դեռևս մեծ ազդեցություն ունեն կուսակցության ներսում: Ասադը մեղադրվեց նաև երկրում երկիշխանության հաստատման համար: Սալահը նրան անվանեց ֆաշիստ[93]: Համագումարում ընդունված որոշման համաձայն՝ պաշտպանության նախարար Հաֆեզ Ալ-Ասադն ու գլխավոր շտաբի պետ Մուստաֆա Տլասն ազատվում էին իրենց պաշտոններից: Այս որոշումը, սակայն, հանդիպեց վերջիններիս հակազդեցությանը[94]: Հաֆեզ Ալ-Ասադը՝ որպես պաշտպանության նախարար, կարողացել էր ռազմական ուժերի կարևոր բոլոր կառույցներում և առանցքային նշանակություն ունեցող հրամանատարական պաշտոններում նշանակել իր կողմնակիցներին՝ վերահսկողություն հաստատելով բանակի վրա[95]: Նա հրահանգել էր զորքերին զավթել կուսակցության քաղաքացիական տեղամասերը, այնուհետև ձերբակալել կուսակցության քաղաքացիական ղեկավարներին՝ ներառյալ Սալահ Ջադիդին և նախագահ Նուր Ադ-Դին Ալ-Աթասիին: Համագումարի մի շարք անդամներ փախան Լիբանան՝ որպեսզի խուսափեն ձերբակալությունից՝ այնտեղից շարունակելով ընդդիմադիր գործունեությունը: Նոյեմբերի 13-ին Սալահ Ջադիդն ու Նուր Ալ-Դին Ալ-Աթասին ձերբակալվեցին և բանտարկվեցին Դամասկոսի Մազզայի բանտում: Սալահ Ջադիդը բանտարկված մնաց մինչև իր մահը՝ 1993 թ. օգոստոսը, և հուղարկավորվեց Լաթաքիայի մոտ գտնվող հայրենական գյուղում: Իսկ Ալ-Աթասին ազատ արձակվեց միայն 20 տարի անց 1992 թ. և որոշ ժամանակ անց մահացավ: Հաֆեզ Ալ-Ասադի բաասական մյուս հակառակորդները՝ քաղաքացիական և զինվորական, նույն ճակատագրին արժանացան: Բաաս կուսակցության 10-րդ արտակարգ համագումարն ավարտվեց 1970 թ. նոյեմբերի 16-ին պաշտպանության նախարար Հաֆեզ Ալ-

[93]Maoz M., The Sphinx of Damascus, A Political Biography, Weidenfeld and Nicolson, London, 1988, p. 39.
[94]Նույն տեղում:
[95] Հովհաննիսյան Ն., նշվ. աշխ., էջ 513:

Ասադի և նրա կողմնակիցների հաղթանակով: Սիրիայում քաղաքական իշխանությունն անցավ Բաաս կուսակցության զինվորական թևին, այսինքն՝ Հաֆեզ Ալ-Ասադին: Իշխանությունն անսասան պահելու նպատակով վերջինս վստահում էր միայն իրեն հավատարիմ զինվորականներին: Արդյունքում, Ասադին հավատարիմ մի շարք բարձրաստիճան սպաներ Սիրիայի զինված ուժերում զբաղեցրին ռազմավարական առումով կարևոր գրեթե բոլոր պաշտոնները: Սիրիայի ռազմական համակարգում Հաֆեզին հավատարիմ ոչ ալավի սպաները նույնպես բարձր պաշտոններ գրավեցին: Գեներալ Նաջի Ջամիլը, որը 1970 թ. նոյեմբերին նշանակվել էր Սիրիայի ռազմաօդային ուժերի հրամանատար և ծառայել մինչև 1978 թ. մարտ ամիսը, չէր կարող ռազմաօդային ուժերն օգտագործել ընդդեմ Հաֆեզ Ալ-Ասադի վարչակարգի, քանի որ այդ համակարգում աշխատող բարձրաստիճան սպաների մեծ մասը Ասադի կողմնակիցներն էին: Սա վերաբերում էր նաև սուննի բարձրաստիճան մնացած սպաներին, ինչպիսին օրինակ՝ 1972 թ. մարտին Սիրիայի պաշտպանության նախարար նշանակված Մուստաֆա Տլասն էր: Նաջի Ջամիլը և Մուստաֆա Տլասն այնքան ժամանակ կարող էին կարևոր դերակատարություն ունենալ երկրում, որքան որ հավատարիմ կմնային Հաֆեզի քաղաքական գծին: Իսկ եթե նրանք փորձեին շեղվել այդ գծից, ապա արագորեն և հեշտությամբ կպաշտոնազրկվեին[96]:

Հաֆեզ Ալ-Ասադի գլխավորությամբ նոյեմբերի 16-ին ստեղծվեց Բաաս կուսակցության տարածաշրջանային նոր ղեկավարություն, որտեղից վտարվեցին Սալահ Ջադիդի բոլոր կողմնակիցները: Նոյեմբերի 21-ին Հաֆեզ Ալ-Ասադը դարձավ Սիրիայի վարչապետ և նրա գլխավորությամբ ձևավորվեց սիրիական ազգային միասնության կոալիցիոն կառավարությունը: Այստեղ մեծամասնություն կազմեցին Բաաս կուսակցության ներկայացուցիչները: Ժամանակավորապես Սիրիայի նախագահ նշանակվեց Հաֆեզ Ալ-Ասադի կողմնակիցներից մեկը՝ Ահմադ Ալ-Խատիբը[97]:

1970 թ. նոյեմբերի 16-ին Բաաս կուսակցության նորակազմ ղեկավարությունը հանդես եկավ հայտարարությամբ: Հայտարարու-

[96]Van Dam N., նշվ. աշխ., էջ 68-69:
[97]Հովհաննիսյան Ն., նշվ. աշխ., էջ 514:

թյան մեջ շարադրված էին կուսակցության նոր ղեկավարության գլխավորած շարժման հիմնական նպատակներն ու խնդիրները: Դրանում ընդգծված էր, որ շարժումը հավատարիմ է մնում Բաաս կուսակցության համագումարների ընդունած որոշումներին: Շեշտված էր, որ նախկին ղեկավարությունը թույլ էր տվել կոպիտ սխալներ և վրիպումներ ու հետևողական չէր եղել կուսակցական որոշումները կիրառելու գործում: Ուստի, նոր ղեկավարության խնդիրն էր ուղղել նախորդ ղեկավարության սխալները[98]: Այսպիսով, Սիրիայում անարյուն հեղաշրջում կատարվեց: Այս կապակցությամբ Հաֆեզ Ալ-Ասադն ասել է, որ 1970 թ. նոյեմբերի 16-ի շարժումը փրկարար շարժում է, և որ »Ուղղիչ շարժումը« կուսակցության, հայրենիքի փրկության համար միակ ելքն է: Արդյունքում, հիմք դրվեց «Ուղղիչ շարժմանը»[99]:

Մի քանի ամիս անց, 1971թ. փետրվարին, Բաասի տարածաշրջանային ղեկավարությունը ընտրեց նաև ժողովրդական խորհրդի 173 անդամներին, որոնք Սիրիայի նախագահի պաշտոնի համար առաջադրեց Հաֆեզ Ալ-Ասադի թեկնածությունը: Հանրաքվեն որոշվեց անցկացնել մարտի 12-ին[100]: Հաֆեզ Ալ-Ասադը, ստանալով հանրաքվեի մասնակիցների ձայների 99%-ը, յոթնամյա ժամկետով ընտրվեց Սիրիայի Արաբական Հանրապետության նախագահ: Ապրիլի 3-ին կազմվեց նոր կառավարություն, որը գլխավորեց Ռահման Խլեյֆաուին: Հաֆեզ Ալ-Ասադի իշխանության ժամանակաշրջանում վերջապես երկրում դադարեցին անընդհատ տեղի ունեցող հեղափոխությունները ու հեղաշրջումները, իսկ Սիրիան դարձավ տարածաշրջանի ամենաազդեցիկ պետություններից մեկը՝ վերածվելով համաշխարհային քաղաքականության խաղացողի[101]:

Պետության նոր ղեկավարն իր ձեռքում կենտրոնացրեց կառավարման բոլոր լծակները՝ օրինականացնելով իր իշխանությունն ու

---

[98]Նույն տեղում, էջ 515:

[99]Սամսոնյան Հ., Բանակի դերը Սիրիայի քաղաքական կյանքում. Ռազմական հեղաշրջումների ֆենոմենը, Երևան, 2013, էջ 151:

[100]Maoz M., նշվ. աշխ., էջ 40:

[101]Bronson R., Syria. Hanging Together or Hanging Separately, The Washington Quarately, Vol. 23, N. 4, 2000, p. 93.

ձեռնամուխ լինելով տնտեսության ազատականացմանը[102]: Այս նպատակների իրագործման համար Հաֆեզ ալ-Ասադն իր համար հենարան դարձրեց պետական բյուրոկրատական համակարգը, Բաաս կուսակցությունը և բանակը: Երկրի հասարակական կյանքում արագորեն ամրապնդվում էր Բաաս կուսակցությունը, իսկ բնակչության հասարակական գիտակցությունը սնուցվում էր սոցիալիստական գաղափարներով[103]: Կարևոր էր նաև այն, որ առաջին անգամ բանակն ամբողջությամբ պաշտպանում էր մեկ առաջնորդի՝ Հաֆեզ Ալ-Ասադի թեկնածությունը[104]: 1971թ. մայիսին տեղի ունեցավ Բաաս կուսակցության տարածաշրջանային 5-րդ համագումարը, որի ժամանակ Հաֆեզ Ալ-Ասադն ընտրվեց կուսակցության տարածաշրջանային ղեկավարության գլխավոր քարտուղար: Նախագահն ապավինում էր բանակին, մասնավորապես ռազմաօդային ուժերի սպայական անձնակազմին, երրորդ զրահատանկային դիվիզիային, ինչպես նաև հատուկ ծառայություններին, որոնցում գերիշխող դիրքում էին ալավիները: Հաֆեզ Ալ-Ասադի իշխանության գալով՝ Սիրիայում ձևավորվեց նախագահին հավատարիմ և նվիրված իշխանական նոր վերնախավ, որի կլանային կառուցվածքը հիմնված էր ոչ միայն համայնքային կապերի, այլև սերտ մասնագիտական հարաբերությունների և նույն ուսումնական հաստատության՝ Հոմսի ռազմական ակադեմիայի սան լինելու փաստի վրա: Նշված գործոնները ստեղծել էին յուրահատուկ իշխանական մի դասակարգ, որի կազմում «օտարների» ընդգրկվելն անհնար էր[105]:

Նախագահն անմիջապես փորձեց մեղմացնել սուննիական մեծամասնության կողմից իշխող փոքրամասնության նկատմամբ ունեցած թշնամանքը, քանի որ սուննիներն ալավիներին համարում

---

102Hafizullah E., The Infitah Politics and the Failure of Political Islam in Syria, Contemporary Review, Vol. 273, Dec., 1998.

103Филоник А., Хафез Асад: призвание-гражданин, Арабские Страны Западной Азии и Северной Африки (Новейщая История, Экономика и Политика), Москва, 1997, с. 117.

104Zisser E., The Syrian Army: Between the Domestic and the External Fronts, MERIA, 2001, Vol. 5, N. 1.

105Манукян С., Исламский Фундаментализм в Сирии в 1960-80-х годах, Диссертаяция на соискание ученой степени кандидата исторических наук, Ереван, 2002, с. 72.

էին անհավատ հերետիկոսներ: Նա հասկանում էր նաև իսլամական գործոնի կարևորությունը Սիրիայի համար և անմիջապես իշխանության գալուց հետո վերացրեց նախորդ նախագահի՝ Ահմադ Ալ-Խատիբի կողմից պարտադրված մի շարք սահմանափակումներ, քանի որ վերջինս բացահայտ աշխարհիկ քաղաքականություն էր վարում և մզկիթներին պատերազմ էր հայտարարել: Հաֆեզ Ալ-Ասադը կրոնական հարցերով նախարարի պաշտոն ստեղծեց, ավելացրեց շուրջ երկու հազար կրոնական գործիչների աշխատավարձերն ու բարձրացրեց նրանց պաշտոնները: Նրա օրոք նորից ակտիվորեն սկսեց զարգանալ մզկիթների կառուցումը: 1970 թ.-ից մզկիթներին վերադարձվեց պետական խնամակալությունից և վերահսկողությունից անկախ գործելու հնարավորությունը[106]: 1974 թ. փետրվարին նախագահը Սաուդյան Արաբիայի թագավոր Ֆեյսալին այցելելու ընթացքում փոքր ուխտագնացություն՝ հաջ կատարեց և սկսեց անձամբ մասնակցել հրապարակային աղոթքներին: Նա բարեպաշտ մուսուլմանի կերպարով էր հանդես գալիս, որպեսզի չեզոքացներ ալավիականության և սուննիական հակասությունները և իսլամն օգտագործեր հասարակությանը համախմբելու նպատակով: Բացի այդ, նախագահը հանդիպում էր նաև կրոնադավանական փոքրամասնությունների առաջնորդների հետ, որպեսզի համայնքների միջև համաձայնություն ձեռք բերվեր: Հաֆեզ Ալ-Ասադի՝ բարեպաշտ մուսուլման լինելու հանգամանքը հաստատվեց մուսուլման ալիմների, այդ թվում՝ Դամասկոսի մուֆթի Ահմադ Քուֆթարոյի կողմից[107]:

1973 թ. նոր սահմանադրության ընդունման հետ կապված ալավիների նկատմամբ սուննիների անվստահության պատճառով ներքաղաքական իրադրությունը Սիրիայում սկսեց նորից լարվել: Ալավի շեյխերը մեկը մյուսի հետևից փորձում էին հաստատել, թե ալավիներն ամբողջովին տասներկուիմամական մուսուլմաններ են, սակայն այդ հայտարարություններն արդյունք չունեցան: Սիրիայի ալավիական վարչակարգը ստիպված եղավ դիմել իսլամական աշ-

---

106 Сараджян П., Активизация Деятельности Организации Братья-Мусульмане в Сирии в 1979-1982 гг., Ислам в Политической Жизни Стран Современного Ближнего и Среднего Востока, Ереван, 1986, с. 142.

107 Maoz M., Syria Under Hafiz al-Asad: New Domestic and Foreign Policies, The Hebrew University of Jerusalem, 1975, p. 11

խարհում մեծ հեղինակություն վայելող Լիբանանի շիաների ղեկավար իմամ Մուսա Աս-Սադրին, որպեսզի վերջինս հաստատի ալավիների մուսուլման լինելը: Իմամ Մուսա Աս-Սադրը նաև Իսլամական շիայական գերագույն խորհրդի քարտուղարն էր, ով մեծ վստահություն ու հեղինակություն էր վայելում: 1973 թ. Մուսա Աս-Սադրը հանդես եկավ ֆեթվայով, որով հաստատում էր ալավիների շիայական ծագումը[108]:

1973 թ. հոկտեմբերյան արաբ-իսրայելական պատերազմի ընթացքում Հաֆեզ Ալ-Ասադը հնարավորություն ստացավ մուսուլմանական ևս մեկ պատվիրան կատարել: Պատերազմի հենց սկզբից նա ընդգծում էր, թե այն Իսրայելի և սիոնիստների՝ իսլամի թշնամիների դեմ մղվող սրբազան պատերազմ է: Սիրիական զորքերը համարվում էին «ալլահի զինվորներ», որոնց Ասադը կոչ էր անում կռվել հանուն Ալլահի: Նախագահի կողմից արաբ-իսրայելական 1973 թ. պատերազմին իսլամական լոզունգներով հանդես գալը սուննիական մեծամասնությանը սիրաշահելու նպատակ էր հետապնդում[109]: Նախագահը նույնիսկ թույլ տվեց Սիրիայի «Մուսուլման եղբայրներին» ալավիական շրջանի լեռներում ուսուցողական վարժանքներ անցկացնել, ինչպես նաև մասնակցել տեղական ընտրություններին[110]:

1971 թ. մայիսի 8-ին գումարվեց սիրիական Բաաս կուսակցության հինգերորդ տարածաշրջանային համագումարը, որը հավանություն տվեց արդեն իրագործված միջոցառումներին և ստեղծեց տարածաշրջանային նոր ղեկավարություն՝ Հաֆեզ Ալ-Ասադին ընտրելով գլխավոր քարտուղար: Նախագահ դառնալուց հետո Ասադը կանգնեց երկու կարևոր խնդրի լուծման առաջ: Նա պետք է կարողանար անսասան պահել իր իշխանությունը, իսկ դրա համար անհրաժեշտ էր հասարակության աջակցությունը վարած քաղաքականության նկատմամբ: Նախագահը ցանկանում էր հասնել ազգային

---

[108] النهار, «ան-Նահար», Բեյրութ, 07.07.1973.

[109] رسالة الرئس القائد حافظ الاسد الى القوات المسلحة العربية السورية بمناسبة تحرير مدينة القنيطرة و أخرى من الاراض العربية السورية , بتاريخ 26.06.1974

Տես՝ Հաֆեզ Ալ-Ասադի ելույթների ժողովածուն՝ http://www.presidentassad.org/speeches/SP/73-75/SP73/SP29-10-73.HTML (2010 թ. մարտ ամսվա դրությամբ կայքէջն ակտիվ է եղել:)

[110] Pipes D., Greater Syria, The History of an Ambition, New York, 1990, p. 182. pp. 256

միասնության և համերաշխության, որպեսզի Սիրիան կարողանար դիմակայել ներքին և արտաքին մարտահրավերները: Հաֆեզ Ալ-Ասադը ձեռնամուխ եղավ պետականաշինության գործին, որը նախատեսում էր կուսակցական, պետական, կառավարական և օրենսդիր մարմինների վերակազմավորումը:

Ասադի պետության կառավարման կարևոր համակարգերից էր կուսակցությունը: Որպես Բաաս կուսակցության գլխավոր քարտուղար նա մեծ ազդեցություն ուներ կուսակցության ներսում: Ասադը գիտակցում էր, որ ուժեղացնելով կուսակցությունը, իրականում ամրացնում է իր դիրքերը[111]: Բաաս կուսակցության տարածաշրջանային ղեկավարության անդամների թիվն ընդարձակվեց՝ հասնելով քսանմեկի: Տարածաշրջանային ղեկավարությունն Ասադի գլխավորությամբ դարձավ կարևոր մի մարմին, որտեղ քննարկվում և որոշվում էին երկրի արտաքին և ներքին քաղաքական հարցերը: Տարածաշրջանային ղեկավարությունը քաղաքական և զինվորական գործիչների այն խումբն էր, որի հետ նախագահը պետք է պարբերաբար հանդիպեր: 1971 թ. ապրիլին Սիրիայում տեղի ունեցան կուսակցական ընտրություններ, որոնք պետք է որոշեին մայիսի 8-14-ը կայանալիք տարածաշրջանային հինգերորդ և օգոստոսի 23-31-ը ազգային 11-րդ համագումարների մասնակիցների անունները: Նա ազդեցության լծակներ տվեց կուսակցության շրջանակներում գործող հասարակական կազմակերպություններին, որոնք դեռևս ստեղծվել էին Սալահ Ջադիդի կողմից, որպեսզի այդ կառույցների միջոցով ևս ամրապնդեր իր հեղինակությունն ու կշիռը: Այդ կազմակերպությունները ներկայացնում էին հասարակության տարբեր շերտերին՝ գյուղացիներ, բանվորներ, ուսանողներ և այլն[112]:

1972 թ. մարտի 7-ին ստեղծվեց Ազգային առաջադիմական ճակատը (ԱԱՃ, արաբերեն՝ ալ-ջաբհա ալ-վատանիյա աթ-թակադդումիյա), որի նշանակությունը Հաֆեզ Ալ-Ասադի համար մեծ էր: Ճակատի մեջ մտան Բաաս կուսակցությունը, Խալիդ Բեկդաշի գլխավորած կոմունիստական կուսակցությունը, Ջամալ Աթասիի ղեկավարած Արաբական սոցիալիստական միությունը, Արաբական

---

[111]Seale P., նշվ. աշխ., էջ 174:
[112]Middle East Journal, N 1, 1976.

սոցիալիստական շարժումը, որը գլխավորում էր Ջամալ Սուֆին և Աքրամ Հաուրանիի կուսակցության մնացորդներից ձևավորված Սոցիալիստ-յունիոնիստների կազմակերպությունը: Ընդունվեց Ճակատի կանոնադրությունը, որը հաստատեց նրա կառուցվածքը: Ճակատի կազմում, բացի վերոնշյալ կուսակցություններից և կազմակերպություններից, կարող էին մտնել նաև այլ ուժեր: ԱԱՃ-ի բարձրագույն մարմինը կենտրոնական ղեկավարությունն էր, որը ներկայացնում էին նախագահն ու տասնյոթ անդամներ: Դրանում Արաբական սոցիալիստական վերածնունդ կուսակցությունը ինը, իսկ Ճակատի մնացած կառույցները ութ ներկայացուցիչ ունեին: ԱԱՃ-ի կենտրոնական ղեկավարության նախագահ ընտրվեց հենց Ասադը: Ըստ ԱԱՃ-ի կանոնադրության՝ Սիրիայում հաստատված վարչակարգը բնութագրվում էր որպես առաջադիմական, իսկ ԱԱՃ-ի ստեղծումը համարվում էր կենսական անհրաժեշտություն[113]: ԱԱՃ-ի հիմնական գործառույթն առաջադիմական և հայրենասիրական ուժերի համախմբումն էր, որն ուժեղացնելու էր պետության պայքարն ընդդեմ «սիոնիստ զավթիչների»: Գործնական առումով ճակատի ձևավորումը ծառայում էր առաջին հերթին վարչակարգի կայունության ապահովմանը, այսինքն՝ չեզոքացնում էր, մասնավորապես, Բաաս կուսակցության մրցակից ընդդիմադիր ուժերի ներուժը: Ճակատը բաասական վարչակարգին հնարավորություն էր տալիս նաև Սիրիայի քաղաքական համակարգը ներկայացնել որպես բազմակարծության մի դաշտ, որտեղ միավորվել էին երկրի ճակատագրով մտահոգ քաղաքական գործիչներն ու նրանց ղեկավարած քաղաքական ուժերը: ԱԱՃ-ի կազմում ընդգրկված քաղաքական ուժերը ներկայացվեցին կառավարությունում և 1971 թ. փետրվարին կազմավորված խորհրդարանում[114]:

ԱԱՃ-ի ստեղծումից և նրա ծրագրային փաստաթղթերի ընդունումից հետո 1972 թ. մարտի 24-ին կազմվեց սիրիական նոր կառավարություն՝ Մահմուդ Ալ-Այուբիի գլխավորությամբ: Նրա կարևոր խնդիրը դարձավ ԱԱՃ-ի կանոնադրության մեջ առաջ քաշված քաղաքական ու տնտեսական հարցերի լուծումը և սահմանադրության

---

[113]Հովհաննիսյան Ն., նշվ. աշխ., էջ 518:
[114]Volker P., The Political Economy of Syria under Asad, London, 1995, p. 162.

նախապատրաստումը: Այդ շրջանում սուննիական որոշ շրջանակներ պահանջեցին, որպեսզի սահմանադրության մեջ հատուկ կետ մտցվի և արձանագրվի, որ իսլամը Սիրիայի Արաբական Հանրապետության պետական կրոնն է: Սիրիայի Հոմս և Համա քաղաքների սուննի բնակչությունը 1973 թ. փետրվարին կազմակերպեց հակակառավարական ելույթներ, որոնք ճնշվեցին բանակի կողմից[115]: Այնուամենայնիվ, Հաֆեզ Ալ-Ասադն ու նրա կողմնակիցները հարկադրված էին նահանջել և որոշ զիջումների գնալ: Որոշվեց իսլամը պետական կրոն հայտարարելու փոխարեն սահմանադրության մեջ կետ ավելացնել առ այն, որ Սիրիայի նախագահը պետք է լինի մուսուլման: Այդ փոփոխությամբ սահմանադրության նախագիծը դրվեց հանրաքվեի և հաստատվեց 1973 թ. մարտի 12-ին[116]:

Նշենք նաև, որ իր դիրքերն անսասան պահելու համար նախագահ Հաֆեզ Ալ-Ասադն օգտագործում էր նաև հատուկ ծառայությունների և, ինչպես արդեն նշել ենք, բանակի ու կուսակցության հնարավորությունները: Այս երեք ուժային կենտրոնների միջև Հաֆեզ Ալ-Ասադը միշտ փորձում էր հավասարակշռություն պահել: Իր ալավի համախոհներին և հաճախ նաև իր ազգակիցներին Ասադը նշանակում էր կարևոր զինվորական պաշտոնների բանակում և հատուկ ծառայություններում՝ այդպիսով ստեղծելով «ջամաա»[117], որը նախագահի հետ սերտ հարաբերություններ ունեցող բարձրաստիճան պաշտոնյաների խումբ էր: «Ջամաա»-ի անդամների մեծ մասը ներկայացնում էին ալավիական համայնքը:

Սիրիայի իշխանության վերին օղակներում բազմաթիվ ալավիների կողմից բարձր պաշտոններ զբաղեցնելը շատ հետազոտողների ստիպել է սիրիական վարչակարգը համարել ալավի փոքրամասնության դիկտատուրա կամ ալավիներին ներկայացնել որպես Դամասկոսի նոր, իշխող վերնախավ[118]:

---

[115]Kelidar A. R., Religion and State in Syria, Assian Affairs, v. 61, part 1, February, 1974, pp. 16-22.

[116]Հովհաննիսյան Ն., նշվ. աշխ., էջ 519:

[117]Hinnebusch R., Syria, Revolution from Above, Routledge, London and New York, 2001, p. 67.

[118]Faksh M. A., The Alawi Community of Syria: A New Dominant Political Force, Middle Eastern Studies, Vol. 20, N 2, 1984, pp. 133-153

Կասկածից վեր է, որ ալավիական գործոնը կարևոր դեր ուներ բաասական Սիրիայի ներիշխանական համակարգում: Հատկապես 1960-ական թվականներից սկսած ալավիական համայնքը սկսեց մտնել սոցիալական դիվերսիֆիկացիայի կտրուկ գործընթացի մեջ գլխավորապես կրթական պայմանների փոփոխության, ներքին միգրացիայի և ալավի քաղաքային բնակչության ի հայտ գալու արդյունքում: Սակայն ալավիական համայնքը քաղաքականապես դեռևս միատարր ու լիովին համախմբված չէր, իսկ Սիրիայում իշխանության գլուխ կանգնած էր ալավիների միայն մի խումբ: Հետաքրքրական է այն փաստը, որ ալավիական համայնքում նույնիսկ կային հակակառավարական տարրեր, իսկ դա նշանակում էր, որ ներքաղաքական դաշտը դուրս էր էթնիկ և դավանական պատկանելության սահմաններից[119]:

Հարկ ենք համարում նաև անդրադառնալ իշխող վարչակարգի տնտեսական քաղաքականությանը: Նշենք, որ Հաֆեզ Ալ-Ասադը որոշ չափով նվազեցրեց պետական ուժեղ վերահսկողությունն այդ բնագավառում, որպեսզի լիցքաթափի ներքաղաքական իրավիճակը: Այսպես, մասնավոր անձանց թույլ տրվեց իրենց կապիտալը ներդնել Սիրիայի արդյունաբերության հիմնական ոլորտներում: Պետությունը մասամբ վերացրեց սպառողական ապրանքների ներկրման սահմանափակումները և խրախուսում էր ազգային և օտարերկրյա արտադրողների մասնակցությունն ազատ առևտրին: Արդյունքում, տեղի ունեցավ տնտեսական վերնախավի փոփոխություն: Համաներում հայտարարվեց մի շարք խոշոր գործարարների, հողատերերի և ընդդիմադիր գործիչների նկատմամբ, որոնք լքել էին երկիրը[120]: Սակայն վերոնշյալից չպետք է եզրակացնել, որ Հաֆեզ Ալ-Ասադի իշխանությունը նպաստեց երկրի ներքին կյանքի ազատականացմանը: Կատարվեցին միայն որոշ տնտեսական փոփոխություններ: Իսկ իշխող վարչակարգի կամքին հակառակ բոլոր դրսևորումներն անմիջապես ճնշվում էին: Նախագահ Ասադի տնտեսական քաղաքականությունը նպաստեց Սիրիայի տնտեսության աշխուժացմանը: Կատարված

[119]Drysdale A., Syrian Political Elite, 1966-1976, A Spatial and Social Analysis, Middle Eastern Studies, Vol. 17, N 1, p. 15.

[120]Hafizullah E., նշվ. աշխ. էջ 280:

քայլերը հանգեցրեցին նրան, որ Ծոցի արաբական միապետությունները սկսեցին ֆինանսական զգալի միջոցներ ներդնել Սիրիայում: Եթե մինչև 1973 թ. պատերազմն արտասահմանյան, մասնավորապես արաբական և սոցիալիստական երկրներից եկած օգնությունը Սիրիային տարեկան կազմում էր 50 մլն. ԱՄՆ դոլար, ապա 1974 թ.-ից սկսած այդ թիվը հասավ 600մլն. ԱՄՆ դոլարի: Օգնությունը ստացվում էր ոչ միայն նավթարդյունահանող երկրներից, այլ նաև ՄԱԿ-ից, Համաշխարհային բանկից, Գերմանիայից, Ֆրանսիայից և նույնիսկ ԱՄՆ-ից: 1974 թ.-ից մինչև 1979 թ. ԱՄՆ տարեկան 90 միլիոն դոլար էր տրամադրում Սիրիային: Հետաքրքրական է, որ Սիրիայի զարգացման գործում աճում էր կապիտալիստական երկրների դերը և նվազում սոցիալիստական երկրներինը: Արևմտյան Եվրոպայի երկրներից ապրանքների ներկրումը Սիրիա աճեց 50,7%-ից 60,8%-ի, իսկ սիրիական ապրանքների արտահանումն այդ երկրներ ավելացավ 44,1%-ից մինչև 60,8%: Սոցիալիստական երկրների հետ հարաբերությունների զարգացման դինամիկան նվազում էր՝ ներկրումը 24,5%-ից պակասեց մինչև 16,8%, իսկ արտահանումը՝ 25,8%-ից դարձավ 16,9%[121]: Սիրիայում տնտեսական իրավիճակի բարելավմանը զուգընթաց բնակչության եկամուտներն աճեցին: Այս փաստը հաստատում է նաև երկրում միլիոնատերերի թվի աճը: 1963 թ. Սիրիայում կար շուրջ 55 միլիոնատեր, իսկ 1973թ. նրանց թիվը հասավ 1000-ի, 1976թ.՝ 3500-ի, որոնք դարձան Սիրիայում ձևավորվող նոր բուրժուազիայի կորիզը[122]: Հետաքրքրական է այն, որ վարչակարգը վարում էր սոցիալ-տնտեսական հավասարակշռված քաղաքականություն, երբեք նախապատվությունը չէր տալիս ասենք ալավիների ծովափնյա շրջանների զարգացմանը: Միայն 1970-ական թվականներին որոշ ջանքեր գործադրվեցին դժվարությունները հաղթահարելու ուղղությամբ: Գյուղական բնակավայրերն ապահովվեցին էլեկտրաէներգիայով, կառուցվեցին դպրոցներ և հիվանդանոցներ: Ձեռնարկված միջոցառումներն օգտակար եղան ծովափնյա հետամնաց շրջանները զարգացնելու համար: Սակայն ալավիական լեռնային գյուղերում կենցաղային պայմանները դեռևս

[121] Манукян С., նշվ. աշխ., էջ 77:

[122] Seale P., նշվ. աշխ., էջ 318:

մնում էին ծայրահեղ ծանր վիճակում: Կառավարության ձեռնարկած քաղաքականությունն ու կատարած ներդրումներն ամենաարդյունավետ ազդեցությունն ունեցան Դամասկոսի ու նրա շրջակա բնակավայրերի վրա: Որոշ մասնակի ներդրումներ կատարվեցին պետության ուշադրության կենտրոնում գտնվող Լաթաքիայի և Տարտուսի նահանգներում, որոնք նավահանգստային քաղաքներ էին, և Բանյասի նավթային տերմինալի վերազինման աշխատանքներում: Ալավիական ամենամեծ նահանգը համարվող Լաթաքիայում, որտեղ բնակվում էր Սիրիայի բնակչության 6%-ը, կատարվում էր մասնավոր ներդրումների 3%-ը միայն: Լաթաքիայի նահանգում էր գտնվում երկրի տարրական դպրոցների 6,5%-ը, հիվանդանոցների՝ 5%-ը, բժիշկների՝ 4%-ը[123]:

1975 թ. ապրիլին Լիբանանում սկսված քաղաքացիական պատերազմից հետո արաբական որոշ երկրներ դադարեցրին օգնություն ցուցաբերել Սիրիային՝ Լիբանանի նկատմամբ վարած քաղաքականության պատճառով, որից հետո երկրում գնաճ և բնակչության մեծամասնության կենսամակարդակի անկում արձանագրվեց: Զուգահեռաբար տեղի էր ունենում քաղաքական և տնտեսական վերնախավերի սերտաճում: Բաաս կուսակցության իշխող վերնախավը, զինվորական շրջանակների վերին էշելոններն ու կառավարության անդամները հարստանում էին, իշխանական վերնախավը համալրվում էր կարիերիստներով, ինչը բացասական հետք էր թողնում նախագահի հեղինակության վրա: Հասարակության դժգոհությունը պայմանավորված էր Սիրիայի իշխանական համակարգում տիրող իրավիճակով, երբ ալավի փոքրամասնության իշխանությունը երկրում սկսեց բացարձակ անսքող դառնալ:

## 1. 3. «Մուսուլման եղբայրների» պայքարն ընդդեմ ալավիական վարչակարգի (1976-1982 թթ.)

Հաֆեզ Ալ-Ասադի իշխանության գալուց տարիներ անց Սիրիայի ներքաղաքական իրավիճակը սկսեց անկայունանալ պայ-

---

[123]Kaplan R. D., Syria-Identity Crisis, The Atlantic Monthly, Vol. 271, N. 2, February 1993, p. 27.

մանավորված լիբանանյան գործոնով: Բաասի դեմ դժգոհություններն առավել սրվեցին, երբ 1976 թ. հունիսի 1-ին սիրիական 30 հազարանոց զորքը մտավ Լիբանան 1975 թ. ապրիլից այդ երկրում սկսված քաղաքացիական պատերազմից հետո[124]: Սիրիան իր դիրքորոշումն ուներ Լիբանանում պաղեստինցիների ներկայության և նրանց աճող ազդեցության հարցում: Դամասկոսը գտնում էր, որ պաղեստինցիների ազդեցության ուժեղացումը կարող էր վտանգել Լիբանանում բազմաթիվ համայնքների խաղաղ գոյակցությունը և կրոնադավանական համակարգով հաստատված փխրուն հավասարակշռությունը[125]: 1976 թ. հոկտեմբերի 18-ին Էռ-Ռիյադում կայացավ արաբական երկրների ղեկավարների համաժողովը, որին մասնակցեց նաև ՊԱԿ-ի նախագահ Յասեր Արաֆաթը: Համաժողովի մասնակիցները քննարկեցին Լիբանանում ստեղծված իրավիճակը և կրակի դադարեցման հնարավորությունները: Համաժողովի ընթացքում Ասադին հաջողվեց որոշակիորեն առաջխաղացում արձանագրել եգիպտասիրիական հարաբերություններում, ինչպես նաև Եգիպտոսի կողմից Լիբանանում Սիրիայի առաջնային դերի ճանաչման ուղղությամբ[126]: Սիրիան Լիբանանի միասնականության պահպանման նպատակով որդեգրել էր «լա ղալիբ վա լա մաղլուբ»՝ «ոչ հաղթող և ոչ պարտվող» կարգավորման տարբերակը: Այսինքն՝ Սիրիային ձեռնտու չէր ո՛չ Լիբանանի ճախսացումը և պաղեստինցիների հաղթանակը, ո՛չ էլ քրիստոնյա մարոնիների տոտալ գերիշխանությունը[127]: Այս հանգամանքը չէր կարող չազդել Սիրիայի «Մուսուլման եղբայրներ» կրոնաքաղաքական արմատական կազմակերպության ընդհանուր տրամադրությունների վրա: Սիրիայի լիբանանյան քաղաքականությամբ պայմանավորված կազմակերպությունը սկսեց իրականացնել բաասական քաղաքական գործիչների սպանություններ ու հարձակումներ: Բռնությունների ալիքը պայմանավորված էր

[124]Devlin F. J., Syria, Modern State in an Ancient Land, Westview Press and Croom Helm, London, 1983, p. 67.

[125]Հարությունյան Լ., Լիբանանը 1958-1990 թվականներին, Երևան, 2007, էջ 208:

[126]Կարամանուկյան Շ., Արաբական պետությունների միգայի դերը արաբական երկրների հակաիմպերիալիստական պայքարում, Երևան, 1988, էջ 185:

[127]Կարապետյան Ռ., Սիրիա-ամերիկյան հարաբերությունները 1967-1996թթ., Երևան, 2000, էջ 71:

նաև Սիրիայում մեծ չափերի հասնող կոռուպցիայի, մենաշնորհային ձեռներեցության և չսաստվող գնաճի պատճառով[128]:

«Մուսուլման եղբայրների» անդամներն իրենց մուջահիդդուն՝ ջիհադի մարտիկներ էին համարում: Ըստ այդմ՝ նրանք զոհաբերում էին սեփական անձը, որպեսզի ազատագրեն իսլամն ու ժողովրդին բռնակալությունից, անարդարությունից և հարձակումներից: Նրանք պայքարում էին, որպեսզի շարիաթը[129] դառնար Սիրիայի հիմնական օրենքը[130]: Որոշ աղբյուրների համաձայն՝ 1978 թթ. իսլամիստների թիվը Հալեպում 7000 էր, իսկ արդեն 1970-ական թթ. վերջին ամբողջ Սիրիայում՝ 30 հազար[131]: Ծայրահեղականները Սիրիայում հիմնականում աջակցություն էին ստանում քաղաքային սուննի բնակչության կողմից, որոնց քաղաքական ու տնտեսական երբեմնի ազդեցությունն ալավիական վարչակարգի վարած քաղաքականության պատճառով թուլացել էր: «Մուսուլման եղբայրները» Սիրիայում ներկայացնում էր «ուլամայի»՝ կրոնական գործիչների, մանր արհեստավորների և առևտրականների շահերը, իսկ բաասկան վարչակարգը չէր ծառայում նրանց հետաքրքրություններին: Սիրիայի բուրժուազիան շատ դեպքերում գոհ չէր երկրում իրականացվող արդյունաբերական ձեռնարկությունների ազգայնացումից[132]:

Նշենք, որ Սիրիայում «Մուսուլման եղբայրներ» կրոնաքաղաքական կազմակերպության ղեկավարության մեջ կային կրոնավորներ և աշխարհիկներ: Կրոնական դեմքեր էին՝ Մուհամմադ Ալ-Բայանունին, Աբու Ղուդդահը, Սալիմ Մուհամմադ Ալ-Համիդը, Տահիր Խայրալլահը, Սայիդ Հավան և այլք: Չնայած կազմակերպության առաջնորդները տարբեր մասնագիտություններ ունեին՝ ինժեներ,

128Dekmejian H., Islam in Revolution, Fundamentalism in the Arab World, Second Edition, Syracuse University Press, 1995, p. 108.

129Շարիաթը մուսուլմանների իրավական նորմերի, նրանց կրոնական, կենցաղային և սոցիալական կյանքի, վարքագծի սկզբունքների և կանոնների ամբողջությունն է: Շարիաթին հետևել նշանակում է ճշմարիտ և աստվածահաճո կյանք վարել:

130البعث, «ալ-Բաաս», Դամասկոս, 28.06.1979.

131Batatu H., "Syria's Muslim Brethren", MERIP Report, Nov.-Dec. 1982. p. 16.

132Hinnebusch R., "The Islamic Movement in Syria: Sectarian Conflict and Urban Rebellion in an Authoritarian-Populist Regime" in Ali Hilal Dessouki, ed. Islamic Resurgence in the Arab World, New York, 1982, p. 160.

ատամնաբույժ, ուսուցիչ, իրավաբան, սակայն նրանց մեծ մասը ծնվել էր կղերականի ընտանիքում: Ադնան Ուկլան, ով ղեկավարում էր «Մուսուլման եղբայրների» մարտիկներին, մասնագիտությամբ ինժեներ-զինվորական էր, իսկ Համայի « Մուսուլման եղբայրների» առաջնորդ Աբդ Ալ-Սաթթար Ալ-Զաիմը, ատամնաբույժ էր և ծնվել էր առևտրականի ընտանիքում: Հալեպի մասնաճյուղի ղեկավար Հուսնի Աբուն ֆրանսերեն լեզվի ուսուցիչ էր, ծնվել էր ազդեցիկ գործարարի ընտանիքում: Մուհամմադ Հավարին դեղագիտություն էր ուսուցանում Դամասկոսի համալսարանում, Ալի Սադր Ադ-Դին Ալ-Բայանունին իրավաբան էր, իսկ Ադնան Սաադ Ադ-Դինը՝ գրող[133]:

Իսլամիստների պայքարի առաջին փուլն սկսվեց 1976 թ. և շարունակվեց մինչև 1979 թ.: Այս ընթացքում սպանվեցին ալավիական համայնքի մի շարք ականավոր ներկայացուցիչներ: Սուննի ծայրահեղականները ցանկանում էին հասկացնել իշխանություններին և հատկապես ալավիական համայնքի հետ կապ ունեցող գործիչներին, որ վերջիններս պատասխանատու են Բաասի քաղաքականության համար[134]: Ահաբեկչական գործողությունների սկսման խթան դարձավ 1976 թ. Սիրիայի «Մուսուլման եղբայրների» ղեկավարներից Մրվան Հադիդի ձերբակալությունը: Վերջինս հացադուլ հայտարարեց և մահացավ բանտարկության մեջ նույն թվականի հունիսին Դամասկոսի «Հարաստա» կոչվող զինվորական հիվանդանոցում: Հաֆեզ Ալ-Ասադը Մըրվանի մոտ է ուղարկում նրա եղբորը՝ բաասական Քանաան Հադիդին, որն այդ ժամանակ Թեհրանում Սիրիայի դեսպանն էր, որպեսզի վերջինս եղբորը համոզի դադարեցնել հացադուլը, սակայն ապարդյուն[135]:

Նշենք, որ Սիրիայում իսլամիստների գործողություններն արտաքին և ներքին դրդապատճառներ ունեին: Սպանված քաղաքական և ռազմական գործիչների մեծ մասն ալավիներ էին, սակայն իրականում պարզ չէր, թե ովքեր էին կանգնած հանցագործությունների հետևում: 1978 թ. հոկտեմբերին իրաքասիրիական հարա-

133U. F. Abd-Allah, The Islamic Struggle in Syria, Berkeley, California, Mizan Press, 1983, p 89-90.
134Манукян С., նշվ. աշխ., էջ. 86.
135Seale P., նշվ. աշխ., էջ 324:

բերությունների ժամանակավոր բարելավումից հետո պարզ դարձավ, որ ահաբեկչական գործողությունների պատասխանատուն սուննի ծայրահեղական խմբավորումներն են, որոնք Սիրիայում ալավիների վարչակարգը համարում էին հակաիսլամական: Սպանությունների և հարձակումների արդյունքում Սիրիայում մի քանի տասնյակ զոհեր գրանցվեցին: 1976թ. հոկտեմբերին սպանվեց Համայի կայազորի հրամանատար գնդապետ Ալի Հայդարը, 1977 թ. փետրվարին՝ Դամասկոսի համալսարանի ռեկտոր, Հաֆեզ Ալ-Ասադի խորհրդական, ալավիական խորհրդի փոխնախագահ Մուհամմադ Ալ-Ֆադիլը: Նույն թվականի հունիսին սպանվեց հակաօդային պաշտպանության գեներալ Համիդ Ռազուկը, նոյեմբերին՝ Հալեպի համալսարանի պրոֆեսոր Ալի իբն Աբիդա Ալ-Ալին: 1978 թ. մարտին սպանվեց սիրիախորհրդային բարեկամության հանձնախմբի ղեկավար Իբրահիմ Նաամը, ապրիլին՝ Գերագույն դատարանի գլխավոր դատախազ Ադիլ Մինին, օգոստոսին՝ ոստիկանության գնդապետ Ահմադ Խալիլը: 1978 թ. օգոստոսին ծայրահեղականները հարձակում գործեցին Հաֆեզ Ալ-Ասադի անձնական բժիշկ, նյարդաբան Մուհամմադ Շահադ Խալիլի վրա: Վերոնշյալ ահաբեկչությունների մեծ մասն, ըստ ամենայնի, կազմակերպել էր Մրվան Հադիդի շարժումը, որն էլ իր վրա վերցրեց իրագործված սպանությունների մի քանիսի պատասխանատվությունը[136]:

1979թ. հունիսի 16-ին Հալեպի հրետանային դպրոցի ուսանող «Մուսուլման եղբայրների» անդամ Իբրահիմ Յուսուֆի և նրա կողմնակիցների կողմից սպանվեցին դպրոցի 32 կադետներ, իսկ 54-ը վիրավորվեցին: Զոհված կադետների մեծ մասն ալավիներ էին: Չնայած այդ հանգամանքը ժխտեց Սիրիայի տեղեկատվության նախարար Ահմադ Իսքանդեր Ահմադը, որն ընդգծեց, թե սպանվել էին նաև քրիստոնյաներ ու սուննի մուսուլմաններ, սակայն հասարակության շրջանում այս իրադարձությունն ընկալվեց որպես սուննի-ալավիական հարաբերությունների սրմանը միտված քայլ: Հունիսի 22-ին Սիրիայի ներքին գործերի նախարարը հանդես եկավ պաշտոնական հայտարարությամբ՝ կատարված վայրագության մեղա-

136Hinnebusch R., Authoritarian Power and State Formation in Baathist Syria: Army, Party and Peasant, Oxford, Westview Press, 1990, p. 282.

վոր համարելով «Մուսուլման եղբայրներին»: Նախարարը նշեց նաև, որ նախկին հանցագործությունները ու Հալեպի կադետների սպանությունը խրախուսվում են Սիրիայի արտաքին թշնամիների կողմից[137]: Սիրիայի գծով մասնագետ Պ. Սիլը կադետների սպանությունները դիտարկում էր որպես «պատերազմի հայտարարություն», իսկ Հ. Դեքմեջյանը՝ ջիհադի ակտիվացման նոր փուլ:

Իսլամիստները համարում էին, որ պայքարը նոր փուլ է մտել: Այսպես, 1979 թ. նոյեմբերի 2-ին «Սիրիայում իսլամական հեղափոխության» կառույցի ղեկավարությունը տարածեց մի հայտարարություն, որում նշվում էր, թե ջիհադը նոր շրջան է մտնում, որն ի վերջո բերելու է Հաֆեզ Ալ-Ասադի վարչակարգի տապալմանը[138]:

Հալեպում տեղի ունեցած իրադարձություններից հետո իշխանությունների կողմից ձերբակալվեցին մի շարք ծայրահեղական գործիչներ: 1979 թ. նոյեմբերին ձերբակալվեցին Հալեպի մեծ մզկիթի շեյխ Զեյն Ադ-Դին Խայրալլահը և Զուհայր Զակլուդը, կրակահերթի ժամանակ սպանվեց Աբդ Ալ-Սաթար Ալ-Զաիմը: Հալեպում հայտնաբերվեցին ծայրահեղականների որոշ գաղտնի բնակարաններ և զինանոցներ[139]:

Հալեպում տեղի ունեցած վայրագություններից անմիջապես հետո իշխանություններն սկսեցին միջոցներ ձեռք առնել ոչնչացնելու «Մուսուլման եղբայրներին»: 1979 թ. հունիսի 27-ին պետական անվտանգության գերագույն դատարանը կայացրեց մի վճիռ, որտեղ ընդգծվում էր, թե սիոնիզմն ու իմպերիալիզմն իրենց գործակալներին դրդում են Սիրիայում հանցագործություններ կատարել, բացի այդ նաև կրոնական քողի տակ ապստամբության են կոչում քաղաքացիներին: Դատարանի վճիռը մեղադրում էր նաև Եգիպտոսի նախագահ Անվար Սադաթին՝ Սիրիայի «Մուսուլման եղբայրների» գործողություններին աջակցության համար:

1978 թ. սեպտեմբերի 5-ին Քեմփ-Դևիդում Եգիպտոսի նախագահ Անվար Սադաթն Իսրայելի և ԱՄՆ-ի նախագահների՝ Մենահիմ Բեգինի և Ջիմի Քարտերի հետ միասին սկսեցին եռակողմ բանակ-

---

137 البعث, «ալ-Բաաս», Դամասկոս, 24.06.1979:
138 Манукян С., նշվ. աշխ., էջ 89:
139 Նույն տեղում, էջ 91:

ցություններ: Սեպտեմբերի 17-ին նախագահները ստորագրեցին երկու փաստաթուղթ, որոնք սահմանում էին Եգիպտոսի և Իսրայելի միջև խաղաղության պայմանագրի շրջանակները, նախատեսվում էր Իսրայելի զինված ուժերի դուրսբերումը Սինայից, իսրայելական նավերի ազատ նավարկումը Սուեզի ջրանցքով և այլն[140]: 1979 թ. մարտի 26-ին Վաշինգտոնում ստորագրվեց եգիպտաիսրայելական խաղաղության պայմանագիրը, որով Եգիպտոսը դարձավ Իսրայել գոյության իրավունքը ճանաչող արաբական առաջին պետությունը[141]: Դրանով, ըստ էության, նա միակողմանիորեն դուրս եկավ Իսրայելի դեմ համաարաբական պայքարից: Արաբական երկրների դիրքորոշումը Եգիպտոսի քաղաքական կողմնորոշման նկատմամբ խիստ բացասական եղավ: Եգիպտոսի և Սիրիայի առանց այդ էլ լարված հարաբերություններն ավելի վատթարացան: Քեմփդևիդյան անջատ պայմանագրի ստորագրումից հետո եգիպտական և սիրիական վարչակարգերի քարոզչական հարձակումները միմյանց վրա շարունակվեցին նոր թափով: Եգիպտոսի նախագահ Անվար Սադաթն իր մի քանի ելույթներում սիրիական վարչակարգը համարում էր «ալավի-բաասական»: 1979 թ. մայիսի 1-ին իր ելույթում քննադատելով Սիրիայի ալավիական համայնքին՝ Սադաթը նշեց. «Ես կարող էի Գոլանը հետ վերադարձնել, բայց ես պատասխանատու չեմ դրա համար, քանի դեռ Սիրիայում իշխում են ալավիները: Մենք բոլորս գիտենք, թե սիրիական հասարակությունն ինչպիսի վերաբերմունք ունի ալավիների նկատմամբ: Սաուդյան Արաբիայի թագավոր Ֆեյսալն ինձ մի առիթով հարցրեց, թե ինչպե՞ս եմ կարողանում ձեռք սեղմել սիրիական բաասականների հետ, չէ՞ որ Հաֆեզ Ալ-Ասադն ալավի է և բաասական, դրանք մեկը մյուսից ավելի վտանգավոր են»[142]: Քարոզչական հարձակումները, որոնք օգնում էին սիրիական հասարակության շրջանում խռովություններ բորբոքելուն և խթանում էին սուննիների և ալավիների միջև

[140]Հովհաննիսյան Ն., Արաբական երկրների պատմություն. անկախության և ինքնիշխանության դարաշրջան, 1918-2005թթ. h. III, Երևան, 2006, էջ 303:
[141]Պրիմակով Ե., Մի դավադրության պատմություն: ԱՄՆ-ի մերձավորարևելյան քաղաքականությունը 70-ական թթ. և 80-ական թթ. սկզբներին, Երևան, 1987, էջ 253:
[142] الأهرام, «Ալ-Ահրամ», Կահիրե, 06.04.1979:

բախումները, իրականացվում էին հիմնականում Կաիիրեի ռադիոյի միջոցով, որի հեռարձակումներն ունկնդրում էին արաբական աշխարհում, այդ թվում և Սիրիայում: Կաիիրեի «Ալ-Ախբար» օրաթերթում «Սիրիան արյան ծովում է» խորագրով հոդվածն հետևյալ կերպ էր մեկնաբանում Հալեպում տեղի ունեցած իրադարձությունները. «Ալավիների սպանությունները Հալեպում անակնկալ չէին այն մարդկանց համար, ովքեր գիտեին, թե իրականում ինչ է կատարվում երկրում... Սպանությունները տեղի են ունեցել տաս օր առաջ, սակայն գաղտնի են պահվում, որպեսզի ալավիական վարչակարգի կողմնակիցներն էլ չսկսեն վրեժխնդիր լինել սուննիներից կամ ոչ ալավիներից: Սիրիան Լիբանանի նման կանգնած է ներհամայնքային բախումների կամ քաղաքացիական պատերազմի շեմին»[143]: Հունիսի 30-ին Հաֆեզ Ալ-Ասադը լրատվամիջոցներին տված հարցազրույցում առաջին անգամ մեկնաբանեց Հալեպում կատարված իրադարձությունները՝ փորձելով հակադրվել սուննի ծայրահեղականների դավանաբանական քարոզչությանը և արդարացնել բաասական վարչակարգի պայքարն ընդդեմ Սիրիայի «Մուսուլման եղբայրների»: Նախագահն ընդգծում էր. «Հայրենիքի գաղափարն իր բովանդակությունը կորցնում է այն ժամանակ, երբ քաղաքացիներն անհավասար են: Հավասարությունն իսլամի կարևորագույն սկզբունքն է: Մենք երկիրը ղեկավարում ենք Բաաս կուսակցության միջոցով, այլ ոչ թե կրոնի կամ կրոնական համայնքի, չնայած այն հանգամանքին, որ իսլամը մեծամասնության կրոնն է...: Մենք հաստատել ենք, որ իսլամն առաջընթացին ուղղված կրոն է, բայց հիմա մենք ականատես ենք լինում Սիրիայի դեմ ուղղված խարդավանքի և հանցագործության, որը կատարում է ոչ թե ինչ-որ մի անհատ, այլ ամբողջ մի քաղաքական կազմակերպություն, որը կոչվում է «Մուսուլման եղբայրություն»: Մենք նրանց նկատմամբ ներողամիտ լինել չենք կարող, քանի որ նրանք են իսլամի պատմության մեջ ամենանախորշելի կոտորածներից մեկի հեղինակները: Սպանություններն ու հարձակումները չեն կարող տապալել այս վարչակարգը և մենք դա թույլ չենք տալու: Նրանք, ովքեր կպաշտպանեն ծայրահեղական մուջահիդներին, կպատժվեն, իսկ նրանց կազմակերպությունը պետք

---

143 الأخبار, «Ալ-Ախբար», Կաիիրե, 24.06.1979:

է ոչնչացվի»: Վերջում նախագահն ավելացրեց, թե իսլամն այլ բան է, իսկ հանցագործների խումբը՝ մեկ այլ[144]: Հետագայում նախագահի եղբայր Ռիֆաթ Ալ-Ասադն ու բաասական այլ գործիչներ իրենց ելույթներում «Մուսուլման եղբայրներին» անվանում էին մուսուլման դավաճաններ, որը բացահայտ բառախաղ էր հիշեցնում (իխվան ալ-մուսլիմուն և խուռուան ալ-մուսլիմուն): Իսկ ներքաղաքական իրադրությունը գնալով ապակայունանում էր: «Մուսուլման եղբայրները» երկրում ձևավորեցին ահաբեկչական մթնոլորտ: Դամասկոսում, Հալեպում, Համայում, Լաթաքիայում, Հոմսում և այլուր նրանք շարունակում էին ահաբեկչություններն ու բռնությունները քաղաքական, հասարակական և մշակույթի գործիչների դեմ: «Եղբայրները» հրահրում էին նաև միջհամայնքային բախումներ, մասնավորապես սուննիների և ալավիների միջև, կազմակերպում ցույցեր, գործադուլներ և այլն: Դարձյալ երկրում հրապարակ նետվեց ալավիների ոչ մուսուլման լինելու հանգամանքը: Սիրիայի «Մուսուլման եղբայրները» գաղտնի հրատարակում էին «Ան-նադիր» լրագիրը՝ որպես «իսլամական հեղափոխության ձայն»: Թերթի էջերում ծայրահեղականներն ալավիներին անվանում էին «նուսայրիական թշնամիներ»: Առանձին դեպքերում նրանք Բաասը համարում էին աթեիստական վարչակարգ, որի դեմ պայքարում էին: Սուննի ծայրահեղականները սիրիական հասարակության մեջ առկա բոլոր հակասությունները կապում էին դավանանքային խնդիրների հետ[145]: 1979 թ. օգոստոս-սեպտեմբեր ամիսների ընթացքում Լաթաքիայում սուննիների և ալավիների միջև տեղի ունեցան բախումներ, որոնց արդյունքում զոհվեց 20 մարդ, 300 ծայրահեղականներ ձերբակալվեցին, իսկ 15-ը՝ մահապատժի ենթարկվեցին: Բախումների ժամանակ սպանվեցին ալավիական համայնքի երկու առաջնորդներ՝ շեյխ Յուսուֆ Սարիմը և Նադիր Հուսարին: Յուսուֆ Սարիմի թաղման արարողությունը վերածվեց լայնածավալ բողոքի ցույցի, որը պահանջում էր «Մուսուլման եղբայրներից» դադարեցնել սպանություն-

---

[144] البعث, «ալ-Բաաս», Դամասկոս, 01.07.1979: Տես Հաֆեզ ալ-Ասադի ելույթի տեքստը مجموعة خطب الفريق القائد حافظ الاسد, الكتاب الاول. 30.08.1981-24.02.1979 -

[145] Van Dam N., նշվ. աշխ., էջ 90:

ները ու հարձակումները[146]:

1979 թ. փետրվարի 12-ին Իրանում տեղի ունեցավ իսլամական հեղափոխություն, որի արդյունքում իշխանությունն իր ձեռքը վերցրեց շիա հոգևորականությունը: Սիրիայի նախագահ Հաֆեզ Ալ-Ասադը և ալավիական համայնքն ակնկալում էին Իրանի օնությունը, որի կարիքը Սիրիայի ալավի ղեկավարությունը զգում էր սուննի ծայրահեղականների դեմ մղվող պայքարում: Եվ իրականում սիրիական վարչակարգը համապատասխան աջակցություն ստացավ իմամ Այաթոլլահ Խոմեյնիից[147]: Իսլամական հեղափոխության առաջնորդները կոշտ քննադատության ենթարկեցին Սիրիայի սուննի ծայրահեղականներին: Հաֆեզ Ալ-Ասադը, ի դեմս շիայական Իրանի, արտաքին քաղաքական ասպարեզում նոր դաշնակից ձեռք բերեց:

1979 թ. դեկտեմբերի 23-ից 1980 հունվարի 6-ը տեղի ունեցավ Բաաս կուսակցության տարածաշրջանային 7-րդ համագումարը, որի ժամանակ քննարկվեցին Սիրիայում տիրող ահաբեկչական մթնոլորտի վերացման հարցերը: Համագումարին ելույթ ունեցավ Հաֆեզ Ալ-Ասադի եղբայրը՝ Ռիֆաթ Ալ-Ասադը, որն առաջարկում էր ահաբեկիչներին կանգնեցնելու համար կտրուկ միջոցներ ձեռնարկել: Նախագահի եղբայրն անդրադարձավ երկրում առկա խնդիրներին, մասնավորապես կոռուպցիային, թողտվությանը, նշեց, որ նրանք, ովքեր վարչակարգին չեն աջակցի, պետք է համարվեն թշնամիներ: Ռիֆաթը բերեց Ստալինի օրինակը ասելով, թե վերջինս տասը միլիոն մարդ զոհաբերեց բոլշևիկյան հեղափոխությունը պահպանելու համար, ուրեմն Սիրիան նույնպես պետք է պատրաստ լինի անել նույնը: Բռնությունները կասեցնելու համար նա պատրաստակամություն հայտնեց զոհաբերել միլիոնավոր նահատակների և կռվել հարյուրավոր պատերազմներում[148]: 1980 թ. հունվարին, երբ ճգնաժամը Սիրիայում գնալով խորանում էր, նախագահ Ասադը նոր վարչապետ նշանակեց համալսարանական պրոֆեսոր Աբդ Ալ-Ռաուֆ Ալ-Կասմին, որը որոշ ժամանակ աշխատել էր Դամասկոսի քաղաքապետի պաշտոնում: Նորանշանակ

---

146 Նույն տեղում, էջ 92:

147 Հովհաննիսյան Ն., Իրան. Այաթոլլահ Խոմեյնիի դարաշրջանը, Երևան, 2004, էջ 63:

148 تشرين, «Թիշրին», Դամասկոս, 01.07. 1980:

վարչապետը ծնվել էր Դամասկոսի կրոնական գործիչներից մեկի ընտանիքում: Վարչապետը բարձրացրեց պետական աշխատողների աշխատավարձերը: Որոշակի քայլեր ձեռնարկվեցին նաև կոռուպցիայի դեմ պայքարի ուղղությամբ[149]: Սակայն ահաբեկչական գործողությունները երկրում չէին դադարում: Սիրիական վերնախավում խուճապ սկսվեց այն ժամանակ, երբ բացահայտվեց, որ նորանշանակ գեներալ Մուհամմադ Խուլիի ղեկավարած ռազմաօդային հետախուզությունը թաքցրել էր սուննի ծայրահեղական մի գործակալի, որը նախքան իր կալանավորումը, կարողացել էր «Մուսուլման եղբայրներին» հայտնել Սիրիայի պետանվտանգության բարձրաստիճան մի շարք սպաների ավտոմեքենաների պետհամարանիշերը: Սուննի ծայրահեղականների գործողությունները կասեցնելու և պարտիզաններին վերացնելու համար իշխանությունները որոշեցին օգտագործել ռազմական ծանր տեխնիկայով զինված միավորումները: Բաաս կուսակցության կողմնակիցները, համատարած ահաբեկման մթնոլորտում, զինվելու իրավունք ձեռք բերեցին[150]:

Զանգվածային սպանություններով չկարողանալով ծնկի բերել կառավարությանը՝ 1980 թ. մարտին «Մուսուլման եղբայրները» փորձեցին քաղաքներում կիրառել հակակառավարական ցույցեր և ելույթներ կազմակերպելու ռազմավարությունը: Նրանք, վախեցնելով առևտրականներին, իրենց վերահսկողության տակ վերցրեցին Հալեպի գործարար հատվածը: Ծայրահեղականների ելույթները տարածվեցին Սիրիայի տարբեր քաղաքներում՝ Համայում, Հոմսում, Իդլիբում, Լաթաքիայում, Դեր Զորում, Ջիսր Ալ-Շուղուրում և այլուր: Շուրջ 5-6 հազար մասնակիցներ ձերբակալվեցին, որից հետո սուննիական ուլեման անմիջապես պահանջեց ազատ արձակել քաղաքական բանտարկյալներին[151]: Ակնհայտ էր դառնում, որ սեփական ուժերով կառավարությանը ծնկի բերելն անհնար էր դառնում: Նույն թվականին կառավարությունն սկսեց վերացնել ընդդիմության ամենակարևոր դեմքերին: Ապրիլին փաստաբանների, ինժեներների և ֆիզիկոսների միությունների գործադիր կոմիտեները

[149]Seale P., նշվ. աշխ., էջ 326:
[150]Նույն տեղում, էջ 326:
[151]Hinnebusch R., նշվ. աշխ., էջ 99-100:

լուծարվեցին, նրանց անդամները ձերբակալվեցին և դրանց փոխարեն ձևավորվեցին նոր կոմիտեներ, որոնց անդամները հավատարիմ և նվիրված էին բաասական վարչակարգին: Ձերբակալված մի շարք փաստաբաններ բանտարկված մնացին նույնիսկ մինչև 1989 թ.[152]:

Ահաբեկչական նման մթնոլորտում, բնականաբար, ալավիներն սկսեցին համախմբվել նախագահ Հաֆեզ Ալ-Ասադի շուրջ, քանի որ հենց նրանք էին սուննի ծայրահեղականների հիմնական թիրախը: 1980 թ. օգոստոսին նախագահ Ասադն իր ծննդավայր Կարդահա գյուղում հանդիպեց ալավիական համայնքի ղեկավարների և կրոնական շեյխերի հետ: Նախագահը շեյխերին կոչ արեց բարեփոխել կրոնական համակարգը և սերտ կապեր հաստատել շիա տասներկուիմամական կենտրոնների հետ[153]: Կարդահայում այս հանդիպումները գաղտնի էին տեղի ունենում, սակայն կարելի է ենթադրել, որ նախագահ Ասադն ու համայնքի աշխարհիկ և կրոնական ղեկավարներն ակտիվորեն քննարկում էին Սիրիայում «Մուսուլման եղբայրների» կողմից ալավիների դեմ զանգվածային սպանությունների ու բռնությունների խնդիրը: 1980 թ. Լաթաքիայում ստեղծվեց «Ալի Ալ-Մուրտադա» կազմակերպությունը, որի մեջ մտան տասնյակ հազարավոր ալավիներ: Այս կազմակերպությունը նպատակ ուներ պաշտպանել ալավիներին սուննի ծայրահեղականների հարձակումներից: Կազմակերպության ղեկավար դարձավ Հաֆեզ Ալ-Ասադի եղբայր Ջամիլ Ալ-Ասադը:

1980թ. մարտի 8-ին բաասական հեղափոխության 17-րդ տարեդարձի կապակցությամբ Ասադը ելույթ ունեցավ, որտեղ մասնավորապես ասաց. «Այո, ես հավատում եմ Աստծուն: Ես մուսուլման էի, մուսուլման եմ և մնալու եմ մուսուլման, իսկ Սիրիան էլ պետք է մնա իսլամի դրոշի հպարտ ամրոցը, սակայն իսլամի թշնամիները պետք է լքեն Սիրիան»[154]: Ասադի հայտարարության հաջորդ օրը զինված ուղղաթիռներ ուղարկվեցին Ջիսր Շուղուրի ուղղությամբ, որտեղ ցուցարարները հարձակվել էին կուսակցական գրասենյակների վրա: Կիրառված դաժան գործողությունների արդյունքում 200

152Middle East Watch, Syria Unmasked, p. 88.
153Kramer M., նշվ. աշխ., էջ 251:
154 مجموعة خطب الفريق القائد حافظ الاسد, الكتاب الاول. 1980.24.02-30.08.1981.

մարդ զոհվեց: Մի քանի օր անց բանակային երրորդ 10000-անոց դիվիզիան և շուրջ 250 զինված մեքենաներ ուղղվեցին դեպի երկրի հյուսիս՝ Հալեպում կարգուկանոն հաստատելու նպատակով: Սակայն այս ուժերին չհաջողվեց իրականացնել հատուկ գործողություն: Ապրիլի կեսին անվտանգության ուժերը ձեռնամուխ եղան լայնածավալ զանգվածային գործողությունների՝ Սիրիայի հյուսիսային քաղաքներն իսլամիստների հիմնած ցանցերից մաքրելու համար: Գեներալ Շաֆիկ Ֆայադը Հալեպի բնակիչներին ասում էր, որ պատրաստ է օրական հազար մարդ սպանել, մինչև քաղաքը կմաքրվի մուջահիդներից: Նրա տանկային դիվիզիան Հալեպում մնաց մի ամբողջ տարի՝ հսկելով յուրաքանչյուր փողոց[155]:

1980 թ. ամռանը ծայրահեղականների դեմ մղվող պայքարի շրջանակներում երկու կարևոր օրենքներ ընդունվեցին: 1980 թ. հունիսի 3-ին Ժողովրդական ժողովն ընդունեց մի օրենք, որի համաձայն՝ «Մուսուլման եղբայրների» դեմ պայքարի ընթացքում զոհված բոլոր քաղաքացիները համարվեցին ազգային հերոսներ, իսկ նրանց ընտանիքներին հատուկ թոշակ նշանակվեց: 1980 թ. հուլիսի 7-ին ընդունվեց No. 49-րդ օրենքը, որով մահապատիժ էր նախատեսվում «Մուսուլման եղբայրներ» կազմակերպությանը պատկանելու համար: Օրենքի երկրորդ հոդվածի համաձայն՝ պատժից կարելի էր խուսափել օրենքի ընդունման օրվանից սկսած մեկ ամսվա ընթացքում կազմակերպության կազմից դուրս գալու դեպքում[156]: Սակայն օրենքի պահանջներին հետևողների քանակն այնքան էլ մեծ չեղավ. կազմակերպության շարքերը լքողների մեծ մասն էլ հիմնականում ոչ այնքան ակտիվ կողմնակիցներն էին: Մինչև օրենքներն ուժի մեջ կմտնեին, Հաֆեզ Ալ-Ասադի հրամանով հարյուրից ավելի քաղաքական բանտարկյալներ ազատ արձակվեցին[157], այդ թվում և «Մուսուլման եղբայրների» բարձրաստիճան ղեկավարներից Յուսուֆ Ուբայդն ու Ահմադ Ալ-Ջունդին[158]:

1980 թ. հունիսի 26-ին ծայրահեղականները մահափորձ իրա-

---

[155]Seale P., նշվ. աշխ., էջ 328:
[156]Maoz M., նշվ. աշխ., էջ 161:
[157]International Herald Tribune, 18.02.1980.
[158] Pipes D., նշվ. աշխ., էջ 181:

կանգնեցրին նախագահ Հաֆեզ Ալ-Ասադի դեմ: Ահաբեկիչները երկու նռնակ նետեցին նրա ուղղությամբ, երբ վերջինս ընդունելությունների պալատի մոտ ողջունում էր պաշտոնական այցով Դամասկոս ժամանած Մալիի նախագահին և պատվիրակության անդամներին: Նրա թիկնապահներից մեկն անմիջապես մահացավ, իսկ անձնական թիկնապահ Խալիդ Ալ-Հուսեյնը կարողացավ փրկել նախագահի կյանքը: Ալավիական համայնքում զայրույթի ալիք բարձրացավ: Նախագահի եղբայր Ռիֆաթը երդվեց եղբոր վրեժը լուծելու համար քանդել ամբողջ Դամասկոսը: Հունիսի 27-ի առավոտյան ժամը 3-ին պաշտպանական ջոկատների երկու զորամիավորում բերվեց մարտական պատրաստվածության, որոնց հրամայվեց ալավի Մուին Նասիֆի հրամանատարությամբ ուղղաթիռներով հասնել Պալմիրայի անապատում գտնվող բանտ ու վերացնել բանտում գտնվող «Մուսուլման եղբայրների» բոլոր անդամներին: Մուին Նասիֆը, ծանոթացնելով իր զինվորներին հատուկ գործողությանը, դիմեց նրանց հետևյալ խոսքերով. «Մուսուլման եղբայրները» սպանել են ալավի սպաների, ալավի կրոնական շեյխերի, բժիշկների և վերջապես նրանք փորձեցին սպանել նախագահ Հաֆեզ Ալ-Ասադին, ուստի պատահածի համար պետք է վրեժխնդիր լինել»[159]: Մուին Նասիֆի զինվորները դաժանորեն վրեժխնդիր եղան բանտում գտնվող «Մուսուլման Եղբայրների» 550 բանտարկյալներից: Ալ-Նադիր լրագրի տեղեկություններով՝ բանտում իրագործված ոճրագործության հեղինակներն ալավիներն էին[160]:

Իշխանությունների ձեռնարկած պատժիչ գործողությունները չկանխեցին պարտիզանների ահաբեկչությունները: 1980 թ. վերջին սուննի կրոնական խմբավորումները հիմնեցին մի միություն, որը կոչվեց «Սիրիայի իսլամական ճակատ», որում գերիշխող դիրք ունեին հենց «Մուսուլման եղբայրները»: Նույն թվականի նոյեմբերին միությունը հրատարակեց «Իսլամական հեղափոխությունը Սիրիայում և դրա ծրագիրը» խորագրով իր քաղաքական մանիֆեստը, որը ստորագրել էին «Մուսուլման եղբայրների» առաջնորդներ Սաիդ

159 Մուին Նասիֆի կոչի տեքստը տես՝ الرأي, «առ-Ռայ», Ամման, 16.02.1981.
160 Van Dam N., նշվ. աշխ., էջ 190:

Հավան, Ալի Ալ-Բայանունին և Աղնան Սաադ Ադ-Դինը[161]: Քաղաքական այս փաստաթղթում կոչ էր հղվում ալավիներին, որպեսզի նրանք վերանայեն իրենց գործողությունները: «Մուսուլման եղբայրները» հույս էին հայտնում, որ ալավի նախագահին ու նրա եղբայրը կկարողանան կանխել ողբերգությունը երկրում, հակառակ դեպքում նրանք պատրաստ էին մինչև վերջ զենքը ձեռքներին կռվել բաասական իշխանությունների դեմ և տապալել ալավիների վարչակարգը[162]: Մանիֆեստը երաշխավորում էր բոլոր կրոնական և էթնիկ փոքրամասնությունների իրավունքները, սակայն միևնույն ժամանակ ալավիները համարվում էին անհավատ կռապաշտներ, որը նշանակում էր, որ իսլամական պետության մեջ նրանք չեն ունենալու հավասար իրավունքներ: Մանիֆեստը պահանջում էր, որ զինված ուժերը փոխեն իրենց ալավիական կառուցվածքը, որպեսզի վերջ դրվի սուննիների նկատմամբ ալավիների ունեցած գերիշխանությանը: Ալավիները չընդունեցին մանիֆեստի պահանջները, իսկ նրանց նկատմամբ բռնություններն ու սպանությունները մուջահիդների կողմից շարունակվեցին: Այսպես, 1980 թ. դեկտեմբերի 16-ին մուջահիդները Դամասկոսի իր սեփական կլինիկայում սպանեցին Յուսուֆ Սաիղին, որը նախագահ Հաֆեզ Ալ-Ասադի անձնական բժիշկն էր[163]: Իսլամական ճակատը կարողացավ ահաբեկչական պատերազմն ընդդեմ ալավիական վարչակարգի տեղափոխել մայրաքաղաք Դամասկոս: Նրանք պայթեցնում էին կառավարական շենքերը: 1981թ. օգոստոսին մուջահիդները պայթեցրեցին վարչապետի գրասենյակը, սեպտեմբերին՝ ռազմաօդային ուժերի շտաբկայանը, հոկտեմբերին՝ խորհրդային ռազմական փորձագետների կենտրոնը և արդեն նոյեմբերին 29-ին՝ Ազբակիյա շրջանում գտնվող զորակոչիկների հավաքագրման կայանը: 1981 թ. հոկտեմբերի 6-ին Կաhիրեում իսլամական ահաբեկիչներն սպանեցին Եգիպտոսի նախագահ Անվար Սադաթին[164], որից հետո Դամասկոսում սկսեցին

---

[161]Mayer T., The Islamic Opposition in Syria, 1961-1982, Orient, December, 1983, pp. 589-609.

[162]Umar F. Abd Allah, նշվ. աշխ., էջ 211-212:

[163]مصطفى طلاس, مرآة حياتي, العقد الاحد, الطبعة الثانية, دمشق, 2007, ص627

[164]1981 թ. հոկտեմբերի 6-ին «Ջիհադ» խմբավորումը կազմակերպեց Անվար Սադաթի սպանությունը 1973թ. արաբաիսրայելական պատերազմին նվիրված շքերթի

թռուցիկներ տարածվել, որոնք սպառնում էին նախագահ Ասադին նույն ճակատագրին արժանացնել[165]:

1980 թ. վերջին Սիրիայում զինված ուժերի մեծ մասը զբաղված էր համատարած խռովությունների ճնշմամբ: Հատկանշական է, որ երբ դեկտեմբերի կեսին Իսրայելն ընդունեց մի օրենք, որի համաձայն իսրայելական օրենսդրությունը տարածվում էր նաև նրանց կողմից դեռևս 1967 թ. վեցօրյա պատերազմի ժամանակ գրավված Գոլանի բարձունքների վրա, սիրիական կողմը պատասխան ռազմական միջոցներ չձեռնարկեց, չնայած տեղեկատվության նախարար Ահմադ Իսքանդարի այն հայտարարությանը, որ Սիրիան իրավունք ունի, տարբեր միջոցների դիմելով, վերականգնել իր տարածքային ամբողջականությունը: Սիրիական զորքերը նույնիսկ Իսրայելի հետ սահմանի երկարությամբ չշարժվեցին, քանի որ զբաղված էին ներքին խնդիրների լուծմամբ: Դեկտեմբերին վնասազերծվեցին սուննի ծայրահեղականների վերջին օջախները Հալեպում և Դամասկոսում: Հունվարի սկզբին Հաֆեզ Ալ-Ասադի դեմ ծրագրվող մի դավադրություն բացահայտվեց, որի արդյունքում մոտ 4 հազար սպա ձերբակալվեց, որոնցից շատերի համար դաշտային դատարանները մահապատժի վճիռ կայացրին: Իսլամական ճակատի գլխավոր քարտուղար շեյխ Մուհամմադ Աբու Ան-Նասր Ալ-Բայանունիի կարծիքով՝ դավադրությունն ահազանգ էր, որպեսզի սիրիական բանակում սպաների զանգվածային զտումներ կատարվեր, որի արդյունքում կձևավորվեր իշխանություններին ամբողջապես հավատարիմ սպայակազմ[166]:

1982 թ. սկզբին իսլամականների խռովությունները համարյա ամբողջ Սիրիայի տարածքում ճնշվել էին: Միակ քաղաքը, որտեղ նրանք դեռևս պահպանել էին իրենց ազդեցությունն ու կազմակերպչական կառույցները, Համան էր: Այս իրավիճակը չէր կարող երկար տևել և իշխանությունները ստիպված էին քայլերի դիմել՝ մուջա-

---

ժամանակ: Մահափորձն իրականացրած խմբի ղեկավար լեյտենանտ Իսլամբուլին բացականչեց. «Ես Խալիդ Իսլամբուլին եմ, սպանել եմ փարավոնին և չեմ վախենում մահից»: (Տես՝ Էսպոզիտո Ջ., Իսլամական սպառնալիք, առասպե՞լ, թե՞ իրականություն, Երևան, 2003, էջ 112):

[165] Seale P., նշվ. աշխ., էջ 331:

[166] Манукян С., նշվ. աշխ., էջ 116:

հիղներին ծնկի բերելու համար: 1981 թ. դեկտեմբերի 8-ին քաղաքում ռազմական դրություն մտցվեց, իսկ արդեն1982 թ. հունվարի 28-ին Համան ամբողջովին շրջապատվեց իշխանական զորամիավորումների կողմից[167]:

Վարչակարգի և «Մուսուլման եղբայրների» մարտիկների միջև պայքարը հասավ իր գագաթնակետին 1982 թ. փետրվարին, երբ Համայում երկու հակամարտող կողմերի միջև վճռական բախում տեղի ունեցավ: Համա քաղաքն ավանդականորեն համարվում էր Սիրիայում սուննի իսլամական արմատականության կենտրոնը, որտեղ մուջահիդները բազմաթիվ թաքստոցներ ունեին: Իշխանությունները ծրագրել էին Համան մուջահիդներից մաքրել Հոմսում և Հալեպում կիրառված ռազմավարությամբ՝ շրջապատել քաղաքի թաղամասերը, ելքերն ու մուտքերը՝ իրականացնելով զանգվածային ձերբակալություններ և զինված հարձակումներ:

Ի տարբերություն մյուս քաղաքների՝ 1982 թ. փետրվարին Համայում տեղի ունեցած իրադարձությունները վերածվեցին համաժողովրդական զինված ապստամբության, քանի որ ընդդեմ իշխանությունների ոտքի էր կանգնել քաղաքի ամբողջ բնակչությունը: Համայի մարտերը տևեցին մոտ մեկ ամիս՝ փետրվարի 2-ից մինչև նույն ամսվա 28-ը[168]: Համաձայն «Մուսուլման եղբայրների» տեղեկատվության՝ սիրիական վարչակարգը պատրաստվել էր վերջնական ճակատամարտի՝ քաղաքի շուրջ կենտրոնացնելով ալավիների էլիտար զորամիավորումները: Համան վերցնելու համար իշխանություններն այնտեղ էին ուղարկել Ռիֆաթ Ալ-Ասադի հրամանատարությամբ գործող պաշտպանական ջոկատներին, ալավի գեներալ Ալի Հայդարի հատուկ ուժերին, ինչպես նաև ալավի գնդապետներ Նադիմ Աբբասի և Ֆուադ Իսմայիլի՝ համապատասխանաբար 47-րդ տանկային և 21-րդ մեքենայացված բրիգադները: Համայի ապստամբությունը ճնշելու համար տեղում էին նաև ալավի գնդապետ Յահյա Զեյդանի ղեկավարած զինվորական հետախուզության զորամիավորումները: Իշխանության զորքերի թվաքանակը տարբեր

[167]The Middle East Journal, vol. 36, N 3, 1982, p. 411.

[168]Lawson F. H., Social Bases for the Hamah Revolt, Middle East and Research Iinformation Project (MERIP) reports, November/December 1982, pp. 24-28.

գնահատականներով կազմում էր 25 հազար[169]:

Սուննի ծայրահեղականները հայտարարեցին լայնածավալ ապստամբություն ընդդեմ բաասական վարչակարգի, իսկ Համայի մզկիթներից հոգևորականները ջիհադի՝ սրբազան պատերազմի կոչ էին անում: Մուջահիդների հրամանատարը Համայում Ումար Ջավադն էր, որն ավելի շատ հայտնի էր Աբու Բաքր մականվամբ: Ումար Ջավադն իր հրամանատարական քաքստոցից կոչ էր անում մարտիկներին դուրս գալ վճռական պայքարի՝ տապալելու բաասական վարչակարգը: Փետրվարի 3-ին մուջահիդներն սպանեցին ավելի քան յոթանասուն պաշտոնյաների և կուսակցական ղեկավարների, գրավեցին ոստիկանական բաժանմունքները, իսկ հաջորդ օրը հայտնեցին, որ քաղաքն «ազատագրված» է: Ապստամբներն առաջին իսկ օրն իրենց վերահսկողության տակ վերցրեցին Համայի սուննի կառավարիչ Մուհամմադ Հարբայի նստավայրը, ինչպես նաև մի շարք զինվորական, կուսակցական գործիչների, ներառյալ Համայի Բաաս կուսակցության մասնաճյուղի քարտուղար՝ Ահմադ Ալ-Ասադի, գրասենյակները[170]: Համայում «Մուսուլման եղբայրները» փորձեցին շահարկել սուննիների և ալավիների միջև առկա լարվածությունը՝ հույս ունենալով կանոնավոր բանակի կազմում մեծամասնություն կազմող սուննի զինվորականներին իրենց կողմը գրավել, սակայն վարչակարգի էլիտար զորաջոկատներում հիմնականում ալավիներ էին կռվում, որոնք էլ կարողանում էին իրենց վերահսկողության տակ պահել զինուժը:

Համաձայն «Մուսուլման եղբայրների» տվյալների՝ մինչև Համայի վրա հարձակումը 21-րդ և 47-րդ դիվիզիաների՝ ծագումով Համայից բոլոր զինվորականները հեռացվել էին ծառայությունից: Հատկանշական է, որ Համայի մարտերում բաասական ուժերը սպանում էին նույնիսկ վարչակարգին և կուսակցությանը հավատարիմ սուննիներին միայն այն բանի համար, որ ծագումով Համայից էին[171]: Իշխանական զորամիավորումները կարողանում էին արագ կերպով հայտնաբերել խռովարարների քաքստոցները, իսկ նրանց դաժանո-

169 Van Dam N., նշվ. աշխ., էջ112 :
170 Seale P., նշվ. աշխ., էջ 332:
171 Van Dam N., նշվ. աշխ., էջ 114:

րեն սպանել[172]: Ապստամբները հետզհետե նահանջում էին: Վերջապես նրանք դիրքավորվեցին քաղաքի Բարուդի և Կայլանի թաղամասերում, որտեղ ամուր խրամատներ էին կառուցել: Որոնտես գետի ափին գտնվող Կայլանի ընտանիքի առանձնատները պայթեցվեցին ականների միջոցով, իսկ հիմնական զոհվածները քաղաքի բնակչությունն էր, ովքեր թաղվում էին սեփական տների փլատակների տակ: Մուջահիդներից շատերը փորձում էին քաղաքից փախչել ստորգետնյա ջրանցքների միջոցով: Ռիֆաթ Ալ-Ասադը հրամայեց փակել քաղաքի բոլոր մուտքերը: Բազմաթիվ մզկիթներ, եկեղեցիներ և պատմական հուշարձաններ վնասվեցին ու ոչնչացվեցին: Փլուզվեց նույնիսկ 18-րդ դարի Ազմ պալատ-թանգարանի շենքը: Մեկամսյա պայքարից ու կատաղի մարտերից հետո ավերվել էր պատմական քաղաքի գրեթե կեսը: Տարբեր տվյալների համաձայն՝ Համայի ապստամբությունը ճնշելու համար մղված մարտերում իշխանական զորքերի կողմից սպանվեց տարբեր տվյալներով 10-30 հազար մարդ՝ ներառյալ երեխաներ ու կանայք[173]:

Չնայած Համայի ապստամբությունն իր ծավալներով ամենամեծն էր և թվում էր, թե միտում կար, որ կարող է հետագա տարածում ստանալ, սակայն այդպես չեղավ: Ալավիների ռազմաքաղաքական իշխանության հաստատումը Սիրիայում 1982թ. արդեն իրական փաստ էր, քանի որ մեկ տասնամյակի ընթացքում կարողացավ ցույց տալ իր կենսունակությունը Սիրիայի սոցիալ-տնտեսական, քաղաքական և ռազմական բնագավառում ցուցաբերած արդյունավետ գործունեությամբ: 1970-ականներից մինչև 1982 թ. ալավիների բաասական վարչակարգը Սիրիայի Արաբական Հանրապետության պատմության մեջ բացեց մի նոր էջ, որը բնութագրվում էր հարաբերական խաղաղ ներքաղաքական իրադրությամբ, պետական հեղաշրջումների բացակայությամբ, պետական իշխանության դիրքերի ամրապնդմամբ, կառավարման ուրույն մշակույթի ձևավորմամբ: Ալավիների վարչակարգը անցած մոտ 10 տարիների ընթացքում

---

[172] Dekmejian H., նշվ. աշխ., էջ 111:

[173] Chandola H., Syrian Tanks Reported to Be Leveling Hama, The Guardian, 27.02.1982, David H., Assad Goes Beyond the Point of No Return, The Guardian, 11.02.1982, Observer, London, 09.05.1982.

Սիրիայում կարողացավ ձևավորել մարտունակ բանակ, ստեղծել բազմաթիվ լծակներով օժտված արագ արձագանքման զինված միավորումներ, կարգավորել հատուկ ծառայությունների աշխատանքը՝ յուրաքանչյուր ստորաբաժանմանը տալով գործունեության լծակներ, որի արդյունքում բարձրացավ զինված ուժերի մարտունակության մակարդակը: Բացի այդ, իշխանությունների ձեռնարկած միջոցների արդյունքում զգալիորեն բարելավվեց Սիրիայի բնակչության սոցիալ-տնտեսական վիճակը:

# ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

# ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՍԻՐԻԱՅՈՒՄ (1982-1992 ԹԹ.)

## 2. 1. 1982-1986 թթ. ներքաղաքական ճգնաժամը Սիրիայում և ուժերի հավասարակշռությունն ալավիական վերնախավում

Այսպիսով, 1982 թ. փետրվարին Համայում ճնշվեց «Մուսուլման եղբայրների» ապստամբությունը: Խռովարարների դեմ դուրս եկավ Սիրիայի նախագահ Հաֆեզ Ալ-Ասադի եղբայր Ռիֆաթ Ալ-Ասադը՝ սիրիական կանոնավոր բանակի զինվորներով[174]: Հակակառավարական ապստամբությունից և դրա ճնշումից հետո Սիրիայում ներքաղաքական իրադրությունը կրկին սկսեց լարվել: Այս անգամ ճգնաժամի պատճառ դարձավ նախագահ Հաֆեզ Ալ-Ասադի և նրա եղբոր միջև ծագած հակամարտությունը:

1983 թ. նոյեմբերին Հաֆեզ Ալ-Ասադը սրտի նոպայով տեղափոխվեց հիվանդանոց, որտեղ էլ բժիշկների խիստ հսկողության տակ էր գտնվում: Շուրջ երկու շաբաթ հիվանդանոցում անցկացնելուց հետո տեղափոխվեց Ղուտայի իր ամառանոց՝ ապաքինման համար[175]: Կարելի է ենթադրել, որ նախագահի առողջական վիճակի վատթարացումը հետևանք էր Սիրիայի ներքաղաքական լարված իրադրության և արտաքին քաղաքական մարտահրավերների: Նշենք, որ արտաքին քաղաքական դաշտում լրջագույն խնդիր էր Իսրայելի ու ԱՄՆ-ի հետ առճակատումը: Քանի որ Սիրիան մշտապես գտնվում էր Իսրայելի հետ հակամարտության մեջ, իշխանությունները ստիպված էին հսկայական ֆինանսական միջոցներ տրամադրել երկրի անվտանգության և պաշտպանության ոլորտներին, իսկ այդպիսի ռազմական հատկացումները չէին կարող բացասական ազդեցություն չունենալ Սիրիայում սոցիալ-տնտեսական իրավիճակի վրա: Այսպես, 1981-1985 թթ. ընթացքում Սիրիան ռազմա-

---

[174]Seale P., Asad. The Struggle for the Middle East, University of California, Berkeley, Los Angeles, 1989, p. 333

[175]Նույն տեղում, էջ 423:

մթերքի ներկրման վրա ծախսեց ավելի քան 9 մլրդ. ամերիկյան դոլար, իսկ ընդհանուր_առմամբ ռազմական նպատակներով հատկացումները 1980-ական թթ. տվյալներով կազմեցին երկրի բյուջետային ծախսերի 30-35%-ը: Միայն Լիբանանում սիրիական զորքերի ներկայությունն ապահովելու համար օրական ծախսվում էր 250 հազար ամերիկյան դոլար[176]:Ասադին անհանգստացնում էր մեկ այլ հանգամանք ևս՝ եղբոր քաղաքական հավակնությունները: Նա գիտակցում էր, որ Ռիֆաթը, իշխանությունն իր ձեռքը վերցնելու համար, կփորձի օգտվել ստեղծված իրավիճակից: Պատահական չէր, որ նախագահի հրամանով շուտով ստեղծվեց վեց հոգանոց մի հանձնաժողով, որին հանձնարարվեց երկրում իրացնել գործադիր իշխանությունը: Դրա կազմում Ռիֆաթ Ալ-Ասադը չընդգրկվեց, ինչը խոսում էր եղբայրների միջև սկիզբ առնող հակամարտության մասին: Ուժային կառույցների գեներալներն ու որոշ բարձրաստիճան կուսակցական գործիչներ Ռիֆաթ Ալ-Ասադին համարում էին իշխող ալավիական վարչակարգի ամուր հենարան: Ռիֆաթը՝ որպես Սիրիայի ամենամարտունակ՝ 25 հազարանոց պաշտպանական ջոկատների՝ սարայա ալ-դիֆաա, հրամանատար և «Մուսուլման եղբայրների» դեմ պայքարում հաղթանակած անձ, ուժի և հաջողության խորհրդանիշ էր ոչ միայն հասարակության, այլ նաև իշխանական վերնախավի որոշ ներկայացուցիչների շրջանում: Այսպես, արտգործնախարար Աբդ Ալ-Հալիմ Խադդամը և զինված ուժերի գլխավոր շտաբի պետ Հիքմեթ Շիհաբին այցելեցին Ռիֆաթ Ալ-Ասադի՝ Մեզզե թաղամասում գտնվող բնակարան և հորդորեցին նրան Սիրայի համար այդ ճգնաժամային իրավիճակում հեռու չմնալ երկրի ղեկավարման գործընթացից: Ռիֆաթը նրանց հայտնել էր, որ ինքը պարտավոր է հաշվի նստել նախագահի ցանկությունների հետ: Վերոնշյալ հանգամանքներից ելնելով՝ որոշ բարձրաստիճան պաշտոնյաներ և մի շարք գեներալներ նախաձեռնեցին իշխող Արաբական սոցիալիստական վերածնունդ կուսակցության տարածաշրջանային ղեկավարության նիստ, որին ներկա էր ինինսում պատվիրակ, բացի նախագահ Հաֆեզ Ալ-Ասադից և

---

[176]Ахмедов В. М., Армия и Политика в Современной Сирии, Армия и Власть на Ближнем Востоке: от Авторитаризма к Демократии (сборник статей), М., 2002, с. 158.

նրա տեղեկատվության նախարար, ալավի Ահմադ Իսքանդար Ահմադից: Որոշվեց վեցի կոմիտեն փոխարինել տարածաշրջանային ղեկավարությամբ և այդպիսով Ռիֆաթ Ալ-Ասադին բերել գործողությունների կենտրոն[177]: Երկրում, փաստորեն, երկիշխանության հաստատման վտանգ կար, որը Սիրիայի համար հղի էր անկանխատեսելի հետևանքներով:

Ապաքինման մեջ գտնվող նախագահ Հաֆեզ Ալ-Ասադը, իմանալով իրադարձությունների այդպիսի ընթացքի մասին, իր մոտ կանչեց բարձրաստիճան որոշ գեներալների և հայտնեց, որ Ռիֆաթին ասպարեզ բերելն ամերիկաստանական դավադրություն է: Նա կարծում էր, թե արևմտյան պետությունները, մասնավորապես՝ ԱՄՆ-ը, Իսրայելն ու արաբական արևմտամետ որոշ երկրներ՝ Սաուդյան Արաբիան և Մարոկկոն, Ռիֆաթին օգտագործում են իր վարչակարգը տապալելու համար: Նման եզրակացության հանգելու համար Հաֆեզ Ալ-Ասադն ուներ բավարար հիմքեր[178]:

Ռիֆաթ Ալ-Ասադը, գեներալների և կուսակցական ղեկավարների վստահությունը չարաշահելով, սկսեց իրեն պահել որպես երկրի ղեկավարի և պահանջեց նախ վարչապետ Աբդ Ալ-Ռաուֆ Ալ-Կասմի հրաժարականը, ապա՝ նոր կառավարության ձևավորումը[179]: Ռիֆաթը սխալ հաշվարկներ էր արել եղբոր ապաքինման հարցում ևս: Երբ գեներալները հասկացան, որ նախագահին ապաքինված է և կարող է երկրի ղեկն ամուր պահել իր ձեռքում, դադարեցին աջակցել Ռիֆաթին և սկսեցին վերջինիս համարել ոչ թե իրենց շահերի պաշտպանը, այլ արդեն՝ սպառնալիք երկրի և իրենց անձնական անվտանգության համար: Այս հանգամանքներից ելնելով՝ գեներալները որոշեցին չթույլատրել Ռիֆաթին իրականացնել Հաֆեզին պաշտոնազրկելու և իշխանությունը Սիրիայում իր ձեռքը վերցնելու ծրագիրը: Անհրա-

---

[177]Seale P., նշվ. աշխ., էջ 424:

[178]Նախագահ Ասադին Սիրիայի հատուկ ծառայությունները զգուշացնում էին, որ Ռիֆաթի գործողությունները քաջալերվում էին Մարոկկոյի և Սաուդյան Արաբիայի կողմից, իսկ վերջիններիս էլ ուղղորդում էր ԱՄՆ-ը: Ի դեպ, Ռիֆաթը շատ սերտ հարաբերությունների մեջ էր Սաուդյան Արաբիայի արքայազն Աբդալլահի, ինչպես նաև Մարոկկոյի թագավոր Հասանի հետ, որն էլ գաղտնի հարաբերությունների մեջ էր Իսրայելի հետ: Բացի այդ, Ռիֆաթը զգալի կարողություններ ուներ ԱՄՆ-ում՝ մեկ միլիոն դոլար արժողությամբ տուն և այլն:

[179]Seale P., նշվ. աշխ., էջ 426:

ժեշտ է ընդգծել, որ ուժային կառույցների ղեկավարների և գեներալների մեծ մասը ծագմամբ ալավիներ էին, որոնց Հաֆեզ Ալ-Ասադը երկար տարիներ վստահել էր կարևորագույն նշանակության պաշտոններ և, փաստորեն, նրանք էլ հավատարիմ մնացին իրենց նախագահին:

Հասկանալու համար, թե ինչպիսի ներքաղաքական լարված իրավիճակ էր ստեղծվել Սիրիայում 1983 թ. վերջին և 1984 թ. սկզբին, հարկ ենք համարում քննության առնել հակամարտության կողմերին և նրանց ռազմական կարողությունները:

Այսպես, Հաֆեզի վարչակարգի ամենաամուր հենարանը հետևյալ ուժային կառույցներն էին՝ զինված ուժերի հետախուզությունը, որը ղեկավարում էր ալավի Ալի Դուբան, ռազմաօդային ուժերի հետախուզությունը՝ ղեկավար Մուհամմադ Ալ-Խուլին, որը կրկին ալավի էր, և քաղաքացիական հետախուզությունը՝ Ֆուադ Աբսիի և նրա անվտանգության գծով տեղակալ Մուհամմադ Նասիֆի գլխավորությամբ[180]: Այս երեք կառույցների ղեկավարներն անմիջականորեն ենթարկվում էին նախագահին և պատասխանատու էին միայն նրան: Հաֆեզ Ալ-Ասադն իր վարչակարգի պահպանության համար, բացի կանոնավոր զինված ուժերից՝ բանակից, օգտվում էր նաև տարբեր նշանակության զինված միավորումների ծառայություններից, որոնք նույնպես ղեկավարվում էին ալավի հրամանատարների կողմից: Այդպիսի զինված միավորումներից էր 10-15 հազարանոց հատուկ ուժերը՝ ալ-վահդաթ ալ-խասսա, որի հրամանատարն էր ալավի գեներալ Ալի Հայդարը: Հատուկ նշանակությամբ զինված հատուկ ուժերից էր հանրապետական գվարդիան՝ ալ-հարաս ալ-ջումհուրի, որը ղեկավարում էր հայտնի ալավիական ընտանիքներից

[180]Ալի Դուբան և Մուհամմադ Ալ-Խուլին սերում էին ալավիական Մատավիրա ցեղից: Մուհամմադ Նասիֆը նույնպես ալավիական համայնքի ներկայացուցիչ էր: Ինչպես նշում է Պատրիկ Սիլն իր «Ասադ. պայքար Մերձավոր Արևելքի համար» աշխատության մեջ, նա այն եզակի մարդկանցից էր, որին թույլատրվում էր զանգահարել նախագահ Ասադին օրվա բոլոր ժամերին: Նա նաև շատ զարգացած անձնավորություն էր և շիաներին վերաբերող խնդիրներում Ասադի հիմնական խորհրդատուներից էր: Նա սերտ հարաբերություններ ուներ Լիբանանի շիաների առաջնորդ իմամ Մուսա Սադրի հետ, որը 1978 թ. խորհրդավոր կերպով անհետացավ, իսկ իրանական հեղափոխության ղեկավարներից Քոթբզադեհի ու Թաբաթաբայի հետ Մուհամմադ Նասիֆը մտերիմ էր:

մեկի ներկայացուցիչ և Հաֆեզ Ալ-Ասադի կնոջ՝ Անիսա Մախլուֆի հորեղբորորդի Աղնան Ալ-Մախլուֆը: Հանրապետական գվարդիան պատասխանատու էր նախագահական պալատի, ինչպես նաև հանրապետական կարևորության կառույցների անվտանգության համար: Հաջորդը պայքարի ջոկատներն էին՝ սարայա ալ-սիրա[181], որն, ի տարբերություն նախորդների, ավելի փոքրաթիվ էր: Այս զորամիավորումը ղեկավարում էր նախագահի հորեղբորորդի Աղնան Ալ-Ասադը: Պետք է նշել, որ Հաֆեզ Ալ-Ասադը, բացի վերոնշյալ ուժային կառույցների ղեկավարներից և զինված ջոկատների հրամանատարներից, Ռիֆաթի մեկուսացման հարցում վստահում էր նաև կանոնավոր բանակի չորս ալավի գեներալների՝ Ալի Ասլանին, Շաֆիկ Ֆայադին, Իբրահիմ Սաֆիին և Ալի Սալիհին: Ալի Ասլանը զինված ուժերի գլխավոր շտաբի պետի տեղակալն էր, Շաֆիկ Ֆայադը երրորդ բանակային դիվիզիայի հրամանատարը, Իբրահիմ Սաֆին ղեկավարում էր երկրորդ բանակային դիվիզիան, իսկ Ալի Սալիհը հակահրթիռային պաշտպանության կորպուսի հրամանատարն էր[182]: Նախագահ Հաֆեզ Ալ-Ասադի կողմից վստահելի վերոնշյալ 11 գեներալներից 10-ը ներկայացնում էին ալավիական համայնքը, բացի Ֆուադ Աբսիից, որոնց միջոցով Ասադը որոշել էր թուլացնել Ռիֆաթի դիրքերը:

Ռիֆաթին մեկուսացնելն այդքան էլ հեշտ չէր, քանի որ 1984 թ. նրա ենթակայության տակ էին գտնվում տարբեր գնահատականներով շուրջ 25 հազարի հասնող պաշտպանական ջոկատներ, որոնք զինված էին տանկերով, հրետանիով, ՀՕՊ-ի ժամանակակից տեխնիկայով, զինվորական ուղղաթիռներով, ունեին նաև սեփական հետախուզական ցանց և կրում էին հատուկ համազգեստ[183]: Պաշտպանական ջոկատները ստեղծվել էին 1971 թ. Հաֆեզ Ալ-Ասադի վարչակարգի անվտանգության ապահովման նպատակով: Ջոկատ-

---

[181]Արաբ հետազոտող Հաննա Բատատուն, անդրադառնալով սարայա ալ-սիրայի ձևավորմանը, նշում է, որ այն ստեղծվել է 1973 թ., իսկ դրա անդամներն ընտրվում էին բացառապես ալավիական համայնքից: Տե՛ս Batatu H., Some Observations on the Social Roots of Syria's Ruling, նշվ. աշխ., էջ 332:

[182]Seale P., նշվ. աշխ., էջ 428-429:

[183]Jebb C. R., Bridging the Gap: Ethnicity, Legitimacy and State Alignment in the International System, Published in the USA by Lexington Books, 2004, p. 127.

ների կազմավորման սկզբնական շրջանում դրանց կազմում ընդգրկվում էին ալավիական համայնքի այն ներկայացուցիչները, որոնք Հաֆեզ Ալ-Ասադի հետ ազգակցական սերտ կապեր ունեին: Աստիճանաբար, զինվորականների թվաքանակի ավելացմանը զուգահեռ, անհրաժեշտ դարձավ ալավիական մյուս ցեղերից ներկայացուցիչների հավաքագրումը ևս: Այս հանգամանքը հաստատում է արաբ հետազոտող Հաննա Բատատուն՝ նշելով, որ սարայա ալդիֆաա զորամիավորման անդամներն ընտրվում էին Հաֆեզ Ալ-Ասադի հետ ունեցած ազգակցական կապերից ելնելով: Նրանց մեծ մասը նույնիսկ Հաֆեզի ծննդավայր Կարդահա գյուղից էին[184]:

Հրեա պատմաբան Սեմյուել Կաթզն իր «Արաբական բանակները Մերձավոր Արևելքի պատերազմներում» աշխատության մեջ Ռիֆաթի պաշտպանական զորամիավորումն անվանում է ալավիական-պաշտպանական ջոկատներ[185]՝ ալավիների թվային գերակշռության պատճառով:

Հատուկ ծառայությունները նախագահին զգուշացնում էին հնարավոր դավադրության մասին: Այդ իսկ պատճառով Հաֆեզ Ալ-Ասադը հրահանգեց զինված ուժերի հետախուզության ղեկավար Ալի Դուբային հսկողության տակ պահել Ռիֆաթին և նրա հիմնական կողմնակիցներին, իսկ Ալի Հայդարն ու Շաֆիկ Ֆայադը հրաման էին ստացել պաշտպանական ջոկատներին հակակշռելու համար Դամասկոս տեղափոխել իրենց ենթակայության տակ գտնվող զորքերն ու ծանր տեխնիկան: 1984 թ. փետրվարի 27-ին Դամասկոսում իրավիճակը սրվում է: Ալի Հայդարի հատուկ ուժերն ու Ռիֆաթ Ալ-Ասադի պաշտպանական ջոկատները կանգնած էին միմյանց դեմ՝ սպասելով մարտական հրամանի: Սակայն փետրվարի 29-ին տեղի ունեցավ Բաաս կուսակցության տարածաշրջանային ղեկավարության արտակարգ նիստը, որը պետք է ներքաղաքական ճգնաժամից դուրս գալու ուղիներ մատնանշեր: Խնդիրը որոշեցին լուծել հետևյալ կերպ: Նախագահ Հաֆեզ Ալ-Ասադի մարտի 11-ի հրամանագրով ստեղծվեց երեք փոխնախագահի պաշտոն: Այդ պաշտոնները զբաղեցրին Աբդ Ալ-Հալիմ Խադդամը, Զուհեյր Մաշարիկան և Ռիֆաթ

---

[184]Batatu H., նշվ. աշխ., էջ 332.

[185]Katz S., Arab Armies of the Middle East Wars (2), Oxford, 1988, p. 19.

Ալ-Ասադը: Ռիֆաթ Ալ-Ասադը դժգոհ էր այդ որոշումից՝ կարծելով, որ այդպիսով իր լիազորությունները սահմանափակում են և ինքն անմիջականորեն ենթակա է դառնում նախագահին: Հաֆեզ Ալ-Ասադի մեկ այլ հրամանագրով՝ Ռիֆաթի պաշտպանական ջոկատների հրամանատարությունը հանձնվեց գնդապետ Մուհամմադ Ղանիմին: Ռիֆաթը հասկանում էր, որ թե՛ իրեն, թե՛ իր համախոհներին մեկուսացնում են: Ինչպես նշում է Պատրիկ Սիլը Սիրիայի մասին իր հայտնի աշխատության մեջ, սկսած 1983 թ. վերջին շաբաթներից մինչև 1984 թ. մարտ ամիսը Ռիֆաթի դեմ ճնշումներն արտահայտվում էին նրան հավատարիմ մարդկանց մեկուսացնելու տարբեր միջոցներով՝ պաշտոնազրկումներով, ձերբակալություններով և այլն: Այսպես, դեռևս փետրվարի 23-ին Հաֆեզ Ալ-Ասադը կարգադրել էր զինված ուժերի գլխավոր շտաբի պետ Հիքմեթ Շիհաբիին պարտականություններից ազատել անվտանգության գծով Ռիֆաթի նվիրյալ օգնական Սալիմ Բարաքաթին: Ռիֆաթը որոշեց հակադրվել Հաֆեզի հրամանին, սակայն ապարդյուն. Բարաքաթն արդեն բանտում էր[186]:

Հաշվի առնելով ստեղծված իրավիճակը՝ Ռիֆաթը, այնուամենայնիվ, որոշեց գնալ զինված առճակատման: 1984 թ. մարտի 30-ին նա հրաման տվեց պաշտպանական ջոկատներին տեղակայվել Դամասկոսի կենտրոնական շրջաններում: Նրա տանկային դիվիզիան տեղակայված էր օդանավակայանի ճանապարհին մոտ Քաֆար Սուսե կոչվող վայրում, որտեղ գտնվում էր գլխավոր հետախուզության վարչության շտաբկայանը, իսկ հրետանային ուժերը հաստատվել էին Կասյուն լեռան ստորոտին: Մեծ քանակությամբ զինվորականներ կուտակվել էին Շերատոն հյուրանոցի շրջակայքում, իսկ Մերիդիեն հյուրանոցը և Բաաս կուսակցության տարածաշրջանային ղեկավարության բյուրոները շրջապատել էին հետևակային զորքերը: Ընդդեմ պաշտպանական ջոկատների կանգնած էին Շաֆիկ Ֆայադի տանկային դիվիզիան և Ալի Հայդարի հատուկ ուժերը: Երկու կողմերն էլ սպասում էին համապատասխան հրամանի: Նախագահը, հասկանալով պահի լրջությունը և ցանկանալով կանխել ռազմական բախումը, որոշեց դիմել խաղաղարար քայլի: Նա իր

[186]Seale P., նշվ. աշխ., էջ 430-431:

որդու՝ Բասիլի հետ այցելեց Մեզզե թաղամասում գտնվող Ռիֆաթի տուն: Նրանց սուր վիճաբանությանը ներկա էր նաև մայրը՝ Նաիսան, որը եղբայրներին հաշտեցնելու մեջ մեծ դեր ունեցավ[187]: Ի վերջո, Ռիֆաթն ընդունեց Հաֆեզի պայմանները և հրաժարվեց իր մտադրությունից, ինչը շատերը համարեցին սխալ: Իրականում, Ռիֆաթի հնարավորություններն այդքան էլ մեծ չէին: Զինվորական և կուսակցական գործիչների ծանրակշիռ մասը պաշտպանում էին Հաֆեզ Ալ-Ասադին: Վերջինիս աջակցում էր նաև Մոսկվան, որտեղ չէին վստահում Ռիֆաթին: Ռիֆաթի նահանջելու թերևս ամենահիմնական՝ ներքին պատճառներից մեկին անդրադարձել է 1972-2002 թթ. Սիրիայի պաշտպանության նախարար գեներալ Մուստաֆա Տլասն իր «Իմ կյանքի հայելին» աշխատության մեջ[188]: Նա նշում է, որ Ռիֆաթ Ալ-Ասադն այնքան էր վստահում մուրշիդի[189] ալավիներին, որ նրանք դարձել էին պաշտպանական ջոկատների կորիզը: Մուրշիդիները, որոնց թիվը պաշտպանական ջոկատներում հասնում էր երեք հազարի, Հաֆեզ Ալ-Ասադի պահանջով դուրս եկան այդ ջոկատների կազմից: Նրանք ենթարկվեցին Հաֆեզ Ալ-Ասադի հրամանին՝ հաշվի առնելով ազգային գվարդիայի ալավի հրամանատար Մուհամմադ Իբրահիմ Ալ-Ալիի գործոնը, քանի որ վերջինս շատ սերտ հարաբերությունների մեջ էր նրանց հետ դեռևս 1963 թ.-ից: Ալ-Ալիի ջանքերի շնորհիվ էր, որ Սիրիայում մուրշիդիների նկատմամբ խտրական վերաբերմունքին վերջ դրվեց: Այդպիսով, Ռիֆաթը չէր կարող օգտագործել իր ենթակայության տակ գտնվող տանկերն ու

---

[187] Հովհաննիսյան Ն., նշվ. աշխ., էջ 527:

[188] مصطفي طلاس, مرآة حياتي, العقد الرابع, الطبعة الثانية, دمشق, 2007, ص, 366-367

[189]Մուրշիդիյա կրոնական ուսմունքը հիմնադրել է ալավի Սուլեյման Մուրշիդը, որը դեռևս ֆրանսիական մանդատի տարիներին կարողացավ իր ուսմունքի հետևորդների թիվը հասցնել շուրջ 50 հազարի: Նա կարողանում էր բազմաթիվ կեղծ և շինծու հնարքներով գրավել մարդկանց, որոնց թվում էր, թե նա իրոք իջել է երկնքից, ինչպես Մուրշիդն էր կրկնում, և իրական հրաշագործ է: Մուրշիդը պնդում էր, որ աշխարհի կործանումը մոտ է, և Մահդին գալու է: 1924 թ. նա ամուսնանում է ալավիական համայնքի ղեկավար շեյխերից մեկի դստեր հետ, որը նրա հեղինակությունն ավելի է բարձրացնում: Ֆրանսիական իշխանությունների հրամանով Մուրշիդը ձերբակալվում է, սակայն դա ավելի է մեծացնում վերջինիս հեղինակությունը: Ի վերջո, Մուրշիդը ձերբակալվում է 1946 թ. նոյեմբերին և Դամասկոսի գլխավոր հրապարակում կախաղան բարձրացվում: Մուրիշիդի մահից հետո նրա հետևորդների դեմ խտրություններ էին կիրառվում:

ռազմական տեխնիկան: Մուհամմադ Իբրահիմ Ալ-Ալիի դերակատարության մասին Տլասը նշում է, որ 1984 թ. Ռիֆաթի ապստամբության փորձի կասեցումն ինչ-որ չափով կապված էր նաև հենց այդ մարդու ծավալած գործունեության հետ [190]: Նշենք նաև, որ Մուհամմադ Իբրահիմ Ալ-Ալին, ի նշան երախտիքի, Հաֆեզ Ալ-Ասադի կողմից նշանակվեց Բաաս կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամ: Ռիֆաթ Ալ-Ասադի երբեմնի հպարտության առարկա պաշտպանական ջոկատները կազմալուծվեցին և դրանց մի մասի հիմքի վրա ձևավորվեց 569-րդ տանկային դիվիզիան[191], իսկ մյուս մասն էլ միավորվեց Աղնան Մախլուֆի նախագահական գվարդիայի և Ալի Հայդարի հատուկ ջոկատների հետ:

Հարկ է նշել, որ եղբայրների միջև հակամարտությունն այսքանով չավարտվեց, այլ փոխեց իր ձևը, այսինքն՝ եթե մինչև 1984 թ. մարտ ամսվա վերջն այն ռազմական բնույթ ուներ, ապա դրանից հետո արդեն պայքարը շարունակվում է քաղաքական դաշտում:

Ռիֆաթը քաղաքական հարթակում հաջողությունների հասնելու համար որոշեց օգտագործել իր տնտեսական ազդեցությունը և հասարակական ոլորտի լծակները: Չնայած պաշտպանական ջոկատներն արդեն գոյություն չունեին, բայց Ռիֆաթը երկրում ուներ ազդեցության այլ լծակներ ևս: Նա մեծածավալ ներդրումներ էր կատարել բազմաթիվ բիզնես ծրագրերում, մասնավորապես անշարժ գույքի շուկայում՝ բազմաբնակարան շենքեր կառուցելով Մեզզե թաղամասում: Այս ոլորտից նա հսկայական գումարներ էր ստանում, որն էլ ապահովում էր նրա տնտեսական ազդեցությունը երկրում: Ռիֆաթի ֆինանսավորմամբ հրատարակվում էր «Ասպետներ»՝ (արաբերեն՝«Ալ-ֆուրսան») կոչվող ամսագիրը: Ռիֆաթը հովանավորում էր նաև մշակութային ուղղվածության մի ծրագիր, որը կոչվում էր «Բարձրագույն շրջանավարտների միություն»՝ (արաբերեն՝ «Ռաբիտաթ խարիջի ալ-դիրաասաթ ալ-ուլյա»)[192]: Միության կազմում ընդգրկված էին բազմահազար շրջանավարտներ: Դրա տասնհինգ մասնաճյուղերը յուրատեսակ հավաքավայր էին, որտեղ մարդիկ անկաշ-

---

[190] مصطفي طلاس, նշվ. աշխ., էջ 367-368:
[191] Юрченко В. П., Сирия: Проблемы Национальной Безопаснсти (Военная Политика и Военная Строительство в Период Правления ПАСВ 1963-2004гг.) М., 2004, с. 207.
[192] مصطفي طلاس, նշվ. աշխ., էջ 376:

կանդ քննարկում էին հասարակությանը հուզող խնդիրները: Հայտնի իրադարձություններից երկու շաբաթ դեռ չանցած Ռիֆաթի կողմնակիցները հայտարարեցին, որ ապրիլի 17-ին՝ Սիրիայի անկախության օրը, Դամասկոսի համալսարանի ամֆիթատրոնում տեղի է ունենալու կառույցի հավաքը: Իշխանությունները մերժեցին տրամադրել ամֆիթատրոնը, որից հետո հավաքույթի վայր ընտրվեց Սպայի տունը, սակայն այնտեղ ևս արգելվեց անցկացնել միջոցառումը: Վերջապես, ընթրիք կազմակերպվեց Շերատոն հյուրանոցում՝ շուրջ հինգ հարյուր հրավիրյալի համար: Բացի միության անդամներից, ներկա էին նաև բարձրաստիճան պաշտոնյաներ: Ռիֆաթը փորձում էր արդարանալ: Մեջբերենք Ռիֆաթի ելույթից մի հատված. «Ես ամերիկյան և սաուդական գործակալ չեմ, ես չեմ դավաճանում իմ երկիրը: Դուք մոռացե՞լ եք, որ դեռևս տասը տարի առաջ, երբ Հաֆեզը բանակցում էր Քիսինջերի հետ, ինձ «կարմիր սպա» էին անվանում»[193]: Շերատոնում Ռիֆաթի ելույթը տևեց շուրջ երկու ժամ: Հետագայում ևս նա հանդես եկավ Հաֆեզի քաղաքականությունը քննադատող ելույթներով: Ռիֆաթն ամեն կերպ ձգտում էր վերականգնել իր քաղաքական կշիռն ու հեղինակությունը, սակայն՝ ապարդյուն: Սիրիական հասարակությունն այդպես էլ չընկալեց նրան այնպես, ինչպես ինքն էր փորձում ներկայանալ՝ ազատական հայացքների տեր և մարդասեր: Ռիֆաթի պատճառով նրա կողմից հովանավորվող միությունը սկսեց դիտարկվել որպես հակաիշխանական: Բաաս կուսակցության այն ներկայացուցիչները, որոնք անդամակցում էին նաև միությանը, սկսեցին զանգվածաբար լքել դրա շարքերը: 1984 թ. մայիսի 28-ին Ռիֆաթը բարձրաստիճան մի շարք սպաների հետ միասին գործուղվեց Մոսկվա, որից հետո վերադարձավ և անցավ փոխնախագահի իր պարտականություններին: Հաֆեզ Ալ-Ասադի և եղբոր հարաբերություններում անորոշությունը վերացավ այն ժամանակ, երբ Սիրիայի պաշտպանության նախարար գեներալ Մուստաֆա Տլասը սեպտեմբերի 11-ին գերմանական Դեր Շպիգել ամսագրին տված հարցազրույցում հայտարարեց, որ Ռիֆաթ Ալ-Ասադը Սիրիայի համար անցանկալի անձ է՝

---

[193]Ռիֆաթ Ալ-Ասադի ելույթի տեքստը տես՝ Seale P., նշվ. աշխ., էջ 435:

persona non grata[194]: Դա ստիպեց վերջինիս 1984 թ. սեպտեմբերին իր ընտանիքի անդամների և թիկնապահ կազմի հետ միասին հեռանալ երկրից և հաստատվել Ֆրանսիայում: Հետագայում ևս եղբայրների հարաբերություններում տեղի էին ունենում վայրիվերումներ, որոնք սակայն դուրս էր ներքաղաքական ճգնաժամի շրջանակներից:

Այսպիսով, համադրելով վերոնշյալ փաստերը՝ հանգում ենք հետևյալ եզրակացությունների.

1. Ալավի գործիչների միջև ձևավորված հարաբերություններում հետաքրքիր հակակշիռների մի համակարգ էր գործում, որի շնորհիվ ալավի եղբայրների՝ Հաֆեզի և Ռիֆաթի միջև ծագած հակամարտությունը չվերածվեց քաղաքացիական պատերազմի:

2. 1983-1984 թթ. ներքաղաքական ճգնաժամը Սիրիայում ի ցույց դրեց ռազմական գործիչների իրական ուժը, որի հետ ստիպված էր հաշվի նստել նախագահ Հաֆեզ Ալ-Ասադը: Ակնհայտ էր, որ Հաֆեզ Ալ-Ասադն, այնուամենայնիվ, մեծ հեղինակություն է վայելում բանակում, որտեղ շահագրգռված չէին նրա հեռացմամբ:

3. Չնայած ներքաղաքական ճգնաժամը չվերաճեց քաղաքացիական պատերազմի և եղբայրների հակամարտությունն ավարտվեց Հաֆեզ Ալ-Ասադի հաղթանակով, սակայն ճգնաժամը ակներև դարձրեց, որ ավտորիտար վարչակարգի հիմքերն անսասան չէին:

1985 թ. հունվարի 5-ից մինչև 20-ը Դամասկոսում տեղի ունեցավ Բաաս կուսակցության 8-րդ տարածաշրջանային համաժողովը, որի մասնակիցները քննարկեցին Սիրիայի ներքաղաքական իրադրությանը և արտաքին քաղաքականության ուղղությանը վերաբերող հարցերի լայն շրջանակ: Համաժողովի ընթացքում ընդգծվեց, որ կուսակցության 7-րդ տարածաշրջանային համաժողովից հետո Սիրիան նշանակալի հաջողությունների է հասել սոցիալ-տնտեսական զարգացման ուղղությամբ: Նշվեց նաև, որ, չնայած Իսրայելի ծավալապաշտական քաղաքականության պատճառով տարածաշրջանում ձևավորված ռազմաքաղաքական լարված իրադրությանը, Սիրիան ազգային տնտեսության զարգացման ուղղությամբ մեծ հաջողություններ էր գրանցել: Տնտեսության մեջ առաջատար դեր էր խաղում պետական սեկտորը: Համաձայն 1981-1985 թթ. հնգամյա պլանի՝

---

[194] Նույն տեղում, էջ 438:

101,5 մլրդ. սիրիական լիրայի կապիտալի ընդհանուր ներդրման 80,8 մլրդ.-ը հատկացվեց պետական սեկտորին, իսկ 20,7 մլրդ.-ը՝ մասնավորին: Պետությունը մեծ ուշադրություն էր դարձնում նավթի և ֆոսֆորի արդյունահանմանը, էլեկտրաէներգիայի արտադրմանը, շինանյութի և հանքային պարարտանյութերի արտադրությանը: Այսպես՝ էլեկտրաէներգիայի արտադրության ծավալները 1979 թ. 3,266 մլն. կվտ/ժ-ից 1984 թ. հասավ 7,089 մլն. կվտ/ժ-ի: Արդյունքում, էլեկտրաֆիկացված բնակավայրերի թիվը Սիրիայում 1646-ից հասավ 6421-ի[195]: Աճեց նավթի արդյունահանումը, ցեմենտի և ֆոսֆորի արտադրությունը: Հնգամյա պլանի ընթացքում շահագործվեց նավթավերամշակման և արդյունաբերական շուրջ 43 գործարան: Սիրիայի տնտեսության զարգացմանը հսկայական օգնություն էր ցուցաբերում Խորհրդային Միությունը: Շահագործման հանձնվեց Եփրատ գետի վրա կառուցված հիդրոէլեկտրակայանը, որը տալիս էր ամբողջ երկրում արտադրվող էլեկտրաէներգիայի 60%-ը: Սիրիային խորհրդային մասնագետներն օգնություն էին ցույց տալիս բարձրավոլտ էլեկտրահաղորդալարերի անցկացման, նավթային պաշարների հետախուզման և արդյունահանման, ինչպես նաև երկաթուղիների կառուցման բնագավառում: Մասնավորապես, 1980 թ. շահագործման հանձնվեց Կամիշլի-Լաթաքիա 760 կմ երկարությամբ երկաթուղին[196]: Բաաս կուսակցության տարածաշրջանային 8-րդ համաժողովն ընտրեց տարածաշրջանային նոր ղեկավարություն և կուսակցության կենտրոնական կոմիտե: Միաձայն կերպով կուսակցության գլխավոր քարտուղար ընտրվեց Հաֆեզ Ալ-Ասադը:

1985 թ. փետրվարի 11-ին տեղի ունեցավ համաժողովրդական հանրաքվե, որը հնարավորություն տվեց Ժողովրդական ժողովին գրեթե 100% մեծամասնությամբ երաշխավորել Հաֆեզ Ալ-Ասադի թեկնածությունը երրորդ անգամ Սիրիայի նախագահի ընտրվելու համար: Հաֆեզ Ալ-Ասադը երրորդ անգամ յոթնամյա ժամկետով Սիրիայի նախագահ ընտրվեց 1985 թ. փետրվարի 10-ին: Հաջորդ քայլը եղավ նոր կառավարության ձևավորումը: Աբդ Ալ-Ռաուֆ Ալ-

---

[195] Economie Du Monde Arabe Et Musulman, 4 edition, Editions EMAM, 1992, pp 153-160.

[196] Новейшая История Арабских Стран Азии, 1917-1985, Москва, 1988, сс. 108-111.

Կասմը մնաց վարչապետի պաշտոնում, սակայն նոր կառավարության կազմում երկու կարևոր փոփոխություններ կատարվեցին: Ներքին գործերի նախարար Նասրադդին Նասրին փոխարինեց Բաաս կուսակցության սիրիական կառույցի ակտիվ դեմքերից Մուհամմադ Ղաբբաշը: Էկոնոմիկայի և արտաքին առևտրի նախարար նշանակվեց Մուհամմադ Ալ-Իմադին, ով ավարտել էր Դամասկոսի համալսարանի իրավաբանության ֆակուլտետը, ինչպես նաև տնտեսագիտական ուղղությամբ թեկնածուական ատենախոսություն էր պաշտպանել ԱՄՆ-ում:

1986 թ. Սիրիայի համար շարունակում էր օրակարգային մնալ ներիշխանական լարվածությունը: Ռիֆաթ Ալ-Ասադը, չնայած վտարանդիության մեջ, չէր հեռացվել փոխնախագահի պաշտոնից: Երկու եղբայրների համախոհների մեջ ներքին պայքարը կարծես թե շարունակվում էր: Բացի այդ, բանակային հրամանատարների և հատուկ ծառայությունների ղեկավարների միջև ևս գոյություն ուներ որոշակի լարվածություն: Մյուս կողմից, նախագահ Ասադի առողջությունը մնում էր խնդրահարույց: Ի վերջո, վեց ամիս անց նա թույլ տվեց Ռիֆաթին վերադառնալ Դամասկոս և նշանակեց անվտանգության հարցերի գծով փոխնախագահի պաշտոնում: Ավելի ուշ Ռիֆաթն ընտրվեց Բաաս կուսակցության տարածաշրջանային ղեկավարության անդամ: Այդ ընթացքում նա նոր ձևով սկսեց հարաբերվել իր հակառակորդների հետ, որոնց թվում էր արտաքին հարաբերությունների գծով փոխնախագահ Աբդ Ալ-Հալիմ Խադդամը: 1984 թ. ամռանը Ռիֆաթի մարդիկ հարձակում գործեցին Խադդամի ավտոմեքենայի վրա Լիբանանից Սիրիա վերադառնալու ճանապարհին: Իսկ տիա զինվորական հակառակորդների թվում էին պաշտպանության նախարար Մուստաֆա Տլասը, գլխավոր շտաբի պետ Հիքմեթ Շիհաբին, Հատուկ ուժերի հրամանատար Ալի Հայդարը, բանակային երրորդ դիվիզիայի հրամանատար Շաֆիկ Ֆայյադը, զինվորական հետախուզության ղեկավար Ալի Դուբան, ռազմաօդային հետախուզության ղեկավար Մուհամմադ Ալ-Խուլին և Լիբանանում սիրիական զինված ուժերի հետախուզության ղեկավար Ղազի Քանանը[197]:

[197]Middle East Contemporary Survey (MECS), Vol. 11, 1986, p. 605.

Իրականում, Ռիֆաթի վերադարձն իր պատճառներն ուներ: Վարչակարգը մտահոգված էր, որ վտարանդիության մեջ Ռիֆաթի հեղինակությունը կարող է բարձրանալ: Նրան հետ վերադարձնելով Սիրիա՝ Հաֆեզ Ալ-Ասադը ցանկանում էր ձևավորել ուժային մի կենտրոն, որը կհակակշռեր հակառիֆաթական ուժերին: Պատահական չէ, որ Հաֆեզը 1985 թ. սեպտեմբերին Ռիֆաթի դստերն ամուսնացրեց Շաֆիկ Ֆայյադի որդու հետ, որով հաջող կերպով հաշտեցրեց նրանց[198]: Սակայն նախագահը եղբորը չդարձրեց միակ փոխնախագահը, քանի որ գիտակցում էր, որ այդ քայլով կարող է գրգռել հակառիֆաթական դաշինքի տրամադրությունները: 1986 թ. մայիսին տեղեկություններ տարածվեցին այն մասին, թե Լաթաքիայում և Տարտուսում տեղի են ունեցել ելույթներ ի պաշտպանություն Ռիֆաթի, ով 1985թ. դեկտեմբերին երկրորդ անգամ լքեց Սիրիան:

1986 թ. ընթացքում իր ակտիվությամբ աչքի ընկավ ռազմաօդային հետախուզության ղեկավար Մուհամմադ Ալ-Խուլին: Ալ-Խուլիի և նախագահ Ասադի ջերմ հարաբերությունների հիմքը դրվել էր դեռևս 1968 թ., երբ վերջինս առաջարկել էր Խուլիին ղեկավարել ռազմօդային ուժերի հետախուզական ցանցը: Տարիների ընթացքում այդ ցանցն այնքան ընդլայնվեց, որ դարձավ երկրի ամենաազդեցիկ հետախուզական և անվտանգության գործակալություններից մեկը: Մուհամմադ Ալ-Խուլին պատասխանատվություն էր կրում Սիրիական արաբական ավիաուղիների անվտանգության, օտարերկրյա հյուրերի և նախագահ Ասադի անձնական անվտանգության պահպանման համար ևս: Խուլին համագործակցում էր Հիքմեթ Շիհաբիի, արտգործնախարար Ֆարուկ Ալ-Շարի, ինչպես նաև ռազմական ու անվտանգության հարցերով նախագահի խորհրդական, գլխավոր շտաբի պետի տեղակալ գեներալ Ալի Ասլանի հետ: Ռիֆաթի հակառակորդների թվում էին՝ պաշտպանության նախարար Մուստաֆա Տլասը, Ալի Հայդարը, Ալի Դուբան և Ղազի Քանան[199]:

Սիրիայում ժողովրդական ժողովի ընտրություններ տեղի էին ունեցել է 1981 թ. նոյեմբերին: 1986 թ. հունվարին նախագահ Ասադը

---

198Ma'ariv, Tel-Aviv, 11.04.1986.

199 Middle East Contemporary Survey (MECS), Vol. 10, 1986, p. 605.

հրամանագրեց խորհրդարանի ընտրություններ անցկացնել նույն թվականի փետրվարի 10-ին: Պատգամավորական 193 տեղերից 123-ը՝ շուրջ 66%-ը, զբաղեցրին Բաաս կուսակցության անդամները, իսկ մնացածը՝ ԱԱՃ-ի կազմում ընդգրկված մյուս կուսակցությունների ներկայացուցիչները:

«Մուսուլման եղբայրներ» ծայրահեղական կազմակերպությունը, օգտվելով Սիրիայի ներքաղաքական լարված իրադրությունից, վերսկսեց հակակառավարական իր գործողությունները: 1986 թ. հունվարին հուժկու պայթյուններ գրանցվեցին Սիրիայի հարավ-արևմուտքում՝ Դարաայի շրջանում, որին հետևեցին բազմաթիվ ձերբակալությունները[200]: Մարտի 13-ին պայթյուն տեղի ունեցավ Դամասկոսի Աբբասյան հրապարակում: Ավելի քան 200 մարդ զոհվեց, կային նաև բազմաթիվ վիրավորներ: Սիրիական իշխանությունները սկզբում մեղադրում էին թե՛ իրաքյան իշխանություններին, թե՛ իսրայելական Մոսադին: Ահաբեկչական պայթյուններ տեղի ունեցան նաև Սիրիայի հյուսիսային քաղաքներում՝ Հոմսում, Տարտուսում և Լաթաքիայում: Ահաբեկիչները պայթեցրին Լաթաքիա-Հալեպ երկաթուղին, որի հետևանքով մահացավ 140 և վիրավորվեց 155 մարդ: Մի տեղեկատվության համաձայն՝ այս գործողությունների հետևում կանգնած էր Տայասիր Ալ-Տաբաա անունով մեկը, ում ընտանիքի անդամները սպանվել էին 1982 թ. Համայի դեպքերի ժամանակ[201]: «Մուսուլման եղբայրների» նոր ղեկավար դարձավ Աղնան Սաադ Ադ-Դինը, որն իր հարցազրույցներից մեկում կոշտ կերպով քննադատել էր Ասադի ալավիական վարչակարգը, այդ թվում՝ համագործակցությունը շիայական Իրանի հետ[202]: Սեպտեմբերին բազմաթիվ պայթյուններ գրանցվեցին Հալեպում և Դամասկոսում: Որոշ աղբյուրների համաձայն՝ փորձ էր արվում ընդդեմ վարչակարգի կազմակերպել հեղաշրջում, որին մասնակցություն էին ցուցաբերում Սալահ Ջադիդի կողմնակիցները: Իսկ մյուս աղբյուրները տեղի ունեցող իրադարձությունները կապում էին ալավիական համայնքի ներսում

---

[200] Նշվ. աշխ. էջ 608:
[201] الوطن العربي, «ալ-Վաթան ալ-Արաբի», Փարիզ, 16.05.1986.
[202] Ha'aretz, Tel-Aviv, 25.06.1986.

տիրող լարված իրավիճակով[203]: Մուսուլմանական ընդդիմության համար բաասական վարչակարգը համարվում էր «անհավատների» իշխանություն՝ ալավիների իշխանությունն ընդդեմ սուննի մուսուլմանների: Իսկ բաասական վարչակարգի այլախոհների համար ալավիական վարչակարգը հակաարաբական էր, քանի որ աջակցում էր Իրանին ընդդեմ Իրաքի մղվող պատերազմում[204]:

## 2. 2. Հետճգնաժամային ժամանակաշրջանը Սիրիայում 1987-1992 թթ.

1987 թ. ընթացքում Սիրիայի վարչակարգը մտահոգված էր այնպիսի խնդիրներով, որոնք առաջացել էին նախորդ տարիներին: Դրանք էին՝ երկրում խորացող տնտեսական ճգնաժամը, իշխանության համար շարունակվող պայքարը վարչակարգի ներսում, Իսրայելի նկատմամբ ռազմավարական պարիտետ՝ հավասարություն պահելու դժվարությունները, Լիբանանում տիրող քաոսային իրավիճակը, միջարաբական հարաբերություններում աճող մեկուսացումը և վերջապես ԽՍՀՄ-ի հետ հարաբերություններում տեղ գտած անորոշությունն ու արևմտյան պետությունների հետ հարաբերությունների ճգնաժամը:

1987 թ. ընթացքում մամուլում բազմաթիվ տեղեկություններ էին տարածվում Հաֆեզ Ալ-Ասադի առողջության վատթարացման վերաբերյալ: Տեղեկություններից մեկի համաձայն՝ փետրվարի 16-ին Սաուդյան Արաբիայի թագավոր Ֆահդի անձնական բժիշկներն

---

203 Middle East Contemporary Survey (MECS), 1986, Vol. 10, p. 609.

204 Իրաքը 1980 թ. սեպտեմբերի 22-ին պատերազմական գործողություններ սկսեց Իրանի դեմ: Ավելի քան ութ տարի տևած պատերազմն ավերիչ հետևանքներ ունեցավ երկու երկրների համար: Նախնական շրջանում Իրաքի ձեռք բերած ռազմական հաջողություններն ու տարածքային գրավումները ժամանակավոր բնույթ կրեցին: Իրանաիրաքյան անիմաստ գնահատված պատերազմը կործանարար ազդեցություն ունեցավ երկու երկրների տնտեսական ու սոցիալական կյանքի վրա: Մոտավոր հաշվարկներով այդ պատերազմում սպանվել կամ հաշմանդամ է դարձել ավելի քան 1 մլ. 200 հազար մարդ: Կրճատվեց երկու երկրների տնտեսության մեջ վճռորոշ դեր ունեցող նավթի հանույթը: Կողմերի պատերազմական ծախսերը կազմեցին 600 մլրդ. ամերիկյան դոլար: 1988 թ. ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 598 բանաձևի հիման վրա պատերազմն Իրաքի և Իրանի միջև դադարեց: Տե՛ս Հովհաննիսյան Ն., Արաբական երկրների պատմություն, h. 3, նշվ. աշխ., էջ 522-528:

այցելեցին Դամասկոս, որպեսզի հսկողության տակ պահեն նախագահի Ասադի առողջությունը: Հետագա ամիսներին, վատառողջության պատճառով, Ասադը ստիպված էր հետաձգել նախատեսված հանդիպումները: Այս անգամ բժիշկներ հրավիրվեցին Լիբանանից[205]:

Չնայած Ռիֆաթ Ալ-Ասադի՝ Սիրիայի փոխնախագահ լինելը ձևական բնույթ էր կրում, քանի որ 1985 թ.-ից գտնվում էր արտասահմանում, սակայն իրականում ներքաղաքական խարդավանքների հիմնական կազմակերպիչներից մեկն էր: Սիրիայում չէին դադարում քննարկել Ռիֆաթի թեման: Արևմտյան մամուլում նրա գործունեության մասին տարաբնույթ հրապարակումներ էին լինում: 1987 թ. Ռիֆաթի ուրվականը, կարելի է ասել, հետապնդում էր սիրիական վարչակարգին:

Սիրիական կառավարությունը ծանրաբեռնված էր նաև ներքաղաքական այլ խնդիրներով, ինչպես նաև զինված ուժերում տիրող բարձիթողի իրավիճակով: Տարվա սկզբին լուրեր էին շրջանառվում այն մասին, որ բանակում տարբեր խմբավորումների միջև բախումների արդյունքում սպանվել էր, որից հետո շուրջ հինգ հարյուր սպաներ հեռացվեցին պաշտոններից: 1987 ապրիլին բացահայտվեց բանակային երրորդ դիվիզիայի հրամանատար, ալավի գեներալ Շաֆիկ Ֆայյադի ղեկավարությամբ կազմակերպված հեղաշրջման փորձը, որը խնամիական սերտ կապեր ուներ Ռիֆաթ Ալ-Ասադի հետ: Նույն թվականի մայիսին քառասուն օդաչուներ կրկին հեղաշրջման կազմակերպման համար մահապատժի ենթարկվեցին: Չնայած վերոնշյալ տեղեկությունները հիմնականում ժխտվում էին սիրիական պետական շրջանակների կողմից, սակայն բանակում առկա տարաձայնությունների, վարչակարգին սպառնացող մարտահրավերների մասին լուրերը շարունակում էին տարածվել նոր ուժով: «Մուսուլման եղբայրներին» զենք վաճառելու համար պաշտոնանկ արվեցին մի շարք զինվորականներ: Հետախուզական ծառայության մի քանի կարևոր գործիչների պաշտոնական դիրքերը վերանայվեցին:

1987 թ. հունվարին պաշտոնանկ արվեց Սիրիայի ռազմա-

---

205 Middle East Contemporary Survey (MECS), 1987, Vol. 11, p. 636.

դային հետախուզության ղեկավար գեներալ Մուհամմադ Ալ-Խուլին, ապա Ասադի հրամանով բանտարկվեց[206]: Այս տեղեկատվությունը սիրիական իշխանությունները չհաստատեցին: Սիրիական մամուլը գեներալ Մուհամմադ Խուլիի գործունեությանը նախկին տարիների նման էլ չէր անդրադառնում: Ալ-Խուլիի բացակայության պայմաններում հայտնվեց մի նոր գործիչ՝ Սիրիայի ռազմական հետախուզության գեներալ Ալի Դուբան: Նրան աջակցում էր ներքին գործերի նախարարության քաղաքական անվտանգության բաժնի ղեկավար Աղնան Բադր Հասանը, ում հաջողվեց հայտնաբերել մաքսանենգությամբ զբաղվող մի հանցախմբի, որն օգնել էր «Մուսուլման եղբայրներին»: Նախաքննությամբ պարզվեց, որ մաքսանենգները սերտ հարաբերություններ ունեին սիրիական պետական մի շարք կարևոր գործիչների հետ: Դուբային հանձնարարվեց մեծացնել վերահսկողությունը հետախուզական ցանցի նկատմամբ: Նրա նախկին օգնական Մաջիդ Սաիդը նշանակվեց ընդհանուր հետախուզության ղեկավար: Դուբայի վերահսկողությունը չտարածվեց միայն Մուհամմադ Ալ-Խուլիի անձնական հետախուզական ծառայության վրա[207]:

Չնայած 1987 թ. վերջին Սիրիայում դրության տերը նախագահ Ասադն էր, սակայն ներիշխանական լարվածությունը շարունակվում էր: Կրոնաքաղաքական ընդդիմությունը հակաասադական քարոզարշավ էր իրականացնում Լիբանանում պաղեստինցիների շրջանում: Սիրիական ընդդիմության ղեկավարներն ակտիվորեն համագործակցում էին 1982 թ-ից Թունիսում հաստատված ՊԱԿ-ի ղեկավար Յասեր Արաֆաթի հետ[208]:

1987 թ. օգոստոսի 24-ին կախաղան հանվեցին «Մուսուլման եղբայրներ» կազմակերպության 5 անդամներ նույն թվականի ապրիլի 16-ին Դամասկոսում ավտոբուսների պայթեցման մեղադրանքով[209]: Տեղի ունեցան նաև այլախոհ կոմունիստական խմբակցության անդամների ձերբակալություններ: Տնտեսական իրավիճակը երկրում ճգնաժամային էր և բացասաբար էր ազդում Սիրիայի հա-

---

206 The Guardian, London, 22.01.1987.

207 Middle East Contemporary Survey (MECS), 1987, p. 637.

208 الدستور, «ալ-Դուստուր», Լոնդոն, 02.03.1987:

209 Middle East Contemporary Survey Vol. 10, 1986, p. 608.

սարակության ընդհանուր կենսամակարդակի վրա: Սիրիայի քաղաքային բնակավայրերը ժամեր շարունակ մնում էին առանց էլեկտրաէներգիայի: Չափազանց անմխիթար վիճակում էր էլեկտրամատակարարման համակարգը: Առաջին անհրաժեշտության սննդամթերքը՝ շաքարը, կարագը, պանիրը և բանջարեղենը, շատ դեպքերում անհնար էր ձեռք բերել: Խանութների առաջ երկար հերթեր էին գոյանում: Ամսական միջին աշխատավարձը սիրիական 800 լիրա էր, իսկ պետական միջին պաշտոնյաներն ու ծառայողները ստանում էին շուրջ 2000 սիրիական լիրա: Նույն թվականի հուլիսի վերջին Սիրիայի կենտրոնական բանկը 50%-ով արժեզրկեց սիրիական ազգային արժույթը: Մինչդեռ Բաաս կուսակցության պաշտոնյաներն ու բարձրաստիճան զինվորականները շարունակում էին ապրել բարեկեցիկ կյանքով: Չնայած արտասահմանյան ավտոմեքենաների ներկրումներն արգելված էին, բայց շատերը վարում էին գերմանական Mercedes և BMW մակնիշի ավտոմեքենաներ: Սիրիական վերնախավը ստիպված էր թույլ տալ հասարակական շրջանակներին քննադատության ենթարկել իշխանությունների վարած տնտեսական քաղաքականությունը, քանի որ այդպես սոցիալական լարվածությունը թուլանում էր: Իշխանությունները թույլ տվեցին Սիրիայի ամենահայտնի դերասաններից Դուրիդ Լահամին էկրանավորել իր «Լուրը» կոչվող ֆիլմը, որում քննադատության թիրախ էին բարձրաստիճան պաշտոնյաներն ու հարանուն կոռուպցիան: Լահամն արաբական «ալ-Մուսաքալ» թերթին տված հարցազրույցում նշել էր, որ եթե «վերևներում» տեղյակ են կոռուպցիայի մասին և լռում են, ապա իրավիճակն իսկապես մռայլ է: Այս պայմաններում վարչակարգը ստիպված էր գնալ փոփոխությունների: Տնտեսական անվտանգության հատուկ դատարաններ սկսեցին խիստ պատիժներ կիրառել օրինազանցերի նկատմամբ՝ մոտ 600 մարդ ձերբակալվեց, որոնցից շատերը ենթարկվեցին շուրջ 25 տարվա բանտարկության: Սիրիական մամուլը հանրայնացնում էր դատական գործերը: Հետագայում պարզվեց, որ հակակոռուպցիոն գործողությունների զոհերից էր նաև Լիբանանում սիրիական զորքերի հետախուզության ղեկավար Ղազի Քանանի եղբայրը: Ընդհանրապես, տնտեսության բնա-

գավառում հիմնական օրինազանցները բանակի սպաներն էին[210]:

Արագորեն ծանրացող տնտեսական իրավիճակը ստիպեց գործադիր իշխանությանը որոշակի փոփոխություններ իրականացնել: Քաղաքաշինության, գյուղատնտեսության, արտաքին առևտրի և արդյունաբերության նախարարներին Ժողովրդական ժողովն անվստահություն հայտնեց և նրանք հրաժարական տվեցին: Հոկտեմբերին փորձառու և երկարակյաց վարչապետ Աբդ Ալ-Ռաուֆ Ալ-Կասմին փոխարինեց մեկ այլ բաասական քաղաքական գործիչ՝ Ժողովրդական ժողովի նախագահ Մահմուդ Ալ-Զուբին: Ձևավորված նոր կառավարության կազմում ընդգրկված էին 36 նախարարներ: Կարևոր գերատեսչությունները ղեկավարում էին Մուստաֆա Տլասը՝ պաշտպանության նախարար, Մահմուդ Քադդուրը՝ ծառայությունների գծով փոխվարչապետ, Սալիմ Յասինը՝ տնտեսական հարցերի գծով փոխվարչապետ, Ֆարուկ Ալ-Շարը՝ արտաքին գործերի նախարար, Մուհամմադ Ալ-Իմադին՝ արտաքին առևտրի նախարար, Նաջահ Ալ-Աթթարը՝ մշակույթի նախարար, Նասիր Քադդուրը՝ արտաքին հարցերով պետական նախարար: Աբդ Ալ-Ռաուֆ Ալ-Կասմի պաշտոնանկությունը և Մահմուդ Զուբիի նշանակումը ձևական բնույթ էր կրում և նպատակ էր հետապնդում ֆինանսապես անապահով սիրիական հասարակությանը ցույց տալ, որ իշխանությունները ցանկանում են լուծել տնտեսական և սոցիալական խնդիրները[211]:

1985 թ.-ից սկսած սիրիական մամուլը և քաղաքական ղեկավարները խոսում էին Իսրայելի ատոմային կարողությունների վերաբերյալ: Սիրիացի առաջատար լրագրողներից մեկը նշում էր, որ ատոմային զենքի վերաբերյալ խոսակցությունները հենց Իսրայելն է խրախուսում, որպեսզի արաբական երկրներին պահի լարվածության մեջ: Այս տեղեկություններն արաբական երկրների նկատմամբ Իսրայելի վարած հոգեբանական պատերազմի մի մասն էին[212]: Սիրիայի միջուկային էներգիայի գործակալության գործադիր տնօրեն Իբրահիմ Հաղդադը, անդրադառնալով վերոնշյալ թեմային, ասում

210 Middle East Contemporary Survey, Vol. 11, 1987, p. 639.
211 البعث, «ալ-Բաաս», Դամասկոս, 01.11.1987:
212 البعث, «ալ-Բաաս», Դամասկոս, 07.01.1987:

էր, թե ԽՍՀՄ-ը խոստացել էր տեղակայել Սիրիայի տարածքում խաղաղ նպատակներով գործարկելու միջուկային ռեակտոր: Նա զգուշացրեց նաև Իսրայելին, որպեսզի վերջինս Սիրիայի միջուկային ծրագիրը կանգնեցնելու համար չգնա ուժի կիրառման ճանապարհով: Սիրիայի և Իսրայելի միջև լարվածությունը պայմանավորված էր նաև Լիբանանում տիրող իրավիճակով, քանի որ փետրվարին Սիրիան ներխուժել էր արևմտյան Բեյրութ: Սիրիան ցանկանում էր, որպեսզի Լիբանանում գործող զինվորական կազմակերպությունները ակտիվացնեն հարձակումները Իսրայելի վրա՝ վերջինիս ուշադրությունը շեղելով արևմտյան Բեյրութում տիրող իրավիճակից[213]:

ԱՄՆ-ն 1979 թ. դեկտեմբերից Սիրիան համարում էր միջազգային ահաբեկչությանը աջակցող երկիր[214]: Այս հանգամանքը ստիպում էր Դամասկոսին՝ աշխատանք տանել իր միջազգային վարկանիշն ու կշիռը պահպանելու համար[215]: 1986 թ-ից այդ ուղղությամբ սկսվեցին լուրջ քայլեր ձեռնարկվել: Սիրիան դադարեցրեց իր տարածքում «Աբու Նիդալ» կոչվող զինված խմբավորման մարզումները[216], արտահանձնեց մի շարք զինյալների և վերջապես փակել

---

213Ma'ariv, Tel-Aviv, 24.03.1987.

214"State Sponsors of Terrorism," U.S. State Department, Washington, D.C., Dec. 29, 1979, https://www.state.gov/j/ct/list/c14151.htm.

215Middle East Contemporary Survey, Vol. 10, 1986, pp. 619-621.

216 «Աբու Նիդալը» ահաբեկչական զինված կազմակերպություն է, որը հայտնի է 1980-ական թթ. Իսրայելի և արևմտյան պետությունների նկատմամբ զինված թիրախավորումներով: Նպատակ էր հետապնդում ձախողել Պաղեստինի Ազատագրության կազմակերպության և Արևմուտքի միջը դիվանագիտական շփումները, անդամներն իրենց գլխավոր նպատակներից էին համարում Իսրայել պետության վերացումը: Անվանումն ստացել է իր նախկին ղեկավարից, որը Պաղեստինի Ազատագրության Կազմակերպության անդամ էր, սակայն 1974 թ., համաձայն չլինելով ՊԱԿ-ի ղեկավարության վարած քաղաքականության հետ, դուրս եկավ այդ կառույցից և հիմնեց Աբու Նիդալը: Այս կազմակերպությունն ավելի քան 20 տարի ԱՄՆ կողմից դասվել է ահաբեկչական կառույցների ցանկում, սակայն 2008 թ. ԱՄՆ Պետական Դեպարտամենտի կողմից համարվել է ոչ ակտիվ: Տես՝Abu Nidal Organisation, Council on Foreign Relations, May 27, 2009., http://www.cfr.org/israel/abu-nidal-organization-ano-aka-fatah-revolutionary-council-arab-revolutionary-brigades-revolutionary-organization-socialist-muslims/p9153.

տվեց «Աբու Նիդալի»՝ Դամասկոսում գործող գրասենյակները: Շարժումը հետագայում ստիպված եղավ տեղափոխվել Լիբանանի հյուսիսում գտնվող Բեքաայի հովիտ, ինչն անկատ դարձրեց նրան գործունեությունը:

Մինչ ԱՄՆ-ը և Արևմուտքը սիրիական իշխանություններին մեղադրում էին ահաբեկչությանը սատարելու մեջ, վերջիններս շարունակում էին հակազդել՝ հղում անելով գերտերությունների՝ երկակի չափորոշիչներով առաջնորդվելու քաղաքականությանը: Դամասկոսն առաջարկում էր հստակեցնել տարբերությունն ահաբեկչության և ազգային ազատագրական պայքարի միջև: Միջազգային և տարածաշրջանային տարբեր հանդիպումներում ունեցած ելույթներում Հաֆեզ Ալ-Ասադը բարձրացնում էր այս հարցը՝ նշելով, որ Արևմուտքն ազգային շարժումները շատ դեպքերում սխալմամբ բնորոշում է որպես ահաբեկչություն: Հատկանշական էր Իսլամական կոնֆերանս կազմակերպության (ներկայում՝ Իսլամական համերաշխության կազմակերպություն) 1987 թ. Քուվեյթի գագաթաժողովում Հաֆեզ Ալ-Ասադի ելույթի հետևյալ մասը. «Ամերիկայի Միացյալ Նահանգները խոսում է ահաբեկչության մասին, երբ ինքը ղեկավարում է պատմության մեջ հայտնի ամենաահաբեկչական երկիրը: Ծիծաղելի է, որ Միացյալ Նահանգները հիշատակվում է որպես ահաբեկչությանը դիմագրավող երկիր, քանի որ ինքն է զբաղվել ահաբեկչության այնպիսի տեսակներով, որ մարդկության պատմությանը ծանոթ չէր մինչ այդ»[217]:

Նշենք նաև, որ Սիրիան ձգտում էր բարելավել սիրիաբնակ հրեաների վիճակը: 1987 թ. մարտ ամսին ԱՄՆ նախագահ Ջիմի Քարտերի՝ Սիրիա այցելության ժամանակ Հաֆեզ Ալ-Ասադի հրամանով հինգ հրեա բանտարկյալներ ազատ արձակվեցին: Սիրիան օգտագործեց նաև 1987 թ. սեպտեմբերին Լաթաքիայում կայացած 10-րդ միջերկրածովյան խաղերը՝ երկրի միջազգային վարկանիշը բարելավելու նպատակով[218]:

1988 թ. Դամասկոսում խոսում էին Ռիֆաթ Ալ-Ասադի՝ Սիրիա

[217]Մանրամասն տես՝ Փաշայան Ա., Իսլամական կոնֆերանս կազմակերպությունը. նպատակները, գործունեությունը, դիրքորոշումը Ղարաբաղյան հակամարտության նկատմամբ, Եր., 2003, էջ 171-172:

[218] تشرين, «Թիշրին», Դամասկոս, 29.07.1987:

վերադառնալու և ներքին անվտանգության գծով փոխնախագահի պաշտոնին անցնելու մասին: Սիրիական մամուլում տեղեկություններ էին հրապարակվում այն մասին, որ Ռիֆաթի վերադարձի դեպքում փոխնախագահ Աբդ Ալ-Հալիմ Խադդամը Սաուդյան Արաբիայի քաղաքացիություն կստանա և կհեռանա Սիրիայից: Հակառիֆաթական մեկ այլ գործիչ՝ Աղնան Բադր Հասանը, ձերբակալեց Ռիֆաթի աջակից երկու խոշոր գործարարների[219]:

Ռիֆաթի վերադարձի մասին շրջանառվող լուրերը Սիրիայում ներքաղաքական լարվածության պահպանման աղբյուր էին: 1988 թ. փետրվարին նախագահ Ասադի որդին՝ Բասիլ Ալ-Ասադը, նշանակվեց Սիրիայի պաշտպանական ջոկատների հրամանատար: Կառավարության կազմում տեղի ունեցող փոփոխությունները վերաբերում էին նաև Աբդ Ալ-Հալիմ Խադդամին, որը Սիրիայի արտաքին քաղաքականության առանցքային գործիչներից էր: Որոշ տեղեկութուններ համաձայն՝ Հաֆեզ Ալ-Ասադը Խադդամին համարում էր իրավահաջորդը, ըստ այլ լուրերի՝ Խադդամը Լիբանանում սիրիական քաղաքականության որոշակի ձախողումների պատճառով կորցրել էր նախագահի վստահությունը[220]:

1988 թ. վարչակարգի պահպանման համար նախատեսված «հատուկ ուժերի» հրամանատարի պաշտոնից ազատվեց գեներալ Ալի Հայդարը: Ազատման պատճառը վերջինիս դեմ իրականացված մահափորձից հետո առողջական վիճակի վատթարացումն էր: «Հատուկ ուժերի» հրամանատար նշանակվեց Սիրիայի զինվորական հետախուզության ղեկավար գեներալ Ալի Դուբայի եղբորորդին: Այս նշանակումը, ինչպես նաև Ասադի ընտանիքի անդամների՝ քաղաքական և ռազմական կարևոր պաշտոններ զբաղեցնելը, ցույց էր տալիս բարձր էշելոններում համայնքային և ցեղային կապերի դերը:

1988 թ. վերջին Սիրիայում կարևորագույն պաշտոնները զբաղեցնում էին նախագահի մերձավորները՝ Ռիֆաթ Ալ-Ասադը, Բասիլ Ալ-Ասադը և Ղազի Քանանը: Քաղաքական և զինվորական պաշտոններ զբաղեցնող Ասադի ընտանիքի մյուս անդամներն էին՝ նախագահի եղբայր Ջամիլ Ալ-Ասադը, նրա որդի Ֆուննազը, նախա-

---

[219] المحرر, «ալ-Մուհարիր», Բեյրութ, 02.04.1988:
[220] Middle East Contemporary Survey, Vol. 12, 1988, p. 730.

գահի հորեղբորորդիներ Աղնան և Մուհամմադ Ալ-Ասադները: Կարևոր դեր ունեցող պաշտոնյաներն էին՝ փոխնախագահի Աբդ Ալ-Հալիմ Խադդամը, գլխավոր շտաբի պետ գեներալ Հիքմեթ Շիհաբին, փոխվարչապետ և պաշտպանության նախարար Մուստաֆա Տլասը, զինվորական հետախուզության ղեկավար գեներալ Ալի Դուբան, գլխավոր շտաբի պետի տեղակալ գեներալ Ալի Ասլանը, բանակային երրորդ դիվիզիայի հրամանատար գեներալ Շաֆիկ Ֆայադը, ռազմաօդային հետախուզության ղեկավար գեներալ Մուհամմադ Խուլին, ներքին գործերի նախարարության կազմում գտնվող, սակայն անկախ գործող ընդհանուր հետախուզական ծառայության ղեկավար գեներալ Մուհամմադ Նասիֆը, քաղաքական անվտանգության ծառայության ղեկավար Ահմադ Սաիդ Սալահը, հետախուզության հայտնի գործիչներից Աղնան Մախլուֆը և նախկին վարչապետ ու Բաաս կուսակցության և անվտանգության մարմինների միջև կապն ապահովող ազգային անվտանգության բյուրոյի ղեկավար Աբդ Ալ-Ռաուֆ Ալ-Կասմը[221]: Պետք է ընդգծել, որ Սիրիան երկար տարիներ ղեկավարելու՝ Հաֆեզ Ալ-Ասադի գլխավոր հաջողությունը ենթականերին պետական բարձր պաշտոնների նշանակելու և նրանց հետ աշխատելու կարողությունն էր:

Ասադի առողջական խնդիրները շարունակում էին սրել պայքարը վարչակարգի ներսում: Տարվա ընթացքում նախագահի առողջական վիճակն այնքան վատթարացավ, որ Գերմանիայի Դաշնային Հանրապետության արտգործնախարար Հանս Դիտրիխ Գենշերի պաշտոնական այցը Սիրիա հետաձգվեց: Խորհրդային բժիշկներն առաջարկում էին Ասադին տեղափոխել Մոսկվա, ինչը նա մերժեց: Արևելաեվրոպական սոցիալիստական դաշինքի երկրներից մի շարք բժիշկներ հրավիրվեցին Դամասկոս՝ հսկողության տակ պահելու նախագահի առողջությունը[222]:

1986 թ.-ից «Մուսուլման եղբայրները» սկսեցին ակտիվության նշաններ ցույց տալ, երբ պարզվեց, որ մեծ քանակությամբ սիրիական անվտանգության աշխատողներ են սպանվել[223]: Կրոնաքաղա-

---

221 الوطن العربي, «ալ-Վատան ալ-Արաբի», Փարիզ, 26.08.1988:

222 Middle East Contemporary Survey,Vol. 12, 1988, p. 730.

223 Middle East Contemporary Survey, 1986, pp. 608-610.

քական ընդդիմության հաջողությունները երկար չտևեցին: Ընդդիմությունը, որը գոյատևում էր հիմնականում արտաքին օգնությունների շնորհիվ, ներքին խժդժությունների պատճառով պառակտվեց:

1988 թ. դեկտեմբերին Սիրիայի անվտանգության աշխատակիցների կողմից Դամասկոսում սպանվեց «Մուսուլման եղբայրների» երկու անդամ: Փաստորեն, Սիրիայի ազգային անվտանգությանն ուղղված սպառնալիքները լիովին չէին վերացել: Կային նաև ընդդիմադիր այլ ուժեր, որոնց հետ իշխանությունները պետք է հաշվի նստեին: Դրանցից էր Կոմունիստական բանվորական կուսակցությունը, որը հայտարարել էր, թե ուներ 312 ձերբակալված անդամ[224]: Սիրիայի անվտանգության համակարգը լայնածավալ գործողություններ էր իրականացնում բաասական վարչակարգին ընդդիմադիր տարրերին չեզոքացնելու ուղղությամբ: Որոշ տեղեկությունների համաձայն՝ ձերբակալվեց նույնիսկ սիրիացի հայտնի մարմնամարզիկ Նիզար Ալ-Աբդալլահը, որը մեծ համբավ էր ձեռք բերել 1987 թ. տեղի ունեցած միջերկրածովյան խաղերի ժամանակ[225]: Սեպտեմբերին կանխվեց հեղաշրջման մի փորձ, որից հետո շուրջ 40 զինվորներ և սպաներ մահապատժի ենթարկվեցին[226]:

1988 թ. ընթացքում ալավի հայտնի կրոնական առաջնորդներից մեկի որդին՝ աքսորի մեջ գտնվող գիտնական Ահմադ Սուլեյման Ալ-Ահմադը, հայտարարեց ընդդիմադիր նոր ուժի՝ «Ազգային դեմոկրատական կուսակցության», ձևավորման մասին: Իսկ այլախոհ Աքրամ Ալ-Հաուրանիի որդին՝ նույնպես այլախոհ Ջիհադ Ալ-Հաուրանին, իր հարաբերությունները կարգավորեց վարչակարգի հետ, վերադարձավ Դամասկոս և նույնիսկ հանդիպեց նախագահ Ասադին[227]:

1980-ականների վերջերին տնտեսական իրավիճակը երկրում սկսեց հետզհետե կայունանալ՝ պայմանավորված կառավարության ծրագրային փոփոխություններով, կոռուպցիայի դեմ ծավալված պայքարով և տնտեսության ազատականացմանը միտված քայլե-

---

224 المحرر, «ալ-Մուհարիր», Բեյրութ, 27.02.1988:

225 Middle East Contemporary Survey, 1987, p. 651.

226 Middle East Insider, 19.09.1988.

227 Middle East Contemporary Survey, 1988, p. 731.

րով: Մասնավոր հատվածի խթանումը բարձրացրեց նավթի արդյունահանման մակարդակը և գյուղատնտեսության բնագավառում նոր բարեփոխումների իրականացման առիթ դարձավ: Տնտեսական իրավիճակի կայունացումը հիմնականում կապված էր Սիրիայի հյուսիս-արևելյան շրջանում՝ Ջազիրայում թեթև նավթի արդյունահանման ծավալների ավելացման հետ: Ջազիրայում նավթի պաշարներ հայտնաբերվել են դեռևս 1956 թ.-ից, սակայն ամենանշանակալին ալ-Թայյամ նավթի հանքավայրի հայտնաբերումն էր 1984 թ., քանի որ այդ շրջանի նավթն, ի տարբերություն այլ նավթային հանքավայրերի, ավելի թեթև էր և ուներ ցածր ծծմբայնություն: Նախապատրաստական որոշ աշխատանքներից հետո նոր հանքավայրից սկսվեց նավթի արդյունահանումը, իսկ 1988 թ. մարտին Ջազիրայի շրջանից արդյունահանված նավթի ծավալն օրական կազմում էր 106 հազար բարել: Սիրիայում նավթային պաշարների հետախուզմամբ սկսեցին հետաքրքրվել «Բրիթիշ փեթրոլյում», «Արամկո», «Քովեյթ փեթրոլյում քամփընի», «Մերֆի իսքլըն» նավթային ընկերությունները և թուրքական պետական նավթային ընկերությունը[228]:

Տնտեսության մյուս ճյուղը, որը սկսեց վերականգնվել, գյուղատնտեսությունն էր: Բնակլիմայական բարենպաստ պայմանների արդյունքում 1988 թ. ավելի շատ բերք ստացվեց՝ հացահատիկի բերքի ծավալը հասավ 3,5 մլն. տոննայի, ի տարբերություն նախորդ հինգ տարիների, երբ այդ ցուցանիշը 1,5 մլն. տոննա էր: Սիրիան արագորեն կազմակերպեց տենդերներ՝ 240 հազար տոննա ցորենի և 50 հազար տոննա ալյուրի մատակարարման համար: Ցորենի սպառումը արագ կազմակերպելու պատճառներից էին Սիրիայում պահեստավորման նպաստավոր պայմանների բացակայությունը, դեպի Լիբանան ու Թուրքիա ցորենի մաքսանենգությունը, որտեղ շուկայական գները նշանակալիորեն ավելի բարձր էին: Ինչպես արդեն նշել ենք, Սիրիայում տնտեսության բնագավառում կոռուպցիայի մեջ ներգրավված էին բարձրաստիճան զինվորական և կուսակցական ղեկավարները: Այս մասին գրվում էր արտասահմանյան մամուլում: Մի շարք թերթեր կաշառակերության մեջ էին մեղադրում փոխնա-

---

228 Country Reports (London quarterly), Syria, 1988-1989, pp. 32-34.

խագահ Զուհայր Մաշարիկային, ընդհանուր հետախուզական ծառայության ղեկավար, գեներալ Մաջիդ Սայիդին[229], Ալի Դուբայի հետ ջերմ հարաբերությունների մեջ գտնվող հետախուզության սպա Ահմադ Աբբուդին[230] և առաջին բանակային դիվիզիայի հրամանատար գեներալ Իբրահիմ Սաֆիին[231]:

Սիրիայի տնտեսական դժվարությունների հիմնական պատճառներից էր նաև երկրի հսկայական ռազմական ծախսերը: Իսրայելի հետ ռազմավարական հավասարության պահպանումը միայն հռետորաբանություն չէր: Այն խժռում էր Սիրիայի տնտեսական ռեսուրսները: Սիրիան 1988 թ. 15%-ով կրճատեց իր ռազմական բյուջեն, որպեսզի թեթևացնի տնտեսական իրավիճակը երկրում: Վարչապետ Մահմուդ Ալ-Զուբին հայտարարեց, որ բյուջեի գլխավոր նպատակը զարգացման ծրագրերի ֆինանսավորումն էր՝ միաժամանակ հաստատելով վարչակարգի պատրաստակամությունը տրամադրել բոլոր ռեսուրսերն Իսրայելի հետ ռազմավարական հավասարություն ապահովելուն: Ռազմավարական հավասարության կարգախոսը հնարավորություն էր տալիս սիրիական վարչակարգին լուծել քաղաքական երեք կարևոր խնդիր.

1. Վերահաստատում էր Սիրիայի պահանջը Իսրայելի դեմ համաարաբական պայքար մղելու վերաբերյալ,

2. Փորձում էր հիմնավորել երկրում առկա սոցիալական և տնտեսական խնդիրները,

3. Հիմնավորում էր Իսրայելի դեմ պատերազմ չսկսելու պատճառները:

Հաֆեզ Ալ-Ասադը 1988 թ. մարտի 8-ին հեղափոխության օրվա առիթով արտասանած իր ելույթում նշեց, որ Իսրայելը խաչակիրների նման կոչնչացվի: Սիրիայի ԶՈՒ գլխավոր շտաբի պետը բացառում էր Իսրայելի հետ խաղաղությունը[232]: Իր հերթին, Ասադը հայտարարում էր, որ սիրիական բանակը մեծապես բարելավվել է, այդ իսկ պատճառով Իսրայելի հետ հարաբերություններում քա-

---

229 المحرر, «ալ-Մուհարիր», Բեյրութ, 26.03.1988:

230 الثورة , «աս-Սաուրա», Բաղդադ, 16.04.1988:

231 المحرر, «ալ-Մուհարիր», Բեյրութ, 07.05.1988:

232 كلمة السيد الرئيس القائد حافظ الاسد الامين العام لحزب البعث العربي الاشتراكي, رئيس الجمهورية في الذكرى الحادية عشرة لثورة آذار, دمشق, 08.03.1988

ղաքական փոխզիջումներն անհնար են[233]: Մի շարք առիթներով սիրիացի քաղաքական առաջնորդները և մամուլն ընդգծում էին Իսրայելի դեմ արաբական համերաշխության կարևորությունը, որը գոյություն ուներ դեռևս 1973 թ.: Իսրայելի դեմ համաարաբական ճակատով հանդես գալու կոչերը մասամբ պաշտպանվեցին 1988 թ. հունիսի 10-ին Ալժիրում համաարաբական արտակարգ գագաթաժողովի ժամանակ:

Սիրիական բանակը շարունակում էր նախապատրաստվել Իսրայելի հետ առճակատմանը: Նախապատրաստական աշխատանքներն իրականացվում էին երեք ուղղությամբ՝ ցամաքում, ծովում և օդում՝ միտված լինելով Իսրայելի ռազմական հզորության չեզոքացմանը: Լիբանանի Բեքաայի հովտում և Գոլանի բարձունքներում պետք է կազմակերպվեր պաշտպանական սահմանների անքերի պաշտպանություն: Երկրորդ դեպքում անհրաժեշտ էր դառնում «հակընդդեմ պատասխանի» զարգացումը՝ մեծ քանակությամբ մակերես-մակերես հրթիռների կենտրոնացմամբ: Երրորդ՝ կարևորվում էր «հարձակման պատասխանի» զարգացումը՝ ձևավորելով մեծ քանակությամբ զորամասեր, ձեռք բերելով քիմիական զենք և մակերես-մակերես հրթիռներ: Նախապատրաստական վերոնշյալ աշխատանքներն իրականացնելու համար անհրաժեշտ էին մեծածավալ ծախսեր: Սիրիան զենք-զինամթերքի գնման վերաբերյալ գործարքներ էր կնքում տարբեր երկրների հետ, որոնցից մեկը՝ չինական հրթիռների ձեռքբերումը, իսրայելական և ամերիկյան պաշտոնյաների շրջանում խուճապ էր առաջացրել: Խորհրդային Միությունը Սիրիային առաքել էր «Էս Էս-21 երկիր-երկիր» տեսակի հրթիռներ և 30 միավոր «ՄիԳ-29» ռազմական ինքնաթիռ: Խորհրդային Միությունը, համաձայն առկա տեղեկատվության, համաձայնել էր Սիրիային վաճառել այդ ժամանակ աշխարհում լավագույն ռմբակոծիչ համարվող «Տուպոլեվ-22» ինքնաթիռներ, «ՄիԳ-31» գերձայնային կործանիչներ, «Անտոնով-124» բեռնատար ինքնաթիռներ և «Սու 24» ռմբակոծիչներ: Խորհրդային մասնագետների օգնությամբ Սիրիան Բեքաայի հովտում նոր պաշտպանական գծի անցկացման աշխատանքներ էր իրականացնում: Երկու երկրները համագործակցում

---

[233] Ha'aretz, Tel-Aviv, 02.08.1988.

էին նաև քիմիական զենքի արդյունաբերության բնագավառում: Ավելին, Խորհրդային Միությունն ընդլայնեց Տարտուսում տեղակայված ռազմանավերի բազան[234]:

Սիրիայի ռազմականացումն ու ռազմական հռետորաբանության ակտիվացումը Իսրայելում անհանգստություն էր առաջացնում: 1988 թ. հունիսին Իսրայելի պաշտպանության նախարար Իցխակ Ռաբինը, անդրադառնալով սիրիա-չինական ռազմական գործարքին, ընդգծեց, որ սիրիական իշխանությունները չպետք է չինական հրթիռներն ընդդեմ Իսրայելի օգտագործեն, քանի որ դա կործանարար կլինի Սիրիայի համար: Սիրիական կողմը, սակայն, նշում էր, թե Սիրիայի ձեռք բերած ժամանակակից զենքերի վերաբերյալ տեղեկությունները Իսրայելը հորինում էր, որպեսզի ԱՄՆ-ից լրացուցիչ զինամթերք և ռազմական տեխնիկա ներկրելու հիմնավորում ունենա[235]: Պատերազմի մասին խոսակցությունները շարունակվեցին և նույնիսկ Իսրայելի բարձրաստիճան զինվորականները, ներառյալ ռազմաօդային ուժերի հրամանատարը, հյուսիսային հրամանատարության հրամանատարը և գլխավոր շտաբի պետը, զգուշացնում էին, թե Սիրիան պատրաստվում է Իսրայելի դեմ պատերազմի: Իսրայելում հայտարարում էին, որ Սիրիան սկզբունքորեն պատրաստ է պատերազմի, սակայն որոշում կայացնելու համար հարմար պահի է սպասում: Սիրիական կողմն իր հերթին անհանգստություն էր արտահայտում Իսրայելի ռազմականացման համար: Սիրիացիներին մտահոգեց սեպտեմբերին Իսրայելի արձակած լրտես-արբանյակի մասին տեղեկատվությունը, որն ուսումնասիրելուց հետո Սիրիայի հեռահաղորդակցության նախարարն Արաբական պետությունների լիգային կոչ արեց այդ հարցով անհապաղ քննարկումներ ծավալել[236]: Իսրայելի միջուկային կարողությունները նույնպես Սիրիայի համար լարվածության աղբյուր էին[237]:

1990-ականների սկզբին Սիրիայի արտաքին քաղաքականության ձևավորման համար երկու կարևոր գործոններ շոշափելի

---

[234] Ma'ariv, Tel-Aviv, 01.07.1988.

[235] الثورة , «աս-Սաուրա», Դամասկոս, 23.06.1988:

[236] البعث, «ալ-Բաաս», Դամասկոս, 21.09.1988:

[237] تشرين, «Թիշրին», Դամասկոս, 27.09.1988:

նշանակություն ունեցան՝ ԽՍՀՄ-ի փլուզումն ու Ծոցի երկրորդ ճգնաժամը: 1991 թ. առաջին կեսին հակաիրաքյան դաշինքի ուժերը ներխուժեցին Իրաք, որը վերածվեց լայնածավալ պատերազմի, իսկ տարվա երկրորդ կեսին փլուզվեց Խորհրդային Միությունը: Այս իրադարձություններն անդրադարձ ունեցան նաև մերձավորարևելյան խաղաղության գործընթացի վրա: Իրաքաքուվեյթյան ճգնաժամի ընթացքում ԱՄՆ-ի կողմից ղեկավարվող դաշինքին Սիրիայի մաս կազմելը, ինչպես նաև մերձավորարևելյան խաղաղության գործընթացին մասնակցելու նրա պատրաստակամությունը որոշակի փոփոխություններ մտցրեցին Սիրիայի արտաքին քաղաքականության ուղենիշների մեջ: Պատճառներից մեկը Սիրիայի դաշնակցի՝ ԽՍՀՄ-ի փլուզումն էր: Նման դիրքորոշումը, սակայն, ներքին դիմադրության հանդիպեց:

1980-ական թվականներից Սիրիայում ահագնանում էին ներքին և արտաքին բազմաթիվ հիմնախնդիրներ: Հետսառըպատերազմյան շրջանում միջազգային ասպարեզում, այդ թվում՝ Արևելյան Եվրոպայում տեղի ունեցող փոփոխությունների լույսի ներքո երկրում քաղաքական բարեփոխումների կարիք էր զգացվում: Մյուս կողմից, Դամասկոսը բախվում էր թե՛ տարածաշրջանային, թե՛ միջազգային խնդիրների: Սիրիան աստիճանաբար կորցնում էր ազդեցության լծակները Լիբանանում: Բազմաթիվ դժվարություններ կային արաբական երկրների հետ հարաբերություններում: Սիրիան, ի վերջո, պարտավոր էր հաշվի նստել արևելաեվրոպական կոմունիստական վարչակարգերի և Խորհրդային Միության փլուզման հետևանքով ԱՄՆ-ի՝ համաշխարհային գերտերություն դառնալու փաստերի հետ:

1980-ական թթ. վերջին Սիրիան սկսեց որդեգրել նոր քաղաքականություն, որպեսզի կարողանար նոր աշխարհակարգում ամրապնդել իր դիրքերը: 1989 թ. վերահաստատվեցին Սիրիայի և Եգիպտոսի միջև դիվանագիտական հարաբերությունները, իսկ 1990 թ. նկատվեց Սիրիայի և արևմտյան Եվրոպայի երկրների ու ԱՄՆ-ի հետ հարաբերությունների ջերմացում[238]: 1990-1991 թթ. Ծոցի երկրորդ ճգնաժամի ժամանակ ԱՄՆ-ի գլխավորած հակաիրաքյան դաշինքի կազմում Սիրիայի ընդգրկվելը վկայում էր այդ երկրի

---

[238]Middle East Contemporary Survey, 1991, Vol. 15, p. 664.

քաղաքական ուղենիշի փոփոխության մասին: Դաշինքին միանալն օգնեց Սիրիային բարելավել հարաբերությունները Ծոցի երկրների, ԱՄՆ-ի և արևմտյան Եվրոպայի երկրների հետ, որոնք (հատկապես Ծոցի արաբական երկրները) սկսեցին ֆինանսական հսկայական օգնություններ տրամադրել Սիրիային, որի կարիքը մեծապես ունի Սիրիան:

Ծոցի ճգնաժամի ընթացքում Քուվեյթում աշխատող շուրջ 100 հազար սիրիացիներ վերադարձան Սիրիա՝ սիրիական աշխատաշուկայում ստեղծելով լարվածություն, որից հետո գործազրկության մակարդակը երկրում պաշտոնական տվյալներով անցավ 6%-ը: Սիրիայի տնտեսության վրա բացասական ազդեցություն էր թողնում նաև այն, որ իրաքա-քուվեյթյան պատերազմի պատճառով նվազում էր երկիր մտնող արտարժույթի քանակը[239]: Զուգահեռաբար, արևելյան Եվրոպայում տեղի ունեցող քաղաքական իրադարձությունները, այդ թվում՝ Ռումինիայում Չաուշեսկուի վարչակարգի տապալումը, ստիպեցին սիրիական վարչակարգին ժողովրդավարությանը միտված քայլեր ձեռնարկել: Այսպես, իշխանությունները թույլ տվեցին հիմնադրել նոր ու վերահսկելի կուսակցություններ, որոնք հնարավորություն ունեցան մասնակցելու 1990 թ. մայիսին տեղի ունեցած Ժողովրդական ժողովի ընտրություններին: Այս քայլերը մեծ հաշվով երկրի ներքին կյանքում դրական տեղաշարժերի առիթ չդարձան, քանի որ արհեստական բնույթ էին կրում: Սիրիական մամուլը նշում էր, որ արևելաեվրոպական վարչակարգերի տապալումն առնչություն չէր կարող ունենալ Սիրիայի հետ: Այսպես, սիրիական «Թըշրին» օրաթերթի խմբագրականում նշված էր. «Արևելյան Եվրոպայի սոցիալիստական վարչակարգերի տապալումը չի նշանակում սոցիալիզմի կամ սոցիալիստական գաղափարախոսության ավարտ: Հաֆեզ Ալ-Ասադի «ուղղիչ շարժման» կարևորությունն ակնհայտ է»[240]:

1990 թ. նոյեմբերի 17-ին Սիրիայի Ժողովրդական ժողովը միաձայն Հաֆեզ Ալ-Ասադին առաջադրեց նախագահի պաշտոնի միակ թեկնածու՝ հիմք ընդունելով իշխող Բաաս կուսակցության երաշխա-

---

[239]Country Profile, Syria, 1991-1992, p. 53.
[240] تشرين, «Թիշրին», Դամասկոս, 02.10.1991:

վրումը: Չորրորդ անգամ Սիրիայի նախագահի պաշտոնին վերընտրվելու համար- Հաֆեզ Ալ-Ասադի թեկնածությունը հաստատելու նպատակով դեկտեմբերի 2-ին անցկացվեց համաժողովրդական հանրաքվե: Համաձայն սիրիական պաշտոնական տվյալների՝ հանրաքվեին մասնակցեցին ընտրելու իրավունք ունեցող քաղաքացիների 94%-ը՝ շուրջ 6, 727, 992 մարդ, որի 99,98%-ը քվեարկել էր Ասադի օգտին: Նույնիսկ Դամասկոսի հրեական փոքրաթիվ համայնքը հանդես եկավ նախագահ Ասադի թեկնածության պաշտպանությամբ[241]:

Բաաս կուսակցության համագումարը, որը պետք է գումարվեր չորս տարին մեկ հաճախականությամբ, վերջին անգամ տեղի էր ունեցել 1985 թ. հունվարին և 1989 թ-ից սկսած հետաձգվում էր առանց բացատրության: Համագումարը հետաձգելու համար վարչակարգը երկու պատճառ ուներ: Առաջին, ցանկանում էր խուսափել արևելաեվրոպական կոմունիստական վարչակարգերի փլուզումից հետո առաջացած գաղափարական ճգնաժամից: Երկրորդ, իշխանությունները ցանկանում էին պահպանել ուժերի հավասարակշռությունը երկրի ներսում: Այս կապակցությամբ պետք է նշել, որ չնայած Հաֆեզ Ալ-Ասադն ու Ռիֆաթը 1990 թ. նոյեմբերին հանդիպեցին Ժնևում, բայց նրանց հարաբերությունները չբարելավվեցին: Ռիֆաթը չվերադարձավ Սիրիա[242]:

Սիրիայի նկատմամբ շարունակում էին քննադատաբար հանդես գալ արտերկրում հաստատված սիրիական «Մուսուլման եղբայրները»: Հունվարի կեսերին հորդանանյան լրատվամիջոցները մեջբերում էին սիրիական «Մուսուլման եղբայրների» և ընդդիմադիր «Սիրիայի ազգային կուսակցության» հակաիշխանական հայտարարությունները, որոնցով վերջիններս աջակցություն էին հայտնում Իրաքին «սիոնիստաամերիկյան զավթիչների դեմ պայքարում»[243]:

Ներսիրիական քաղաքական կյանքում վարչակարգի համար մեծ վտանգ պարունակող սպառնալիք չկար. իշխանությունները

---

[241] Ha'aretz, Tel-Aviv, 28.11.1991.

[242] Middle East Contemporary Survey, Vol. 15, 1991, p. 669.

[243] Middle East Contemporary Survey, Vol. 15, 1991, p. 670:

միայն որոշակի դժվարություններ ունեցան արտաքին քաղաքական նոր ուղենիշները բաասական գաղափարախոսությանը հարմարեցնելու հարցում: Կառավարությունը լրատվական ծառայությունների, կուսակցական գործիչների և պետական ծառայողների միջոցով քարոզչական քայլեր էր ձեռնարկում այդ անհամապատասխանությունը հաղթահարելու համար: Կազմակերպվում էին հանրահավաքներ, միջոցառումներ, որոնց ժամանակ աջակցություն էր հայտնվում վարչակարգի արտաքին քաղաքականությանը: Քարոզչամեքենան Սիրիայի մասնակցությունը մերձավորարևելյան խաղաղության գործընթացին ներկայացնում էր որպես ձեռքբերում:

Ներքին կայունությունը պահպանելու համար իշխանությունները Հաֆեզ Ալ-Ասադի՝ նախագահ վերընտրվելու առիթով մեծածավալ համաներում հայտարարեցին, որն ապացուցում էր վարչակարգի ինքնավստահությունը: Ազատ արձակվեցին 2864 բանտարկյալներ, որոնք դատապարտվել էին իրենց հակաիշխանական հայացքների պատճառով: Համաներումը նպատակ ուներ ի ցույց դնել իշխանությունների բարյացկամ վերաբերմունքը Սիրիայում իսլամիստների նկատմամբ, քանի որ ազատ արձակվածների մեծ մասը «Մուսուլման եղբայրներ» կազմակերպության անդամներ էին[244]:

Վարչակարգի կայունությունը պայմանավորվում էր հաստատուն տնտեսական աճով և անվտանգության մարմինների արդյունավետ աշխատանքով: Առաջին անգամ, երկար տարիներ անց, սիրիական մամուլում հակաիշխանական գործողությունների վերաբերյալ լրատվություն չէր շրջանառվում: Հատկանշական է, որ Սիրիայի մասնակցությունը ԱՄՆ-ի նախաձեռնած խաղաղության գործընթացին նկատելի անհանգստություն չէր առաջացնում սիրիական հասարակությունում, ի տարբերություն իրաքաքուվեյթյան տարիների ճգնաժամի, երբ Սիրիայի հակաիրաքյան քաղաքականությունը երկրում բողոքի ալիք էր բարձրացրել: Վարչակարգի ինքնավստահությունը երևաց այն ժամանակ, երբ մարտին Հաֆեզ Ալ-Ասադի՝ չորրորդ անգամ նախագահ ընտրվելու առիթով ազատ արձակվեցին 600 բանտարկյալներ, իսկ նոյեմբերին, ուղիղ չարժ-

244 Նույն տեղում:

ման տարելիցի կապակցությամբ, շուրջ 554-ը[245]: Սա, կարելի է ասել, որոշակի ազատական մոտեցում էր ներքաղաքական խնդիրների լուծման ճանապարհին: Ավելին, նախագահ Ասադի քաղաքական նախկին մրցակիցներից շատերը, ներառյալ Սիրիայի նախկին նախագահ Նուր Աղ-Դին Ալ-Աթասին և 1966-1970 թթ. ներքին գործերի նախարար Մուհամմադ Ռաբահ Ատ-Տաուիլը, օգոստոսի 29-ին, մոտ երկու տասնամյակ բանտարկված մնալուց հետո, ազատ արձակվեցին:

1992 թ. Ռիֆաթ Ալ-Ասադը վերադարձավ Սիրիա հուլիսի 22-ին մոր՝ Նախսայի թաղման արարողությանը մասնակցելու համար: Ռիֆաթի վերադարձը շատերին ստիպեց հավատալ, թե նա այլևս ունի նախագահ Ասադի աջակցությունը՝ իշխանության վերադառնալու հարցում[246]:

1992 թ. մարտի 12-ին Ասադը չորրորդ անգամ վերընտրվեց Սիրիայի նախագահի պաշտոնում: Ընտրվելու կապակցությամբ նա Ժողովրդական ժողովում արտասանած իր ճառում անդրադարձավ Սիրիայի արտաքին քաղաքական հարցերին, ինչպես նաև Իսրայելի հետ հակամարտությանը և Խորհրդային Միության փլուզման ազդեցությանը Սիրիայի վրա: Ասադը Խորհրդային Միության փլուզմամբ էր բացատրում բազմակուսակցական վարչակարգի որդեգրած քաղաքական նոր մոտեցումների անհրաժեշտությունը, մասնավորապես՝ արտաքին ճակատում[247]:

Սիրիայի վարչապետ Մահմուդ Ալ-Զուբին 1992 թ. հունիսի 24-ին նախագահ Ասադին ներկայացրեց իր կառավարության հրաժարականը, որից հետո նախագահն անմիջապես հանձնարարեց նրան ձևավորել նոր կառավարություն, ինչը հաստատվեց և վավերացվեց նախագահի հունիսի 29-ի հրամանագրով: Նոր կառավարության ձևավորումը Սիրիայի քաղաքական կյանքում այնքան էլ նշանակալի դեր չունեցավ: Կառավարության կազմում կատարված փոփոխությունները, ըստ էության, ձևական բնույթ էին կրում և

---

[245] البعث, «ալ-Բաաս», Դամասկոս, 02.12.1992:

[246] The Independent, London, 22.10.1992.

[247] كلمة السيد الرئيس القائد حافظ الأسد الأمين العام لحزب البعث العربي الاشتراكي, رئيس الجمهورية, 08.03.1992

պայմանավորված էին նախագահ Ասադի վերընտրվելու փաստով: Ի տարբերություն նախորդ կառավարության, որը կազմված էր 36 նախարարներից, նոր կառավարությունում ներկայացված էին 37-ը: Արտաքին, ներքին գործերի, պաշտպանության, տեղեկատվության և էկոնոմիկայի նախարարները շարունակեցին պաշտոնավարել: Պաշտոնանկ արվեցին շուրջ 17 նախարարներ:

Բաաս կուսակցությունը նոր կառավարությունում մեծամասնություն էր, սակայն, ինչպես նախկինում, նորանշանակ նախարարների մեջ կային ԱԱՃ-ի կազմում ընդգրկված կուսակցությունների ներկայացուցիչներ կամ էլ՝ անկուսակցական արհեստավարժներ: Հատկանշական է, որ ալավիական համայնքի ներկայացուցիչները պահեցին կարևորագույն՝ ներքին գործերի, տեղեկատվության և էկոնոմիկայի նախարարների պորտֆելները, չնայած սուննիները կառավարությունում մեծամասնություն էին և իրենց ձեռքում էին կենտրոնացրել արտաքին գործերի և պաշտպանության նախարարների պորտֆելները: Այս իմաստով, նոր կառավարությունում առանձնապես փոփոխություններ տեղի չունեցան[248]: Երկրում իրական իշխանությունն, այնուամենայնիվ, գտնվում էր ալավիների կողմից ղեկավարվող բանակի և հատուկ ծառայությունների ձեռքում:

Արտաքին ճակատում Սիրիան շարունակում էր քայլեր ձեռնարկել բարելավելու հարաբերությունները ԱՄՆ-ի հետ չնայած բազմաթիվ տարակարծություններին: Այդ միտումը նկատվեց այն ժամանակ, երբ բաասական իշխանությունները թույլ տվեցին սիրիաբնակ հրեաներին լքել երկիրը: Հրեաները սկսեցին մեկնել Սիրիայից արդեն մայիս ամսից: Սիրիայի այդ քայլը ողջունեց նախագահ Ջորջ Բուշ ավագի վարչակարգը: Պետդեպարտամենտի խոսնակ Մարգարիտ Թութվեյլերն իր հայտարարության մեջ ընդգծում էր, որ դրանով բարենպաստ միջավայր կստեղծվի Մերձավոր Արևելքում փոխվստահության մթնոլորտի ձևավորման հարցում[249]: Սիրիական իշխանություններն, իրենց հերթին, շարունակում էին պատրաստակամություն հայտնել խաղաղության գործընթացը շարունակելու հարցում՝ կոչ անելով Միացյալ Նահանգներին՝ որպես համաշխարհային

---

[248] تشرين, «Թիշրին», Դամասկոս, 30. 06.1992:

[249] Middle East Contemporary Survey,1992, p. 665.

գերտերություն և գործընթացի հովանավոր, ավելի մեծ ջանքեր գործադրել այդ ուղղությամբ[250]: Չնայած նման հայտարարություններին, երկկողմ հարաբերություններում խորքային փոփոխություններ չէին արձանագրվում: Անվստահությունն ու տարակարծությունները չէին հաղթահարվում: Սիրիան շարունակում էր մնալ ահաբեկչական կազմակերպություններին հովանավորող պետությունների շարքում: Ամերիկյան վարչակարգը շարունակում էր մեղադրել սիրիական իշխանություններին մարդու իրավունքների սահմանափակման մեջ: Մարտին ամերիկյան 68 սենատորներ ստորագրեցին սենատոր Էդվարդ Քենեդու խնդրագրի տակ, որով Սիրիայից պահանջվում էր բարեփոխումներ իրականացնել մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում և զերծ մնալ ահաբեկչությանը հովանավորելուց[251]: Սիրիական կառավարությունից պահանջվում էր նաև միջոցներ ձեռնարկել կանխելու սիրիական վերահսկողության տակ գտնվող լիբանանյան Բեքաայի հովտում թմրադեղերի մաքսանենգությունը: Արդյունքում, Սիրիան լայնածավալ օպերատիվ գործողություններ իրականացրեց ընդդեմ թմրադեղերի տարածման, որի արդյունքում որոշ չափով բարձրացավ նրա միջազգային վարկը: Հուլիսին ՄԱԿ-ի՝ թմրադեղերի վերահսկողության ծրագրի զեկույցում նշվում էր, որ Սիրիան կատարել է ՄԱԿ-ի պահանջները Բեքաայի հովտում թմրադեղերի վաճառքը կասեցնելու ուղղությամբ: Սիրիա-ԱՄՆ հարաբերություններում որոշակի լարվածություն էր առաջացնում Սիրիայի շարունակական սպառազինումը և նորագույն զինատեսակների ձեռքբերումը: 1991 թ. մայիսին Սիրիան ընդդիմացավ այդ ուղղությամբ ԱՄՆ-ի քայլերին[252]: 1992 թ. որոշակի միջոցներ ձեռնարկվեցին կանխելու հատկապես Հյուսիսային Կորեայից «Սկադ Սի» մակերես-մակերես տեսակի հրթիռների ներմուծումը Սիրիա: Այս կապակցությամբ Հաֆեզ Ալ-Ասադն իր մարտի 12-ի ելույթում նշեց, թե ԱՄՆ-ն ամեն ինչ անում է, որպեսզի պահպանի Իսրայելի ռազմական առավելությունը տարածաշրջանում[253]:

---

250 تشرين, «Թիշրին», Դամասկոս, 07.07.1992:
251 International Herald Tribune, 22.03.1992.
252 Middle East Contemporary Survey, 1991, p. 672.
253 البعث, «ալ-Բաաս», Դամասկոս, 13.03.1992.

ԱՄՆ-ը բացասաբար էր վերաբերվում Լիբանանում Սիրիայի քաղաքական և ռազմական դերի բարձրացմանը և Լիբիային բացահայտ ձևով ցուցաբերած Սիրիայի աջակցությանը՝ չնայած այդ երկրի նկատմամբ ՄԱԿ-ի պատժամիջոցներին: Սիրիա-ամերիկյան հարաբերություններում բարձր մակարդակի շփումներ չկային: Բացառություն կարելի է համարել միայն մերձավորարևելյան խաղաղ գործընթացին նոր լիցք հաղորդելու համար հուլիսի 21-22-ին ԱՄՆ պետքարտուղար Ջեյմս Բեյքերի այցելությունը Սիրիա, ինչպես նաև Նյու-Յորքում Սիրիայի արտգործնախարար Ֆարուկ Ալ-Շարի հանդիպումը ԱՄՆ պետքարտուղարի օգնական Լուրենս Իգլբուրգերի հետ[254]:

Ի հակակշիռ ԱՄՆ-ի քաղաքականությանը, Սիրիան կարևորում էր արևմտյան Եվրոպայի երկրների հետ հարաբերությունները: Դամասկոսը նշանակալի ջանքեր էր գործադրում եվրոպական երկրներին խաղաղ գործընթացում ներգրավելու ուղղությամբ: 1992 թ. ապրիլին սիրիական «Թիշրին» օրաթերթը գրում էր. «Եվրոպան շատ կարևոր դեր ունի տարածաշրջանում տեղի ունեցող զարգացումներում, այդ առումով Եվրոպան պետք է կատարի իր քաղաքական պարտավորությունները, որպեսզի նպաստի խաղաղության գործընթացին և որոշակի առաջընթաց գրանցի այդ հարցում»[255]:

Չնայած ԱՄՆ-ի և Իսրայելի բացասական վերաբերմունքին, 1992 թ. վերջին Սիրիայի և Իսրայելի միջև բանակցություններ սկսելու միջնորդական առաքելությամբ հանդես եկավ Ֆրանսիայի արտգործնախարար Ռոլան Դյուման: Այս առաքելությանը վերջ դրվեց այն ժամանակ, երբ Իսրայելի արտգործնախարար Շիմոն Պերեսն այցելեց Փարիզ, որից հետո որոշակի շահարկումներ եղան, թե իբր Դյուման տեղեկություններ է հաղորդում սիրիական կողմին: Դրանք երկու կողմից էլ հերքվեցին: Ամերիկյան կողմը շատ սառն էր վերաբերվում ֆրանսիական միջնորդությանը, Իսրայելի դիրքորոշումն էլ դրական չէր, և բանակցություններում ոչ մի էական տեղաշարժ չգրանցվեց:

Սիրիայի և Գերմանիայի հարաբերությունները, որոնք այդքան

---

254 Middle East Contemporary Survey, 1992, p. 731.

255 تشرين, «Թիշրին», Դամասկոս, 01.04.1992:

էլ ջերմ չէին, 1992 թ. սկսեցին բարելավվել այն բանից հետո, երբ սիրիական իշխանությունները կարողացան նպաստել Լիբանանում գտնվող երկու գերմանացի պատանդների ազատ արձակմանը: Սա նպաստեց Սիրիայի միջազգային վարկանիշի բարձրացմանը, մասնավորապես՝ Գերմանիայում: Կանցլեր Հելմուտ Կոլը շնորհակալ էր նախագահ Ասադին՝ գործադրած ջանքերի համար: Նույն տարվա սեպտեմբերին Սիրիա այցելեց Գերմանիայի արտաքին հարցերով պետնախարարը, որի ընթացքում քննարկվեցին երկկողմ հարաբերությունների բարելավմանը վերաբերող հարցեր[256]: Սիրիայի և եվրոպական առանձին պետությունների միջև նախարարների մակարդակով հետագայում տեղի ունեցան մի շարք փոխայցելություններ, որոնց ընթացքում կարևորվում էին թե՛ խաղաղության գործընթացին և թե՛ տնտեսական հարաբերություններին առնչվող խնդիրները:

1991 թ. դեկտեմբերին Խորհրդային Միության փլուզումը վերջ տվեց Սիրիային այդ պետության քաղաքական և ռազմական շուրջ 20-ամյա աջակցությանը: Աստիճանաբար նոր ընթացքի մեջ մտան Սիրիայի և ԽՍՀՄ-ի իրավահաջորդ Ռուսաստանի հարաբերությունները: 1992 թ. նոյեմբերին Մոսկվա այցելեց Սիրիայի արտգործնախարարը՝ ցանկանալով նոր լիցքեր հաղորդել մերձավորարևելյան խաղաղության գործընթացում ավելի ակտիվ հանդես գալու Ռուսաստանի ջանքերին: Ռուսաստանը շարունակեց Խորհրդային Միության և Սիրիայի միջև կնքված ռազմական պայմանագրերի շրջանակներում Սիրիային զինամթերք մատակարարել: Ռուսաստանը Սիրիայից պահանջեց վճարել Խորհրդային Միությանը 12 մլրդ. ամերիկյան դոլարի պարտքը, սակայն Դամասկոսը հրաժարվեց կատարել այդ պահանջը՝ ընդգծելով, թե Ռուսաստանը Խորհրդային Միության ժառանգորդը չէ: Այս հարցին լուծում տալու նպատակով հոկտեմբերին Սիրիա այցելեց Ռուսաստանի առևտրի նախարարի գլխավորած պատվիրակությունը, սակայն սիրիական կողմի հետ բանակցություններն արդյունք չտվեցին: Սիրիական իշխանությունները դրական արձագանքեցին ռուսական կողմի առաջարկին՝ պարտքի մի մասը՝ շուրջ 800 մլն. ամերիկյան դոլարին համար-

---

[256] تشرين, «Թիշրին», Դամասկոս, 29.10.1992:

ժեք գումար, ցիտրուսային մրգեր և այլ արտադրանք Ռուսաստան արտահանելուն[257]:

Արաբական և մուսուլմանական մյուս երկրների նման Սիրիան նույնպես քայլեր ձեռնարկեց նախկին խորհրդային մուսուլմանական հանրապետությունների հետ ջերմ հարաբերություններ հաստատելու ուղղությամբ: Սիրիայի արտգործնախարար Ֆարուկ Ալ-Շարը մարտին այցելեց Ղազախստան, Ուզբեկստան, Թուրքմենստան, Տաջիկստան և Ադրբեջան[258]: Ի դեպ, Սիրիան ջերմ հարաբերություններ հաստատեց նաև Հայաստանի հետ: Տարածաշրջանային այցելության շրջանակում նույն թվականի մարտին Սիրիայի արտգործնախարարն այցելեց նաև Հայաստան: Ապա Սիրիա այցելեց նորանկախ Հայաստանի արտգործնախարար Րաֆֆի Հովհաննիսյանը: Նույն թվականի ապրիլին Սիրիա այցելեց Հայաստանի առաջին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը[259]:

Այսպես, ներքաղաքական իրադրությունը Սիրիայում 1982-1992 թթ. պայմանավորվում էր մի շարք ներքին և արտաքին գործոններով: Ներքին գործոններն էին իշխանության համար պայքարն ալավի վերնախավում, մասնավորապես Ասադ եղբայրների միջև, «Մուսուլման եղբայրներ» կրոնաքաղաքական շարժման անդամների և կառավարական ուժերի միջև բախումները, Իսրայելի նկատմամբ ռազմավարական պարիտետ՝ հավասարություն պահելու դժվարությունները, Լիբանանում շարունակվող քաղաքացիական պատերազմը, որը միայն ավարտվեց 1990 թ., միջարաբական հարաբերություններում աճող հակասությունները և վերջապես ԽՍՀՄ-ի հետ հարաբերությունների անորոշությունն ու արևմտյան պետությունների հետ հարաբերությունների ճգնաժամը: Իշխանության համար անբարենպաստ այս գործոնների ազդեցության պայմաններում ալավիական վերնախավը կարողացավ պահպանել հարաբերական կայունություն Սիրիայի ներսում և խաղաղություն ապահովել Իսրայելի հետ:

---

[257] Middle East Contemporary Survey, 1992, p. 733.

[258] تشرين, «Թիշրին», Դամասկոս, 29.03.1992:

[259] Հովհաննիսյան Ն., Արաբական երկրների պատմություն, h IV, Անկախության և ինքնիշխանության դարաշրջան, 1918-2005թթ., Երևան, 2007, էջ 550:

# ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՍԻՐԻԱՅՈՒՄ ԵՎ ԱԼԱՎԻ ՎԵՐՆԱԽԱՎԻ ՎԵՐԱՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ (1992-2000 ԹԹ.)

## 3.1. Սիրիայում իշխանության հաջորդականության խնդիրը (1992-1996 թթ.)

1990-ական թթ. սկզբին Սիրիայի ներքաղաքական կյանքի կարևորագույն հարցերից մեկը դարձավ իշխանության հաջորդականության խնդիրը: Դրա հետ կապված իշխող ալավիական վերնախավում սկսվեց սերնդափոխության գործընթաց, որին անդրադարձել են արևմտյան և ռուսաստանցի մի շարք հետազոտողներ՝ Է. Զիսեռը, Ն. Վան Դամը, Վ. Պերտեսը, Ֆ. Լևերետը, Վ. Ահմեդովը, Պ. Յուրչենկոն և այլոք[260]:

Հայտնի է, որ Հաֆեզ Ալ-Ասադի առողջական խնդիրները 1990-ական թթ. սկզբին ստիպեցին նրան մշակել իշխանությունն առանց ցնցումների որդիներից մեկին փոխանցելու ծրագիր: Հաֆեզի և Ռիֆաթի միջև ձեռք էր բերվել պայմանավորվածություն, ըստ որի՝ վերջինս խոստացել էր, որ անցումային փուլում իշխանությունը ժամանակավորապես կվերցնի իր ձեռքը, ապա այն կփոխանցի Հաֆեզի որդուն: 1992 թ. այս պայմաններով էլ Ռիֆաթին թույլ տրվեց վերադառնալ Սիրիա և անցնել իր պարտականությունների կատարմանը: Սակայն Ասադը ստիպված էր հաշվի առնել բանակի և հատուկ ծառայությունների բարձրաստիճան որոշ սպաների հակա-

---

260 Zisser E., The Succession Struggle in Damascus, Middle East Quarterly, Vol. 2, Number 3, 1995, Van Dam N., The Struggle for Power in Syria, Politics and society under Asad and Ba'th Party, I. B. Tauris Publishers, London-New York, 1996, Volker P., The Political Economy of Syria under Asad, London, 1995, Leverett F., Inheriting Syria, Bashar's Trial by Fire, Brookings Institution Press, Wasington, 2005, Ахмедов В. М., Армия и Политика в Современной Сирии, Армия и Влсать на Ближнем Востоке: от Авторитаризма к Демократии (сборник статей), М., 2002. Юрченко В. П., Сирия: Проблемы Национальной Безопасност (Военная Политика и Военная Строительство в Период Правления ПАСВ (1963-2004 гг.), М., 2004.

ռիֆաքական ուժեղ տրամադրությունները և սահմանափակել եղբոր լիազորությունները[261]:

Խնդիրն այն է, որ Սիրիայում քաղաքական և զինվորական իշխանությունները միաձուլված էին և հսկայական ազդեցություն ունեին երկրի թե՛ ներքին, և թե՛ արտաքին քաղաքականության ձևավորման գործընթացի վրա: Առանց զինվորական՝ մանավանդ ալավիական վերնախավի համաձայնության երկրում քաղաքական հարցեր գրեթե չէին լուծվում: Այսպես, Սիրիայում իշխող Բաաս կուսակցությունն իշխանության է եկել հենց զինվորական հեղաշրջման միջոցով 1963 թ. մարտի 8-ին[262], այսինքն՝ զինվորականությունն ի սկզբանե վարչակարգի հաստատման և կայացման գործում կենտրոնական դեր է խաղացել: 1971 թ. փետրվարին Հաֆեզ Ալ-Ասադի իշխանության գալուց հետո զինվորականության թիվը Սիրիայում, պայմանավորված լինելով արտաքին և ներքին մի շարք մարտահրավերներով, հետզհետե ավելանում էր: 1970 թ. Սիրիայի զինված ուժերը հաշվվում էին շուրջ 80 հազար, իսկ 1990-ական թթ. սկզբին արդեն 400-430 հազար[263]: Փաստորեն, որպեսզի Հաֆեզ Ալ-Ասադը կարողանար հեշտությամբ լուծել իշխանության՝ խաղաղ փոխանցման խնդիրը, ապա նախ պետք է հաշվի առներ զինվորական ընտրանու, անվտանգության և հետախուզական ծառայությունների, տրամադրությունները, ինչպես նաև առանձին գործիչների դիրքորոշումները:

Ելնելով վերոնշյալ գործոններից՝ 1993 թ. սկսած Հաֆեզ Ալ-Ասադն աստիճանաբար ձեռնամուխ եղավ զինված ուժերի և պետանվտանգության համակարգի բարձրագույն ղեկավարության կազմի նորացմանը: Ռուսաստանցի հետազոտող Վ. Ահմեդովն իր ուսումնասիրություններից մեկում նշում է. «Հետաքրքրական է այն, որ պաշտոններից զրկվում էին դեռևս 1980-ական թթ. առաջին կեսի ներքաղաքական ճգնաժամի ընթացքում հենց Հաֆեզ Ալ-Ասադին

---

[261]Ахмедов В. М., նշվ. աշխ., էջ 165:

[262]Rabinovich I., Syria Under the Ba'th 1963-1966, The Army Party Symbiosis, Israel Universities Press, Jerusalem, 1972, p 26. î»ë Ý³¨' Abu Jaber Kamal S., The Arab Ba'th Socialist Party, History, Ideology and Organisation, Syracuse University Press, New York, 1966, p. 122.

[263]Volker P., The Political Economy of Syria under Asad, London, 1995, p. 147.

աջակցություն ցուցաբերած զինվորական դեմքերը»[264]: Իսկապես, այդ գործիչները 1980-ական թթ. առաջին կեսի ներքաղաքական ճգնաժամի ընթացքում հավատարմորեն ծառայում էին Հաֆեզ Ալ-Ասադին: Սակայն արդեն 1990-ական թթ. սկզբին նախագահը ոչ մի երաշխիք չուներ, որ այդ գործիչները նույն նվիրվածությունը կցուցաբերեին իր որդիների նկատմամբ: Պետք է նշել, որ կադրային փոփոխությունները նպատակ ունեին սկզբում Բասիլ Ալ-Ասադի, հետո արդեն Բաշար Ալ-Ասադի նախագահ դառնալու համար ռազմաքաղաքական ամուր հիմք ստեղծել: Այդ նպատակով, մասնավորապես, ալավի զինվորական վերնախավում սկսվեց բարձրաստիճան սպաների սերնդափոխության գործընթացը: Վստահելի և հավատարիմ ալավի զինվորականներն սկսեցին մասնակից դառնալ այդ խնդրի լուծմանը, որով Ասադը ջանում էր մեծացնել բարձրաստիճան սպայական անձնակազմի նվիրվածությունն Ասադների ընտանիքի և նախագահի ապագա թեկնածուի նկատմամբ: Այսպիսով, կադրային փոփոխությունները պետք է դիտարկել որպես իշխանության հաջորդականության ապահովման գործընթաց:

Հայտնի է, որ 1990-ական թթ. սկզբին սիրիական հասարակության մեծամասնությունը ենթադրում էր, որ նախագահ Հաֆեզ Ալ-Ասադին հաջորդելու է նրա ավագ որդին՝ Բասիլ Ալ-Ասադը: Թեև պաշտոնապես այս հարցը չէր արծարծվում և չէր էլ քննարկվում, սակայն Բասիլը հետզհետե դառնում էր նախագահի աջ ձեռքը: Բասիլին էր հանձնարարվում հատուկ նշանակության կարևոր խնդիրների լուծումը, օրինակ՝ մաքսանենգության և կաշառակերության դեմ պայքարը[265]: Որպես հանրապետական գվարդիայի[266] ղեկավարության անդամ և նախագահի անվտանգության կորպուսի ղեկավար, Բասիլին վստահվել էր նաև հանրապետական գվարդիայի

---

[264] Ахмедов В. М., նշվ. աշխ., էջ 166:

[265] Ազդեցիկ այս լծակը հանձնվել էր Բասիլին, որպեսզի վերջինս կարողանար վերահսկել Ռիֆաթի ֆինանսական հոսքերը և նպաստել դրանց կրճատմանը, քանի որ վերջինս զբաղված էր մաքսանենգ ճանապարհով ապրանքների ներկրմամբ և արտահանմամբ: Իսկ այդ բիզնեսը Ռիֆաթին ապահովում էր հսկայական ֆինանսական միջոցներ, ինչպես նաև որոշակի ազդեցություն երկրում, քանի որ դրա մեջ ներքաշված էին հազարավոր մարդիկ: Տե՛ս The Independent, 22. 10. 1992:

[266] مصطفي طلاس, مرآة حياتي, العقد الرابع, الطبعة الثانية, دمشق, 2007, ص. 354

կազմում էլիտար մի զորախմբի հրամանատարությունը՝ չնայած որ նա դեռ կրում էր մայորի զինվորական կոչում: Շնորհիվ խարիզմատիկ կերպարի՝ Բասիլը դրականորեն էր գնահատվում հատկապես երիտասարդության շրջանում: Երիտասարդները, շատ դեպքերում, նույնիսկ կրկնօրինակում էին նրա հագուկապն ու շարժուձևը: Սակայն Հաֆեզ Ալ-Ասադի ծրագրերը կապված Բասիլին նախագահ դարձնելու հետ ի չիք դարձան 1994 թ. ողբերգական պատահարի պատճառով: Հունվարի 21-ին 32-ամյա Բասիլը Դամասկոսի օդանավակայանի ճանապարհին ավտովթարի ենթարկվեց և զոհվեց[267]: Հաֆեզ Ալ-Ասադը որոշեց իշխանությունը փոխանցել մյուս որդուն՝ Բաշարին: Վերջինս այդ ժամանակ գտնվում էր Լոնդոնում, որտեղ կատարելագործում էր գիտելիքները ակնաբուժության բնագավառում: Բասիլի մահից հետո 1994 թ. հունվարին Բաշարն անմիջապես վերադարձավ Սիրիա[268]: Սկսվեց նրան նախագահ դարձնելու գործընթացը, որն իրականացվելու էր նախապատրաստական երեք փուլով: Առաջին փուլում Հաֆեզ Ալ-Ասադին անհրաժեշտ էր ստանալ զինվորական և պետանվտանգության շրջանակների աջակցությունը, երկրորդ փուլում՝ նախատեսվում էր հասարակության շրջանում ստեղծել Բաշարի՝ պետական գործչի կերպարը, իսկ երրորդ փուլում՝ Հաֆեզը ջանալու էր բժիշկ որդուն հաղորդակից դարձնել երկրի կառավարման գործերին և կոփել քաղաքական հարցերում, որպեսզի հարկ եղած դեպքում վերջինս կարողանար ստանձնել նախագահի պաշտոնը[269]: Պատահական չէ, որ Բաշարը միանգամից ծանրաբեռնվեց զինվորական և պետական տարբեր խնդիրներով: 1995 թ. հունվարին նա դարձավ հանրապետական գվարդիայի մայոր: Հետզհետե, սիրիական լրատվամիջոցներն սկսեցին անդրադառնալ նրա քաղաքական ու զինվորական գործունեությանը: Այսպես, Բաշարին էր հանձնարարված Դամասկոսում ընդունել լիբանանյան քաղաքական գործիչներին՝ նախարարներին, ընդդիմության ներկայացուցիչներին և այլն: 1995 թ. մայիսին նա այցելեց Լիբանան՝ նախ

---

[267] تشرين, «Թիշրին», Դամասկոս, 22, 01, 1994
[268] الثورة , «աս-Սաուրա», Դամասկոս, 19, 02, 1994.
[269]Leverett F., Inheriting Syria, Bashar's Trial by Fire, Brookings Institution Press, Wasington, 2005, p. 61.

Բաաբդայում հանդիպելով նախագահ Էլյաս Հրաուիին, հետո նաև Լիբանանի խորհրդարանի նախագահ Նաբիհ Բերիին: Սիրիական պաշտոնյաները Բաշարի այցը Լիբանան համարում էին մասնավոր, որի ժամանակ նրան ուղեկցում էին Լիբանանում սիրիական զորքերի ալավի ղեկավարները՝ գլխավոր հրամանատար գեներալ-մայոր Իբրահիմ Սաֆին և անվտանգության համակարգի ղեկավար գեներալ Ղազի Քանան[270]: Բաշար Ալ-Ասադը, հետզհետե ծանոթանալով Սիրիայի ներքին և արտաքին քաղաքական կյանքին, անուղղակիորեն մասնակցում էր երկրի ղեկավարմանը և պետական կառավարմանը: Սա խոսում էր այն մասին, որ Բաշարը պատրաստվում էր փոխարինելու հորը, չնայած միշտ ժխտում էր այդ հնարավորությունը: 1995 թ. հարցազրույցներից մեկի ժամանակ 29-ամյա Բաշարն այն հարցին, թե արդյո՞ք ինքն իրեն համարում է Սիրիայի նախագահի թեկնածու, ասել է հետևյալը. «Նրանք, ովքեր խոսում են այդ մասին, անտեղյակ են Սիրիայի սահմանադրությանը, չգիտեն, որ սահմանադրությամբ թույլատրվում է նախագահի թեկնածություն առաջադրել միայն 40 տարեկանը լրացած Սիրիայի քաղաքացիներին»[271]: Հաֆեզ Ալ-Ասադը նույնպես ժխտում էր նման հնարավորությունը:

Հոլանդացի արևելագետ Նիկոլաոս Վան Դամն իր «Պայքարը Սիրիայում իշխանության համար» աշխատությունում մեջբերում է Հաֆեզ Ալ-Ասադի դեռևս 1992 թ. նոյեմբերի 12-ին թերթերին տված հարցազրույցից մի հատված, որտեղ Ասադն այն հարցին, թե ո՞վ է հաջորդելու իրեն, պատասխանում է. «Ես չունեմ ինձ հաջորդող: Հաջորդողին որոշելու են պետական և սահմանադրական կառույցները, ինչպես նաև կուսակցական մարմինները»[272]: Փաստորեն, Հաֆեզ Ալ-Ասադը չէր ցանկանում բացել իր խաղաքարտերը և դրանով ներքին լարվածություն առաջացնել, մանավանդ որ Սիրիան արդեն իսկ մասնակցում էր Մադրիդի խաղաղության կոնֆերանսին, որը սկսվել էր 1991 թ. հոկտեմբերին: Ներքաղաքական կայունու-

---

270 Van Dam N., նշվ աշխ., էջ 131:

271 الحيا ; «ալ-Հայաթ», Լոնդոն 30, 07, 1995:

272 Van Dam N., նշվ. աշխ., էջ 132:

թյունն Ասադին թույլ կտար բանակցություններում հանդես գալ ավելի ամուր ու վստահ դիրքերից:

Վերադառնալով զինվորական վերնախավում կադրային փոփոխություններին, նշենք, որ դրանք սկսվել էին դեռևս 1993 թ., երբ պաշտոնից ազատվեց ալավի ազդեցիկ գեներալ, Սիրիայի զինվորական հակահետախուզական ծառայության ղեկավար Ալի Դուբան, որն այդ պաշտոնը զբաղեցնում էր 1974 թ.-ից: Ալի Դուբայի հետ միասին պաշտոնանկ արվեցին կամ այլ պաշտոնների նշանակվեցին պետական բարձրաստիճան 11 ծառայողներ, որոնք սերտ հարաբերություններ ունեին նրա հետ: Որոշ ժամանակ Ալի Դուբան Լաթաքիայում տնային կալանքի մեջ մնաց, սակայն հետագայում զբաղեցրեց ԶՈւ գլխավոր շտաբի պետի երեք տեղակալներից մեկի պաշտոնը[273]: Դրանով նախագահը ցանկանում էր Ալի Դուբայի ազդեցության ոլորտը սահմանափակել, սակայն վերջինս, չնայած նշանակվել էր նոր պաշտոնի, բայց շարունակում էր վստահորեն ազդել զինվորական հակահետախուզական ծառայության գործունեության վրա: Ալի Դուբային, ինչպես նշում է արևելագետ Վ. Ահմեդովը, վերջնականորեն մեկուսացնելն անհնար էր, որովհետև վերջինս՝ որպես գաղտնի ծառայության նախկին ղեկավար, հարյուրավոր քաղաքական բանտարկյալների, հակաիշխանական տարրերի վերաբերյալ արժեքավոր տեղեկությունների էր տիրապետում[274], իսկ այս հանգամանքն իշխանությունները չէին կարող հաշվի չառնել:

Խոսելով այս մասին՝ Ն. Վան Դամը նշում է, որ Բաշարի թեկնածությունը միանշանակ չընդունվեց, այդ թվում՝ ալավիական վերնախավում: Այդ իսկ պատճառով 1994 թ. հուլիսին ձերբակալվեց ալավի գեներալ, հատուկ ուժերի հրամանատար Ալի Հայդարը[275] և

---

[273] Ахмедов В. М., նշվ. աշխ., էջ 166-167:

[274] Նույն տեղում էջ 178:

[275] Ալի Հայդարը ծագում էր ազդեցիկ ալավիական Հադդադին ցեղի Դիբ ընտանիքից: Ռազմական քոլեջն ավարտել էր Եգիպտոսում և հատուկ դասընթացներ էր անցել արտասահմանում: Նա մասնակցել էր 1982 թ. Համա քաղաքում «Մուսուլման եղբայրների» ապստամբության ճնշմանը, ինչպես նաև 1983-1984 թթ. Ռիֆաթի կողմից Հաֆեզի դեմ կազմակերպված դավադրության ձախողմանը: Նա բազմիցս ցույց էր տվել իր նվիրվածությունը Հաֆեզ Ալ-Ասադին: Ալի Հայդարի և նախագահի միջև ձևավորվել էին սերտ հարաբերություններ:

ենթարկվեց տնային կալանքի[276]: Ալի Հայդարի ձերբակալության մյուս պատճառը նրա դիրքորոշումն էր Իսրայելի հետ բանակցությունների խնդրում: Այսպես, Սիրիայի Պաշտպանության նախարարության գլխավոր շտաբի պետ, գեներալ Հիքմեթ Շիհաբիի հետ ղեկավար սպաների հանդիպման ժամանակ, որտեղ քննարկվում էր Իսրայելի հետ խաղաղության համաձայնագրի կնքումից հետո տարածաշրջանի անվտանգության համակարգի հնարավոր տարբերակները, Հայդարը նշել է, թե մենք՝ ալավիներս, որ ստեղծել ենք այս վարչակարգը, ցանկանում ենք անմիջականորեն մասնակցել խաղաղության գործընթացին: Չնայած հանդիպմանը ներկա բոլոր սպաները գիտակցում էին ալավիների դերի կարևորությունը վարչակարգի պահպանման գործում, սակայն միշտ անընդունելի է համարվել այդ մասին բացեիբաց խոսելը, նույնիսկ անուղղակիորեն դրան անդրադառնալը: Հայդարի այս ելույթն այդ ժամանակ ընկալվեց որպես նախագահ Հաֆեզ Ալ-Ասադի կողմից Իսրայելի հետ խաղաղության բանակցությունների գնալու քաղաքական գծի քննադատություն[277] և նրան ձերբակալեցին: Ալի Հայդարին փոխարինեց գեներալ-մայոր ալավի Ալի Հաբիբը, որը հակաիրաքյան դաշինքի ուժերի կազմում սիրիական զորքերի հրամանատարն էր[278]: Ալի Հայդարի պաշտոնանկությունը սիրիական բարձրաստիճան սպայական վերնախավում որոշակի լարվածություն առաջացրեց: Դա է փաստում Է. Զիսսեռն իր հոդվածում՝ ընդգծելով, որ եթե Հայդարի նման նվիրված գործիչը զոհ գնաց ներքաղաքական փոփոխության այդ ալիքին, ապա մյուսներն իրականում մտածելու շատ բան ունեին[279]: 1994 թ. ամռանը թոշակի ուղարկվեց նաև հանրապետական գվարդիայի հրամանատար Աղնան Մախլուֆը, որն ալավիական համայնքի ամենաազդեցիկ ընտանիքներից էր սերում և Հաֆեզ Ալ-Ասադի կնոջ հորեղբորորդին էր: Աղնան Մախլուֆին փոխարինեց Բաշար Ալ-Ասադի վստահելի գեներալներից մեկը՝ Ալի Հասանը:

1994 թ. սեպտեմբերին պաշտոնանկ արվեց ևս մեկ բարձրաս-

[276] مصطفي طلاس, مرآة حياتي, العقد الرابع, الطبعة الثانية, دمشق, 2007, ص. 351

[277] Volker P., The Political Economy of Syria under Asad, London, 1995, p. 153.

[278] الحياة,, «ալ-Հայաթ», Լոնդոն, 03. 09. 1994:

[279] Zisser E., նշվ. աշխ., էջ 55:

տիճան սպա՝ գեներալ մայոր Մաջիդ Սաիդը, որը ղեկավարում էր ընդհանուր հետախուզության վարչությունը: Այս կառույցը զբաղվում էր վարչակարգի անվտանգության ապահովմամբ, ինչպես նաև տնտեսական և քրեական հանցագործությունների դեմ պայքարով[280]: Մաջիդ Սաիդին փոխարինեց Բաշիր Ալ-Նաջջարը, որը նախկինում զբաղեցնում էր Սիրիայի գլխավոր մաքսային ծառայության ղեկավարի պաշտոնը և համարվում էր Բասիլ Ալ-Ասադի հիմնական աջակիցներից մեկը[281]: Մաջիդ Սաիդն ու նրան փոխարինած Բաշիր Ալ-Նաջջարն ի դեպ սուննի էին և չէին ներկայացնում ալավիական վերնախավը:

Պետք է ենթադրել, որ կադրային այս փոփոխությունը ևս միտված էր իշխանության հաջորդականության ապահովմանը, քանի որ Նաջջարի նշանակումը դիտվում էր որպես քայլ՝ ուղղված Բաշար Ալ-Ասադի դիրքերի ամրապնդմանը: Այս պնդումը ևս հաստատում է Է. Զիսսերը, նշելով, թե մինչդեռ Հաֆեզ Ալ-Ասադը, պաշտոնազրկելով Մաջիդին, ցույց տվեց, որ այդ պաշտոնը պետք է զբաղեցնի մի մարդ, որն անվերապահորեն նվիրված կլինի իր հետնորդին[282]:

Ամեն պարագայում, կատարված փոփոխությամբ Հաֆեզ Ալ-Ասադը ջանում էր ցույց տալ, որ կարևորը ոչ թե ալավիական համայնքի ներկայացուցիչ լինելն է, այլ՝ նվիրվածությունն ընտանիքին: Այնուամենայնիվ, ալավիական համայնքը ներկայացնող զինվորականները շարունակում էին ծանրակշիռ դեր ունենալ պետական վերնախավում: Չնայած ընդհանուր հետախուզության վարչության ղեկավարը փոխվեց, սակայն տեղակալի պաշտոնում շարունակեց մնալ ալավի Մուհամմադ Նասիֆը, որը համարվում էր կառույցի ամենաազդեցիկ դեմքը[283]: Անդրադառնալով վերը նշված հիմնախնդրին՝ Վ. Ահմեդովը գրում է. «Գրեթե բոլոր բարձրաստիճան զինվորական և պետական պաշտոններ զբաղեցնող սուննիների, քրիստոնյաների և դրուզների տեղակալներն ալավիական համայնքի ներկայացուցիչներից էին»[284]:

---

[280] Zisser E., նույն տեղում, էջ 59:
[281] Ахмедов В. М., նշվ. աշխ., էջ 167:
[282] Zisser E., նշվ. աշխ., էջ 55:
[283] Նույն տեղում:
[284] Ахмедов В. М., նշվ. աշխ., էջ 161:

Կադրային ՜հաջորդ փոփոխությունը կատարվեց Սիրիայի ռազմաօդային ուժերի համակարգում: 1994 թ. սեպտեմբերին ալավի գեներալ Մուհամմադ Խուլին նշանակվեց ռազմաօդային ուժերի հրամանատար՝ փոխարինելով գեներալ Ալի Մալահաֆջիին: Խուլին մինչև 1987 թ. զբաղեցնում էր ռազմաօդային հետախուզական ծառայության ղեկավարի պաշտոնը, հետո նշանակվեց ռազմաօդային ուժերի հրամանատարի տեղակալ: Խուլիի նշանակումը ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի կողմից կարող էր ընկալվել որպես անհաջող ընտրություն, քանի որ վերոնշյալ գեներալի անունը կապվում էր դեռևս 1986 թ. Լոնդոնի «Հիթրոու» օդանավակայանում կատարված ահաբեկչական մի գործողության հետ[285]: Փաստորեն, Ասադը գիտակցում էր, որ Խուլիի նշանակումը կարող էր ավելորդ լարվածություն առաջացնել վերոնշյալ երկրների և Սիրիայի հարաբերություններում, բայց, այնուամենայնիվ, գնաց այդ քայլին, չնայած այն հանգամանքին, որ այդ ժամանակ Սիրիան ձգտում էր բարելավել հարաբերությունները ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի հետ: Պետք է ենթադրել, որ Մուհամմադ Խուլիի նշանակումն այդ պաշտոնին Ասադի համար կարևոր նշանակություն ուներ, քանի որ նրան այդ ժամանակ երկրի ներսում անհրաժեշտ էին հավատարիմ պաշտոնյաներ, որոնք հետագայում կաջակցեին Բաշարին նախագահ դառնալու հարցում:

Հաֆեզ Ալ-Ասադը, բացի զինվորական բնագավառի կադրային փոփոխություններից ու տեղափոխություններից, դեռևս հունիս-հուլիս ամիսներին որոշ փոփոխություններ էր իրականացրել Սիրիայի կառավարության կազմում: Չնայած 1993 թ. սեպտեմբերի 12-ին Ասադի գլխավորությամբ տեղի ունեցած կառավարության նիստի ժամանակ որոշում էր ընդունվել Սիրիայում էներգետիկայի բնագավառին հատկացնել շուրջ 1 մլրդ ամերիկյան դոլար[286], սակայն Սիրիայում էլեկտրականության ամենօրյա անջատումները դեռ շարունակվում էին՝ Դամասկոսում հովհարային անջատումները տևում էին մինչև 6 ժամ, որն էլ առաջացնում էր հասարակության դժգոհու-

---

[284] Zisser E., նշվ. աշխ., էջ 55:

[285] Seale P., նշվ. աշխ., էջ 475-482.

[286] تشرين, «Թիշրին», Դամասկոս, 13. 09. 1993:

թյունը: Ելնելով նաև այս հանգամանքներից՝ 1994 թ. հունիսի 1-ին նախագահ Ասադը պաշտոնազրկեց էներգետիկայի նախարար Քամիլ Բաքային, որին փոխարինեց Մունիբ Ասադ Սաիմ Ալ-Դահիրին: Նույն թվականի հուլիսի 12-ին պաշտոնանկ արվեց նաև Դամասկոսի նահանգապետ, Բաաս կուսակցության ամենաակտիվ դեմքերից Վալիդ Համմամիյան, որին այդ պաշտոնում փոխարինեց Մուհամմադ Զուհայր Սալահ Ադ-Դին Թաղլաբին: Համմամիյայի պաշտոնանկությունը կապված էր սոցիալական մի շարք պատճառների հետ: Այն ժամանակ շուրջ երեք միլիոն բնակչություն ունեցող Դամասկոսի նահանգում անմխիթար վիճակում էր ջրամատակարարման համակարգը, հետզհետե ավելանում էին անօրինական ընտանիքները[287]:

Վերոնշյալ երկու կադրային փոփոխությունները հասարակության սոցիալ-տնտեսական վիճակի կայունացմանն ու բարելավմանն ուղղված քայլեր էին: Միևնույն ժամանակ, այդ փոփոխությունները միտված էին սահուն կերպով նախագահական իշխանության հաջող փոխանցմանը: Այսպիսով, ովքեր կարող էին այդ ժամանակահատվածում՝ 1993-1994 թթ. ընթացքում նախագահի հավանական թեկնածուներ համարվել և ովքեր էին գլխավորապես ապահովելու իշխանության փոխանցումը Հաֆեզ Ալ-Ասադից որդուն՝ Բաշար Ալ-Ասադին: Ըստ Է. Զիսսերի՝ Հաֆեզ Ալ-Ասադի հավանական հետևորդներից էր նրա եղբայր Ռիֆաթը, որը 1995 թ. զբաղեցնում էր ազգային անվտանգության հարցերով փոխնախագահի պաշտոնը: Ռիֆաթն ալավիական համայնքի ամենաազդեցիկ ներկայացուցիչներից մեկն էր, ուժեղ կապեր ուներ արաբական աշխարհում և Արևմուտքում, որտեղ համարում էին, որ Ռիֆաթը տնտեսության բնագավառում ավելի եռանդուն և գործունյա գործիչ է[288]:

Նախագահի հավանական թեկնածուների շարքում էին նաև սուննիական համայնքը ներկայացնող Աբդ Ալ-Հալիմ Խադդամը և Սիրիայի ԶՈՒ գլխավոր շտաբի պետ Հիքմեթ Շիհաբին, որոնք Հաֆեզի հետ ծանոթ էին պատանեկան տարիներից: Աբդ Ալ-Հալիմ Խադդամը, որը Բաաս կուսակցության գլխավոր գործիչներից էր,

---

[287] البعث, «ալ-Բաաս», Դամասկոս 01.10. 1993:

[288] The Independent, London, 22. 10. 1992.

Հաֆեզի հետ ծանոթ էին դեռևս 1950-ական թթ. սկզբից, երբ երկուսն էլ Սիրիայի ուսանողների ազգային միության անդամներ էին: Դեռևս 1967 թ. Խադդամը Կունեյտրայի շրջանի ղեկավարն էր: Երբ 1970 թ. նոյեմբերին Հաֆեզ Ալ-Ասադը Սիրիայում իշխանության եկավ, Խադդամը դարձավ արտաքին գործերի նախարար, իսկ 1984 թ.-ից նշանակվեց Սիրիայի փոխնախագահ արտաքին հարաբերությունների հարցերով: Մինչև 1974 թ. Հիքմեթ Շիհաբին զինվորական անվտանգության ծառայության ղեկավարն էր, իսկ դրանից հետո նշանակվեց Սիրիայի ԶՈՒ գլխավոր շտաբի պետի պաշտոնին: Շիհաբին վերահսկում էր Իսրայելի հետ վարվող բանակցությունները, ինչը նշանակում էր, որ նա մեծ վստահություն է վայելում նախագահ Հաֆեզ ալ-Ասադի մոտ[289]: Միանգամայն ճիշտ է Է. Զիսսերը, երբ ասում է, որ վերոնշյալ երկու գործիչները Հաֆեզի սուննիական շրջապատի հավատարիմ գործիչներից էին: Սակայն հազիվ թե հավանական է նրա այն պնդումը, թե Խադդամն ու Շիհաբին նախագահի հավանական թեկնածուներ էին: Պետք է նկատի ունենալ, որ Հաֆեզ Ալ-Ասադը, այնուամենայնիվ, ձգտում էր իշխանությունը երկրում պահել ալավիների ձեռքում, որին արդեն շուրջ քառորդ դար հաջողվել էր ապահովել երկրի ներքին և արտաքին անվտանգությունը: Ալավիական վարչակարգն ապացուցել էր, որ կարողանում է պետական կառավարման բնագավառում դրսևորել իրեն և ճիշտ կողմնորոշվել երկրի անվտանգությանը սպառնացող իրավիճակներում: Այսինքն՝ Հաֆեզ Ալ-Ասադի միակ նպատակն իշխանությունը որդուն փոխանցելով չէր սահմանափակվում: Նա ցանկանում էր, որպեսզի իրենից հետո Սիրիայում պահպանվի կառավարման այն մշակույթը, որի կրողն ալավիական վերնախավն էր, և որ երկիրը կրկին հետադարձ քայլ չկատարի դեպի ռազմական հեղաշրջումներ: Իշխանության հաջորդականության խնդրի լուծման գործում իրենց կարևոր և առանձնահատուկ դերն ունեին ալավիական համայնքը ներկայացնող Սիրիայի զինվորական վերնախավի մի շարք անդամներ: Բացի Իբրահիմ Սաֆիից, Շաֆիկ Ֆայադից, Մուհամմադ Խուլիից, Ալի Դուբայից և Ալի Հաբիբից, կարևոր նշանակություն ունեին նաև Սիրիայի ԶՈՒ գլխավոր շտաբի պետի հատուկ գործն-

---

289 Zisser E., նշվ. աշխ., էջ 58:

ղությունների իրականացման գծով տեղակալ Ալի Ասլանը, հանրապետական գվարդիայի հրամանատար Ալի Հասանը, ռազմաօդային հետախուզական ծառայության ղեկավար Իբրահիմ Հուվայջին և քաղաքական անվտանգության ծառայության ղեկավար Ադնան Բադր Հասանը: Վերոնշյալ ալավի սպաների մի մասը սերում էր Հաֆեզ Ալ-Ասադի տոհմից՝ Կալբիյայից, իսկ մի մասն էլ նրա կնոջ ընտանիքից՝ Մախլուֆից:

1993-1994 թթ. ընթացքում Սիրիայում իշխանության հաջորդականության ապահովման տրամաբանության շրջանակներում իրականացված կադրային փոփոխությունների ուսումնասիրությունը թույլ է տալիս ինչ-որ չափով ուրվագծել այդ ժամանակաշրջանում երկրում տիրող ներքաղաքական իրավիճակը: Այսպես, չնայած Հաֆեզ ալ-Ասադը 1992 թ. արդեն չորրորդ անգամ յոթամյա ժամկետով ընտրվել էր Սիրիայի նախագահ, սակայն ընտրվելուց մեկ տարի անց սկսեց նպատակասլաց աշխատանք տանել երկրում բարձրագույն իշխանությունն իր ավագ որդուն՝ Բասիլ ալ-Ասադին փոխանցելու ուղղությամբ: Վերջինիս մահից հետո, ինչպես հայտնի է, երկրում անորոշ իրավիճակ ստեղծվեց, և բոլորը լարված սպասում էին, թե Բասիլից հետո զավակներից ով է լինելու Հաֆեզին արժանի փոխարինողը: Նախագահ Հաֆեզը սկսեց առաջ քաշել իր մյուս որդուն՝ Բաշար Ալ-Ասադին: Վերջինիս թեկնածության թեկուզև անուղղակի արծարծումը նախագահի համար քաղաքական հաշվարկներ կատարելու յուրահատուկ ինդիկատորի դեր խաղաց: Նա ցանկանում էր շոշափել զինվորականների տրամադրությունները այդ հարցում: Նրանք, ովքեր կասկածամտորեն վերաբերվեցին, աստիճանաբար պաշտոնանկ արվեցին: Ալավի բարձրաստիճան զինվորականների պաշտոնանկությամբ սկսվեց սերնդափոխության մի գործընթաց, որը հիմնականում ուղղված էր Բաշար Ալ-Ասադի դիրքերի ամրապնդմանը Սիրիայի զինվորական շրջանակներում, ապա նաև քաղաքական բեմահարթակում: Չնայած սիրիական վերնախավում կադրային փոփոխությունները 1994 թ.-ից հետո էլ շարունակվեցին, սակայն դրանք իրականացվեցին հակակոռուպցիոն գործողությունների պատրվակի ներքո:

Սիրիայում ներքաղաքական իրավիճակը և երկրի ներսում տեղի ունեցող գործընթացները մեծապես կախված էին արտաքին գոր-

ծոններից՝ հիմնականում Սիրիա-Իսրայել բանակցություններից: 1994 թ. դեկտեմբերին Վաշինգտոնում Սիրիայի և Իսրայելի ԶՈՒ գլխավոր շտաբի պետերի՝ Հիքմեթ Շիհաբի և Էհուդ Բարաքի հանդիպումից հետո 1995 թ. առաջին կեսին բանակցությունները հայտնվել էին փակուղում: Բանակցությունների ընթացքում Էհուդ Բարաքի առաջարկությունները սիրիական կողմը մերժել էր: Սիրիական տարածքների ապառազմականացման պահանջը երկրի իշխանություններն ընդունեցին որպես սպառնալիք ազգային անվտանգության ու տարածքային ամբողջականությանը: Ասադը մերժեց շարունակել շտաբի պետերի հանդիպումները քանի դեռ Իսրայելը բանակցությունների օրակարգից չի հանել այդ պայմանները: «Ալ-Բաաս» օրաթերթի 1995 թ. փետրվարի 7-ի համարում գրված էր. «Իսրայելի պահանջները սպառնում են խաղաղության գործընթացին»: Փոխնախագահ Խադդամը մարտին հայտարարեց, որ զորքերի թվաքանակի կրճատման հարցը քննարկման առարկա չի կարող լինել, քանի որ առնչվում է Սիրիայի ազգային շահերին[290]: Սիրիական կողմը պահանջում էր, որպեսզի անվտանգությանը վերաբերող պայմանավորվածությունները լինեն հավասարակշռված և համահավասար: ԱՄՆ-ը շարունակում էր քայլեր ձեռնարկել կողմերի միջև բանակցությունները վերսկսելու և նրանց հաշտեցնելու ուղղությամբ: ԱՄՆ պետքարտուղար Ուարեն Քրիստոֆերի այցը տարածաշրջան, Սիրիայի արտգործնախարար Ֆարուկ Ալ-Շարի այցը Վաշինգտոն և ԱՄՆ պետքարտուղարության՝ խաղաղության գործընթացը համակարգող Դենիս Ռոսի այցը տարածաշրջան ապացուցում էին, որ Սպիտակ տունը այս հարցում գործուն ջանքեր է գործադրում: Համաժամյան իսրայելական մամուլում տպագրված որոշ հոդվածների՝ Շիմոն Պերեսն ապրիլին նախագահ Մուբարաքի և Մարոկկոյի թագավոր Հասանի հետ հանդիպումների ժամանակ ասել էր, որ Իսրայելը ճանաչում է Սիրիայի ինքնիշխանությունը Գոլանի բարձունքների նկատմամբ և պատրաստ է զորքերն ամբողջությամբ դուրս բերել այնտեղից: Սակայն Պերեսի գրասենյակը հերքեց այդ տեղեկությունը: Քննարկում էր այն հարցը, թե բանակցություններն

---

290 البعث, «ալ-Բաաս», Դամասկոս, 22.04.1995:

ինչ մակարդակով պետք է անցկացվեն: Անդրադառնալով այս խնդրին՝ Ասադն անուղղակիորեն նշում էր, որ խաղաղությունը խաղաղություն է, և կարևոր չէ, թե այն ինչ մակարդակում է ձեռք բերվում, դեսպանների թե՞ պետության ղեկավարների: Բանակցությունների մակարդակի բարձրացման հարցը քննարկումների օրակարգում չկա[291]:

Ավելի ուշ, կրկին անդրադառնալով այդ թեմային, Ասադն ընդգծեց, որ բարձր մակարդակի բանակցությունների՝ փակուղում հայտնվելու հավանականությունն ավելի մեծ է: Մինչդեռ ցածր մակարդակում տեղի ունեցող քննարկումները կարող են ավելի արդյունավետ լինել[292]:

Շուտով բանակցությունները վերսկսելու ԱՄՆ-ի ջանքերը որոշակի հաջողություն ունեցան: ԱՄՆ-ում Սիրիայի դեսպան Ուալիդ ալ-Մուալլիմի և ԱՄՆ-ում Իսրայելի դեսպան Իթամար Ռաբինովիչի միջև բանակցությունները վերսկսվեցին մարտին: Երկապատև քննարկումներից հետո պետքարտուղար Ուարեն Քրիստոֆերը 1995 թ. մայիսի 24-ին հայտարարեց, որ Իսրայելը և Սիրիան ԱՄՆ-ի միջնորդությամբ համաձայնության են եկել Գոլանի բարձունքների անվտանգության ապահովման միջոցների փոխըմբռնման շրջանակների վերաբերյալ, որը սիրիական կողմի համար ձեռքբերում էր: Սա նշանակում էր, որ Իսրայելի պահանջները սիրիական զորքերի դուրսբերման վերաբերյալ այլևս օրակարգային չէր: Այնուամենայնիվ, շրջանակը սահմանում էր նաև, որ, եթե անվտանգության ապահովման միջոցների հավասարության սկզբունքը չիրականացվի, ապա երկու երկրները պետք է բանակցեն՝ կարգավորման ավելի նպատակահարմար բանաձև գտնելու համար: Ապառազմականացված տարածքներում աշխարհագրական համանմանություն ձևավորելու մասին Սիրիայի պահանջները հաշվի առնվեցին:

Փոխըմբռնման շրջանակի վերաբերյալ համաձայնագրի ստորագրման կարևորությունն այն էր, որ խաղաղության գործընթացի սկզբից այն Սիրիայի և Իսրայելի միջև առաջին գրավոր համաձայնությունն էր: Բանակցություններին նոր ազդակներ հաղորդելու

---

[291] تشرين, «Թիշրին», Դամասկոս, 03.06.1995:
[292] الحياة,, «ալ-Հայաթ», Լոնդոն, 04.09.1995:

համար 1995 թ.-հունիսին կազմակերպվեց գլխավոր շտաբի պետերի հանդիպում, այնուհետև երկու կողմերի ռազմական փորձագետների միջև քննարկումներ տեղի ունեցան նույն թվականի հուլիսին:

1995 թ. հունիսին ԱՄՆ-ի կողմից խաղաղության գործընթացը համակարգող Դեննիս Ռոսը, հետևելով պետքարտուղար Քրիստոֆերին, այցելեց Դամասկոս և Երուսաղեմ: Դամասկոսից վերադառնալով՝ Քրիստոֆերը դրականորեն արտահայտվեց սիրիական վարչակարգի պատրաստակամության մասին: Այդ կապակցությամբ նա նշել էր, որ Ասադը գիտի, որ ԱՄՆ-ում և Իսրայելում տեղի ունենալիք ընտրությունների նախաշեմին անհրաժեշտ է առաջընթաց գրանցել բանակցություններում[293]: Երկու երկրների շտաբի պետեր Ամնոն Շահակն ու Հիքմեթ Շիհաբին հանդիպեցին Վաշինգտոնում 1995 թ. հունիսի 27-ից 30-ը: Դրան հաջորդեց նրանց հանդիպումը նախագահ Բիլ Քլինթոնին: Հանդիպումները տեղի էին ունենում ընկերական մթնոլորտում: Շահակի և Շիհաբիի բանակցություններում քննարկման առարկա էին՝ ապառազմականացման, շփման գծում զորքերի թվաքանակի կրճատման և երկու երկրների տարածքում հակաօդային պաշտպանության համար նախատեսված ռադարային համակարգերի տեղակայման խնդիրները: Այս վերջին հարցի վերաբերյալ բանակցություններն սկսեցին հետզհետե փակուղում հայտնվել և այդ իրավիճակը շարունակվեց մինչև 1995 թ. նոյեմբերին Իցխակ Ռաբինի սպանությունը: Ռաբինի սպանությունը կասեցրեց խաղաղության գործընթացը: Սիրիացիները խուսափում էին տեղի ունեցածի վերաբերյալ գնահատականներ տալուց, չնայած համաձայն ամերիկյան աղբյուրների՝ Ասադը Դեննիս Ռոսի՝ նոյեմբերին Սիրիա կատարած այցի ընթացքում ցավակցական արտահայտություններ էր արել կատարվածի կապակցությամբ: Սիրիայի պաշտոնական դիրքորոշումն Իսրայելի կողմից[294]:

Ռաբինի սպանությունից հետո իսրայելասիրիական բանակցություններում տեղաշարժի որոշ հույսեր դեռ կային: Շիմոն Պերեսը կարող էր ավելի ճկուն գործել, քան իր նախորդը: Նա հայտնի էր որպես հավասարակշռված գործիչ և իր հայտարարություններում

---

[293] Middle East Contemporary Survey, Vol. 19, 1995, p. 615.

[294] Նույն տեղում:

բազմաթիվ անգամ նշել էր իսրայելական զորքերի՝ Գոլանի բարձունքներից ամբողջական դուրսբերման պատրաստակամության մասին: Ամեն պարագայում, երկու կողմերն էլ գտնում էին, որ պետք է շարունակել բանակցությունները: Շիմոն Պերեսը սիրիական մամուլի կողմից ներկայացվում էր որպես արաբների խնդիրներին և ցավերին իրազեկ պաշտոնյա, որը ձգտում էր խաղաղության հաստատմանը Սիրիայի և Լիբանանի հետ[295]: Միևնույն ժամանակ, Պերեսը հայտարարում էր, որ օրակարգում եղած նախկին առաջարկությունները պետք է մի կողմ դնել և բանակցություններն սկսել նոր էջից: Պերեսի մտերիմ պաշտոնյաները իսրայելական մամուլին տեղեկատվություն էին տվել այն մասին, որ Ռաբինը խոստացել էր ամերիկացիներին Գոլանի բարձունքներից դուրս բերել իսրայելական զորքերը: Բանակցություններում նոր ուղի փնտրելու համար իսրայելական կողմի գլխավոր բանագնաց նշանակվեց Իսրայելի արտգործնախարարության գլխավոր քարտուղար Ուվի Սավիրը:

1995 թ. նոյեմբերին Բարսելոնայում կայացած Եվրամիության անդամ երկրների և միջերկրածովյան ավազանի ոչ անդամ երկրների համաժողովի ժամանակ, որին մասնակցում էին նաև Իսրայելի և Սիրիայի արտգործնախարարները, արտգործնախարար Էհուդ Բարաքը դիմեց իր սիրիացի պաշտոնակցին՝ ասելով. «Մենք մարտի դաշտում թշնամիներ ենք եղել և մեր զինվորների՝ Իսրայելի և Սիրիայի լավագույն զավակների արյունն է թափվել: Թույլ տվեք մեզ հասնել խաղաղության»[296]: Սրան Սիրիայի արտգործնախարար Ֆարուկ Ալ-Շարը պատասխանեց. «Եթե Իսրայելի իմ պաշտոնակից գեներալ Բարաքի նշածը կապված չէ այս համաժողովի հետ, ապա Սիրիան պատրաստ է համապարփակ խաղաղության և կկրկնապատկի իր ջանքերը, որոնք կապահովեն անվտանգությունը երկու կողմերի համար, մենք կարող ենք գալիք ամիսների ընթացքում հասնել խաղաղության»[297]:

Այս հայտարարությունները ստիպեցին ԱՄՆ-ի իշխանություն-

---

[295] البعث, «ալ-Բաաս», Դամասկոս, 17.11.1995:

[296] Մանրամասն տես՝ Spain: EU Foreign Ministers Conference: Middle East Issues, 28.11.1995. http://www.aparchive.com/metadata/youtube/ae023feb445ad9326b92c1fe9fbf798b

[297] البعث, «ալ-Բաաս», Դամասկոս, 27.11.1995:

ների միջոցներ ձեռնարկելու բանակցությունների վերսկսման համար: Տարածաշրջան այցելեցին պետքարտուղար Քրիստոֆերն ու գլխավոր բանագնաց Դենիս Ռոսը: Սիրիայի և Իսրայելի միջև բանակցությունները վեցամսյա դադարից հետո վերսկսվեցին: Կողմերը համաձայնեցին ամերիկյան միջնորդությանն ու պարտավորվեցին հաշտեցնել դիրքորոշումները:

### 3. 2. Ներքաղաքական իրավիճակը Սիրիայում և իշխանության փոխանցումը Բաշար Ալ-Ասադին (1997-2000 թթ.)

1997 թ. ապրիլի 7-ին Դամասկոսում նշվեց Բաաս կուսակցության հիմնադրման 50-ամյակը, որին ներկա էր կուսակցական ղեկավարությունը, այդ թվում՝ նախագահ Ասադը: Սիրիայի ներքին ու արտաքին բազմաթիվ խնդիրների պատճառով 12 տարի կուսակցության համագումար տեղի չէր ունեցել: Հետաքրքրական է, որ Ասադը ձգտում էր կադրային փոփոխություններ իրականացնել նաև կուսակցության ղեկավար շրջանակներում, որի նպատակը նույնպես Բաշարի համար ամուր հիմքեր ստեղծելն էր[298]:

Համագումարի իր ելույթում Հաֆեզ Ալ-Ասադն անդրադարձավ կուսակցության անցյալի սխալներին և պարտություններին, որոնք մասամբ կապված են արաբների դեմ սիոնիստական և իմպերիալիստական խարդավանքների հետ: Մի շարք դեպքերում էլ անհաջողությունները կուսակցության անդամների պատճառով են տեղ գտել: Միևնույն ժամանակ, կուսակցությունը բազմաթիվ ձեռքբերումներ է ունեցել և ուժ հավաքել շարունակելու իր հետագա ընթացքը: Ըստ Ասադի՝ հաջողությունների համար կուսակցությունն առաջին հերթին պարտական է հասարակական աջակցությանը[299]:

Չնայած 1997 թ. մայիսին և դեկտեմբերին Սիրիայի տարբեր քաղաքներում մի շարք պայթյուններ գրանցվեցին, երկրում քաղաքական կայունությունը պահպանվում էր: Այդ պայթյունները, ըստ ամենայնի, կազմակերպել էին արտաքին ուժերը՝ կա՛մ թուրքական հետախուզական ցանցը երկկողմ հարաբերությունների վատթարաց-

---

[298] الحياة, «ալ-Հայաթ», Լոնդոն, 08.04.1997:
[299] البعث, «ալ-Բաաս», Դամասկոս, 07.04.1997:

մանը զուգընթաց, կամ՝ սաուդական ծայրահեղական մի խմբավորում, որի անդամներից մեկը մահացել էր սիրիական բանտում[300]:

1997 թ. հունվարին նախագահ Ասադը հոսպիտալացվեց շագանակագեղձի բորբոքում ախտորոշմամբ և ենթարկվեց վիրահատության: Վիրահատությունը բարեհաջող անցավ, նախագահը մի քանի օր հիվանդանոցում անցկացնելուց հետո վերադարձավ աշխատանքային ռեժիմի[301]: Սակայն իսրայելական և ամերիկյան աղբյուրները նշում էին, որ Ասադի առողջական վիճակը ծանր էր և նա չէր կարողացել ամբողջությամբ ապաքինվել[302], ինչը հերքում էին նախագահի մամլո խոսնակները: Այնուամենայնիվ, Դամասկոսում հրատարակվող թերթերը փաստում էին, որ նախագահին կից ստեղծվել էր մի խորհուրդ, որի անդամները նախագահի ծանրաբեռնվածությունը թեթևացնելու համար զբաղվելու էին տնտեսության և սոցիալական բնագավառի խնդիրների լուծմամբ: Ասադի առողջության վատթարացման կամ մահվան դեպքում վերոնշյալ խորհուրդը ստանձնելու էր կառավարության ղեկավարումը: Խորհրդի կազմում էին նախագահի հետ սերտ հարաբերություններ ունեցող գործիչներ, որոնց գլխավորում էին փոխնախագահ Աբդ Ալ-Հալիմ Խադդամը և զինված ուժերի գլխավոր շտաբի պետ Հիքմեթ Շիհաբին: Խորհրդի կազմում ընդգրկված էր նաև Բաշար Ալ-Ասադը:

1997 թ. ապրիլին Բաշար Ալ-Ասադն ամբողջությամբ ավարտեց սիրիական հրամանատարության և գլխավոր շտաբի քոլեջի մի կուրսը, որը նրան հնարավորություն տվեց սիրիական բանակում սպայական բարձր կոչման արժանանալ: Երեք ամիս անց Բաշարն ստացավ գնդապետի զինվորական կոչում: Համաձայն մամուլի տեղեկությունների՝ Բաշարը կարևոր դեր էր կատարում բանակի և անվտանգության մարմինների համակարգերում որոշումներ կայացնելու գործում: Նա պարտադիր մասնակցում էր բանակում անցկացված բոլոր զորավարժություններին: Բաշարին զինվորական գործերում օգնում էր նրա կրտսեր եղբայրը՝ Մահիրը, որը ռազմական բնագավառում ակտիվ գործունեություն էր ծավալում: Բանակում կարևոր

---

300 Middle East Contemporary Studies, Vol. 21, 1997, p. 650.

301 تشرين, «Թիշրին», Դամասկոս, 09.01.1997:

302 Ha'aretz, Tel-Aviv, 13.02.1997.

դեմք էր նաև Բաշարի քրոջ՝ Բուշրայի ամուսինը՝ Ասիֆ Շաուկաթը: Չնայած Շաուկաթը Բուշրայի հետ ամուսնացել էր հակառակ Հաֆեզ Ալ-Ասադի ցանկության, բայց նշանակվել էր ծառայության Ալի Դուբայի կողմից ղեկավարվող բանակի զինվորական անվտանգության բաժանմունքում: Լայնորեն քննարկվում էր նաև Շաուկաթին տեսանելի ապագայում Դուբային փոխարինելու տարբերակը, ինչն ավելի կամրապնդեր Ասադի ընտանիքի և, մասնավորապես, Բաշարի դիրքերը[303]:

Մամուլի էջերում լայնորեն լուսաբանվում էր նաև Բաշար Ալ-Ասադի գործունեությունն այլ բնագավառներում, հատկապես Սիրիայում համակարգչային տեխնոլոգիաների և ծիասպորտի զարգացման ասպարեզներում: Համակարգչային տեխնոլոգիաների տարածման ուղղությամբ Բաշարի գործադրած ջանքերի լուսաբանումը նպատակ ուներ հասարակության շրջանում կերտել նրա ժամանակակից ու կրթված կերպարը: Անդրադառնալով Սիրիայում ինտերնետի համընդհանուր օգտագործմանը նպաստելուն ուղղված ջանքերին՝ Բաշար Ալ-Ասադն ընդգծում էր, որ միայն այդպես հնարավոր կդառնար արտաքին աշխարհին ավելի արագ և հեշտ ներկայացնել արաբների պահանջները[304]:

1997 թ. հունվարին Բաշարի շրջապատին մոտ կանգնած Բահջաթ Սուլեյմանը հետաքրքիր և կարևոր մի հոդված է տպագրում Դամասկոսում հրատարակվող «աս-Սաուրա» թերթում: Ըստ այդմ՝ Բաշարը կարող էր կայունության երաշխիք լինել՝ շարունակելով Հաֆեզ Ալ-Ասադի քաղաքականությունը: Հեղինակը նշում է. «Բաշարը կարճ ժամանակամիջոցում ցույց տվեց, որ կարող է Սիրիայում իշխանության հիմքը դառնալ: Սիրիայի ժողովուրդը վստահեց Բաշարին, որովհետև նա Ասադի որդին է և Բասիլի եղբայրը ու նրան դարձրեց իր խորհրդանիշը: Բաշարի միջոցով Սիրիայի ժողովուրդը հույս ունի իրագործել իր երազանքները»[305]:

Բաշար Ալ-Ասադը զբաղվում էր նաև երկար տարիներ փոխնախագահ Խադդամի իրավասության տակ գտնվող լիբանանյան

---

303 Middle East Contemporary Survey, Vol. 21, 1997, p. 652.

304 الحياة, «ալ-Հայաթ», Լոնդոն, 12.10.1997:

305 الثورة , «աս-Սաուրա», Դամասկոս, 19.01.1997:

գործերով: Տարվա ընթացքում նա մի շարք հանդիպումներ ունեցավ լիբանանյան բազմաթիվ առաջնորդների՝ նախագահ Իլյաս Հրաուիի, վարչապետ Ռաֆիկ Հարիրիի, երկրի խորհրդարանի խոսնակ Նաբիհ Բերրիի, բանակի հրամանատար Էմիլ Լահուդի, շիայական «Հիզբալլահ» շարժման գլխավոր քարտուղար Հասան Նասրալլահի և «Լիբանանյան Փաղանգներ» (Քաթաիբ)[306] կուսակցության ղեկավար Ջորջ Սաադայի հետ[307]:

Լիբանանյան աղբյուրների համաձայն՝ նախապատրաստական աշխատանքներ էին կատարվում Բաշարի և Լիբանանի մարոնիների[308] պատրիարք Բուտրոս Սուֆայրի միջև հանդիպում կազմակերպելու համար, սակայն այն մինչև 1997 թ. վերջը չկայացավ: Բաշարն ընկերական սերտ հարաբերությունների մեջ էր Լիբանանի նախկին նախագահ Սուլեյման Ֆրանժիեի թոռան՝ Սուլեյման Թոնի Ֆրանժիեի և Լիբանանի դրուզների[309] ազդեցիկ ընտանիքներից մեկի ղեկավար Թալալ Արսլանի հետ:

Սերնդափոխության հարցը չէր սահմանափակվում միայն Բաշարի թեկնածության շրջանառությամբ: Բաասական իշխող վարչակարգը նոր ուժերով թարմացնելն ու նոր սերնդի ներկայացուցիչների կողմից ավագ սերնդի պաշտոնյաների ղեկավարման լծակները

---

306 «Քաթաիբը» Լիբանանի մարոնիների հիմնական քաղաքական կուսակցություններից է, որը հիմնադրել է 1936 թ. նոյեմբերի 21-ին շեյխ Պիեր Ժմայելը: Հենվելով Լիբանանի փյունիկյան ժառանգության վրա՝ կուսակցությունը որդեգրել էր «Աստված, ընտանիք, պետություն» կարգախոսը:

307 Middle East Contemporary Survey, Vol. 21, 1997, p. 652.

308 Միատովածություն դավանող արաբախոս մարոնիները դեռևս 7-րդ դարում բնակվել են Սիրիայում: Նրանց եկեղեցու հիմնադիրը Մար Մարոնն է: 10-րդ դարում Բյուզանդիայի հետապնդումների հետևանքով ապաստան են գտել Լիբանանի լեռներում: Խաչակիրների արշավանքի ժամանակ 12-րդ դարում ճանաչել են Հռոմի պապի գերագահությունը՝ պահպանելով սեփական ծիսակատարությունները, արարողակարգը և պատրիարքական համակարգը: Տե՛ս Նաջարյան Ե., Լիբանանը XVIII դարի վերջին և XIX դարի առաջին կեսին, Երևան, 1985, էջ 23-24:

309 Դրուզները մուսուլման շիա համայնքի ուղղություններից մեկի հետևորդներն են: Ուսմունքը հիմնադրվել է 10-րդ դարում: Կահիրեում Ֆաթիմյան խալիֆ Ալ-Հաքիմն իրեն հռչակել էր Աստված: Խալիֆի մահից հետո նրա հետևորդները ենթարկվեցին հետապնդումների, իսկ նրա վեզիրներից մեկը, որի անունով էլ կոչվեց ուղղությունը, ապաստան գտավ Սիրիայում՝ աստիճանաբար ընդլայնելով իր համախոհների թիվը: (Տես՝ The Encyclopedia of Islam, Vol. 2, C-G, Leiden E. J. Brill, 1983, pp. 613-637)

վերցնելու գործընթացն ավելի ծանր խնդիր էր: Մամուլում ներկայացվում էր, որ իշխող վերնախավի տարեց պաշտոնյաները քաղաքական, տնտեսական և սոցիալական բնագավառում առաջնորդվում են հնացած գաղափարներով, իսկ նման կերպ Սիրիան 21-րդ դարում անհնար կլինի ղեկավարել[310]:

Ամեն պարագայում, սերնդափոխության գործընթացը Սիրիայի իշխանական վերնախավում խնդրահարույց հարց էր: Հաֆեզ Ալ-Ասադի կողմից որդիներին առաջ մղելը յուրահատուկ մոդելի դեր էր խաղում Սիրիայի բարձրաստիճան մյուս պաշտոնյաների համար, որոնք իրենց որդիներին նույնպես բարձր պաշտոնների էին նախապատրաստում: Այս միտումը դժգոհություն առաջացրեց Սիրիայում: Առաջին անգամ դժգոհության մասին բարձրաձայնեց Ֆրանսիայում Սիրիայի դեսպան Էլյաս Ալ-Նաջման ֆրանսիացի գործարարների հետ հանդիպման ժամանակ՝ կոչ անելով նրանց չհամագործակցել սիրիացի բարձրաստիճան պաշտոնյաների գործարար որդիների հետ, քանի որ նրանց տնտեսական գործունեությունն անօրինական է: Դեսպանի հայտարարությունը տարածվեց Ֆրանսիայում տպագրվող արաբերեն մամուլում, սակայն վերջինս կտրականապես ժխտեց այդ հայտարարությունը[311]:

Ռիֆաթ ալ-Ասադը, որը 1992 թ. վերադարձավ Սիրիա, փորձում էր մնալ ստվերում և հարաբերականորեն չեզոք էր ներքաղաքական խնդիրների հարցում: Ռիֆաթը կտրված էր երկրի ուժային կենտրոններից և գտնվում էր տնային կալանքի տակ: Այդուհանդերձ, նա չէր դադարում քաղաքական հավակնություններ ունենալ և գործում էր կուլիսների հետևից, որպեսզի կարողանար պահպանել Հաֆեզին փոխարինողի իր պոտենցիալ կարգավիճակը[312]: Սաուդյան Արաբիայի թագաժառանգ Աբդալլահին ապրիլին Սիրիա այցի ընթացքում, որի նպատակը սիրիական ղեկավարության հետ քաղաքական հարցերի քննարկումն էր, հանդիպում ունեցավ նաև Ռիֆաթ Ալ-Ասադի հետ: Սիրիական մամուլում հանդիպման վերաբերյալ տեղեկատվություն չհրապարակվեց, սակայն լայնորեն ներկայացվեց արաբական

---

[310] Middle East Contemporary Survey, Vol. 21, 1997, p. 653.
[311] النهار, «ան-Նահար», Փարիզ, 30.01.1997:
[312] Middle East Contemporary Survey, Vol. 20, 1996, p. 635.

այլ լրատվամիջոցների ու Ռիֆաթի ենթակայությամբ գործող լրատվական կառույցների կողմից[313]: Ռիֆաթի կանանցից մեկն ու թագաժառանգ Աբդալլահի կինը քույրեր էին և բացի այդ, նրանք երկար տարիների ընկերներ էին:

1997 թ. Ռիֆաթը փորձում էր լեգիտիմանալ նաև ալավիական համայնքում: Փետրվարի սկզբին Սիրիայի հյուսիսարևմտյան շրջաններում գտնվող ալավիների սրբատեղիներն անընդհատ շարունակվող սուննի-ալավիական լարվածության հետևանքով իրի մատնվեցին: Այս դեպքերի համար մատնանշվեց մեկ այլ պատճառ, որը կրկին կապված էր Ռիֆաթի հետ, որին համայնքի ներսում միանշանակորեն չէին վերաբերվում[314]: 1997 թ. վերջին ալավիաբնակ շրջաններում, մասնավորապես Ասադների հայրենի Կարդահա գյուղում, բախումներ տեղի ունեցան Ռիֆաթի և Բաշարի կողմնակիցների միջև[315]:

Ռիֆաթը փորձում էր իր քաղաքական ազդեցությունը պահպանել արտասահմանից՝ Փարիզում և Լոնդոնում գործող իր մի քանի լրատվամիջոցներով: 1997 թ. փետրվարին Լոնդոնում հիմնադրվեց Արաբական ժողովրդավարական կուսակցության ճյուղը, որը նպատակ էր հետապնդում արաբական աշխարհի հիմնախնդիրների վերաբերյալ ազատ երկխոսություն ծավալել: Կուսակցության կարգախոսն էր համերաշխություն, ժողովրդավարություն, միություն և սոցիալիզմ, որը հավանաբար նմանեցվել էր Բաաս կուսակցության միություն, ազատություն և սոցիալիզմ նշանաբանին: Կուսակցության օրգանը՝ «ալ-Շաաբ ալ-Արաբի», հրատարակվում էր Լոնդոնում Ռիֆաթի 26-ամյա որդու՝ Սումարի խմբագրությամբ: Թերթը հրապարակում էր այնպիսի հոդվածներ, որոնք կոչ էին անում ժողովրդավարություն հաստատել արաբական աշխարհում՝ քննադատելով արաբական վարչակարգերին: Ռիֆաթ Ալ-Ասադի մյուս որդին՝ Դուրայդը, Փարիզում հրատարակում էր «ալ-Ֆուրսան» խորագրով ամսագիրը, որի հիմնական թեմաները նույնպես առնչվում էին ժողովրդավարության և ազատ երկխոսության մթնոլորտի ձևավոր-

---

313 الشعب العربي, «աշ-Շաաբ ալ-Արաբի», Փարիզ, 30.06.1997:
314 New-York Times, New-York, 10.02.1997.
315 Middle East Contemporary Survey, Vol. 21, 1997, p. 654.

մաՆ խնդիրներին[316]: 1997 թ. մայիսին հայտարարվեց Լոնդոնում գործող արաբալեզու արբանյակային հեռուստաընկերության հիմնադրման մասին, որը կոչվում էր Արաբական լրատվական ցանց: Հեռուստաընկերության տնօրենների խորհրդի նախագահն էր Սումար Ալ-Ասադը: Հեռուստաընկերությունը, որը 1997 թ. հոկտեմբերին սկսեց իր հեռարձակումները, ըստ երևույթին, ֆինանսական աջակցություն էր ստանում սաուդական և լիբանանյան աղբյուրներից[317]:

Նախագահի մյուս եղբայր Ջամիլ Ալ-Ասադը 1997 թ. Փարիզում էր: Մինչև 1980-ական թթ. կեսին ալավիաբնակ շրջանների քաղաքական ղեկավարի համբավը պատկանում էր Ջամիլ Ալ-Ասադին, սակայն 1983-1984 թթ., չկարողանալով Հաֆեզ Ալ-Ասադի և Ռիֆաթի միջև պայքարի ընթացքում ճիշտ կողմնորոշվել, նա հեռացվեց իր բոլոր պաշտոններից: 1997 թ. հունվարին ֆրանսիացի պաշտոնյաները հայտնեցին, թե 1996 թ. դեկտեմբերին երեքամսյա բուժման կուրս անցնելու համար Ջամիլն այցելել է Փարիզ: Ավելի ուշ նա վերադարձավ Սիրիա և, զրկված լինելով քաղաքական և այլ լծակներից, որոշեց բնակություն հաստատել Լաթաքիայի իր տանը[318]:

1996 թ. դեկտեմբերի 31-ին Դամասկոսի շուկայում տեղադրված ռումբի պայթյունից զոհվեցին և վիրավորվեցին տասնյակ քաղաքացիներ: Սիրիական իշխանությունները, որոնք սկզբում փորձում էին քողարկել միջադեպը, տեղի ունեցածը բարդեցին իսրայելական «Մոսադի» վրա: Արևմտյան մամուլը հանցագործությունը կապում էր Սիրիայի «Մուսուլման եղբայրների» հետ[319]: Սակայն Ամմանում գտնվող Սիրիայի «Մուսուլման եղբայրների» գլխավոր քարտուղար Ալի Սադր Ադ-Դին Ալ-Բայանունին հերքեց պայթյունի հետ իրենց կապը՝ ընդգծելով, թե «այդ գործին խառնված են հրեաները»: 1997 թ. փետրվարին Սիրիայում լայն քննարկման առարկա դարձավ նախագահ Ասադին Աբդ Ալ-Ֆաթթահ Աբու Ղուդդաhի[320] ընտանիքի

---

316 Rabil G. R., Embattled neighbours: Syria, Israel and Lebanon, Boulder Colorado, USA, 2003, p. 141.

317 Mideast Mirror, London, 28.05.1997.

318 New-York Times, New-York, 10.01.1997.

319 Middle East Contemporary Survey, Vol. 20, 1996, p. 636-637.

320 Աբդ Ալ-Ֆաթթահը ծնվել է 1917 թ. Հալեպում: 1965 թ. սիրիական իշխանությունները նրան արտաքսեցին Սիրիայից, որից հետո նա հաստատվեց

նամակը, որով շնորհակալություն էին հայտնում նախագահին՝ վերջինիս մահվան կապակցությամբ հղած ցավակցության և հանգուցյալի աճյունը Սիրիա տեղափոխելու հարցում ցուցաբերած պատրաստակամության համար[321]: Նշենք, որ Աբու Ղուդդահը մեծ հեղինակություն էր «Մուսուլման եղբայրների» շրջանում: Նա եղել է շարժման գլխավոր քարտուղարը 1976-1982 թթ. և 1986-1990 թթ.: Հատկանշական է, որ Ասադը բարձրաստիճան այրերի մի պատվիրակություն ուղարկեց մահացածի ընտանիքին իր ցավակցությունը փոխանցելու համար: Պատվիրակության կազմում, որը ղեկավարում էին կրոնական հարցերի նախարարն ու Հալեպի նահանգապետը, ընդգրկված էին նաև Հալեպի ոստիկանության պետն ու կրոնական մի շարք գործիչներ: Չնայած Հաֆեզ Ալ-Ասադը Աբու Ղուդդահի աճյունը Հալեպ տեղափոխելու համար առաջարկել էր իր անձնական ինքնաթիռը, սակայն վերջինս թաղվեց Մադինայում՝ Մուհամմադ մարգարեի մզկիթի բակում[322]:

Նախագահ Ասադի այս քայլն ազդարարեց բաասական վարչակարգի և «Մուսուլման եղբայրների» միջև հարաբերությունների բարելավման սկիզբը: Վտարանդիության մեջ գտնվող սիրիական «Մուսուլման եղբայրներին» հաշտության կոչով դիմեց Հալեպում բնակվող շեյխ Ամին Յաքանը, որը 1960-ական թթ. կառույցի գլխավոր քարտուղարի տեղակալն էր: Յաքանի նախաձեռնությունը կապված էր իսլամիստական շարժման ղեկավարներին գործելու որոշակի սահմանափակումներով Սիրիա վերադարձնելու իշխանությունների պատրաստակամության հետ[323]:

---

Սաուդյան Արաբիայում: Այստեղից պայքարել է Սիրիայի բաասական վարչակարգի դեմ: Աստիճանաբար հեռանալով քաղաքական գործունեությունից՝ իրեն նվիրել է գիտական գործունեությանը, սկսել դասավանդել Ջիդդայի համալսարանում՝ այդ ընթացքում հրատարակելով ավելի քան 70 մենագրություն: Աբու Ղուդդահը Սիրիա վերադարձավ 1995 թ., երբ սիրիական իշխանությունները հայտարարեցին, թե թույլ են տալիս որոշ գործիչների վերադառնալ, եթե վերջիններս հրաժարվեն քաղաքական գործունեությամբ զբաղվելուց: Որոշ ժամանակ անց, առողջական խնդիրների պատճառով, Աբու Ղուդդահը վերադարձավ Սաուդյան Արաբիա և 1997 թ. փետրվարի 17-ին, 80 տարեկան հասակում, կնքեց մահկանացուն: Տե՛ս Al-Hayat, 21.02.1997:

321 تشرين, «Թիշրին», Դամասկոս, 20.02.1997.

322 Middle East Contemporary Survey, Vol. 21, 1997 p. 656.

323 الحياة, «ալ-Հայաթ», Լոնդոն, 04.02.1997.

1997 թ. փետրվարին Աբու Ղուդդաիի մահից կարճ ժամանակ անց Սիրիայի «Մուսուլման եղբայրների» խորհուրդը՝ շուրան, մի հայտարարություն տարածեց, որում չնայած խոսվում էր դարի ողբերգության՝ 1982 թ. Համայի փետրվարյան իրադարձությունների մասին, սակայն կոչ էր արվում խուսափել վարչակարգի դեմ գործողություններից: Ըստ այդմ՝ շարժումն ընդունում էր Յաքանի նախաձեռնությունը և պատրաստվում էր քայլեր ձեռնարկել սիրիական միասնությունը վերականգնելու համար[324]:

Սիրիայի տեղեկատվության նախարար Մուհամմադ Սալմանն, անդրադառնալով «եղբայների» վերադարձին և վարչակարգի հետ վերջիններիս հարաբերությունների բարելավման միտումներին, նշեց, որ կազմակերպության որոշ առաջնորդների թույլ էր տրվել վերադառնալ Սիրիա՝ պայմանով, որ քաղաքական և կուսակցական գործունեությամբ չզբաղվեն[325]: »Մուսուլման եղբայրների« համար այս պայմաններն անընդունելի էին: Մյուս կողմից, Սիրիայի անվտանգության ծառայության մարմինները ևս, հասկանալի պատճառներով, խանդավառված չէին վերջիններիս վերադարձով: Ի վերջո, կազմակերպությունը մերժեց իշխանության պահանջները, իսկ գլխավոր քարտուղար Սադր Ադ-Դին Ալ-Բայանունին հայտարարեց, որ երկխոսության համար մթնոլորտը դեռևս նպաստավոր չէ: Նա ասաց, որ իրենք անցյալում իրագործված որոշ գործողությունների համար պատրաստ են պատասխանատվություն կրել, սակայն երբեք չեն համաձայնի նշված պայմաններով Սիրիա վերադառնալ[326]:

«Մուսուլման եղբայրների» և Սիրիայի բաասական վարչակարգի միջև երկխոսությանը խթանող ազդակներից էր նաև այն, որ Սիրիան սկսել էր համագործակցել բազմաթիվ չափավոր իսլամիստական շարժումների հետ՝ աջակցելով նրանց գործունեությանը: Այդ շաժումների և խմբավորումների առաջնորդները ժամանակ առ ժամանակ այցելում էին Դամասկոս: Նրանց թվում էին՝ Թունիսի «Իսլամական նահդա» («Զարթոնք») շարժման ղեկավար Ռաշիդ Ալ-Ղանուշին, Ալժիրի «Համաս» խմբավորման ղեկավար Մաhֆուզ

---

324 Նույն տեղում:
325 Middle East Contemporary Survey, Vol. 21, 1997, p. 657.
326 Mideast Mirror, 06.04.1997.

Նախնաիը, Սուդանի «Իսլամական ազգային շարժում» խմբավորման ղեկավար Հասան Ալ-Թուրաբին, Լիբանանի «Հիզբալլահ» շարժման գլխավոր քարտուղար Հասան Նասրալլահը և հոգևոր առաջնորդ Հուսեյն Ֆադլալլահը, Հորդանանի «Իսլամական պայքարի ճակատից» Իսհակ Ալ-Ֆարհանը և այլք[327]: Վերջինս 1997 թ. սկզբին Դամասկոս այցելության շրջանակներում Բաաս կուսակցության տարածաաշրջանային ղեկավարության գլխավոր քարտուղարի օգնական Աբդալլահ Ալ-Ահմարի հետ ստորագրեց մի փաստաթուղթ, որը սահմանում էր ընդդեմ Իսրայելի կողմերի համագործակցության բնագավառները[328]:

Նշենք, որ 1990-ականների վերջին Սիրիայի տնտեսությունը որոշակի առաջընթաց էր ապրում, հանգամանք, որն օգնում էր վարչակարգին երկրում պահպանել քաղաքական կայունությունը: Տնտեսական կայունությանն անդրադառնում էին սիրիական և արտասահմանյան աղբյուրները[329]: Համախառն ներքին արդյունքը 1996 թ. աճել էր 5%-ով, համեմատած 1995 թ. 3,6% ցուցանիշի: Օտարերկրյա աղբյուրների համաձայն՝ գնաճը երկրում կազմում էր 20%, չնայած սիրիական պետական աղբյուրները զգալիորեն ցածր տվյալներ էին հրապարակում (մոտ 7,6%): 1990-ական թթ. սկսած Սիրիան օրական արդյունահանում էր շուրջ 600 հազար բարել նավթ, իսկ արդեն 1996 թ.-ին՝ 610 հազար բարել, 1997 թ.-ին՝ 620 հազար բարել[330]: Նավթի արդյունահանումից ստացված եկամուտները տարեկան կազմում էին 2,5 միլիարդ ամերիկյան դոլար: Սիրիական նավթային բնագավառի պաշտոնյաները հայտարարում էին, թե լավ հնարավորություններ կան լրացուցիչ նավթային պաշարների հայտնաբերման ուղղությամբ, որը կբավարարեր երկրին հետագա տասնամյակների ընթացքում սեփական պահանջները հոգալու համար: Ավելին, Սիրիայի նավթային գործերը կարգավորող նախարարը հաստատում էր, որ մի շարք արևմտյան կազմակերպությունների հետ կնքվել էին երկրի տարբեր շրջաններում նավթի

327 Zisser E., Hafiz al-Asad Discovers Islam, Middle East Quarterly,Vol. 6, N 1, 1999, p. 52.

328 البعث, «ալ-Բաաս», Դամասկոս, 08.01.1997.

329 الحياة, «ալ-Հայաթ», Լոնդոն, 04.02.1997.

330 Country Report, Syria, N. 4, London, 1997, p. 7.

հետախուզման աշխատանքներն ընդլայնելու բազմաթիվ պայմանագրեր: Վերջինս նշում էր, որ նավթի հետախուզումն իրականացվում էր պոտենցիալ նավթային պաշարները հաշվարկած տարածքների միայն 36%-ի վրա[331]:

Սիրիայի տնտեսության դժվարություններն ուղղակիորեն կապվում էին նաև երկրի բնակչության աճի գնահատված տեմպերի հետ: Տարբեր տվյալների համաձայն՝ Սիրիայի բնակչությունը 1997 թ. 16 միլիոն էր, ներառյալ Լիբանանում և Պարսից ծոցի երկրներում աշխատող շուրջ մեկ միլիոն սիրիացիները: Երկրում պահպանվում էին բնական աճի տարեկան 3,3%-3,4% տեմպերը: Ժողովրդական ժողովի շատուշատ պատգամավորներ կառավարությանը մեղադրում էին ժողովրդագրական ռազմավարություն չունենալու մեջ[332]:

Սիրիայի բնակչության արագ աճը բացահայտ խոչընդոտներ էր առաջացնում երկրի ենթակառուցվածքների և հանրային ծառայությունների մատուցման բնագավառում: Էլեկտրաէներգիայի ապահովման ուղղությամբ բազմաթիվ նոր դժվարություններ էին առաջացել: Խոսվում էր նաև ջրային պաշարների աճող պահանջարկի մասին: 1997 թ. աշնանը Դամասկոսում գիշերային ժամերին ջուրը քիչ չափաբաժիններով էր հասցվում քաղաքացիներին, քանի որ դրա պաշարները սպառվում էին[333]:

Ժողովրդագրական հարաճուն տեմպերի հաջորդ բացասական ազդեցությունը երկրում գործազրկության աճն էր: Պաշտոնական տվյալների համաձայն՝ գործազրկության աստիճանը չէր անցնում 10%-ը, բայց արտասահմանյան աղբյուրները նշում էին, որ այն 15%-ից բարձր է: Յուրաքանչյուր տարի 200 հազար մարդ համալրում էր գործազուրկների բանակը: 1991 թ. երկրում ընդունվել էր ներդրումների խրախուսման մասին օրենք, որի արդյունքում ստեղծվել էր 100 հազար աշխատատեղ: Անկանխատեսելի քաղաքական և տնտեսական զարգացումները Պարսից ծոցի երկրներում և Լիբանանում կարող էին սաստկացնել գործազրկությունը Սիրիայում:

[331] تشرين, «Թիշրին», Դամասկոս, 13.07.1997:
[332] الثورة , «աս-Սաուրա», Դամասկոս, 07.07.1997:
[333] تشرين, «Թիշրին», Դամասկոս, 09.09.1997:

Շուրջ 250 հազար սիրիացիներ աշխատում էին Պարսից ծոցի երկրներում, իսկ 500 հազարից 1 միլիոնը՝ Լիբանանում[334]:

Սիրիայում լայն քննարկման առարկա էր դարձել ժամանակակից բանկային համակարգի հաստատումը: Առևտրային բանկերի բացակայության պայմաններում Սիրիայում գործում էին մասնավոր բանկային ծառայություններ մատուցողներ, որոնք քաղաքացիներից բարձր տոկոսադրույքներով դրամական ավանդներ էին ընդունում: 1997 թ. ընթացքում մի խումբ մասնավոր բանկիրներ ձերբակալվեցին, որոնց թվում էին Հալեպի Կալաս և Դամասկոսի Փաշայան եղբայրները: Մինչև տարեվերջ երկրի տնտեսությանը վնաս հասցնելու համար ձերբակալվեցին դրամափոխանակման վեց կազմակերպությունների սեփականատերեր՝ տնտեսական անվտանգության դատարանի կողմից դատապարտվելով կարճատև բանտարկության[335]:

1997թ. սիրիական մամուլում լայնածավալ քննարկումներ սկսվեցին հակակոռուպցիոն պայքարի անարդյունավետության մասին: Հակակոռուպցիոն պայքարն, ինչպես վերևում նշվել էր, ղեկավարում էր Հաֆեզ Ալ-Ասադի որդին՝ Բաշարը: Թերթերը քողազերծ էին անում կառավարությունում առկա կոռուպցիայի բազմաթիվ դեպքեր և բացթողումներ: Այս համատեքստում «Թիշրին» օրաթերթը բացահայտեց Նավթային հարցերի նախարարության ներքո գործող կազմակերպություններում առկա խնդիրները: Նավթային հարցերի նախարարը թերթի խմբագրից պահանջեց ներողություն խնդրել՝ տպագրված հոդվածը համարելով զրպարտություն: Սակայն վերջինս մերժեց կատարել այդ պահանջը՝ ընդգծելով նախարարության ապացույցների անբավարար լինելու հանգամանքը[336]:

Հետաքրքրություն են ներկայացնում նաև Սիրիայի արտաքին պարտքին առնչվող խնդիրները: Մասնավորապես Ռուսաստանին Սիրիայի ունեցած 1,2 մլրդ. ամերիկյան դոլար պարտքի պատճառով Սիրիայի և ՌԴ հարաբերությունները սառն էին: Չէին գործում երկկողմ ռազմական պայմանագրերը: Վերջապես կողմերն ընդհանուր հայտարարի եկան պարտքի մարման հետ կապված: Ռուս-

---

[334] البعث, «ալ-Բաաս», Դամասկոս, 07.10.1997:
[335] الثورة , «աս-Սաուրա», Դամասկոս, 15.11.1997:
[336] تشرين, «Թիշրին», Դամասկոս, 14.05.1997:

սիրիական հարաբերությունների բարելավման ապացույցը կողմերի միջև առևտրաշրջանառության աճն էր, որը հասել էր 250 մլն. ամերիկյան դոլարի: Սիրիան ու ՌԴ-ն զենքի գնման պայմանագիր էին կնքել: Պայմանագիրը նախատեսում էր «ՄիԳ-29» ինքնաթիռների, հակաօդային պաշտպանության մի քանի հարյուր միլիոն ամերիկյան դոլարի հասնող սարքավորումների և տանկերի վաճառք[337]:

Բաաս կուսակցության տարածաշրջանային ղեկավարությունը, համաձայն Սիրիայի սահմանադրության, 1999 թ. հունվարի 6-ին երաշխավորեց Ժողովրդական ժողովին առաջադրել Հաֆեզ Ալ-Ասադի թեկնածությունը՝ նախագահի պաշտոնում 5-րդ անգամ յոթնամյա ժամկետով ընտրվելու համար: Հունվարի 14-ին Ժողովրդական ժողովը հավանության արժանացրեց Հաֆեզ Ալ-Ասադի թեկնածության առաջադրումը և այդ նպատակով որոշեց փետրվարի 8-ին անցկացնել հանրաքվե: Հանրաքվեին նախորդեցին Ասադի աջակցության օգտին Սիրիայի տարբեր քաղաքներում կազմակերպված զանգվածային ցույցերը: Դրանցից ամենամարդաշատը տեղի ունեցավ Դամասկոսում, հունվարի 25-ին, որին, պաշտոնական տեղեկության համաձայն, մասնակցեց շուրջ երեք միլիոն մարդ[338]: Սիրիական մամուլը նախագահին հասարակության աջակցության ապահովումը վերագրեց Բաշարին: Հորդանանի թագավոր Հուսեյնի մահվան պատճառով հանրաքվեն երկու օրով հետաձգվեց և տեղի ունեցավ փետրվարի 10-ին: Համաձայն ներքին գործերի նախարարության տրամադրած տվյալների՝ քվեարկությանը մասնակցեց 9,1 մլն. ընտրելու իրավունք ունեցող քաղաքացիների 98,5%-ը: Հաֆեզ Ալ-Ասադը հավաքեց ձայների 99,9%-ը: Դեմ էին քվեարկել 219 քաղաքացի, իսկ 917 քվե համարվեց անվավեր:

Հաֆեզ Ալ-Ասադը, 5-րդ անգամ ստանձնելով Սիրիայի նախագահի պաշտոնը, համընդհանուր համաներում հայտարարեց, չնայած մինչև հուլիսի 12-ը համաներման հրամանագիրը չհրապարակվեց[339]: Համաներումն ընդգրկում էր շուրջ 250 հազար բրեական գործ, որոնք վերաբերում էին տնտեսական հանցագործություններին,

---

337 تشرين, «Թիշրին», Դամասկոս, 29.03.1997:
338 الثورة , «աս-Սաուրա», Դամասկոս, 26.01.1999:
339 الثورة , «աս-Սաուրա», Դամասկոս, 13.07.1999:

բանակային դասալքություններին, ծանր քրեական հանցագործություններին և այլն: Համաներման արդյունքում բանտերից ազատվեցին նաև դեռևս 1980-ական թթ. սկզբից անազատության մեջ գտնվող «Մուսուլման եղբայրների» բազմաթիվ անդամներ[340]:

Ասադի երդմնակալության արարողությունը տեղի ունեցավ մարտի 11-ին: Ի տարբերություն նախորդ արարողությունների, նախագահի երդման ճառի գրավոր տարբերակն ընթերցվեց պետական հեռուստատեսությամբ և ռադիոյով՝ առանց նշվելու, որ նախագահն այն Ժողովրդական ժողովին անձամբ չէր ներկայացրել: Երդմնաճառում ընդգծվում էին վարչակարգի ձեռքբերումները տնտեսության, ծառայությունների մատուցման, կրթության և մշակույթի, գիտության և արվեստի ոլորտներում: Նախագահն առանձնացրեց մի շարք բնագավառներ (ներդրումների, բանկային և այլն) արդիականացնելու և բարեփոխելու հարցը: Նա ընդգծեց նաև Սիրիայի առաջ ծառացած մարտահրավերները և սիրիացիներին կոչ արեց միասին դիմակայել դրանք: Ասադի ելույթում անդրադարձ կար երկրին սպառնացող ներքին և արտաքին վտանգներին, որոնք ի հայտ էին եկել գլոբալիզացիայի հետևանքով, ինչն Ասադը համարում էր Սիրիայի անկախությանը, նույնիսկ գոյությանը սպառնացող վտանգ[341]: Նախագահի խոսքում ազգային միասնության ապահովումը միջազգային նոր իրողությունների համատեքստում համարվում էր կարևորագույն հրամայական: Հետաքրքրություն է ներկայացնում այն փաստը, որ Ասադը խուսափեց ելույթ ունենալ Ժողովրդական ժողովում ըստ ամենայնի առողջական վատ վիճակի պատճառով[342]:

1999 թ. նախագահի առողջության վատթարացման մասին բազմաթիվ տեղեկություններ էին շրջանառվում, ինչը պաշտոնապես չէր մեկնաբանվում: Ասադի աշխատանքային գրաֆիկն այդ շրջանում նվազագույնի էր հասցված: Նա սահմանափակ հանդիպումներ էր ունենում: Հիշարժան է հուլիսին Մոսկվա կատարած նրա պաշտոնական այցը: Ամեն դեպքում, առողջական հարցերը չէին ազդում մշակված ուղիով երկրի կառավարման վրա: Փոխարենը, իշխանու-

---

340 النهار, «ան-Նահար», Փարիզ, 14.07.1999., MECS, vol. 23, 1999, p. 551.

341 http://www.presidentassad.org/speeches/1999/11-3-1999.HTML#d2

342 Middle East Contemporary Survey, Vol 23, 1999, p. 551

թյան հաջորդականության խնդրի վրա մեծ ուշադրություն կար և Ասադը շարունակում էր ջանքերը Բաշարի քաղաքական ու հասարակական դիրքերն ամրապնդելու ուղղությամբ: 1999 թ. հունիսին թոշակի ուղարկվեց նախագահ Ասադի հետ սերտ կապեր ունեցող ռազմաօդային ուժերի հրամանատար Մուհամմադ Ալ-Խուլին: Նա անգնահատելի դեր էր ունեցել վարչակարգի անվտանգության պահպանման և նույնիսկ գոյության ապահովման գործում: 1970-1980-ական թթ. Մուհամմադ Ալ-Խուլին ղեկավարել էր ռազմաօդային անվտանգության վարչությունը, 1987 թ. նշանակվել էր ռազմաօդային ուժերի հրամանատարի տեղակալի պաշտոնին, իսկ արդեն 1994 թ.-ից ռազմաօդային ուժերի հրամանատարն էր[343]: Հաջորդ գործիչը, որն ուղարկվեց թոշակի, ընդհանուր անվտանգության վարչության պետի տեղակալ Մուհամմադ Նասիֆն էր, որը բավական մեծ ազդեցություն ուներ Սիրիայում: Վարչության պետի պաշտոնը, որը հիմնականում խորհրդանշական բնույթ ուներ, սուննի Բաշիր Ան-Նաջջարից անցավ խամայիլական Ալի Խուրիին: Մուհամմադ Ալ-Խուլին և Մուհամմադ Նասիֆը պաշտոնազրկվեցին, որովհետև, համաձայն զինվորական ծառայության մասին օրենքի, արդեն հասել էին թոշակի անցնելու տարիքին՝ 67: Սակայն նրանց պաշտոնազրկումների շարժառիթները նաև քաղաքական էին, քանի որ խնդիր էր դրված զինվորական և անվտանգության համակարգի երկարակյաց ղեկավարությանը փոխարինել նոր երիտասարդ սպայական անձնակազմով: 1999 թ. սկզբին փոփոխություն կատարելու առաջարկ ներկայացվեց զինվորական ծառայության մասին օրենքում, որպեսզի թոշակի գնալու տարիքի վերին շեմը 67-ից դարձվի 70: Նոր փոփոխությունը թույլ տվեց գեներալ Ալի Ասլանին, ում 67 տարին արդեն լրացել էր, փոխարինել գլխավոր շտաբի պետ Հիքմեթ Շիհաբիին: Օրենքի փոփոխության համաձայն՝ իր պաշտոնին մնաց նաև պաշտպանության նախարար Մուստաֆա Տլասը[344]:

Ռազմական բարձրագույն հրամանատարական պաշտոններում նշանակվում էին կա՛մ Ասադի ընտանիքի անդամներ, ընտանիքի հետ սերտ կապերով կապված գործիչներ, կա՛մ՝ Բաշարի

---

343 Middle East Contemporary Survey, Vol. 18, 1994, p. 617.
344 الحياة, «ալ-Հայաթ», Լոնդոն, 29.01.1999.

ընկերներն ու կողմնակիցները: Նրանց մեջ էին՝ Բաշարի կրտսեր եղբայր Մահիրը, որը Բաշարի հետ ծառայում էր էլիտար համարվող հանրապետական գվարդիայում, պաշտպանության նախարարի որդին՝ Մանաֆ Տլասը, որն աշխատում էր որպես Բաշարի օգնական, նախագահ Ասադի փեսան՝ Ասիֆ Շաուկաթը, որը կարևոր պաշտոն զբաղեցրեց ռազմական անվտանգության համակարգում և Բաշարի ընկերներից Բահջաթ Սուլեյմանը, որն առաջատար պաշտոն զբաղեցրեց ընդհանուր հետախուզության վարչությունում[345]:

1999 թ. Բաշարը շարունակում էր զբաղվել Լիբանանի խնդիրներով՝ միևնույն ժամանակ, ավելի ակտիվ գործունեություն ծավալելով Սիրիայի արտաքին հարաբերությունների մյուս ուղղություններում: Նա հետզհետե կարողանում էր իր պատասխանատվության տակ վերցնել Սիրիայի հարաբերությունները Հորդանանի, Իրանի, լիբանանյան «Հիզբալլահի»[346] հետ, ինչպես նաև Իսրայելի հետ՝ խաղաղության բանակցությունների շրջանակներում: Արտաքին հարաբերություններում Բաշարի աճող ներգրավվածության մասին էր վկայում նրա այցելությունները մի քանի արաբական երկրներ: Փետրվարին և նոյեմբերին նա այցելեց Հորդանան, հուլիսին՝ Մեքքա կատարած ուխտագնացության շրջանակներում եղավ Սաուդյան Արաբիայում, օգոստոսին մեկնեց Բահրեյն, այնուհետև Քուվեյթ և վերջապես նոյեմբերին՝ Արաբական Միացյալ Էմիրություններ: Հուլիսին Բաշարն առաջին անգամ պաշտոնական այցով մեկնեց Ֆրանսիա՝ հանդիպելով Ֆրանսիայի նախագահ Ժակ Շիրակին[347]: Արաբական մամուլը հատուկ ընդգծված ձևով ներկայացնում էր Բաշարի հանդիպումներն իր սերնդի արաբ առաջնորդների՝ հատկապես Հորդանանի թագավոր Աբդալլահ երկրորդի և Պարսից ծոցի արաբական միապետների ժառանգների հետ: Հորդանանի թագավոր Աբդալլահ երկրորդը 1999 թ. ապրիլին Դամասկոսից հետ վերադառնալով նշել էր, որ իր և Բաշարի միջև շատ ընդհանրություն-

[345]Middle East Contemporary Survey, Vol. 23, 1999, p. 554.

[346]Gambill G., Hezbollah and the Political Ecology of Postwar Lebanon, Mideast Monitor, Vol. 1, N 3, September-October, 2006.

[347]Middle East Contemporary Survey, նույն տեղում:

ներ կան, որ իրենք նոր տեխնոլոգիաների դարաշրջանի սերունդ են[348]:

Իր հերթին, սիրիական վարչակարգը Բաշարին ներկայացնում էր որպես առաջադեմ և եռանդուն գործիչ՝ ընդգծելով սիրիական հասարակությունը ժամանակակից դարձնելուն միտված նրա գործադրած ջանքերը: Մեծ ուշադրություն էր հրավիրվում Բաշարի ղեկավարած հակակոռուպցիոն գործընթացին: Սիրիական մամուլը տեղեկություններ էր հաղորդում կառավարության առընթեր կառույցներում և նախարարություններում առկա չքողարկված կոռուպցիայի մասին: Այդ թեմային նվիրված Ժողովրդական ժողովը հատուկ նիստ գումարեց[349]: 1998 թ. կոռուպցիայի մեջ ներքաշված լինելու պատճառով պաշտոնազրկվեց ընդհանուր հետախուզության վարչության պետ Բաշիր Ալ-Նաջջարը, որից հետո դատապարտվեց 12 տարվա ազատազրկման: Ավելին, 1999 թ. ընթացքում կոռուպցիայի պատճառով պաշտոններից ազատվեցին մի շարք նահանգային ղեկավարներ: Օգոստոսին Դամասկոսի քաղաքապետ Մուհամմադ Ջուհայր Ալ- Թաղլիբիին փոխարինեց Նաբիլ Մասրին, իսկ Դամասկոսի նահանգապետ նշանակվեց Սուբհի Համիդ իբն Մուհամմադը՝ փոխարինելով Մուհամմադ Նաջիբ Ալ-Սիդ Ահմադին[350]: Ավելի վաղ, Դարաայի նահանգապետ էր նշանակվել Մուհամմադ Սաֆի Ադ-Դինը այն բանից հետո, երբ նրա նախորդը կրկին կոռուպցիայի պատճառով լքել էր պաշտոնը[351]: Նորանշանակ նահանգապետները նախորդների նման իրենց նահանգներում ստանձնում էին Բաաս կուսակցության տեղական մասնաճյուղի ղեկավարությունը:

Բաշարի ժամանակակից կերպարը փառաբանվում էր մամուլով, ինչպես նաև ավտոմեքենաների վրա և փողոցներում փակցված պաստառներով, որոնցից մեկի վրա, օրինակ, գրված էր. «Բասիլը մեր խորհրդանիշն է, իսկ Բաշարը՝ մեր հույսը»: Չափազանց մեծ հրապարակայնություն հաղորդվեց սեպտեմբերին Բաշար Ալ-Ասա-

---

348Zisser E., Heir Apparent, The New Republic, 11 October, 1999.

349 البعث, «ալ-Բաաս», Դամասկոս, 26.04.1999:

350 Middle East Contemporary Survey, Vol. 23, 1999, p. 555.

351 البعث, «ալ-Բաաս», Դամասկոս, 05.10.1999:

դի՝ Հալեպ այցին, որի ընթացքում վերջինս քայլեց քաղաքի գլխավոր փողոցներով և սրճարաններից մեկում ազատորեն զրույցի բռնվեց անցորդների հետ[352]:

Հարցազրույց տալով արաբական «ալ-Քիֆահ ալ-Արաբի» շաբաթաթերթին՝ Բաշար Ալ-Ասադն ասաց. «Ես պատրաստ եմ Սիրիայում պատասխանատու պաշտոն զբաղեցնել…չնայած ոչ մի պաշտոնական դիրքի չեմ ձգտում: Եթե կուսակցական ղեկավարությունը որոշի ինձ ինչ-որ պաշտոն վստահել, ապա պատրաստ եմ ստանձնել այն»[353]:

1999 թ. նոյեմբերին Բաշար Ալ-Ասադն այցելեց Արաբական Միացյալ Էմիրություններ՝ հանդիպելով տեղի սիրիական համայնքին: Ելույթ ունենալով համայնքի հետ հանդիպման ընթացքում՝ նա նշեց, որ Սիրիան տնտեսական և վարչական լուրջ փոփոխությունների է ենթարկվում: Բարեփոխումների արագ և համարժակ իրագործումը թույլ կտա Սիրիային արագորեն զարգանալ և այդպես մուտք գործել երրորդ հազարամյակ[354]:

Հասարակության շրջանում Բաշարի, որպես նորարարի, դիրքերը գնալով ամրապնդվում էին: Նրա և հորեղբայր Ռիֆաթի միջև հարաբերությունները շարունակում էին լարված մնալ: Սիրիայի փոխնախագահի պաշտոնից Ռիֆաթը պաշտոնապես հեռացվեց 1998 թ. փետրվարին, որից հետո վերջնականորեն հաստատվեց Եվրոպայում: Չնայած Հաֆեզ Ալ-Ասադի ձեռնարկված միջոցառումներին՝ Ռիֆաթը Լոնդոնում շարունակում էր իր վերահսկողության տակ պահել մի ցանց, որի մեջ էին մտնում «Էյ Էն Էն» արբանյակային հեռուստատեսությունը և «ալ-Շաաբ ալ-Արաբի» շաբաթաթերթը, որոնք, ինչպես արդեն նշել ենք, ղեկավարում էր նրա որդին՝ Սումարը: Ռիֆաթը հույս ուներ պահպանել ազդեցությունը Սիրիայի քաղաքական բեմահարթակում և աջակցություն ստանալ երկրի ներսում: Նա շարունակում էր քաղաքական շփումներ ունենալ արաբ տարբեր գործիչների հետ: 1999 թ. մարտին Ռիֆաթն այցելեց Սաուդյան Արաբիա, իսկ հուլիսին մեկնեց Մարոկկո՝ մասնակցելու թագա-

[352] تشرين, «Թիշրին», Դամասկոս, 06.10.1999:
[353] الكفاح العربي, «ալ-Քիֆահ ալ-Արաբի», Բեյրութ, 03.02.1999:
[354] الحياة,, «ալ-Հայաթ», Լոնդոն, 14.11.1999:

վոր Հասանի թաղման արարողությանը, որի հետ շատ ջերմ հարաբերությունների մեջ էր: Մարոկկոյի թագավորի թաղման արարողության ժամանակ Ռիֆաթը հանդիպեց Հաֆեզ Ալ-Ասադի հակառակորդ ՊԱԿ-ի ղեկավար Յասիր Արաֆաթին[355]: Ռիֆաթի գործունեությունը որոշակի անհանգստություն էր առաջացնում նախագահ Ասադի մոտ՝ Բաշարի նախագահ դառնալու ճանապարհին: Այդ իսկ պատճառով որոշակի քայլեր ձեռնարկվեցին ի պաշտպանություն Բաշարի դիրքերի ամրապնդման: Բաշարի PR-ը շարունակվում էր նույն տեմպով՝ ի ցույց դնելով, որ չնայած անփորձությանն ու երիտասարդ տարիքին, նա պատրաստ էր ու կարող էր փոխարինել հորը: Հոկտեմբերին Սիրիայի իրավապահ մարմինների և անվտանգության աշխատողների կողմից ձերբակալվեցին Ռիֆաթի մի քանի աջակիցներ, որից հետո հարձակումներ եղան Լաթաքիայում Ռիֆաթի կառուցած նավահանգստի վրա: Այս գործողությունների արդյունքում սպանվեցին Ռիֆաթի բազմաթիվ կողմնակիցներ և անվտանգության աշխատակիցներ: Սիրիայի տեղեկատվության նախարար Մուհամմադ Սալմանը բացատրում էր, որ Ռիֆաթի կառուցած շենքերի քանդումն օրինական էր, քանի որ դատարանը թույլտվության վճիռ էր կայացրել: Հակառիֆաթական այս գործողություններից հետո Ռիֆաթին պատկանող լրատվական միջոցները սկսեցին հարձակումներ գործել վարչակարգի վրա: «ալ-Շաաբ ալ-Արաբի» շաբաթաթերթում Սումար Ալ-Ասադը գրում էր. «Եթե բռնապետը շարունակի նույն ճանապարհով գնալ, ժողովուրդը կապստամբի նրա դեմ, այդ պայքարից կստեղծվի օրինական մի իշխանություն, որն էլ կազդարարի բռնապետության վերջը»: Մեկ այլ հոդվածում նա նշում էր. «Բռնապետի կազմակերպած հանրաքվեները, ինչպես նաև կուսակցություններն ու ճակատները, որոնց նա թույլ էր տալիս գործել, նպատակ ունեին քողարկելու հայրենիքի նկատմամբ նրա գործած քրեական հանցագործությունները»[356]:

Վարչակարգը շարունակում էր ջանքեր գործադրել իսլամական շրջանակների հետ պայքարում հասարակության մեջ աջակցություն գտնել: Այդ համատեքստում հուլիսին Բաշարի կատարած

[355] Middle East Contemporary Survey, Vol. 23, 1999, p. 555
[356] الشعب العربي, «աշ-Շաաբ ալ-Արաբի», Փարիզ, 09.11.1999:

այցը Սաուդյան Արաբիա լայնորեն լուսաբանվեց: Իշխանությունները հետագա միջոցներ էին կիրառում ալավիական համայնքի օրինականությունն ամրապնդելու համար: Ալավի հայտնի կրոնական գործիչներից շեյխ Հասան Համդանի այցելությունը Լիբանան բարձր մակարդակով լուսաբանվեց: Հասան Համդանը Ասադների հայրենի գյուղի՝ Կարդահայի, «Նախսա» մզկիթի իմամն էր: Այս մզկիթը, որն անվանվել էր Հաֆեզ Ալ-Ասադի հանգուցյալ մոր՝ Նախսայի հիշատակին, Սիրիայի հյուսիս-արևմտյան ալավիաբնակ շրջանում կառուցված առաջին մզկիթներից էր[357]:

Սիրիական իշխանությունները վերջին տարիներին հաջողել էին ստանալ մի շարք սուննի կղերականների աջակցությունը: Նրանց թվում էր հայտնի հոգևորական գործիչ Մուհամմադ Սաիդ Ալ-Բուտին: Նախագահ Ասադի հովանու ներքո Դամասկոսում ծաղկում էին մզկիթները, հավատացյալների թվաքանակը շատանում էր: Սիրիական մամուլն առաջին պլան էր մղել նախագահ Հաֆեզ Ալ-Ասադին աջակցության կոչեր անող մզկիթների իմամներին, որոնք սկսեցին առաջին անգամ հիշատակել Բաշարին՝ որպես Հաֆեզի հետևորդ[358]:

Սակայն վարչակարգը դեռևս չէր կարողանում բարելավել հարաբերությունները Սիրիայի «Մուսուլման եղբայրների» ղեկավարների հետ: Նրանք դեռևս գտնվում էին վտարանդիության մեջ՝ չնայած կողմերի միջև շարունակական բանակցություններին[359]: Համաձայն Սիրիայի «Մուսուլման եղբայրների» առաջնորդ Սադր Ադ-Դին Ալ-Բայանունիի՝ վարչակարգը «եղբայրությանը» վերաբերող բոլորը հարցերը դիտարկում է անվտանգության նկատառումներից ելնելով: Շարժման ղեկավարների վերադառնալու հարցում սիրիական իշխանությունները զիջող էին միայն այն դեպքում, եթե նրանք հրաժարվեին Սիրիայում քաղաքական գործունեություն ծավալելուց: «Եղբայրությունն» էլ իր հերթին շարունակում էր քննադատել վարչակարգին, բայց արդեն ավելի մեղմ ու չափավոր երանգներով:

Դեկտեմբերի 16-ին անհայտ անձի կողմից սպանվեց «Մու-

[357] السفير, «աս-Սաֆիր», Դամասկոս, 21.10.1999:
[358] البعث, «ալ-Բաաս», Դամասկոս, 27.03.1999:
[359] Middle East Contemporary Survey, Vol. 22, 1998, p. 571.

սուլման եղբայրների» համակիր, հայտնի հոգևորական հալեպցի Մուհամմադ Ամին Յաքանը: Այդ սպանությունը, ըստ ամենայնի, կապ ուներ Յաքանի ընտանիքի և Հալեպի շրջակա գյուղերից մեկի բնակիչների միջև ծագած վեճի հետ: Սիրիական իշխանությունները խոստացան, որ իրավապահ մարմինները կանեն ամեն ինչ՝ հայտնաբերելու սպանության կազմակերպիչներին[360]: «Մուսուլման եղբայրների» մամլո խոսնակները, չնայած խուսափում էին Յաքանի սպանության մեջ ուղղակիորեն մեղադրել իշխանություններին, սակայն կասկածամտությամբ էին վերաբերվում պաշտոնական այն վարկածին, թե իբր վերջինս մահացել է տարածքային մի վեճի պատճառով և պահանջում էին բացահայտել դեպքի մանրամասները[361]: Յաքանը 1960-ական թթ. «Մուսուլման եղբայրների» ղեկավարներից էր, սակայն երբ վերջիններս 1970-ական թթ. կեսից սկսեցին բռնությունների գնալ բաասական վարչակարգի դեմ, նա դադարեցրեց իր անդամակցությունը կառույցին և սկսեց աջակցել նախագահ Հաֆեզ Ալ-Ասադին՝ ստանալով նրա հովանավորությունը: 1998 թ. Յաքանը միջնորդության մի անհաջող փորձ կատարեց սիրիական իշխանությունների և «Մուսուլման եղբայրների»՝ Հորդանանում գտնվող ղեկավարության միջև[362]:

1999 թ. դեկտեմբերին «եղբայրությունը» մի թռուցիկ շրջանառեց Սիրիայում, որը խիստ քննադատության էր ենթարկում բաասական վարչակարգին՝ Իսրայելի հետ խաղաղ բանակցություններ սկսելու համար: Հորդանանում գտնվող «եղբայրության» խոսնակները հայտնում էին, թե թռուցիկի տարածմանը զուգահեռ Սիրիայի անվտանգության մարմիններն սկսեցին ձերբակալել կրոնաքաղաքական շարժման հետ կապեր ունեցող հոգևորականներին[363]:

1999 թ. ապրիլի 21-22-ին Սիրիայում անցկացվեցին տարածքային կառավարման ընտրություններ: Ընտրվելու էին 14 նահանգային ժողովների, 96 քաղաքային խորհուրդների, 231 համայնքային խորհուրդների և 181 գյուղական խորհուրդների անդամներ: Շուրջ

360 الحياة, «ալ-Հայաթ», Լոնդոն, 23.12.1999:
361 Middle East Contemporary Survey, Vol. 23, 1999, p. 557.
362 Middle East Contemporary Survey, Vol. 22, 1998, p. 571.
363 الحياة,, «ալ-Հայաթ», Լոնդոն, նույն տեղում:

29773 թեկնածուներ պայքարում էին խորհուրդների 7759 տեղերի համար: Պաշտոնական տվյալների համաձայն՝ ընտրություններին մասնակցեց գրեթե 4,5 մլն. մարդ, որոնք կազմում էի 6,8 միլիոնանոց ընտրազանգվածի 66%-ը: Ընտրություններում հաղթած թեկնածուներից 5497-ը ԱԱՃ, իսկ մնացածները՝ հիմնականում Բաաս կուսակցության անդամներն էին: 2262-ը անկախ թեկնածուներ էին[364]:

Բաշար ալ-Ասադի եռանդուն գործունեությունը Սիրիայի քաղաքական կյանքում նպաստում էր նաև երկրում նորագույն տեխնոլոգիաների ներդրմանը: 1998 թ. Հաֆեզ Ալ-Ասադը հրաման արձակեց ստեղծել համակարգչային ամբիոններ և համալսարանի ուսումնական ծրագրերում ներառել համակարգչային դասընթացներ: 1999 թ. համալսարանները համակարգիչներով վերազինելու համար ներդրվեց շուրջ 650 հազար ամերիկյան դոլար: Դպրոցական նոր ուսումնական տարում միջնակարգ բոլոր դպրոցները ապահովված էին համակարգիչներով[365]: Սիրիայում ինտերնետ օգտագործողների թիվը հասնում էր շուրջ 2500-ի: Այն օգտագործվում էր հիմնականում նախարարությունների, համալսարանների և հասարակական կազմակերպությունների կողմից: Հաղորդակցության համար պատասխանատու իշխանական շրջանակները վստահեցնում էին, որ արդեն 2000 թ. ինտերնետից օգտվողների թվաքանակը երկրում կհասնի 4000-ի: Աշխատանքներ էին տարվում նաև երկրում բջջային կապի ապահովման ուղղությամբ, հիմնականում Հալեպի և Դամասկոսի շրջակայքում 50-ից 70 հազար բաժանորդների ծառայություններ մատուցելու նպատակով[366]:

Նախագահ Ասադը մահացավ 2000 թ. հունիսի 10-ին: Նրա մահն այնքան էլ անակնկալ չէր: 2000 թ. մարտին Իսրայելում տպագրված ԱՄՆ-ի Կենտրոնական հետախուզական վարչության հաղորդագրություններից մեկում հաստատվում էր, որ Ասադը տառապում էր դեմենտիա կոչվող հիվանդությամբ[367]: Ինչպես հաստատում էր Մուստաֆա Տլասը՝ նախագահ Ասադն ինքը գիտեր, որ

[364] Մանրամասն տե՛ս Բաաս կուսակցության պաշտոնաթերթը՝ البعث «ալ-Բաաս», Դամասկոս, 26.04.1999:
[365] البعث, «ալ-Բաաս», Դամասկոս, 02.03.1999:
[366] الثورة , «աս-Սաուրա», Դամասկոս, 24.07.1999:
[367] Ha'aretz, 06.03.2000.

մահը մոտ է, և դա ստիպում էր նրան տարվա առաջին կեսին ավելի շատ ջանքեր գործադրել՝ ամրապնդելու որդու դիրքերը: Երկար տարիներ նախագահ Ասադի կողմից իշխանության ներսում հետևողականորեն իրականացվում էր սերնդափոխության մի գործընթաց, որը շարունակվեց նաև 2000 թ. առաջին կեսին: Ամենակարևոր փոփոխությունը տեղի ունեցավ նույն թվականի փետրվար ամսին, երբ վաքսունվեց տարեկան հասակում թոշակի ուղարկվեց զինվորական հետախուզության ղեկավար Ալի Դուբան, որը 1974 թ-ից այդ պաշտոնին էր և համարվում էր վարչակարգի անվտանգության համար պատասխանատու հիմնական դեմքերից մեկը: Այդ պաշտոնին նրան փոխարինեց իր տեղակալը՝ Հասան Խալիլը: Սակայն, համաձայն մամուլի հաղորդագրությունների՝ երկրի անվտանգության բնագավառի ամենաազդեցիկ գործիչը Ասեֆ Շաուկաթն էր[368]:

Բաշարի դիրքերի ամրապնդմանն էր ուղղված նաև վարչապետ Մահմուդ Ալ-Զուբիի կառավարության արձակումը և վարչապետի պաշտոնանկությունը: Զուբիին այդ պաշտոնում փոխարինեց Մուստաֆա Միրոն, որը մինչ այդ հաջողությամբ ղեկավարել էր Դարաայի, Հասաքեի և Հալեպի երեք նահանգները: Մուստաֆա Միրոյի կազմած նոր կառավարության կազմում ընդգրկվեցին 35 նախարարներ, որոնցից 22-ը՝ նոր նշանակված: Իր կարգավիճակը երկրում ամրապնդելու համար՝ Բաշար Ալ-Ասադը վերստին ձեռնամուխ եղավ հակակոռուպցիոն գործողությունների: Հարյուրավոր պաշտոնյաներ ազատվեցին զբաղեցրած պաշտոններից, որոշ գործիչների դեպքում առաջ քաշվեց վերջիններիս ունեցվածքը բռնագրավելու հարցը: Հակակոռուպցիոն արշավն իր գագաթնակետին հասավ այն ժամանակ, երբ ուղղվեց նախորդ վարչապետ Մահմուդ Ալ-Զուբիի դեմ: Բռնագրավվեց նրա ընտանիքի ունեցվածքը, նրան հեռացրեցին Բաաս կուսակցությունից: 2000 թ. մայիսի 22-ին Ալ-Զուբին ինքնասպան եղավ: Նրա թաղման արարողությունը մարդաշատ էր և տեղի ունեցավ իր հայրենի գյուղում՝ Հիրբաթ Ղազգալայում, որը գտնվում էր Սուվեյդա նահանգում: Մահմուդ Ալ-Զուբիի դեմ առաջադրված հիմնական մեղադրանքը կապված էր Ֆրանսիայից «Էյրբաս» ինքնաթիռների գնման գործարքների հետ: Զուբիի

---

[368]Middle East Contemporary Survey, Vol. 24, 2000, p. 535.

հետ միասին այդ գործում մեղադրվում էին նաև Սիրիայի տրանսպորտի նախկին նախարար Մուֆիդ Աբդ Ալ-Քարիմը և նախկին փոխվարչապետ, տնտեսական հարցերի նախարար Սալիմ Յասինը: Վերջին երկուսը նույնպես ձերբակալվեցին, բռնագրավվեց նրանց ունեցվածքը[369]: Հակակոռուպցիոն պայքարի շրջանակներում վարչակարգը քայլեր ձեռնարկեց նաև գլխավոր շտաբի պաշտոնաթող գեներալ Հիքմեթ Շիհաբիի դեմ: Վերջինս այդ ընթացքում վիրահատության նպատակով գտնվում էր Բեյրութում, որտեղից էլ տեղափոխվեց Լոս Անջելես (ԱՄՆ): Պաշտպանության նախարար Մուստաֆա Տլասը հայտարարեց, թե հակակոռուպցիոն արշավի հետևանքով չպետք է տուժեն երկրին և վարչակարգին հավատարմորեն ծառայած գործիչները, որոնց թվում էր նաև Շիհաբին: Նա հուլիսին վերադարձավ Դամասկոս, հանդիպեց նորընտիր նախագահ Բաշար Ալ-Ասադի հետ և իր աջակցությունը հայտնեց նրան[370]:

Ապրիլին որոշում կայացվեց նույն տարվա հունիս ամսին 14 տարի անց առաջին անգամ անցկացնել Բաաս կուսակցության տարածաշրջանային համագումար, չնայած սահմանադրության համաձայն այն պետք է անցկացվեր չորս տարին մեկ անգամ, որպեսզի ներկայացներ կուսակցության քաղաքական ծրագիրն ու ընտրեր նրա ղեկավարությանը: 2000 թ. հունիսի 10-ին Սիրիայի նախագահ Հաֆեզ Ալ-Ասադի մահից հետո սիրիական իշխանությունները շատ արագ կերպով լուծեցին կուսակցության առաջնորդի հարցը՝ քաջ գիտակցելով, որ հապաղելն այդ հարցում կարող էր ապակայունացնել դրությունը Սիրիայում: Բաաս կուսակցության ղեկավարության ընտրությունը, բնականաբար, կանգ առավ Բաշար Ալ-Ասադի թեկնածության վրա: Սակայն կար սահմանադրական մի խոչընդոտ, առանց որի հաղթահարման Բաշարը չէր կարող զբաղեցնել նախագահի աթոռը: Սահմանադրության հոդվածներից մեկում ամրագրված էր, որ Սիրիայի նախագահ կարող է դառնալ Սիրիայի այն քաղաքացին, որի տարիքը պետք է լինի 40-ից ոչ պակաս: Իսկ Բաշարը ծնվել էր 1965թ. և այդ պահին 35 տարեկան էր, հետևաբար իրավունք չուներ գրավել նախագահի պաշտոնը: Սիրիական ղեկա-

---

369 البعث, «ալ-Բաաս», Դամասկոս, 25.06.2000:

370 Middle East Contemporary Survey, Vol. 24, 2000, p. 536.

վար էլիտան հունիսի 10-ին Հաֆեզ Ալ-Ասադի մահից հետո մի քանի ժամվա ընթացքում փոփոխություն մտցրեց սահմանադրության մեջ[371]: Սիրիական խորհրդարանը արտահերթ նիստ գումարեց և փոխեց սահմանադրության 83-րդ պարբերությունը: Նախագահի թեկնածուի տարիքային սահմանափակման ստորին շեմն իջեցվեց 40-ից 34 տարի: 2000 թ. հունիսի 11-ին Սիրիայի նախագահի պաշտոնակատար Աբդ Ալ-Հալիմ Խադդամը երկու հրամանագիր ստորագրեց: Առաջին հրամանագրի համաձայն՝ Բաշար Ալ-Ասադը նշանակվեց Սիրիայի զինված ուժերի գլխավոր հրամանատար, իսկ երկրորդով նրան անմիջապես շնորհվեց սիրիական բանակի ամենաբարձր զինվորական ֆելդ մարշալի կոչում, որը կրել էր միայն նրա հայրը: Սիրիական բանակի բարձրաստիճան սպաները՝ պաշտպանության նախարար Մուստաֆա Տլասի և գլխավոր շտաբի պետ Ալի Ասլանի գլխավորությամբ իսկույն իրենց հավատարմությունը հայտնեցին Բաշար Ալ-Ասադին: Մեկ շաբաթ անց Բաաս կուսակցության համագումարը Բաշարին ընտրեց կուսակցության գլխավոր քարտուղար, ինչպես նաև բարձրագույն մարմինների՝ տարածաշրջանային ղեկավարության և կենտրոնական կոմիտեի անդամ: Համաժողովի ավարտին Բաաս կուսակցության տարածաշրջանային ղեկավարությունը 2000 թ. հունիսի 20-ին Բաշարին առաջադրեց որպես նախագահի թեկնածու[372]: Տարածաշրջանային ղեկավարությունն իր ընտրությունը բացատրում էր այսպես. «Բաշարն իր եռանդով և դրական հատկանիշներով խորհրդանշում էր վարչակարգի իշխանության շարունակականությունը: Նա անձնավորում էր երկու սերունդներին, այն սերնդին, որը երկար տարիներ պայքարել էր երկրի զարգացման և բարգավաճման համար և այն սերնդին, որը պատրաստվում էր «Ուղղիչ շարժման» շրջանակներում նպաստել երկրի արդիականացմանը»[373]:

Նշենք, որ համագումարի ընթացքում Բաաս կուսակցության բարձրագույն մարմինների՝ կենտրոնական կոմիտեի և տարածաշրջանային ղեկավարության կազմում տեղի ունեցան նոր նշանա-

---

371 Հովհաննիսյան Ն., հ. 4, նշվ. աշխ., էջ 535:
372 البعث, «ալ-Բաաս», Դամասկոս, 11.06.2000:
373 Middle East Contemporary Survey, Vol. 24, 2000, p. 537.

կումներ: Փորձառու մի շարք կուսակցական, քաղաքական և ռազմական գործիչներ կորցրեցին իրենց պաշտոնները: Նրանց թվում էին Մուհամմադ Ալ-Խուլին, Ալի Դուբան, Հիքմեթ Շիհաբին և Մահմուդ Ալ-Զուբին: Տասնմեկ նոր անդամներ Բաշար Ալ-Ասադի և վարչապետ Միրոյի կողմից ընդգրկվեցին տարածաշրջանային ղեկավարության կազմում: Կենտրոնական կոմիտեի 90 անդամներից 62-ը նորանշանակ էին: Այդ անդամների թվում էին Բաշար Ալ-Ասադի եղբայր Մահիր Ալ-Ասադը և պաշտպանության նախարար Մուստաֆա Տլասի որդին՝ Մանաֆ Տլասը[374]: Փոփոխություններ կատարվեցին կուսակցության տեղական ղեկավար մարմիններում:

Հունիսի 25-ին Բաշարի թեկնածությունը ներկայացվեց Ժողովրդական ժողովին, որն այն հաստատեց հունիսի 26-ին: 2000 թ. հուլիսի 10-ին կայացավ հանրաքվե: 9,4 մլն. ընտրելու իրավունք ունեցող քաղաքացիներից 8,9 մլն.-ը մասնակցեց հանրաքվեին: Քվեարկությունը կայացավ 1134 ընտրատեղամասերում, որոնցից 600-ը տեղակայված էին զորամասերում, 57-ը՝ ներքին անվտանգության բաժանմունքներում, 247-ը՝ աշխարհի տարբեր երկրների սիրիական դիվանագիտական ներկայացուցչություններում, իսկ 58-ը՝ Լիբանանում: Բաշարի օգտին քվեարկել էր 8,7 մլն. քաղաքացի կամ՝ ընդհանուր ձայների 97,3%-ը: Նրան դեմ էին քվեարկել 22,439 քաղաքացիներ:

Բաշար Ալ-Ասադն իր պարտականությունների կատարմանն անցավ 2000 թ. հուլիսի 17-ին՝ Ժողովրդական ժողովում պաշտոնավարման երդման արարողությունից հետո: Նա դարձավ նաև ԱԱՆ-ի նախագահ: Շատ կարճ ժամանակամիջոցում Բաշարն իր ձեռքում կենտրոնացրեց Սիրիայի պետական, քաղաքական, ռազմական և կուսակցական ամբողջ ղեկավարումը: Նա տիրապետում էր կառավարման բոլոր լծակներին: 2000 թ. հուլիսի 17-ին, հանդես գալով Ժողովրդական ժողովում, նորընտիր նախագահը հակիրճ կերպով ներկայացրեց իր գործունեության ծրագիրը: Նա խոստացավ տարբեր ոլորտներում բարեփոխումներ անցկացնել, որը մեծ գոհունակությամբ ընդունվեց սիրիական հասարակության կողմից: Եվ, իրոք, նա այդ ուղղությամբ որոշակի քայլեր կատարեց: Բաշար Ալ-Ասադը

---

[374] تشرين, «Թիշրին», Դամասկոս, 21.07.2000:

որոշակիորեն ընդառաջեց սիրիացի 99 մտավորականների, որոնք նամակով դիմել էին նախագահին՝ 37 տարի Սիրիայում տևող ռազմական դրությունը վերացնելու խնդրանքով: Ռազմական դրությունը մտցրել էին բաասականները՝ 1963 թ. մարտի 8-ին Սիրիայում իշխանության անցնելուց հետո: Մտավորականները պահանջում էին ազատ արձակել քաղբանտարկյալներին, ազատ խոսքի և ազատությունների, քաղաքական և գաղափարական բազմակարծության հնարավորություն ստեղծել և այլն: Նամակի տակ ստորագրել էին հայտնի սիրիացի մտավորականներ՝ քաղաքական գիտությունների դոկտոր Սադիկ Ջալալ Ալ-Ազմը, նովելիստ Հայդար Հայդարը, պոետ Ադոնիսը, իրավապաշտպան Ռիյադ Սայֆը, տնտեսագետ Արիֆ Դալիլան և այլք[375]: Ռազմական դրությունը երկրում չվերացվեց, սակայն երկրի ազատականացման համար ավելի նպաստավոր պայմաններ ստեղծվեցին: Իրենց գործունեությունն ակտիվացրին զանազան հասարակական և քաղաքացիական կազմակերպություններ, ինչպես, օրինակ Մարդու իրավունքների պաշտպանության կոմիտեն, լրագրողների միությունը, արհմիությունները, ավելի աշխուժացավ մամուլը և այլն[376]: Բաշարն իր ելույթում անդրադարձավ նաև վերահսկողական համակարգի ուժեղացման անհրաժեշտությանը, օրինականության պահպանմանը, կոռուպցիայի վերացմանը և երկրի քաղաքական կյանքում թափանցիկության ապահովմանը: Նա նշում էր. «Ժողովրդավարությունը հիմնարար արժեք է, սակայն մենք չպետք է ընդունենք ուրիշի ժողովրդավարությունը: Արևմտյան ժողովրդավարական արժեհամակարգը երկար տարիների ընթացքում պատմականորեն ձևավորված արդյունք է: Մենք պետք է ստեղծենք մեր պատմությանը, մշակույթին և քաղաքակրթությանը համապատասխան ժողովրդավարական համակարգ»[377]:

Բաշար ալ-Ասադը շարունակեց դեռևս ապրիլին սկսված քաղաքական բանտարկյալների ազատ արձակման գործընթացը:

---

375 السفير, «աս-Սաֆիր», Բեյրութ, 27.09.2000:

376 Հովհաննիսյան Ն., նշվ. աշխ., էջ 536:

377 Ելույթի տեքստը տես նախագահի պաշտոնական կայքէջի արխիվային բաժնում՝ http://www.presidentassad.net/index.php?option=com_content&view=categories&id=81&Itemid=496

Ազատ արձակված մի քանի հարյուր բանտարկյալների թվում էին նաև Կոմունիստական աշխատավորական կուսակցության անդամներ և պաղեստինցիներ: Նոյեմբերին նախագահ Ասադը Ժողովրդական ժողովի հաստատմանը ներկայացրեց մի շարք քրեական և քաղաքական հանցագործությունների հոդվածներով գլխավոր համաներման մասին թիվ 17 օրենքի նախագիծը: Սա առաջին անգամ հաստատեց այն հանգամանքը, որ Սիրիայի նոր իշխանությունները ճանաչում են քաղաքական բանտարկյալների առկայությունը բանտերում: Օրենքի հաստատումից հետո ավելի քան վեց հարյուր քաղաքական բանտարկյալներ ազատ արձակվեցին, որոնց շարքերում էին Կոմունիստական կուսակցության, Իսլամական ազատագրության կուսակցության անդամներ, որոնք ձերբակալվել էին 1999 թ. խաղաղության գործընթացին ընդդիմանալու պատճառով, Ժողովրդավարական Բաաս կուսակցության ակտիվիստներ, Սալահ Ջադիդի հետևորդները և Մարդու իրավունքների պաշտպանության կոմիտեի մի շարք ներկայացուցիչներ: Հիմնականում կարևոր քայլ էր լիբանանցի բանտարկյալների ազատ արձակումը, որը սիրիա-լիբանանյան հարաբերություններում զգայուն խնդիր էր համարվում[378]:

Խորքային փոփոխություններ կատարվեցին նաև կառավարման համակարգում: 14 նահանգային ղեկավարներից 10-ը պաշտոնազրկվեցին և նրանց փոխարինեցին կուսակցական նոր գործիչները[379]: Սիրիայի տեղեկատվության նախարար Մուհամմադ Սալմանին փոխարինեց Ադնան Ումրանը, որին հետևեցին լայնածավալ փոփոխությունները թերթերի խմբագիրների և լրատվական ծառայությունների ղեկավարների կազմում: Սիրիական արաբական նորությունների գործակալության՝ SANA-ի գլխավոր տնօրեն Ֆաիզ Ալ-Սաիղը նշանակվեց ռադիոյի և հեռուստաընկերության գլխավոր տնօրենի պաշտոնին: SANA-ի տնօրեն դարձավ գործակալության Կաիրեի թղթակից Ալի Աբդ Ալ-Քարիմը: Վարչակարգի կողմից հովանավորվող «Թիշրին» օրաթերթի նոր խմբագիր դարձավ Խալաֆ Մուհամմադ Ալ-Ջարրադը՝ փոխարինելով Մուհամմադ Խայր

[378] الحياة „«ալ-Հայաթ», Լոնդոն, 18.11.2000:
[379] Նույն տեղում, 06.10.2000.

Ալ-Վադիին, որը դեսպանի պաշտոնում էր նշանակվել: Իշխանական մյուս թերթի՝ «աս-Սաուրայի» խմբագիր Ամիդ Ալ-Խուլիին փոխարինեց Մահմուդ Սալահը[380]: Վերոնշյալ փոփոխությունները նպատակ էին հետապնդում բարձրացնելու զանգվածային լրատվական միջոցների մակարդակը Սիրիայում: Նորանշանակ տեղեկատվության նախարարն այդ առիթով դժգոհում էր. «Մենք չունենք իրական ԶԼՄ-ներ, մեր ունեցածը երեք թերթ է՝ «Թիշրին», «աս-Սաուրա», «ալ-Բաաս», որոնք լույս են տեսնում միասին 60 հազար օրինակով»[381]: Սիրիական ԶԼՄ-ներում կատարված փոփոխություններն ցույց էին տալիս Բաշար Ալ-Ասադի կողմից ձեռնարկված այն քայլերը, որոնք խրախուսում էին Սիրիայում բաց և թափանցիկ հասարակության ձևավորմանը:

Այսպիսով, Հաֆեզ Ալ-Ասադի մահից հետո վարչակարգն աջակցեց Բաշարին՝ նախագահ դառնալու հարցում: Զինվորական հրամանատարները և քաղաքական »հին գվարդիան« նույնպես ամեն ինչ արեցին Բաշարի՝ նախագահ դառնալու համար: Նրա ընտրությունը կասկածի տակ դրվեց հորեղբոր՝ Ռիֆաթի կողմից, որը կասկածի տակ դրեց Բաշարի՝ նախագահ ընտրվելու իրավական հիմքերը: Ընտրական գործընթացը համարվեց «դաշույնով հարված սահմանադրության թիկունքին»[382]:

Այսպիսով, Հաֆեզ Ալ-Ասադի մահից հետո վարչակարգն աջակցեց Բաշարին՝ նախագահ դառնալու հարցում: Զինվորական հրամանատարները և քաղաքական «հին գվարդիան»՝ նույնպես: Հետհաֆեզյան քաղաքական զարգացումները կասկածի տակ դրեց հորեղբայրը՝ Ռիֆաթը, որը Բաշարի ընտրական գործընթացը համարեց «դաշույնով հարված սահմանադրության թիկունքին»[383]:

---

380 السفير, «աս-Սաֆիր», Բեյրութ, 26.07.2000:
381 الحياة, «ալ-Հայաթ», Լոնդոն, 19.06.2000:
382 الحياة, «ալ-Հայաթ», Լոնդոն, 13.07.2000:
383 الحياة, «ալ-Հայաթ», Լոնդոն, 13.07.2000:

## ՎԵՐՋԱԲԱՆ

1970-ական թթ. սկզբից մինչև 2000 թ. Սիրիայում ռազմաքաղաքական իշխանության մեջ ալավիական գործոնի ուսումնասիրությունը թույլ է տալիս վերհանել անկախությանը հաջորդած շրջանում Սիրիայի հասարակական-քաղաքական համակարգի զարգացման առանձնահատկությունները: 1963 թ. մարտի 8-ին հեղաշրջման արդյունքում իշխանության եկած Բաաս կուսակցությունն այնպիսի ներքաղաքական իրավիճակ ձևավորեց երկրում, որ ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները, մասնավորապես կուսակցության ալավիական թևի ներկայացուցիչները, կարողացան Սիրիայի իշխանական վերնախավում կարևորագույն պաշտոններ զբաղեցնել: 1970 թ. նոյեմբերին Սիրիայում Հաֆեզ Ալ-Ասադի իշխանության գալով՝ ալավի փոքրամասնության իշխանության հաստատումն իրողություն դարձավ: Չնայած նշված ժամանակաշրջանն աչքի ընկավ քաղաքական ու տնտեսական վայրիվերումներով, բայց նոր էջ բացեց Սիրիայի պատմության մեջ: Ամփոփելով մենագրության հիմնական արդյունքները՝ հանգում ենք հետևյալ հիմնական հետևություններին:

1922-1942 թթ. ալավիաֆրանսիական քսանամյա հարաբերությունները, ալավիների քաղաքական անկախությունը, հետագայում՝ անկախ Սիրիայի իշխանությունների կողմից նրանց ճանաչումը որպես մուսուլմանական համայնք, նպաստեցին, որպեսզի ալավիները դուրս գան մեկուսացվածությունից և մասնակցեն անկախ Սիրիայի կայացման գործընթացին: Ֆրանսիացիների հետ հարաբերություններն ալավիներին դարձրեցին որոշակիորեն առաջադեմ, իսկ քաղաքական անկախությունը հնարավորություն տվեց նրանց ռազմաքաղաքական գործում ավելի հմտանալ: Սիրիական իշխանությունների կողմից ալավիներին որպես մուսուլմանական համայնք ճանաչելը թույլ տվեց նրանց լիիրավ իրացնել ձեռք բերված հնարավորությունները: Նշված իրողությունները նպաստեցին նաև ալավիների համայնքային կյանքի առավել ինստիտուցիոնալացմանը:

Սիրիայում Բաաս կուսակցության իշխանության գալը նշանավորեց երկրի զարգացման բոլորովին նոր փուլի սկիզբը: Երկրի

կառավարումն իրենց ձեռքը վերցրեցին հասարակական նոր շերտեր՝ հիմնականում քաղաքային միջին խավի և սուննիական գյուղերի ներկայացուցիչները: Պետք է նշել նաև մեկ այլ կարևոր հանգամանք, որ՝ Սիրիայում ամուր դիրքեր ունեցող սպայական անձնակազմի երկրորդ սերունդը զիջեց իր դիրքերը, իսկ ստեղծված վակուումը լրացրեց սպաների նոր սերունդը, որը խիստ տարբերվում էր իր նախորդից: Առաջ մղվեցին Հոմսի Ռազմական ակադեմիայի շրջանավարտները, որոնք հիմնականում ալավիական համայնքի և կրոնական այլ փոքրամասնությունների ներկայացուցիչներ էին: Այսպես, ալավիները զբաղեցրին 700 ազատ սպայական հաստիքների կեսը: Ալավի սպաները զինվորական պաշտոններ ստանձնեցին հիմնականում մայրաքաղաքում՝ հեռացնելով սուննիներին հեռացնելով դեպի ծայրամասային նահանգներ: 1963 թ. մարտին Բաաս կուսակցության իշխանության գալուց հետո ներկուսակցական և ներիշխանական պայքարը շարունակվեց: Այն մարդիկ, ովքեր քիչ թե շատ բարձր պաշտոններ էին զբաղեցնում պետական համակարգում, փորձում էին համախմբել իրենց կողմնակիցներին՝ ելնելով ազգակցական, ցեղային կամ համայնքային շահերից: Ժամանակի ընթացքում սա հանգեցրեց նրան, որ ալավիների ներկայությունը պետական համակարգում գերիշխող դարձավ: Դամասկոսում ալավիները դուրս մղեցին սուննի սպաներին՝ զրկելով նրանց ազդեցությունից: Հաֆեզ Ալ-Ասադի իշխանության գալով՝ Սիրիայում սկսեց ձևավորվել նախագահին հավատարիմ և նվիրված իշխանական նոր վերնախավ, որի կլանային կառուցվածքը հիմնված էր ոչ միայն համայնքային կապերի, այլև՝ մասնագիտական սերտ հարաբերությունների և նույն ուսումնական հաստատության՝ Հոմսի ռազմական ակադեմիայի շրջանավարտ լինելու փաստի վրա: Արդյունքում, ստեղծվել էր յուրահատուկ իշխանական մի դասակարգ, որի կազմում «օտարների» ընդգրկումը գրեթե անհնար էր:

1975 թ. ապրիլին Լիբանանում սկսված քաղաքացիական պատերազմից հետո արաբական որոշ երկրներ դադարեցրին օգնություն ցուցաբերել Սիրիային՝ Լիբանանում Դամասկոսի քաղաքականության պատճառով, որից հետո երկրում գնաճ և բնակչության մեծամասնության կենսամակարդակի անկում արձանագրվեց: Զուգահեռաբար, տեղի էր ունենում քաղաքական և տնտեսական վերնախա-

վերի սերտաճում: Բաաս կուսակցության իշխող վերնախավը, զինվորական շրջանակների վերին էշելոններն ու կառավարության անդամները հարստանում էին, իշխանական վերնախավը համալրվում էր կարիերիստներով, ինչը որոշակի բացասական հետք էր թողնում նախագահ Ասադի հեղինակության վրա: Հասարակության առանձին շերտերի դժգոհությունը պայմանավորված էր Սիրիայի իշխանական համակարգում տեղ գտած որոշակի թերացումներով ու բացթողումներով, որին գումարվեց նաև այն, որ ալավի փոքրամասնության իշխանությունը երկրում սկսեց բացարձակ անսքող դառնալ: Արդյունքում, Սիրիայում գլուխ բարձրացրեց սուննիական կրոնաքաղաքական ընդդիմությունը՝ ի դեմս «Մուսուլման եղբայրների», որոնց ծայրահեղական գործողությունները բազմաթիվ դրդապատճառներ ունեին: Սիրիան բախվեց ահաբեկչական սպառնալիքի հետ: Պատահական չէ, որ սպանված քաղաքական և ռազմական գործիչների մեծ մասն ալավիներ էին: 1978 թ. հոկտեմբերին Սիրիա-Իրաք հարաբերությունների ժամանակավոր բարելավումից հետո պարզ դարձավ, որ իրագործվող ահաբեկչական գործողությունների համար պատասխանատվություն են կրում սուննիական ծայրահեղական խմբավորումները, որոնք Սիրիայում հաստատված ալավիների «տոհմահամայնքային» վարչակարգը համարում էին հակաիսլամական: Ալավիների ռազմաքաղաքական իշխանության հաստատումը Սիրիայում 1982 թ. արդեն իրական փաստ էր, երբ հաղթանակ գրանցվեց «եղբայրների» նկատմամբ: Իսկ ներքին դժգոհությունների ֆոնին, աստիճանաբար, Սիրիայի սոցիալ-տնտեսական, քաղաքական և ռազմական բնագավառներում զգալի հաջողություններ գրանցվեցին: Ալավիների բաասական վարչակարգը Սիրիայի Արաբական Հանրապետության պատմության մեջ մի նոր էջ բացեց, որը բնութագրվում էր հարաբերական կայուն ներքաղաքական իրադրությամբ, իշխանության դիրքերի ամրապնդմամբ, կառավարման ուրույն մշակույթի ձևավորմամբ, ինչպես նաև պետական ինստիտուտների հարաճուն զարգացմամբ: Մեծ առաջընթաց գրանցվեց նաև զինված ուժերի և անվտանգության համակարգի առաջընթացի և ինստիտուցիոնալացման առումով: Սիրիայում ալավիների վարչակարգը այս տասնամյա ժամանակաշրջանում կարողացավ ձևավորել մարտունակ բանակ, ստեղծել բազմաթիվ լծակներով օժտված

արագ արձագանքման զինված միավորումներ, կարգավորել հատուկ ծառայությունների աշխատանքը՝ յուրաքանչյուր ստորաբաժանմանը տալով գործունեության հստակ լծակներ, որի արդյունքում բարձրացավ զինված ուժերի մարտունակությունը: Բացի այդ, զգալիորեն բարելավվեց Սիրիայի բնակչության սոցիալ-տնտեսական վիճակը, բարձրացավ կենսամակարդակը: Ճիշտ է, 1983-1984 թթ. ներքաղաքական ճգնաժամը չվերաճեց քաղաքացիական պատերազմի և ավարտվեց Հաֆեզ Ալ-Ասադի հաղթանակով, սակայն ակներև դարձրեց, որ ավտորիտար վարչակարգի հիմքերն անսասան չեն: 1987 թ. վարչապետ Աբդ Ալ-Ռաուֆ Ալ-Կասմին փոխարինեց բաասական քաղաքական գործիչ՝ Ժողովրդական ժողովի նախագահ Մահմուդ Ալ-Զուբին: Կադրային փոփոխությունները, շատ դեպքերում, ձևական բնույթ էին կրում և նպատակ ունեին սիրիական հասարակությանը ցույց տալ, որ կառավարությունը իրապես ցանկանում է լուծել սոցիալ-տնտեսական կնճռոտ խնդիրները: Սիրիայի ներքին կայունությունը պահպանելու համար իշխանությունները 1992 թ. մարտին Հաֆեզ Ալ-Ասադի նախագահի վերընտրվելու առիթով մեծածավալ համաներում հայտարարեցին, որը ցույց էր տալիս վարչակարգի ինքնավստահությունը: Ազատ արձակվեցին 2864 բանտարկյալներ՝ մեծ մասը «Մուսուլման եղբայրներից», որոնք դատապարտվել էին հակաիշխանական հայացքների պատճառով: Համաներումը նպատակ ուներ ի ցույց դնել իշխանությունների բարյացակամ ու ներողամիտ վերաբերմունքը Սիրիայում այլախոհների նկատմամբ:

Ներքաղաքական իրադրությունը Սիրիայում 1982-1992 թթ. ընթացքում, ըստ էության, պայմանավորված էր մի շարք ներքին և արտաքին գործոններով: Ներքին գործոններն էին՝ իշխանության համար պայքարը ալավիական վերնախավում, մասնավորապես Ասադ եղբայրների միջև, զինված բախումները «Մուսուլման եղբայրներ» կրոնաքաղաքական շարժման անդամների և կառավարական ուժերի միջև, Իսրայելի նկատմամբ ռազմավարական հավասարություն պահելու դժվարությունները, Սիրիայի ներգրավվածությունը ներլիբանանյան բարդ բնջուկի մեջ, միջարաբական հարաբերություններում աճող լարվածությունը, Արևմուտքի հետ հարաբերությունների ճգնաժամը և, վերջապես, Մոսկվայի հետ հարաբերու-

թյունների անորոշությունը, հետագայում՝ ԽՍՀՄ-ի փլուզումը: Իշխանության համար անբարենպաստ այս գործոնների ազդեցության պայմաններում ալավիական վերնախավը, այնուամենայնիվ, կարողացավ պահպանել հարաբերական կայունություն Սիրիայի ներսում և ապահովել խաղաղություն՝ Իսրայելի հետ առճակատման պայմաններում: Չնայած 1992 թ. Հաֆեզ Ալ-Ասադն արդեն չորրորդ անգամ յոթամյա ժամկետով ընտրվել էր Սիրիայի նախագահ, սակայն ընտրվելուց մեկ տարի անց սկսեց նպատակասլաց աշխատանք տանել երկրում բարձրագույն իշխանությունն իր ավագ որդուն՝ Բասիլ Ալ-Ասադին փոխանցելու ուղղությամբ: Վերջինիս մահից հետո երկրում անորոշ իրավիճակ ստեղծվեց, և բոլորը լարված սպասում էին, թե ով կդառնա Հաֆեզ Ալ-Ասադի ժառանգորդը: Ի վերջո, նախագահն առաջ քաշեց իր մյուս որդուն՝ Բաշար Ալ-Ասադին, որի թեկնածությունը կասկածի տակ դնող կամ վստահություն չներշնչող որոշ բարձրաստիճան զինվորականներ, պետական պաշտոնյաներ ու գործիչներ ժամանակի ընթացքում պաշտոնանկ արվեցին: Մասնավորապես, ալավի բարձրաստիճան զինվորականների պաշտոնանկությամբ սկսվեց սերնդափոխության մի գործընթաց, որը հիմնականում ուղղված էր Բաշար Ալ-Ասադի դիրքերի ամրապնդմանը Սիրիայի զինվորական, իսկ հետո՝ նաև քաղաքական հարթակում:

1992-2000 թթ. ժամանակահատվածը Սիրիայի համար ռազմաքաղաքական վերադասավորումների շրջան էր: Երկրի ռազմական և քաղաքական համակարգերում պաշտոնները բացառապես ստանձնում էին Հաֆեզ Ալ-Ասադի որդուն՝ Բաշարին հավատարիմ և նվիրված գործիչները: Վարչակարգը շփման եզրեր էր փնտրում նաև «Մուսուլման եղբայրների» ղեկավարության հետ, որպեսզի նրանք նույնպես աջակցեին Բաշարին՝ նախագահ դառնալու հարցում: «Եղբայրներին» սիրաշահելու համար բանտերից ազատ արձակվեցին կրոնաքաղաքական շարժման բազմաթիվ ակտիվիստներ: Ռազմաքաղաքական վերադասավորումների արդյունքում Սիրիայում տեղի ունեցավ առանց ցնցումների իշխանության փոխանցում հորից որդուն: Ալավիական վարչակարգը շարունակեց կառավարել սուննիական մեծամասնություն ունեցող Սիրիայում:

Սիրիայում մասնավորապես Հաֆեզ Ալ-Ասադի կառավարման

տարիներին կուտակված սոցիալ-տնտեսական և քաղաքական խնդիրները պայթեցին «արաբական գարնան» դեպքերից հետո, երբ քաղաքացիական հուզումների ալիքը դոմինոյի էֆեկտով տարածվեց նաև Սիրիայում: 2011 թ. մարտից Սիրիան ներքաշվեց ներքաղաքական հուզումների մեջ, որին ընդառաջ Բաշար Ալ-Ասադն իրականացրեց մի շարք բարեփոխումներ: Սակայն արտաքին ակտիվ միջամտության հետևանքով երկրում սկսվեց երկարատև քաղաքական ճգնաժամ, որը վերաճեց միջազգային հակամարտության: Սիրիական վարչակարգը կանգնեց բարդ խնդիրների առջև: Բաշարին նախկինում հավատարիմ մի շարք հանգուցային գործիչներ՝ թե՛ քաղաքական, թե՛ ռազմական, անսպասելի կերպով ընդդիմադիր դարձան: Նրանցից էին՝ Աբդ Ալ-Հալիմ Խադդամը, Մուստաֆա Տլասի որդին՝ Մանաֆ Տլասը և ուրիշներ: Հազարավոր պաշտոնյաներ իշխանության տարբեր թևերից, այդ թվում՝ զինվորականներ, հեռացան Սիրիայից: Արտաքին օգնությունների շնորհիվ ձևավորվեց Բաշարի Ալ-Ասադին ընդդիմադիր Սիրիայի ազատ բանակը, որը փորձեց ռազմական ճանապարհով հեռացնել նրան իշխանությունից, սակայն ձախողվեց: Թուրքիայում վարչակարգի անմիջական օժանդակությամբ կազմավորվեցին սիրիական քաղաքական ընդդիմադիրների տարբեր շրջանակներ: Պատերազմի ընթացքում մահացան Բաշար Ալ-Ասադին և ընտանիքին հավատարիմ բազմաթիվ մարդիկ, որոնցից էր Ասիֆ Շաուկաթը: Վիրավորվեց Բաշար Ալ-Ասադի եղբայրը՝ Մահեր Ասադը:

Սիրիական ճգնաժամի մեջ ներգրավվեցին ԱՄՆ-ը, ՌԴ-ն, մի շարք տարածաշրջանային պետություններ՝ Թուրքիան, Սաուդյան Արաբիան, Իրանը, Կատարը և այլն: Սիրիան դարձավ մի հարթակ, որտեղ բախվեցին տարբեր պետությունների շահերն ու հետաքրքրությունները: Այստեղ ցայտուն ձևով դրսևորվեցին նաև իսլամական աշխարհի ներքին հակասությունները, որոնք ծավալվեցին սուննիական և շիայական ռազմաքաղաքական դաշինքների միջև՝ ի դեմս Սաուդյան Արաբիայի և Իրանի: Սիրիական ճգնաժամի և Սիրիան կազմաքանդելու մեջ մեծ դեր ունեցավ Թուրքիան, ոչ պակաս դեր՝ Կատարը: Հակաբաշարական դաշինքի պետությունների աջակցությամբ Սիրիայում սկսեցին ձևավորվել սալաֆիական տարբեր ռազմաքաղաքական՝ ջիհադական խմբավորումներ, որոնք պայքա-

րում էին ռազմական ճանապարհով վարչակարգի տապալման համար և կարողացան զգալի տարածքներ գրավել Սիրիայի տարբեր հատվածներում: Դրան գումարվեցին նաև Իսլամական պետության ռազմական գործողությունները Սիրիայում, ինչպես նաև նրանց կողմից 2015 թ. Սիրիայի արևելյան շրջանների՝ Ռաքքայի նահանգի գրավումը: Արդյունքում, կառավարությունն իր վերահսկողության տակ ուներ Սիրիայի ընդհանուր տարածքի միայն 1/6-ը:

Աշխարհի մի քանի տասնյակ երկրներից հավաքագրված հազարավոր մոլեռանդ ու ռազմատենչ վարձկաններ ներգրավվեցին Սիրիայում սկիզբ առած պատերազմի մեջ՝ հանուն ջիհադի և Բաշար Ալ-Ասադի վարչակարգի հեռացման: Սիրիայի կառավարությանը, նրա զինված ուժերին և նախագահ Բաշար Ալ-Ասադին քաղաքական, ռազմական և այլևայլ օգնություններ ցույց տվեցին ՌԴ-ն, Չինաստանը, Իրանը, շիայական ռազմական բազմաթիվ խմբավորումներ Իրանից, Իրաքից, Լիբանանից և այլ շրջաններից: Դաշնակիցներից ստացված օժանդակության արդյունքում՝ Բաշար Ալ-Ասադին 2017 թ. դեռևս հաջողվում էր պահել իշխանությունը՝ չնայած նրա հեռացման մասին բազմաթիվ կանխատեսումներին: Սիրիական ճգնաժամն աննախադեպ մեծ ու անդառնալի վնասներ հասցրեց այդ երկրին: Մահացան հարյուրհազարավոր մարդիկ՝ թե՛ զինվորական, թե՛ քաղաքացիական, միլիոնավորները գաղթական դարձան, բազմաթիվ քաղաքներ ու գյուղեր ավերվեցին: Սիրիական փախստականները հայտնվեցին Հորդանանում, Թուրքիայում, Լիբանանում, ԵՄ տարբեր երկրներում՝ առաջացնելով փախստականների միջազգային խնդիր, որի լուծմանը ձեռնամուխ եղավ ՄԱԿ-ը: Տարիներ տևած պատերազմի հետևանքով Սիրիայում էթնիկ ու կրոնադավանական տարբեր հանրույթների միջև մեծացան թշնամության ու անհանդուրժողականության տրամադրությունները: Ընդլայնվեցին կրոնականության ու մոլեկրոնության չափերը: Սիրիայում ակտիվացավ քրդական գործոնը, ի հայտ եկան քրդական անջատողական ձգտումներ: Մեծապես տուժեց նաև Սիրիայի հայ համայնքը, հատկապես Հալեպի մայր գաղութը: Հայերը կրեցին մարդկային ու նյութական պահելի վնասներ, մեծ հարված հասցվեց համայնքային կառույցներին, ազգային գործունեությանը, հայ համայնքի շրջանում լայն չափեր ընդունեց արտագաղթը:

Միջազգային, տարածաշրջանային, այդ թվում՝ արաբախսալամական շրջանակներում Սիրիան հայտնվեց մեկուսացման մեջ: Բաշար Ալ-Ասադը հեղինակազրկվեց միջազգային ասպարեզում, մեծապես տուժեց Սիրիայի միջազգային վարկանիշը:

Սիրիայի առաջ ծառացած բազմաթիվ քաղաքական, դիվանագիտական, տնտեսական ու սոցիալական խնդիրների լուծման համար մեծ ջանքեր ու երկարատև ժամանակ է պետք, որի համար համասիրիական ջանքեր են հարկավոր: Սիրիայի վերականգնման ողջ պատասխանատվությունն իր վրա է վերցրել երկրի ներկայիս վարչակարգը ի դեմս նախագահ Բաշար Ալ-Ասադը, որը հետևողականորեն պայքարում էր ձևակերպմամբ՝ միջազգային ահաբեկչության հետ:

# SUMMARY

This book is devoted to the research of Hafez Al-Assad's reign in Syria extending from 1970 to 2000 and the process of establishing the political-military authority of Alawites in Syria. The comprehensive research of the issues relating to the given period of Syrian history is of great scientific importance for identification, understanding and objective evaluation of domestic politics in Syria back from 1970 to 2000, as well as the specifics of the important role of Alawites in that processes. The very core importance of scrutinizing Alawites' contribution in Syrian state building system is closely related to the current political-military situation in Syria and, broader, Syrian Crisis, which started back in March 2011. Topic is also very specific from the perspective of surveying the processes of internationalizing the very intra Syrian crisis.

With the presidency of Hafez Al-Assad in Syria, the country parallelly entered a new era of economic development and state building in terms of establishing and strengthening state institutions. During these thirty years Syrian Arab Republic became an influential power in the Middle East hence playing a key role in military-political developments in and around the region.

Some researchers believe that Alawites, though minority in country, gained a privilege in government positions and army highest ranks with the establishment of Hafez Al-Assad's power which later led to societal tension with Sunni majority population of Syria. In accordance to these researches intra-communal tension in Syria hindered the normal process of development of the state. They argue that minority Alawites' dominance in state and army institutions became the very core reason of a series of revolts and armed insurgencies by Sunni Islamists, mainly members of the Muslim Brotherhood from 1976 until 1982. In this monograph we try to deny the uniqueness of above-mentioned opinion and bring our counterar-

guments which reveal, although, in running the state there were a number of shortcomings and failures by Alawite officials, in reality, on one hand Alawite regime created favorable conditions for development and prosperity of the state and society, on the other hand they promoted tolerance for all ethno-confessional communities in Syria.

Syrian political reality was dealing with ongoing military coups Before Hafez Al-Assad came to power. This turbulent time of Syrian history was followed by a period of relative stability. Thanks to Hafez Al-Assad's reign Syria entered a new era of development in terms of state institutions, a new economic culture has been formed and developed in the country. Alawite regime succeeded to meet the internal and external challenges, realized the set goals.

The most important component of Alawite political-military role in Syria is their active involvement in military affairs of the state and vested contribution to the armed forces of Syrian Arab Republic. In 1946 Syria gained its independence and since then national minorities gradually started to join the army and gain influential positions. The representatives of national minorities considered military and security related affairs as mean to solve their social problems and self-affirmation in Syrian society which is not true about Sunni majority.

Since Hafez Al-Assad was a member of Alawite community Alawites got a very good chance to strengthen their positions in military structures of Syrian armed forces after Baathist coup established the Baath party as the only legal political party in Syria and especially after Baathist general Hafez Al-Assad seized power in 1970.

In 1970 Hafez Al-Assad equally prioritized the interests of the state apparatus and Alawi community, which led to empowering the political-military role of Alawites in Syria.

It is worth mentioning that from the very beginning Hafez Al-Assad unleashed the potential of Alawi community, in order to strengthen his position within the state apparatus. By appointing Alawi officials to high-level military and political positions, he created serious basis for the formation of a solid political-military system of the state.

Studying Alawite factor within the political-military authority in Syria starting from 1970 to 2000 reveals the characteristics of the societal-political system in post independent Syria. As a result of March 8 1963 coup the Baath party came to power and shaped such an internal political situation that the national minorities, particularly, tha representatives of party's Alawite faction were able to hold important positions within the Syrian ruling elite. The early period of Hafez Al-Assad reign showed that Syrian internal life was full of political and economic fluctuations even though a new era started in Syrian history. Summerizing the main points we come to the following conclusions.

Alawite-French relation of twenty years starting from 1922 to 1942, political independence of Alawites, and afterwards the fact of recognising Alawites as legitimate Muslim Shias by the Syrian authorities favoured alawites to break the isolation and participate in the process of establishing Syrian state. The relations with French made them progressive and forward-looking, addition to that political independence gave them a chance to master military and political affairs. The fact of recognising Alawites as legitimate Muslim Shias by the Syrian authorities allowed them to fully implement given opportunities. Mentioned facts promoted the Alawi community to deeper institutionalisation of their life. Syrian state entered a new phase of development since Syrian Baath party came to power. New layers of society were involved in running the state institutions, particularly, urban middle class and the representatives of the rural Sunnis. İt is worth to mention that the second generation of high ranking officers ceded their positions to the new generation. The Alumni of Homs Military Academy were in forefronts and they mainly reprersented Syrian minoroties particularly the Alawite community. The Alawites occupied half of 700 vacancies in the Army and General Staff. Alawi officers held different military posts in the city of Damascus gradually expelling Sunni officials to various peripheral provinces. After Baath party came to power in Syria the inner-party and intra-elite struggle continued. High ranking state officials were trying to unite their supporters based on kinship, tribal

and community interests. Over time Alawi representation in the state system became dominant. Alawites ousted Sunni officers and deprived them of their influence especially in Damascus. Due to Hafez Al-Assad policy a loyal elite was formed which clan structure was based on not only communal links but also on the close professional relations and on the fact being the alumni of Homs Military Academy.

A civil war broke in Lebanon in April 1975, a number of arab states stopped supporting Syria because of the policy of official Damascus in Lebanon. This led to harsh inflation and Syria registered decline in its human development index. Paralelly political and economic elites were being coalesced. Ruling elite of Baath party, high-ranking militaries and government officials were getting richer which had a negative impact on Hafez Al-Assad's reputation. Different strata of Syrian society were dissatisfied with failures of ruling system and were complaining about Alawites authority becoming more and more irresistible in the country. As a result Sunni religious opposition especially Muslim Brotherhood arose. Their fundamental actions had various incentives and motivations. Syria was facing the challenge of terrorism. The majority of murdered political and military officials were Alawites. In 1978 the relations between Syria and Iraq were temporarily improved hence it became evident that the whole responsibility of terroristic attacks was shouldered by Sunni fundamentalist groups who were convinced of anti-islamic nature of "tribal" ruling elite in Syria. When Muslim Brotherhood was cruely and completely defetaed in 1982, the establishment of political-military authority of Alawites in Syria was complete. Despite internal grievances Syria recorded high performance in socio-economic, political and military spheres. Alawi-Baathist regime opened a new chapter in Syrian history which was characterized by following features.

1. Relative stability in internal politics,
2. Strenghtened state-buliding process,
3. Formation of unique governance culture,
4. Permanent development of state institutions.

Great progress was recorded in institutionalization process of military and security systems. Alawite regime in Syria was able to

build a strong armed forces, to create different rapid reaction security forces such as Republican Guard and separate armed units, to handle the normal routine of special services giving each subdivision disctinctive authority and setting standard operating procedures (SOPs). Consequently combat ability of the armed forces of Syrian Arab Republic rose. Except that, socio-economic status of the population of Syria significantly improved.

Intra-syrian crisis in 1983-1984 didn't morphed into civil war and ended with Hafez Al-Assad's victroy against Muslim Brotherhood, yet it did show that the basics of authoritarian regime were prone to shakes. In 1987 the prime minister Abd Al-Rauf Al-Kasm was replaced by Baathist politician and the speaker of Syrian parliament Mahmud Al Zoabi.

In many cases authorities embarked on reshufflings within government and state institutions aimed at showing Syrian society that they were very keen dealing with socio-economic problems faced by the country. İn March of 1992 Syrian authorities declared amnesty on the occasion of re-election of Hafez Al-Assad as president of the state which showed thier level of self-confidence in holding power. 2864 prisoners were released and most of them were Muslim Brotherhood members who were convicted for their political views. The main objective declaring amnesty was that Syrian authorities tried to show they were gracious towards Syrian dissidents.

A number of internal and external factors Such as the struggle for power within the Alawite elite, especially the strife betwen Rifat Al-Assad and Hafez Al-Assad, Armed clashes between Muslim Brotherhood members and state security forces, obstacles in keeping strategic parity with Israel, Syrian involvement in Lebanese civil war, growing tension in Arab world, ailing relations with the West, and finally the collapse of USSR impacted on domestic politics in Syria in the period of 1982-1992. Under above mentioned unfavourable circumstances Baathist-Alawite elite was efficiently capable of maintainig relative stability inside the country and of ensuring peace beyond the borders. Hafez Al-Assad launched the process of handing over the state power elder son Bassil Al-Assad despite he was just in

his second year of the forth term of presidency in 1993. Bassil Al-Assad died in a car accident in 1994 afterwards president Assad made his choice and pushed forward his another son Basar Al-Assad whose candidacy was perceived askance by some high positioned officials and militaries who were sacked over time. Dissmisals of Alawi high ranking officials marked the process of generation change which was embarked on strenghtening Bashar Al-Assad's positions in the political and military arena of Syria. Political-military transformations were happening from 1992 to 2000 in Syria. Military and political key positions were solely taken over by figures loyal to Bashar Al-Assad. The ruling elite was trying to find common ground with the leaders of Muslim Brotherhood in order they would support Bashar in becoming the next president of Syria. Many Muslim Brotherhood activists were released as a sign of reconciliation Political and military reshufflings resulted in power succession from father to son without any complications. Alawi elite continued to hold the power in Sunni majority state.

Socio-economic and political problems accumulated in Syria during Hafez Al-Assad reign broke out in March 2011 and turned into civil war which weakened once strong and prosperious country. So far Syria is among failed states, since Bashar Al-Assad's government is unable to control internationally recognised borders of Syrian Arab Republic and has no ability to interact with other states (3 out of five UN Security Council Permanent member states have no any relations with Syria) as a full member of the international community. In 2011 the wave of so called Arab Spring reached to Syria and upheavals were taking place all over the country. Bashar Al-Assad implemented some reforms, nevertheless active foreign interference resulted in long-term political and humanitarian crisis in Syria which afterwards turned into international conflict. Syrian authorities were facing very unexpected challenges. A number of devoted and loyal to Bashar Al-Aaad figures such as Abdul Halim Khaddam and Mustafa Tlas's son Manaf Tlas and others opposed the suppression of the protesters and became opposition. Thousands of officials became dissidents and left the country. Free Syrian Army opposing Syrian army and government

loyal forces was organised due to foreign support. The FSA tried to topple bashar Al-Assad but failed. Turkey provided huge assistance to not only Syrian political opposition but also directly supported different factions of rebels fighting against Syrian army. Numerous loyal members of ruling elite and Bashar Al-Assad's family died in the course of Syrian civil war. The very famous Assef Shawkat, who was Bashar Al-Assad's brother-in-law, died, president's brother Mahir Al-Assad badly injured in Damascus bombing in July 2012.

Foreign involvement in the Syrian Civil War is very large and multilayered. The United States of America and the Russian Federation are the key players in Syrian Civil War. The regional players are also deeply involved in Syrian Civil War. The Syrian opposition, politically represented by the Syrian National Coalition, receives financial, logistical, political and in some cases military support from major Sunni states in the Middle East allied with the US, most notably Saudi Arabia, Qatar and Turkey. From early stages of the conflict in Syria, major western countries such as the US, France and the UK provided political, military and logistic support to the opposition as well as rebel groups in Syria that are not designated by them as terrorist. Syrian authorities are supported by Russia and Iran. Russia continued supplying Assad's government with arms, sending military and technical advisers, it also helped to repair and maintain Syrian weapons. Since 30 September 2015, Russian Federation, stationed in Syria militarily and wages an intensive air campaign against ISIS and other anti-government forces in Syria on the side and at the request of the Syrian government. Iran as regional player had its own interests in Syrian arena, it has provided significant support for Syria during the Civil War, namely combat troops, technical and financial support. Internal confrontation in Islamic World was very obviously reflected in Syrian Civil War. These contradictions were mainly between Sunni and Shia political-military coalitions in the face of Saudi Arabia and Iran. Turkey and Qatar partially had their own role in disintegrating Syrian state. These Gulf kingdoms funded and armed various Salafi jihadist groups which were able to capture huge territories in different parts of Syria. In addition to that so called

Islamic State grabbed large territories in the north-eastern part of the state, they seized Raqqa governorate in 2015. As a result of all these Syrian government was controlling only the one-sixth of its territory in 2015.

In 2017 Bashar Al-Assad succeeded in maintainig power however there were a lot of predictions about his dismissal. The Syrian crisis caused unprecedented damage to the state. Hundreds of thousands of Syrian citizens died, got different injuries, became refugees and internally displaced people. Myriad of cities, towns and villages were destroyed. Syrian refugees were settling in Jordan, Turkey Lebanon and EU member states causing international refugee crisis.

The war in Syria deepened the centuries old hatred among the ethnic and ethnoconfessional communities of Syria, zero level of tolerance is existing towards each other. Kurdish factor became strategically important. Kurdish Rojava became more and more decisive player on the ground. Armenian community of Syria suffered much losses, especially in the second largest city of Allepo. Syrian Armenians also started to leave the country residing in different part of the world. Syria was isolated from regional, international and Arab World affairs.

The challenges and multifaceted threats Syria is facing require comprehensive approach. Strategic patience is needed to solve, political, diplomatic and socio-economic problems in order to have lasting peace not only in Syria but also in the wider Middle East. Bashar Al-Assad currently takes all the respionsibility to protect Syrian statehood and to ensure Syrian sovereignity.

# ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

## Փաստաթղթեր, ելույթներ, ճառեր, հարցազրույցներ


1. المؤتمرات القطرية لحزب البعث العر بي الاشتراكي في القطر العربي السوري.
2. الحركة التصحيحية المجيدة في الذكرة الخامسة و العشرين, دمشق,1995,ص. 161
3. كلمة السيد الرئيس القائد حافظ الاسد الامين العام لحزب البعث العربي الاشتراكي, رئيس الجمهورية في الذكرى الحادية عشرة لثورة آذار, دمشق, 08.03.1988
4. فضل عفاش, المجالس الشعبية و النيابية في الوطن العربي. الجزء الاول. مجلس الشعب في شورية 1928-1988
5. المؤتمرات القطرية لحزب البعث العر بي الاشتراكي في القطر العربي السوري ,حزب البعث العر بي الاشتراكي القيادة القو مية, مكتب الثقافة و الاعداد الحزبي.
6. مجموعة خطب الفريق القائد حافظ الاسد, الكتاب الاول. 24.02.1980-30.08.1981.
7. مجموعة خطب الفريق القائد حافظ الاسد, القيادة العامة للجيش و القوات المسلحة, الادارة السياسية, الكتاب الرابع, 14.02.1974-14.12.1974
8. كلمة الرئيس القائد حافظ الاسد الامين العام لحزب البعث العر بي الاشتراكي بمناسبة الذكرى السابعة و العشرين لتاسيس الحزب, بتاريخ 07.04.1974
9. رسالة الرئس القائد حافظ الاسد الى القوات المسلحة العربية السورية بمناسبة تحرير مدينة القنيطرة و أخرى من الاراض العربية السورية, , بتاريخ 26.06.1974
10. كلمة السيد الرئيس القائد حافظ الاسد في مادبة الغداء التي اقامها على شرف القادة السوفييت في موسكو, الجمعة 12.04.1974
11. كلمة السيد الرئيس القائد حافظ الاسد الامين العام لحزب البعث العربي الاشتراكي, رئيس الجمهورية, 08.03.1992
12. كلمة السيد الرئيس القائد حافظ الاسد في مؤتمر القمة الاسلامي في لاهور, بتاريخ 22.02.1974
13. كلمة السيد الرئيس القائد حافظ الاسد في الجلسة الختامية لمؤتمر القمة العربي بالرباط, تاريخ 29.10.1974
14. Ibn Battuta, The Travels of Ibn Battuta, Dar Sader, Beyrouth, 1960, pp. 483:
15. The Encyclopedia of Islam, Vol. 2, C-G, Leiden E. J. Brill, 1983,
16. Economie Du Monde Arabe Et Musulman, 4 edition, Editions EMAM, 1992, pp 153-160.
17. Munir al-Sharif, Al-Muslimun al-Alawiyyun, 2-nd ed. Dar al-Umumiyya, Damascus,1960,

# ԳՐՔԵՐ ԵՎ ՀՈԴՎԱԾՆԵՐ


Հայերեն

1. Նաջարյան Ե., Լիբանանը XVIII դարի վերջին և XIX դարի առաջին կեսին, երևան, 1985, էջ 23-24:
2. Էսպոզիտո Ջ., Իսլամական Սպառնալիք, Առասպե՞լ, թե՞ Իրականություն,, Երևան, 2003, էջ 351:
3. Կարապետյաան Ռ., Արաբական Երկրների Նոր և Նորագույն Պատմություն, Երևեան, 2003, էջ 408:
4. Կարապետյան Ռ., Սիրիա-ամերիկյան հարաբերությունները 1967-1996թթ., Երևան, 2000, էջ 201:
5. Հարությունյան Լ., Լիբանանը 1958-1990 թվականներին, Երևան, 2007, էջ 337:
6. Հովհաննիսյան Ն., Արաբական Երկրների Պատմություն, h. III, Երևան, 2006, էջ 839:
7. Հովհաննիսյան Ն., Արաբական Երկրների Պատմություն, h IV, Անկախության և Ինքնիշխանության Դարաշրջան, 1918-2005թթ., Երևան, 2007, էջ 766:
8. Հովհաննիսյան Ն., Իրան. Այաթոլլահ Խոմեյնիի Դարաշրջանը, Երևան, 2004, էջ 111:
9. Պրիմակով Ե., Մի Դավադրության Պատմություն, ԱՄՆ-ի մերձավորարևելյան քաղաքականությունը 70-ական թթ. և 80-ական թթ. սկզբներին, Երևան, 1987, էջ 399:
10. Սամսոնյան Հ., Բանակի դերը Սիրիայի քաղաքական կյանքում. Ռազմական հեղաշրջումների ֆենոմենը, Երևան, 2013,
11. Փաշայան Ա., Իսլամական Կոնֆերանս Կազմակերպությունը. Նպատակները, Գործունեությունը, Դիրքորոշումը Ղարաբաղյան Հակամարտության Նկատմամբ, Երևան, 2003, էջ 247:
12. Փիր-Բուդաղովա Է., Մերձավոր և Միջին Արևելքի Երկրներ և Ժողովուրդներ, h. XI, Արաբական Երկրներ, Երևան, 1978, էջ 400:

Ռուսերեն

1. Ахмедов В. М., Армия В. М., Армия и Политика в Современной Сирии, Армия и Власть на Ближнем Востоке: от Авторитаризма к Демократии (сборник статей), М., 2002, с. 400.

2. Григорян Г. М., Позиция Сирии в Ближневосточном конфликте, Ереван, 1989,
3. Манукян С., Исламский Фундаментализм в Сирии в 1960-80-х годах, Диссертаяция на соискание ученой степени кандидата исторических наук, Ереван, 2002, с. 198.
4. Массэ А., Ислам, Очерк Истории, Перевод с Французкого, Исдание 2-е, Издательство Восточной Литературы, Москва, 1963, с. 228.
5. Мирский Г., Армия и Политика в Странах Азии и Африки, М., 1970, с. 341
6. Мирский Г., Проблемы Социалистеческой Ориентации в Арабских Странах и Роль Военных, Проблемы Современной Арабистики, Современные Политические и Социально-Экономические Проблемы Арабских Стран, Ереван, 1988, с. 47.
7. Новейшая История Арабских Стран Азии, 1917-1985, Москва, 1988, сс. 108-111
8. Петрушевский И. П., Ислам в Иране в VII-XII веках, Издательство Ленинградского Университета, 1966, с. 303.
9. Пир-Будагова Э., Сирия в Борьбе за Упрочение Национальной Независимостти (1945-1966), М., 1978, с. 178
10. Поляков К., Хасяанов А., Проблемы Стабильности Сирии в XXI Веке, Ближний Восток и Современносты, Сборник статей (выпуск десятый), М., 2000, с. 384
11. Сараджян П., Активизация Деятельности Организации Братья-Мусульмане в Сирии в 1979-1982 гг., Ислам в Политической Жизни Стран Современного Ближнего и Среднего Востока, Ереван, 1986, с. 147.
12. Саутов В. Н., Сирийские Алавиты в Новейшее Время, Материалы I-ой Конференции Арабистов Института Востоковедения РАН, Институт Изучения Израиля и Ближнего Востока, М., 1996, с. 55-71
13. Филоник А., Хафез Асад: Призвание-Гражданин, Арабские Страны Западной Азии и Северной Африки (Новейшая История, Экономика и Политика), М., 1997, с. 352.
14. Юрченко В. П., Сирия: Проблемы Национальной Безопасности (Военная Политика и Военная Строительство в Период Правления ПАСВ (1963-2004 гг.), М., 2004.

Անգլերեն

1. Abu Jaber Kamal S., The Arab Ba'th Socialist Party, History, Ideology and Organisation, Syracuse University Press, New York, 1966, pp. 356.
2. Batatu H., Some Observations on the Social Roots of Syria's Ruling, Military Group and the Causes for Its Dominance, Middle East Journal, Vol. 35, No 3, 1981, p. 331-344.
3. Batatu H., "Syria's Muslim Brethren", MERIP Report, Nov.-Dec. 1982. pp. 12-20.
4. Bengio O., Gabriel Ben-Dor G., Minorities and the State in the Arab world, Colorado, 1999, pp. 224.
5. Bronson R., Syria. Hanging Together or Hanging Separately, The Washington Quarately, Vol. 23, N. 4, 2000, p. 91-105.
6. David H., Assad Goes Beyond the Point of No Return, The Guardian, 11.02.1982,
7. Dekmejian H., Islam in Revolution, Fundamentalism in the Arab World, Second Edition, Syracuse University Press, 1995, pp. 307.
8. Devlin F. J., Syria, Modern State in an Ancient Land, Westview Press and Croom Helm, London, 1983, pp. 140.
9. Drysdale A., Syrian Political Elite, 1966-1976, A Spatial and Social Analysis, Middle Eastern Studies, Vol. 17, N 1, pp. 359-373.
10. Eiland G., Defensible Borders on the Golan Heights, Jerusalem Center for Public Affairs, Jerusalem, 2009, pp. 32.
11. Faksh M. A., The Alawi Community of Syria: A New Dominant Political Force, Middle Eastern Studies, Vol. 20, N 2, 1984, pp. 133-153
12. Gambill G., Hezbollah and the Political Ecology of Postwar Lebanon, Mideast Monitor, Vol. 1, N 3, September-October, 2006, http://globalpolitician.com/22849-hizballah
13. Chandola H., Syrian Tanks Reported to Be Leveling Hama, The Guardian, 27.02.1982,
14. Hafizullah E., The Infitah Politics and the Failure of Political Islam in Syria, Contemporary Review, Vol. 273, Dec., 1998, pp. 273-290.
15. Hinnebusch R., Authoritarian Power and State Formation in Baathist Syria: Army, Party and Peasant, Oxford, Westview Press, 1990, pp. 350.
16. Hinnebusch R., Syria, Revolution from Above, Routledge, London and New York, 2001, pp. 184

17. Hinnebusch R., "The Islamic Movement in Syria: Sectarian Conflict and Urban Rebellion in an Authoritarian-Populist Regime" in Ali Hilal Dessouki, ed. Islamic Resurgence in the Arab World , New York, 1982, pp. 157-165.
18. Jebb C. R., Bridging the Gap: Ethnicity, Legitimacy and State Alignment in the International System, Published in the USA by Lexington Books, 2004, pp. 208.
19. Kaplan R. D., Syria-Identity Crisis, The Atlantic Monthly, Vol. 271, N. 2, February 1993, http://www.theatlantic.com/magazine/archive/1993/02/syria-identity-crisis/3860/
20. Katz S., Arab Armies of the Middle East Wars (2), Oxford, 1988, pp. 47.
21. Kelidar A. R., Religion and State in Syria, Assian Affairs, v. 61, part 1, February, 1974, pp. 16-22.
22. Khoury Ph., and Kostiner J., Tribes and State Formation in the Middle East, University of California Press, Berkeley and Los Angeles, pp. 351.
23. Kramer M., Syria's Alawis and Shi'ism in Shiism, Resistance, and Revolution, ed. Martin Kramer, Boulder, Colorado: Westview Press, 1987, p. 237-254.
24. Lawson F. H., Social Bases for the Hamah Revolt, MERIP reports, November/December 1982, pp. 24-28.
25. Leverett F., Inheriting Syria, Bashar's Trial by Fire, Brookings Institution Press, Wasington, 2005, pp. 286.
26. Lyde S., The Asian Mystery: the Ansaireeh or Nusairis of Syria, London, 1860, pp. 299.
27. Mayer T., The Islamic Opposition in Syria, 1961-1982, Orient, December, 1983, pp. 589-609.
28. Maoz M., Syria Under Hafiz al-Asad: New Domestic and Foreign Policies, The Hebrew University of Jerusalem, 1975, pp. 29.
29. Maoz M., The Sphinx of Damascus, A Political Biography, Weidenfeld and Nicolson, London, 1988, p. 221.
30. Minahan J., Encyclopedia of the Stateles Nations: ethnic and national groups around the world, S-Z, Vol. 4. Greenwood Press, USA, 2002, pp. 2241.
31. Moosa M., Extremist Shiites, The Ghulat Sects, Syracuse University Press, New York, 1987, p. 580.

32. Nisan M., Minorities in the Middle East: A History of Struggle and Self-Expression, Second edition, Jefferson, N.C. and London: McFarland & Company, 2002, pp. 335.
33. Pipes D., Greater Syria, The History of an Ambition, New York, 1990, p. 182. pp. 256
34. Pipes D., The Alawi Capture of Power in Syria, Middle Eastern Studies, V. 25, N 4, London, 1989, pp. 429-450.
35. Rabil G. R., Embattled neighbours: Syria, Israel and Lebanon., Boulder Colorado, USA, 2003, pp. 266.
36. Rabinovich I., Syria Under the Ba'th 1963-1966, The Army Party Symbiosis, Israel Universities Press, Jerusalem, 1972, pp 276.
37. Seale P., Asad, The Struggle For The Middle East, University of California, Berkeley, Los Angeles, 1989, pp 552.
38. Umar F. Abd-Allah, The Islamic Struggle in Syria, Berkeley, California, Mizan Press, 1983, pp 300.
39. Van Dam Nikolaos, The Struggle for Power in Syria, Politics and society under Asad and Ba'th Party, I. B. Tauris Publishers, London-New York, 1996, pp. 228.
40. Volker P., The Political Economy of Syria under Asad, London, 1995, pp. 298.
41. Zisser E., Hafiz al-Asad Discovers Islam, Middle East Quarterly, Vol. 6, N 1, 1999, pp. 49-56.
42. Zisser E., Heir Apparent, The New Republic, 11 October, 1999, pp. 15-21
43. Zisser E., The Succession Struggle in Damascus, Middle East Quarterly, Vol. 2, Number 3, 1995, pp 57-64.
44. Zisser E., The Syrian Army: Between the Domestic and the External Fronts, MERIA, Volume 5, No. 1 – March, 2001, pp. 12.

<u>Ֆրանսերեն</u>

1. Dussuad R, Histoire et religion des Nosairis, Paris, 1900. pp. 434.
2. Lammens H., "Les Nosairis furent-ils chretiens? A propos d'un livre recent," Revue de l'Orient Chretien, pp. 248.

<u>Արաբերեն</u>

1. هاشم عثمان ,حل العلويون شيعا, بيروت , لبنان ,1980, ص234.
2. محمد امين غالب الطويل, تاريخ العلويين, دار الاندلس, بيروت, 1966, ص. 501.

3. منذر الموصلي, البحث عن الذات الجذور, العلويون العرب السوريون, دمشق, 2007, ص. 219.
4. مصطفي طلاس, مرآة حياتي, العقد الاحد, الطبعة الثانية, دمشق, 2007, ص. 627.
5. مصطفي طلاس, مرآة حياتي, العقد الرابع, الطبعة الثانية, دمشق, 2007, ص. 472.

## ՊԱՐԲԵՐԱԿԱՆՆԵՐ

Արաբերեն

6. البعث, «ալ-Բաաս», Դամասկոս,
7. الثورة, «աս-Սաուրա», Դամասկոս,
8. الحيات, «ալ-Հայաթ», Լոնդոն,
9. السفير, «աս-Սաֆիր», Դամասկոս,
10. الشعب العربي, «աշ-Շաաբ ալ-Արաբի», Փարիզ,
11. الكفاح العربي, «ալ-Քիֆահ ալ-Արաբի», Բեյրութ,
12. تشرين, «Թիշրին», Դամասկոս,
13. النهار, «ան-Նահար», Փարիզ,
14. المحرر, «ալ-Մուհարիր», Բեյրութ,
15. الوطن العربي, «ալ-Վաթան ալ-Արաբի», Փարիզ,
16. الدستور, «ալ-Դուստուր», Լոնդոն,
17. النهار, «ան-Նահար», Բեյրութ,
18. الرأيء, «առ-Ռայ», Ամման,
19. الأخبار, «ալ-Ախբար», Կահիրե,
20. الأهرام, «ալ-Ահրամ», Կահիրե:

Անգլերեն

21. Country Profile, Syria, 1991-1992.
22. Country Reports, Syria, London, 1988-1989.
23. Country Report, Syria, London, 1997.
24. The Guardian, London, 1982.
25. Ha'aretz, Tel-Aviv.
26. The Independent, London.
27. International Herald Tribune, Paris.
28. Ma'ariv, Tel-Aviv.

29. Middle East Contemporary Survey, 1985, Vol. 9, 1986, Vol. 10, 1987, Vol. 11, 1988, Vol. 12, 1990, Vol. 14, 1991, Vol. 15, 1992, Vol. 16, 1993, 1997, Vol. 21, 1999, Vol. 23. 2000, Vol. 24.
30. Middle East Insider, 19.09.1988.
31. Middle East Journal, N 1, 1976.
32. The Middle East Journal, vol. 36, N 3, 1982,
33. The New-York Times, New-York.
34. Observer, London.
35. Mideast Mirror, London.
36. Middle East Research and Information Project

ԻՆՏԵՐՆԵՏԱՅԻՆ ԿԱՅՔԵՐ

37. http://www.presidentassad.net/index.php?option=com_content&view=categories&id=81&Itemid=496
38. http://www.state.gov
39. http://www.massviolence.org
40. http://www.presidentassad.org
41. https://www.cia.gov
42. http://www.iimes.ru
43. http://www.merip.org
44. http://meria.idc.ac.il
45. http://www.theatlantic.com
46. http://globalpolitician.com
47. http://kremlin.ru
48. http://www.reuters.com
49. http://www.bbc.com
50. http://www.joshualandis.com
51. http://www.baath-party.org.
52. https://www.state.gov/j/ct/list/c14151.htm.
53. http://www.aparchive.com/metadata/youtube/ae023feb445ad9326b92c1fe9fbf798b

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԳՐԻԳՈՐ ԿԱՐԱՊԵՏԻ

# ԱԼԱՎԻԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԸ ՍԻՐԻԱՅՈՒՄ.
# ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆԻՑ ՄԻՆՉԵՎ ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԷԼԻՏԱ

Համակարգչային էջադրումը՝ Վերա Պապյանի

Հրատ. պատվեր N 788
Ստորագրված է տպագրության՝ 10.07.2017թ.:
Չափսը՝ 60 x 84 $^{1}/_{16}$, տպագր. 10.75 մամուլ:
Տպաքանակը՝ 100 օրինակ:
Գինը՝ պայմանագրային:

ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչության տպարան,
Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24: